

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

---

YEREVAN STATE UNIVERSITY  
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

# ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ

**2**

**ARMENOLOGICAL ISSUES**

**BULLETIN**

ԵՐԵՎԱՆ – YEREVAN  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ – YSU PRESS  
2014

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ  
Հրատարակվում է 2014 թվականից

The Bulletin is published thrice a year.  
It has been published since 2014

Գլխավոր խմբագիր՝ **Միսնոյան Ա. Հ.**

Խմբագրական խորհուրդ՝

**Ավագյան Ա. Ա.**  
**Ավետիսյան Լ. Վ.** (գլխավոր  
խմբագրի տեղակալ)  
**Ավետիսյան Հ. Գ.**  
**Ավետիսյան Յու. Ս.**  
**Բայրամյան Հ. Ս.**  
**Բարդակչյան Գ. (ԱՄՆ)**  
**Դեղեյան Ժ. (Ֆրանսիա)**  
**Դրոսթ-Աբգարյան Ա. Գ.**  
(Գերմանիա)  
**Զաքարյան Ս. Ա.**  
**Հայրունի Ա. Ն.**

**Հովհաննիսյան Մ. Ս.**  
**Հովսեփյան Լ. Ս.**  
**Ղարիբյան Ա. Ա.**  
**Սարգսյան Հ. Գ.**  
**Մինասյան Է. Գ.**  
**Մուրադյան Ս. Պ.**  
**Պողոսյան Վ. Ա.** (պատասխա-  
նատու քարտուղար)  
**Սայադով Ս. Մ. (Ռուսաստան)**  
**Սաֆարյան Ա. Վ.**  
**Տագեյան Ա. (Լիբանան)**

Editor-in-chief: **Simonyan A.**

Editorial Board:

**Avagyan A.**  
**Avetisyan H.**  
**Avetisyan L.** (Deputy editor-  
in-chief)  
**Avetisyan Y.**  
**Bardakchian G.** (USA)  
**Bayramyan H.**  
**Dakessian A.** (Lebanon)  
**Dedeyan G.** (France)  
**Drost-Abgaryan A.** (Germany)  
**Gharibyan A.**

**Hayruni A.**  
**Hovhannisyanyan M.**  
**Hovsepyan L.**  
**Margaryan H.**  
**Minasyan E.**  
**Muradyan S.**  
**Poghosyan V.** (Executive  
Secretary)  
**Safaryan A.**  
**Sayadov S.** (Russia)  
**Zakaryan S.**

# Հ Ո Ղ Վ Ա Ծ Ն Ե Ր

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ. ԿՅԱՆՔԻ ԵՐԵՔ ՇՐՋԱՆ, ԵՐԵՔ ՄԻՋԱՎԱՅՐ

«Վաղուց գլխիկոր թախծեալ իմ քնար»:

*Խաչատուր Աբովյան*

«Աբովյանը էպոսային հերոս է... Մի քիչ  
Բերթովեն, մի քիչ Շիլլեր, մի քիչ Գյոթե»:

*Կոստան Չարյան*

*Բանալի բառեր - Աբովյան, Պարրոտ, Ներսես Աշտարակեցի, Թիֆլիս, Դորպատ, Երևան, Էջմիածին, Արարատ, Եվրոպա, լուսավորություն, մշակույթ, գրականություն, կրթություն, առաջադիմություն, հայրենիք, ազատություն, անկախություն*

Անփոխարինելի է այն մեծ դերը, որ Խաչատուր Աբովյանն ունեցել է մեր ժողովրդի մտավոր, մշակութային, գրական ու քաղաքական կյանքի առաջընթացի գործում: Նրա այդ բեղուն գործունեությունը ծավալվել է աշխարհագրական ու մշակութային տարբեր միջավայրերում, քաղաքակրթական ու սոստեսական երեք բոլորովին այլազան պայմաններում:

Դրանք Էջմիածինն ու Երևանն էին՝ ժամանակի համար բնորոշ կրոնական դոգմաներով ու ամեն առաջադիմականի խոչընդոտներով, Թիֆլիսն էր՝ իր շատ թե քիչ աշխարհիկ կյանքով ու համակովկասյան մշակույթի նոր ստեղծվող օջախներով, և Դորպատը՝ իր եվրոպական նկարագրով, ռուսական տիրապետության ներկայությամբ ու առաջադեմ կրթական կենտրոնով:

Որպես իր կյանքի գերխնդիր ունենալով Հայաստան աշխարհի քաղաքական ու ազգային ազատագրումն ու մշակութալուսավորական առաջընթացը՝ Աբովյանը այդ ամենն իրականացնելու ուղին ի վերջո հանգեցնում էր Ռուսաստան-Եվրոպա ուղեգծին՝ ջանալով այդ ճանապարհով ու նրանց օգնությամբ հասնել իր ուխտի կատարմանը:

XIX դարի սկզբում Հայաստանը շարունակում էր հեծել պարսկա-թուրքական լծի ներքո: Թեև սկսած 1804 թվականից Արևելյան Հայաստանի որոշ հատվածներ՝ Փամբակի, Շիրակի շրջանները՝ Գյումրիի բերդով, արդեն

նվաճվել էին ցարական բանակի կողմից, սակայն միջնադարից ձգվող խավարը շարունակվում էր կյանքի բոլոր ասպարեզներում՝ տեղ չըողնելով ո՛չ տնտեսական, ո՛չ մշակութային և ո՛չ էլ կրթական զարգացումների համար:

Իննամյա Խաչատուրը Քանաքեռից\* հայտնվել էր Էջմիածնի վանքում՝ կատարելու բարեպաշտ ծնողների կամքը՝ դպրատանը ուսանել և դառնալ կրոնավոր: Սակայն մի կողմից բնածին տաղանդն ու «գորավոր հիշողությունը», մյուս կողմից կրոնական սահմանափակումները պատանուն մղում են կյանքի նոր որակների որոնման: 1823 թ. Աբովյանը Հաղպատում Անտոն Մուղնեցի արքեպիսկոպոսի մոտ ծառայության է անցնում փոքրավորի պաշտոնով: Ուսման անհազ տենչը և իր սիրելի հովանավորի՝ Մուղնեցու միջնորդությունը հնարավորություն են ընձեռում նույն թվականին մեկնել Տփղիս (Թիֆլիս) և սովորել տեղի վանական դպրոցում, որտեղ տիրապետող էր նույն կրոնական կրթության միաբնեռականությունը, ուր վարժապետները իրենց աշակերտներին ավելի շատ պատիժներ էին տալիս, քան գիտելիք, ուր առաջադեմ գաղափարները հալածվում էին, բազում առարկաների դասավանդումը արգելվում, և առավոտյան ու երեկոյան աղոթքները համարվում էին շատ ավելի կարևոր, քան դասերը: 1824 թ. Աբովյանը ընդունվում է Թիֆլիսի նորաբաց Ներսիսյան դպրոցը: Նրա համար սկսվում է կյանքի մի նոր ժամանակաշրջան՝ լի ծանոթ ու անծանոթ կյանքի շրջադարձերով ու փորձություններով:

Վրաստանը, XIX դարասկզբին կորցնելով պետականությունը, մտել էր իր պատմության շրջադարձային մի փուլ, որտեղ կողք կողքի էին ազգային ավանդական հարաբերություններն ու 1801 թվականից ռուսական տիրապետության հարուցած ազգամիջյան բարդ խնդիրները: Աբովյանի ապրած շրջանում Տփղիսի առանձնահատկություններից մեկն այն էր, որ կյանքը գնալով քաղաքային բնույթ էր ստանում, մի բան, որ դեռևս բնորոշ չէր Հայաստանին: 1841 թ. գրված «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին...» գործում Աբովյանը հիշատակում է քաղաքակրթական այն փոփոխությունների մասին, որոնք կատարվում էին այդ տարիներին Թիֆլիսում. նոր շենքեր ու փողոցներ, որոնք «ետ չէին մնում եվրոպական տներից»<sup>1</sup>: Եվրա-ասիական կենցաղով ապրող քաղաքը բնակչության բուռն աճ էր ապրում, աստիճանաբար ծավալվում Քուր գետի ափերին: Հայաբնակ թաղերից էին՝ Մեյդանը, Հավլաբարը, Սուլուակը, Տափիթաղը և այլն: Քաղաքի առաջադիմությանն ու ընդարձակմանը նպաստել են դեռևս պարսկական լծի տակ գտնվող հայկական տարածաշրջաններից բնակչության հոծ զանգվածների գաղթը Տփղիս,

---

\* Քանաքեռը այդ ժամանակ թեև ուներ երկու հոյակապ եկեղեցի, սակայն բաղկացած էր ընդամենը 55 ծխից:

<sup>1</sup> **Աբովյան Խ.**, Երկեր, Երևան, 1984, էջ 600 (այս գրքից բերված հետագա մեջբերումների էջերը այսուհետև կնշվեն տեքստում):

ինչպես նաև դեռևս Բագրատունյաց թագավորության անկման հետևանքով հայկական բնակավայրերի՝ վրացական ենթակայության տակ անցնելու իրողությունը և որպես այդ ամենի արդյունք՝ գրական, մշակութային ու կրթական կյանքի ծաղկումը: XIX դարի 30-40-ական թվականներին տարբեր ազգերից բաղկացած բնակչության թիվը Թիֆլիսում անցնում էր 40 հազարից: Թիֆլիսաբնակ համայնքներն ունեին իրենց եկեղեցիները, որոնցից հայկական էին ութը: Քաղաքում գործել են շաքարի և մետաքսի գործարաններ, գիմնազիա, գավառական դպրոց, աղջիկների պանսիոն, ռուսական և հայկական հոգևոր սեմինարիաներ, ծխական դպրոցներ, որոնց շատ ուսուցիչներ, Աբովյանի վկայությամբ, իրենք «կարիք ունեին սկզբնական կրթության»: Անդրկովկասի «մայրաքաղաքը», որ ուներ շեշտված հայկական բնույթ, թեև ապրում էր համերաշխ կյանքով ու մեծի մասի խոսում վրացերենով, սակայն սկսած հագուստից, վերջացրած ուտելիքով խայտաբղետ էր, մանավանդ հավատքով ու քաղաքական կողմնորոշմամբ: Քաղաքի մշակութային կյանքը հիմնականում առաջնորդվում էր մեջլիսներով, խրախճանքներին ու քեֆերին ուղեկցող նվագներով ու երգերով:

Ուստի պատահական չէր, որ այդ ժամանակվա վիրահայոց թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցին Ներսիսյան դպրոցը հիմնեց հենց Թիֆլիսում՝ նպատակ ունենալով ավելի բարձր կրթություն ստանալու հնարավորություն տալ ինչպես Վրաստանում բնակվող, այնպես էլ նրանից դուրս ապրող հայերին, պատրաստելու ուսուցիչներ, գրագետ կրոնավորներ ու քաղաքացիներ: Նշենք, որ այդ ժամանակաշրջանում նման մակարդակի դպրոց չուներ քաղաքի և ոչ մի համայնք: Թե՛ Վրաստանում և թե՛ Հայաստանում գործող ազգային կրթական օջախներում, պատկերավոր ասած, «հղկված քարե դար» էր, և կրթօջախներում աշակերտները հիմնականում գրում էին հարթ գլաքարերի վրա՝ ի տարբերություն ունևոր ընտանիքների երեխաների, ովքեր գրում էին... ոչխարի կամ անասունի ոսկորների թիակների վրա:

Աբովյանի ուսանելու տարիներին Ներսիսյան դպրոցում սովորում էին 70-80 աշակերտներ: Նախատեսվում էր նրանց թիվը հետագայում հասցնել 800-ի: Ներսիսյան դպրոցի առաջին ավարտական քննությունները կայացան 1826 թ.: Շրջանավարտների թվում էր նաև Աբովյանը, ում մեջ արդեն վերջնականապես սաղմնավորվել էր Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը ազատագրելու գաղափարը:

Դեպի Կովկաս ռուսական մուտքը հայերի համար նպաստավոր էր այնքանով, որ ձևավորվող կայսրությունը սահմանակից էր դառնում մուսուլմանական հարևաններ ունեցող Հայաստանին, որը հեռահար կերպով կնպաստեր երկրի ինքնուրույնության ու պետականության վերականգնմանը, մանավանդ որ ռուսական նվաճումները կանգ չէին առնելու և նպատակ ունեին հասնելու մինչև Միջերկրականի ափերը. ռազմական քարտեզներում անգամ նշվում էր թուրքական մայրաքաղաքի՝ Կոստանդնուպոլսի ռուսական

անվանումը՝ Ցարգրադ: Ռուսական նման քաղաքականությունը յուրովի պատասխան էր նաև այն նկրտումներին, որոնք վարում էին պարսկական ու թուրքական իշխանությունները: Ինչպես գրում է Աբովյանն իր վեպում՝ «Էս կողմիցը՝ Աբաս Միրզեն, էն կողմիցը՝ Հասան խանը քանդելով ավերելով եկել հասել էին, որ գնան Պետերբուրգ» (էջ 222): Իսկ Պետերբուրգ կարելի էր հասնել միայն Վրաստանի վրայով: Ռուսական նվաճումով թեև Վրաստանը կորցրել էր իր պետականությունը, սակայն մյուս կողմից կանխվել էր նրա նվաճման վտանգը մուսուլման երկրների կողմից, որն առավել վատ վիճակի մեջ կդներ վրաց ժողովրդին, քան այն, որում հայտնվել էր: Կովկասում տիրում էր քաղաքական, ազգային ու մշակութային ահա այսպիսի մթնոլորտ, որի մեջ պետք է գործեր Աբովյանը:

Ավարտելով Ներսիսյան դպրոցը՝ Աբովյանը 1826 թ. Թիֆլիսից մեկնում է Հաղպատ: Նա ծրագրում է ուսումը շարունակել Մոսկվայում կամ Պետերբուրգում և կամ՝ Կարս, Պոլիս ճանապարհով մեկնել Վենետիկ և սովորել Միլիթարյանների մոտ:

Սկսվում է 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը: Մի շարք խնդիրներ (Աբովյանն անգամ կրոնավորի զգեստից բացի ուրիշ զգեստ չուներ) ևս խանգարում են Աբովյանի հետագա ծրագրերի իրականացմանը: Նա հայտնվում է պաշարված Ղարաքիլիսայում, բնակիչների հետ լքում է քաղաքը, մեկնում շրջակա գյուղեր, ապա Հաղպատ, ուր մասնակցում է պաշտպանական կռիվներին, նշանակվում ուսուցիչ Մանահինի վանական դպրոցում: Թեև Աբովյանը հասել էր իր փայփայած երազանքներից մեկին՝ դարձել ուսուցիչ, սակայն դա նրան չէր գոհացնում: Ապագա լուսավորչի ծրագրերն ավելին էին: 1827 թ. պարսիկները սկսում են Արարատյան խանության հայաթափումը՝ ժողովրդին քշելով Մակուի և Բայազետի կողմերը, որպեսզի նրանք սատար չլինեն արշավող ռուսներին: Թեև ապրիլին ռուսները պաշարում են Երևանի բերդը, սակայն շուտով հեռանում են: Ի վերջո 1827 թ. հոկտեմբերին՝ յոթօրյա կռիվներից հետո, նրանք գրավում են բերդը: Աբովյանի համար նորից հեռանկար է բացվում Ռուսաստանում սովորելու: 1828 թ. նա վերադառնում է Էջմիածին, ուր սինոդը (վանական կառավարչությունը) ավելի ուժեղ էր, քան կաթողիկոսը: Արդեն կնքվել էր Թուրքմենչայի պայմանագիրը: Թվում էր, թե կյանքը պիտի խաղաղվեր Հայաստանում: Մակայն շուտով սկսվում է 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը:

1828 թ. Աբովյանը Էջմիածնում տիրացու էր և ծառայության մեջ էր Եփրեմ արքեպիսկոպոսի մոտ՝ եկեղեցական դոնապանի, ընթերցողի, երդմնեցուցիչի և ջահընկալի պաշտոններով: Աբովյանը թեև եկեղեցական կոչումների մեջ մնաց շուրջ 10-11 տարի, այդուհանդերձ չհասավ անգամ կրոնական ամբողջական աստիճանի, այլ ընդամենը մնաց կիսասարկավազ: Այս ընթացքում մի խումբ համախոհների հետ նա որոշում է Սևանի կղզում դպրոց բաց անել: Աբովյանը, իհարկե, արդեն ստեղծագործում էր. օրինակ՝

հայտնի է «Կարօտութիւն նախնի վայլէջութեանց հայրենեաց իմոց» գրաբար գրված գործը, գրում էր տաղեր, սակայն Էջմիածնի վանքի սահմանափակ մթնոլորտը, կիսագրագետ կրոնավորների բարքերը և տաղտուկ միջավայրը կաշկանդում էին ազատ մտքի ցանկացած թռիչք ու գործունեություն: Շրջապատում գրեթե չկային եկեղեցականներ, ովքեր «հրեշտականման առաքինի կրոնավորություն» անեին<sup>1</sup>: Այդ տգետ և նյութապաշտ շրջապատի նկատմամբ Աբովյանի ապրումները Ակսել Բակունցը իրավացիորեն բնութագրում է որպես «զայրույթի սրբազան կրակով» տոգորված պահեր՝ գրելով. «Օ», խստապարանոց և տնքացյալ ջլբուրակերքն առաքելաշավիղ աթոռո, որ զանազանեն միայն օգուտ որկորի և ի մեջ թանձրացյալ խավարամտության մնան իբրև անմաքուր խոզ ի տիղմն»<sup>2</sup>:

Մի քանի դար տևած պարսկական ու թուրքական տիրապետությունը, բռնագաղթերը, աղքատությունը, թալանը, պատերազմները պատճառ էին դարձել, որ հայկական շատ բնակավայրերում մուսուլման բնակչությունը գերակշիռ դառնա, ինչը հանգեցրել էր նաև նրան, որ հայ մարդը հասել էր մտավոր խեղճության, հոգևոր ստրկության ու ազգային թշվառ կացության: Աբովյանը տեսնում էր, որ ամբողջ Կովկասն է թաղված խավարի մեջ, իսկ Հարավը միմիայն «ուզիտություն էր շնչում»: Ուրեմն պատահական չէր, որ նա իր հայացքը անընդհատ հատում էր դեպի Ռուսաստան ու Եվրոպա: Նման պարագաներում հայտնի չէ, թե ինչ կլինեք Աբովյանի հետ, եթե դեր չխաղար պատահականությունը:

1811 թ. Ֆրիդրիխ Պարրոտը բարձրացել էր Կազբեկի գագաթը և հենց այնտեղից նշմարել Արարատը: Պարրոտի արշավախումբը լոկ հետաքրքրությունից չէ, որ ցանկանում էր բարձրանալ Արարատի գագաթը: Ընդլայնվող ռուսական կայսրությունը գիտական ու ռազմական հետազոտությունների կարիք էր զգում: Հայտնի իրողություն էր, որ կայսրության ամեն մի նոր նվաճումից առաջ կամ հետո գիտական ուսումնասիրություններ էին կատարվում ոչ միայն բնակլիմայական պայմանների, այլև գյուղատնտեսական հողերի, բնակչության թվաքանակի ու կազմի, ինչպես նաև բնապաշարային այլևայլ հնարավորությունների ճշգրտման ուղղությամբ:

1829 թ. Պարրոտի ժամանումը Հայաստան և Արարատի վերելքի նախատեսումն այն առիթը դարձան, որ Էջմիածնի վանքի թարգման և դպիր Աբովյանը, իր ձիրքին և ունակություններին համապատասխան, բոլորովին նոր կյանքի մեջ մտնի ու իրականացնի իր առաջին ուխտը՝ բարձրանալ Արարատի գագաթը: Կարելի է հստակորեն ասել, որ, իրոք, Աբովյանի հայաստանյան կյանքի առաջին շրջանի կիզակետային իրողությունն Արարատի գագաթ բարձրանալը ու նրա «սառցանիստ գեղեցկությամբ գերվելը»<sup>3</sup>, **Արա-**

<sup>1</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1979, էջ 19:

<sup>2</sup> Բակունց Ա., Խաչատուր Աբովյան, Բակունց Ա., Երկեր, հ. III, Երևան, 1982, էջ 377:

<sup>3</sup> Զարենց Ե., Ընտիր երկեր, Երևան, 1955, էջ 250:

**բասի բարձրությունից բացված Հայաստան աշխարհի համայնապատկերով հիանալը եղան:** Ինչպես գրում է նա իր «Նոր վկայություն Դորպատի պրոֆեսոր պարոն ֆոն Պարրոտի՝ Արարատի գագաթը իսկապես բարձրանալու մասին» հոդվածում, այնտեղից, ինչպես ասի մեջ, երևացել են «Երևանը, Արաքսը, Բայազետը, Եփրատը, Սևանա լիճը, Փոքր Մասիսը, Արագածը...» (էջ 547): **Հենց այդ պահից վերջանականորեն կազմավորվում է նրա կյանքի երկրորդ իմաստը, երկրորդ ուխտը՝ նվիրվել ազգին:** Արարատի հաղթահարումը իհարկե հերոսություն էր երիտասարդ ու անփորձ Աբովյանի կողմից, բայց բուն նշանակությունը ավելի մեծ մի բան եղավ: Պատկերավոր ասած՝ **Աբովյանը Արարատի վեհությունից իջնելով՝ բռնեց իր ժողովրդի ձեռքը և նրան իր հետ բարձրացրեց մինչև Արարատի գագաթները:** Այդ գործում չափազանց մեծ ու անգնահատելի է Ֆ. Պարրոտի դերը: Այդ նրա խնդրանքի շնորհիվ էր, որ Էջմիածնի սինոդը թույլատրեց Աբովյանին մասնակցելու Արարատի վերելքին, այդ նրա շնորհիվ էր, որ Աբովյանը հնարավորություն ստացավ Դորպատ մեկնելու և ստանալու համակողմանի ու լիակատար կրթություն:

Աբովյանի պատրաստակամությունը՝ ներգրավվել արշավախմբի կազմում և բարձրանալ Արարատի գագաթը, հետամտում էր իհարկե ոչ թե բնագիտական հետազոտություններ կատարելու կամ լեռնագնացային հնարավորությունները փորձելու (բավական է ասել, որ խումբը չուներ ոչ հատուկ հանդերձանք, ոչ էլ ալպինիստական կոշիկներ, և ամեն մի ոտնատեղ կացինով էր փորվում, իսկ թթվածնային քաղցր թոքերի բորբոքում էր առաջացնում. նշենք, որ մինչ այդ Աբովյանը հիվանդացել էր ժանտախտով), այլ ամենից առաջ **հետամնացության և սնտոխապաշտության դեմ կռվի, լույսի ու խավարի, առաջադիմության ու տգիտության միջև պայքարի նպատակ:** Այսպես, Աբովյանի ամբողջ կյանքի ընթացքում ուղեկից դարձան այդ երկու թշնամիները՝ բռնապետությունը և տգիտությունը: Եթե Արարատի գագաթը բարձրանալը մի կողմից՝ նպաստեց Աբովյանի անձի ճանաչմանը և Դորպատում ուսանելու ճանապարհ բացեց, ապա մյուս կողմից՝ մերժման, հոգեկան տանջանքների, կասկածի ու հալածանքների առիթ դարձավ: Եվ որքան էլ Աբովյանը մտաբերեր Մեսրոպ Մաշտոցի շարականներից մեկն ու աղոթեր, որ տերը «նենգավոր շուրթերից փրկեր» իրեն, միևնույնն է, ազատում չէր լինելու: Աբովյանին թշնամաբար են վերաբերվում ոչ միայն կրոնավորները (հատկապես Էջմիածնի վանականները և Ակոռիի Ս. Հակոբ վանքի վանահայրը), այլև հայ մամուլը՝ նրան մեղադրելով հերետիկոսության մեջ՝ հրացան կրակելու համար, հավատուրացության մեջ, քանի որ տրորել էր սրբություն համարվող Նոյի տապանը: 1830 թ. շարադրած «Վերելք Արարատի գագաթը» հոդվածում Աբովյանը կատարում է մի շատ նուրբ ակնարկ այն մասին, որ Նոյյան տապան գոյություն չունի Արարատի գագաթին: Նկարագրելով Արարատի գագաթին իրեն պատած հրճվալից



վիճակը՝ նա գրում է, որ ինքը «ագահությամբ» որոնել է մի առարկա, «որը կարողանայի վերցնել հիշատակ, բայց խորին տխրությամբ պիտի ասեմ, որ ոչինչ չգտա: Պետք էր բավարարվել ձյան մի փոքրիկ կտորով և նրա հալոցից գոյացած ջրով» (էջ 542-543): Պարրոտին և Աբովյանին մեղադրել են նաև կեղծիքի մեջ, թե իբր արշավախումբը լեռան գագաթը չի հասել: Այս առիթով հայտնի է, որ իրոք արշավախմբի բոլոր անդամները չէ, որ հասել էին գագաթ: Եթե Տարտուի համալսարանի երեք ուսանող և Պետերբուրգից ժամանած գիտնականը հոգնության, ցրտից ու քարածայրերի անդունդներից վախենալու պատճառով էին հրաժարվել երրորդ փորձին մասնակցելուց, Ակոռիի գյուղացիները\* սուրբ վայրը ոտք դնելու մեղավորությունից են սարսափել, ու միակ համաձայնությունը պայմանավորված է եղել Աբովյանի անձով, ով հոգևորական էր և, ըստ նրանց դատողության, կփրկեր իրենց չարից: Նշենք, որ Աբովյանը Արարատի գագաթ է բարձրացել վանականի հագուստով:

Աբովյանը, որ սնվում էր միայն թեյով և կծու պղպեղից պատրաստված հեղուկով, համարձակորեն շարունակել է մասնակցել վերելքին: Հետագայում Պարրոտը նրա մասին գրել է, թե նա այնպես էր պահում իրեն, կարծես թե իրենց գործը նրա գործը լիներ: 1829 թ. սեպտեմբերի 27-ին վեց հոգուց բաղկացած խումբը (Պարրոտից ու Աբովյանից բացի՝ երկու ռուս զինվորներ, երկու հայ գյուղացիներ) աշխարհում առաջին անգամ կանգնում է Արարատի գագաթին:

Վերադարձից հետո Աբովյանը ծեծի է ենթարկվել սևազգեստ «չիք տիրացուների» կողմից, մեղադրվել սրբապղծության մեջ: Կրոնավորները հատկապես ահաբեկված էին այն բանից, որ արշավախումբը կհայտարարի, թե Նոյյան տապան գոյություն չունի, ինչը լեռը կսրբազերծեր: Իր բացասական դերն էր խաղում նաև նախանձը: Աբովյանի այդ օրերի միակ մխիթարանքը մնացել էին իր վառ տպավորություններն ու հուշերը, երջանկության այն զգացումները, որոնք նա ունեցել էր այնտեղ, այն հզոր ապրումները, որոնք ծնվել էին շուրջբոլորը փոված քար լռությունից, մարդ քշող քամու զորությունից, լեռան գագաթից իջնելու անլուր դժվարություններից ու հոգու հարուցած հույզերից, նպատակին հասնելու հրճվանքից: Բայց ինչ արժեին այդ ամենը տգետ ու գռեհիկ շրջապատի համար: Ո՛չ ոք, ո՛չ ոք ի գորու չէր ընկալելու, որ իրենք գործ ունեն, Ն. Ադոնցի խոսքերով ասած, «խորհուրդը ճակատին եւ երազները հոգում»<sup>1</sup> աստվածատուր այն սուրբ մարդու հետ, ում անունը հենց Խաչատուր էր:

Այս ընթացքում թեև Աբովյանին առաջարկում են ստանձնել Վրաստանի հայկական թեմի եպիսկոպոսի պաշտոնը, սակայն նա չի համաձայնում և

---

\* Ճնշման և հալածանքների պատճառով այդ գյուղացիները հետագայում ետ են առել իրենց երդումը և նոր երդում տվել, թե իրենք Արարատի գագաթը չեն բարձրացել:

<sup>1</sup> **Ադոնց Ն.**, Խաչատուր Աբովյանի վախճանը, **Ադոնց Ն.**, Երկեր, հ. Բ, Երևան, 2006, էջ 536:

սպասում է Պարբոտի արշավախմբի խոստացված միջնորդությանը՝ Մոսկվայում կամ Պետերբուրգի կայսերական համալսարանում կրթություն ստանալու: Պարբոտի ջանքերի շնորհիվ Աբովյանի համար բացվում են ուրիշ հեռանկարներ՝ ուսանելու Դորպատի համալսարանում: Եվ «Խաչիկն անհայրենացյալ» ճամփա է ընկնում սովորելու «... դույզն ինչ գիտություն ի պետն հայ մանկանց»<sup>1</sup>:

Աբովյանը 1830 թ. սկզբներին Դորպատ է մեկնում Թիֆլիսի վրայով, Մոսկվա-Պետերբուրգ ճանապարհով, ամիսներ շարունակ կրում անլուր չարչարանքներ, քաղց ու լքվածություն և միայն սեպտեմբերին տեղ հասնում: Նրա՝ Դորպատ մեկնման գործում մեծ է նաև Ֆ. Պարբոտի հայր Գ. Պարբոտի միջնորդական դերը ցարական իշխանությունների առջև: Աբովյանը առաջին անգամ էր, որ դուրս էր գալիս Կովկասից և ուղևորվում Եվրոպա: Հայ դպիրի կապանը հագին Աբովյանի առջև Դորպատը բոլորովին անծանոթ աշխարհներ է բացում: Այստեղ ուրիշ էին թե՛ մարդիկ, թե՛ բնությունը, թե՛ կենցաղը և թե՛ մշակույթը, որը հարուստ ու բազմաբնույթ էր, քանի որ քաղաքը գտնվում էր դեպի Պետերբուրգ գնացող ճանապարհի վրա, և Ռուսաստանի մայրաքաղաք ուղևորվող եվրոպացի շատ արվեստագետներ կանգ էին առնում այստեղ՝ ելույթներ ունենալու և համերգներ տալու: Դորպատի մշակութային մթնոլորտը XIX դարի 30-ական թվականներին լեցուն էր նաև էստոնա-լիտվական ազգային գաղափարներով, ազգային պատմության արժևորման ջանքերով և պատմագրական-մշակութային բազում խնդիրներ արծարծող «Դորպատյան տարեգիրք»-ի (Dorpater Jahrbücher) հրատարակումներով, որի IV համարում (1835 թ.) նյութեր են տպագրվել նաև Հայաստանի մասին: Աբովյանը չէր կարող ծանոթ չլինել տարեգրքի համարներին: Հավանական է, որ Հայաստանին վերաբերող նյութերի տպագրմանը նպաստել է նաև ինքը՝ Աբովյանը: Բայց ավելի հետաքրքրական է 1836 թվականից տպագրվող “InLand” ամսագրի հանգամանքը, որն իր հայացքն ուղղել էր դեպի գավառը՝ ուսումնասիրելով տեղի պատմությունը, լեզուն, մշակույթը, բանահյուսությունը, այսինքն՝ հենց այն ոլորտները, որոնցով Աբովյանը պիտի սկսեր զբաղվել Կովկաս վերադառնալուց հետո:

1830-ական թվականների Դորպատը, որ գտնվում էր Էմալիգի գետի երկու եզերքին ու շրջապատված էր թավ անտառով, ուներ շուրջ տասը հազար բնակիչ: Իր հնություններով ու պատմական արժեքներով այն, իհարկե, չէր կարող համեմատվել ո՛չ Երևանի և ո՛չ էլ Թիֆլիսի հետ: Կայսերական համալսարանը, որ հիմնվել էր 1632 թ., վերաբացվել էր 1802 թ.՝ Ալեքսանդր Առաջինի օրոք: Այն մի սյունազարդ շինություն էր, որտեղ սովորում էր շուրջ 600 ուսանող, դասերն ընթանում էին լատիներեն և գերմաներեն: Այստեղ եռացել է ուսանողական կյանքը, որը յուրատեսակ իշխանություն է եղել իշխանության մեջ՝ լի գարեջրի ու զինու խրախճանքներով, կոռիվներով, սիրա-

<sup>1</sup> **Բակունց Ա.**, նշվ. աշխ., էջ 378:

հետություններով ու բաժանումներով: Դորպատյան ուսանողության նշանաբանը՝ «պատիվ, ազատություն, հայրենիք», շատ էր հարիր Աբովյանի մտածումներին ու նպատակներին: Այստեղ հենց սկզբից ջերմ է եղել շրջապատի վերաբերմունքը իրենց սիրելի պրոֆեսոր Պարրոտի հետ Արարատ լեռը բարձրացած Աբովյանի նկատմամբ: Ու թեև ռուսների նվաճումից հետո քաղաքի էստոնական Տարտու անվանումը փոխվել էր Յուրևի, և համալսարանը համադրում էր գերմանական ու ռուսական մշակույթները, սակայն քաղաքի բուն բնույթը չէր փոխվել և շարունակում էր մնալ, այսպես ասած, գերմանացված քաղաք, ինչը ապահովում էր համալսարանի՝ բողոքական ուղղվածություն ունեցող այդ օջախի, ուր տիրապետող աստվածաբանական ֆակուլտետից գատ գործում էին նաև իրավաբանական, փիլիսոփայական և բժշկական ֆակուլտետները, գիտական բարձր մակարդակը, որի նմանը ամբողջ Ռուսաստանում չկար: Նկատենք, որ համալսարանը միայն կրթական օջախ չէր, այլև մշակութային կենտրոն, ուր ուսուցանում էին նաև արվեստներ:

Աբովյանի ուսումնառությունը Դորպատում նախատեսված երկու տարվա փոխարեն տևեց հինգուկես տարի, որից չորսը ուսումնական եղան, մեկուկեսը՝ նաև գիտական հետազոտությունների: Դորպատում Աբովյանը ոչ միայն ստեղծագործել է, գրել բանաստեղծություններ, թարգմանություններ արել, այլև պատրաստել է գիտական ուսումնասիրություններ, օրինակ՝ «Գյուղական տների կառուցվածքը», օգնել համալսարանի գիտնական Վիլիելմ Վալտերին գերմաներեն թարգմանելու Մ. Խորենացու «Հայոց պատմություն» գիրքը, շարադրել դորպատյան իր օրագրությունները, ձեռնարկել օտարներին հայերեն սովորեցնելու գործը: Չպետք է մոռանալ Աբովյանի այն գործունեությունը, որն ուղղված էր եվրոպական մի շարք գիտնականների՝ Ք. Ֆրիդրիխի, Թ. Գրասի, Ա. Հաքստհաուզենի, Հ. Պետերմանի և այլոց մեջ Հայաստանի նկատմամբ հետաքրքրության առաջացմանը: Աբովյանի շփումները, իհարկե, այսքանով չեն սահմանափակվել: Չի բացառվում, որ նա հանդիպել է նաև հետագայում էստոնական «Կալնիպոեգ» էպոսի կազմող Ֆրիդրիխ Կրեյցվալդի հետ (ով մեծ վաստակ ունի էստոներեն գրական լեզվի, ազգային գրականության ստեղծման ու բանահյուսության մշակման և մանավանդ ազգային ինքնագիտակցության հիմնադրման գործընթացներում), որի Դորպատում ուսանելու տարիները համընկնում են Աբովյանի ուսումնառության ժամանակաշրջանին: Այս ընթացքում Աբովյանը ազատ ունկնդրի կարգավիճակով հաճախել է նաև առանձին հայտնի գիտնականների դասերին, ուսանել Դորպատի ուսուցչական սեմինարիայում՝ հմտանալով դասավանդման մեթոդիկայի մեջ: Դորպատյան տարիները լեցուն եղան դժվարություններով, բայց և հազեցած խիստ օգտակար գիտելիքների ձեռքբերմամբ: Այստեղ նա ըստ ամենայնի ուսումնասիրեց ոչ միայն աստվածաբանական առարկաներ, այլև սովորեց այնպիսի ճշգրիտ գիտություններ, ինչպիսիք են՝ մաթեմատիկան, երկրաչա-

փությունը, ֆիզիկան, քիմիան, տիեզերագիտությունը, վիրաբուժությունը, մեխանիկան, սովորեց պարել, ձիավարել, սուսերամարտել, դաշնամուր և կիթառ նվագել, ուսումնասիրեց ֆիզկուլտուրա առարկան, որն առհասարակ անձանոթ մի բան էր Հայաստանի և Վրաստանի կրթական օջախների համար, հմտացավ գյուղատնտեսության, քարտեզագրության մեջ, տեղի գերմանացի արհեստավորներից սովորեց հացագործություն, ապակեգործություն, գրքի կազմարարություն, պատճենահանություն, շաքարագործություն, ինչպես նաև «զանազան ձեռագործութիւն»՝ նպատակ ունենալով հայրենիք ներմուծել ոչ միայն եվրոպական կենցաղի տարրեր, կատարել բարքերի փոփոխություններ, այլև նպաստել գյուղատնտեսության ու արդյունաբերության որոշ ճյուղերի զարգացմանը: Ներսես Աշտարակեցուն գրված 1834 թ. հունիսի 10 թվակիր նամակից երևում է, որ Աբովյանը նախատեսել է Դորպատից իր հետ բերել նաև ուսումնական պարագաներ, երաժշտական գործիքներ, «գործիք մի էլեկտրական և օդահանութեան»<sup>1</sup>:

Դորպատում է, որ Աբովյանը հնարավորություն ստացավ բնագրով կարդալու եվրոպական առաջատար հեղինակների՝ Շիլլերի, ում համարում էր իր հոգու պահապանն ու իր առաջնորդը, Գյոթեի, Ֆիխտեի և այլոց գործերը: Չի կարելի անտեսել նաև, որ Աբովյանը Դորպատում հաղորդակից դարձավ ոչ միայն եվրոպական քաղաքակրթությանը, այլև քաղաքավարական գրված ու չգրված կանոններին: Նա իմացավ, որ, ասենք, որևէ բան հաստատելու համար անքաղաքավարություն է երդվելը, և բավական է միայն ասելը, որ նույնքան անընդունելի են բարձր ձայնով խոսելը կամ ծիծաղելը, արտահայտությունների մեջ զուսպ չլինելը և այլն: Տեղին է նկատել, որ Աբովյանը ամեն, ամեն բան նկատի է առել իր հետագա գործունեության ծավալման համար՝ անգամ նեղ անձնական կյանքը ծառայեցնելով իր ազգային ուխտի իրականացմանը: Օրինակ, այն կարծիքը կա, որ Աբովյանը հետագայում միտումնավոր է ամուսնացել քաղաքակիրթ օտարուհու՝ հետո՝ իր հայրենակիցներին եվրոպական կատարյալ ընտանիքի օրինակ ցույց տալու համար:

Դորպատում Աբովյանի գտնվելու տարիները մեկ անգամ ևս հաստատում են նրա արտակարգ ունակություններն ու բազում հետաքրքրությունները և հավաստում իր ժողովրդին նվիրվելու և լուսավորելու այն մեծ վճռականությունը, որը նա պիտի ծավալեր գիտության, կրթության ու ազգաշինության ասպարեզներում: Ընդհանրացնելով Աբովյանի կյանքի դորպատյան շրջանը՝ կարող ենք ասել, որ **այն հասկանշվում է ապագա գրողի ու լուսա-**

---

<sup>1</sup> Տե՛ս **Աբովյան Խ.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, Երևան, 1961, էջ 156:

\* Աբովյանը ամուսնացել է 1839 թ.՝ հայրական կողմից էստոնուհի, մայրական կողմից գերմանուհի Էմիլիե Լոոզեի հետ. նրանք ծանոթացել էին գերմանացի գաղթականների կողմից Քոի վտակներից մեկի ափին գտնվող Եկատերինֆելդ ավանում, որին Աբովյանը իր վեպում «Նեմեցի կոլոն» է անվանում: Նրանք ունեցել են երկու զավակ՝ որդին՝ Վարդանը և դուստրը՝ Զարմանդուխտը:

վորչի՝ եվրոպական չափանիշներով գիտական ունակությունների ձեռքբերումներով, աշխարհայացքի բեկումնային շրջադարձով, իր ծրագրերի իրականացման համար նախահիմքերի ստեղծմամբ: Աբովյանը Դորպատում ստացավ այն ամենը, ինչ անհրաժեշտ էր իր ժողովրդի կրթության, գրականության զարգացման ու ազգային երազանքների իրականացման գործում՝ **դառնալու համար նորարար ու սկզբնավորող** հայ նոր գրականության, ճիշտ այնպես, ինչպես Մաշտոցը՝ հայ գրերի, Կորյունը՝ հայերեն առաջին պատմական երկի, Կոմիտասը՝ հայ մեղեդու:

Աբովյանի ծրագրերից առաջնայինն ու կարևորը, իհարկե, աշխարհաբար լեզվի հիմնավորումն ու տարածումն էր\*, ինչը պիտի նպաստեր ժողովրդի միասնականացմանը (գրաբարը պարփակվել էր վանքերում, և ժողովուրդը անհաղորդ էր նրան), որն իր հերթին պիտի նպաստեր ինքնուրույն պետականության ստեղծմանը: Իսկ ճանապարհը մեկն էր, և դա, ինչպես գրում է Աբովյանը իր «Թիֆլիզու հայոց հանգստարանը» հոդվածում, աղքատ երեխաներին սովորեցնելը և իր գիտելիքները նրանց հաղորդելն էր, ժողովրդին ընթերցասեր դարձնելը, եվրոպական մակարդակի գրականություն ստեղծելը, մի խոսքով՝ լուսավորություն տարածելը: Այդ ամենի մասին Աբովյանը գրել է ամեն անգամ, երբ մտածել է իր կյանքի մասին՝ միշտ մտավախություն հայտնելով, թե՛ «... ախր ի՞նչ արի էս աշխարքում, որ ինձ էլ ողորմի տան, ախր ի՞նչ հիշատակ եղ քցեցի, որ ինձ էլ հիշեն» (էջ 651):

Իսկ կրթել և լուսավորել, ըստ Աբովյանի, նշանակում էր ուսումնաստեչ դարձնել աշակերտներին, քաղաքակրթել մարդկանց, նշանակում էր ազգի «բերանը լեզու դնել», «սրտներումը՝ դվաթ», ինչը ասել էր՝ նրան **գործունեության մղել**: Աշխարհին պետք չգալու, այսինքն՝ այդ ծրագրերը իրականացնելու անհնարինության պատճառների մասին իր մտավախությունը Աբովյանը հայտնում է նաև «Թուրքի աղչիկը» պատմվածքում, ուր նա, ընդվզելով մարդկանց մեջ աստվածային սիրո վերացման ու թշնամության արմատացման դեմ, ցանկանում է «կույր, խավար մտքի փարդի պատռում»<sup>1</sup>:

Դեպի հայրենիք դարձի ճամփին Աբովյանը այցելում է Ռուսաստանի մայրաքաղաք, հանդիպում մի շարք ռուս պաշտոնյաների ու մտավորականների, այդ թվում և “История государства Российского” 12-հատորյակի հեղինակ, պատմաբան Ն. Կարամզինին\*\*՝ բարձրացնում ազգանպաստ մի շարք

---

\* Մինչև Աբովյանի վեպը հայ միջնադարյան պոեզիան իր միջին հայերենի դրսևորումներով, ինչպես և աշխարհաբար արևմտահայերենով տպված գրքեր (որոնցից մեկն էլ Աբովյանի վեպի «Յառաջաբանում» հիշատակվող «Ռուպենսոնի պատմություն» գիրքն է, որը Դ. Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզո» վեպն է) արդեն կային: Հիշատակենք նաև 1834 թ. Մոսկվայում աշխարհաբարով տպագրված Նոր կտակարանը, որը հրատարակել էին Շուշիի բողոքական քարոզիչները:

<sup>1</sup> Նույն տեղում, հ. 4, Երևան, 1947, էջ 33:

\*\* Ն. Կարամզինի գրքերի պատմահայրենասիրական բնույթը, կարծում ենք, քիչ դեր չի խաղացել այն բանում, որ Աբովյանի վեպն էլ լեցուն է բազում պատմական էրևելույթներով ու փաստերով:

հարցեր, որոնք, սակայն, այդպես էլ մնացին անարձագանք: Մա, իհարկե, չի նշանակում, թե ռուսական իշխանությունները պակաս դեր են խաղացել Աբովյանի կյանքում: Չպետք է մոռանալ, որ այդ իշխանություններն էին, որ հնարավորություն տվեցին Աբովյանին ուսանելու Դորպատում և կրթաթոշակ ստանալու, իսկ գրողի անհայտացումից հետո նրա կնոջն ու երեխաներին ապահովեցին պետական նպաստով:

Երբ 1836 թ. Աբովյանը Դորպատից վերադարձավ Կովկաս, տիրապետում էր ավելի քան ութ օտար լեզուների՝ գերմաներեն, ռուսերեն, լատիներեն, ֆրանսերեն, անգլերեն, թուրքերեն, պարսկերեն, քրդերեն, վրացերեն: Նրա համար իրոք կարելի է ասել այն, ինչ գրել է Կորյունը Մ. Մաշտոցի վերաբերյալ. «Կրթվելով հելլենական (այս դեպքում՝ եվրոպական - Ա. Ա.) դպրությամբ» նա «ամեն պատրաստությամբ զարդարել էր իրեն»<sup>1</sup>: Դորպատից հետո Թիֆլիսում մնալու որոշումը ըստ ամենայնի պայմանավորված էր նրանով, որ Էջմիածնի խավարամիտ կղերը ամեն գնով թույլ չէր տալու Աբովյանին իրականացնելու իր ծրագրերը: Թիֆլիսը մշակութային ու կրթական կյանքի ավելի բարենպաստ ու լայն պայմաններ կարող էր ընձեռել, հնարավոր է, որ կար նաև նյութականի խնդիրը, ինչը պակաս կարևոր չէր նորավարտ Աբովյանի համար: Ցավոք, ինչպես Թիֆլիսը, այնպես էլ հետագայում Երևանը, Աբովյանի կատարած ամեն մի առաջադիմական քայլի դիմաց հարյուրավոր պատնեշներ կառուցեցին: Չէ՞ որ խավարամիտ շրջապատի համար բոլոր ժամանակներում էլ անհաճո է այն մարդը, ով ուզում է փոփոխություններ մտցել կյանքի բնագավառներում: Կրթական ու մշակութային այն հսկա պաշարը, որ նա ուներ, թվում է, թե անմիջապես իր կիրառումը պիտի գտներ կիսաֆեոդալական այդ միջավայրում, ու մանավանդ սովոր պիտի լիներ նրան սպասողների քանակը: Իրականում այդպես չեղավ:

Աբովյանը, մնալով հանդերձ իր կրոնական կոչման մեջ, Դորպատից իր հետ ավելի շատ բերել էր աշխարհիկ ծրագրեր ու գիտելիքներ, որոնք այնքան անհրաժեշտ էին խավարի մեջ խարխափող իր երկրացիներին: Նրա կյանքում ու մտածելակերպում ահռելի փոփոխություններ էին կատարվել, բայց ոչինչ չէր փոխվել ո՛չ հարազատ երկրում և ո՛չ էլ Թիֆլիսում: Նա մերժում է ստանում նաև բոլոր այն ունևորներից, ում դիմել էր իր ուսումնական ու կրթական ծրագրերին օժանդակելու համար: Ամենուր նրան ընդունեցին որպես մի մարդու, որը Եվրոպայից իր հետ բերել է միայն տարօրինակ ու օտար գաղափարներ: Աբովյանի ու նրա ծրագրերի դեմ սկսում են գործել Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսը, ով «լավ կարգաւորի» հակապատկերն էր (նրա գործունեությունը «Վերքում» սուր քննադատությամբ է ներկայացրել Աբովյանը), և հատկապես Հովհաննես Կարբեցի կաթողիկոսը: Աբովյանը շատ շուտ է համոզվում, որ ոչ մեկը «ականջ չի դնելու» իր կրթական ծրագրերին: Կաթողիկոսը, ծանոթանալով

<sup>1</sup> Կորյուն, նշվ. աշխ., էջ 25-26:

«եվրոպացոց օրինակով» Անդրկովկասում դպրոց բացելու Աբովյանի ծրագրերին և կարդալով Ռուսաստանի պաշտոնական անձանցից բերված երաշխավորությունները՝ պոռթկացել է. «Ի՞նչ, հրամանաւ զա՞ս ի վերայ իմ, վտարանդեալդ ի հաւատոյ... դո՛ւ լաւ խմորել կարես զմիտս անմեղաց, այլ կրթել զնոսա չէ քո գործ»<sup>1</sup>: Ձավեշտալին այն է, որ Թիֆլիսի գավառական դպրոցում ուսուցչի պաշտոն տալու համար Աբովյանից պահանջել են ուսուցչական քննություն հանձնել: Եվ սա այն դեպքում, երբ Աբովյանը հեղինակավոր գիտնականների կողմից Դորպատում արդեն քննվել էր պատմություն, աշխարհագրություն, թվաբանություն, երկրաչափություն, բնագիտություն, ռուսերեն, գերմաներեն, լատիներեն առարկաներից և դասավանդելու իրավունք ստացել: Իր կյանքի այդ ծանր օրերի վերաբերյալ հետագայում Ներսես Աշտարակեցուն ուղղված նամակում Աբովյանը գրում է, որ կարոտ ավուր պարենի՝ ինքը «ստիպեալ ի չքաւորութենէ՝ մտի ի պաշտօն արքունական, զոր ոչն երբէք կամէի»<sup>2</sup>: Աբովյանը հեռանում է իր հոգևոր կոչումից և շուրջ հինգ տարի՝ 1837 թվականից մինչև 1843 թ., Թիֆլիսում աշխատում որպես տեղական գավառական դպրոցի տեսուչ և ուսուցիչ՝ միևնույն ժամանակ սկզբում պարապելով մասնավոր աշակերտների հետ, իսկ հետո բաց անելով մասնավոր արական պանսիոնատ-դպրոց՝ ժողովրդական ուսուցիչներ պատրաստելու նպատակով, որը փակվում է 1843 թ. (ինչը շատ ծանր է տանում Աբովյանը), և ուր դասավանդել է դորպատյան առաջավոր ուսումնական ծրագրերի հիման վրա կազմված առարկաներ: Այստեղ ուսուցանվել են նաև նկարչություն, երաժշտություն առարկաները: Այս ընթացքում Աբովյանը կազմում է նոր ուսումնական ձեռնարկներ՝ նպատակ ունենալով հոգևոր արթնացում խթանող նոր ուժերի միջոցով տարածել իր ծրագրերն ու նպատակները, պատրաստել գաղափարակիրներ, որ ազգի փրկության «բարի սերմերը» սփռեն ուրիշների սրտերում: Նա իր աշակերտներին, որոնց թվում քիչ չէին նաև վրացիները և այլազգիները, հանձնարարում է մշտապես շարունակել իրենց ուսումնառությունը, իսկ լավագույններին խորհուրդ տալիս ուսումը շարունակել ինչպես Լազարյան դպրոցում, այնպես էլ մանավանդ Դորպատում: Նրա աշակերտներից ոմանք՝ Գ. Խատիայանը, Գ. Գեղամյանը, Գ. Շահնազարյանը, հետագայում նաև Աբովյանի որդին՝ Վ. Աբովյանը, իրոք ուսանեցին Դորպատում, որտեղ, Աբովյանից զատ, առաջին սովորողներից եղավ հետագայում ազգային ու մշակութային մեծ գործունեություն ծավալած Ստեփանոս Նազարյանցը, ով մայրական կողմից բարեկամ էր Աբովյանին, և ում Դորպատի համալսարանում սովորելուն մեծ նպաստ էր բերել Աբովյանը: Այս ընթացքում Աբովյանի դիրքորոշումը միանշանակ հանգում է այն համոզման, որ **մարդկային հոգին, ազգային կացությունը, մշակույթն ու լեզուն պետք է լինեն ինքնուրույն, ճիշտ այնպես, ինչպես որ**

<sup>1</sup> **Աբովյան Խ.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, էջ 268:

<sup>2</sup> Նույն տեղում:

**ազատ ու ինքնություն պետք է լինեն հայրենի հողն ու երկիրը:** «Լուսավորություն, կրթություն, միացած իսկական քրիստոնեական մտածողության հետ – սրանք են որևէ ազգի գոյության հիմնաքարերը», - գրել է նա գերմաներեն շարադրված իր նամակներից մեկում<sup>1</sup>: Եվ ելակետը մեկն է. տո՛ւր ժողովրդին ազատություն ու դի՛ր նրան բնականոն պայմանների մեջ, և նա կարարի իր երջանկությունը: Ազատություն ասելով՝ Աբովյանը, իհարկե, լոկ ֆիզիկական ու տնտեսական կաշկանդումների վերացումը նկատի չուներ: Նրա երազածը շատ ավելի բարձր մի բան էր, որ հանգում է ոգեղեն ազատության, ազգի ու անհատի անկաշկանդ գործունեության, կրթության համատարածման ու մշակույթի անբռնազբոս զարգացման: Նրա փայփայած երազանքներից մեկն էլ ժողովուրդների միջև բարեկամության ու համերաշխության ստեղծումն էր: Այդ գաղափարների տարածման վկայությունն են գերմաներենով գրված «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին» ուսումնասիրությունը, հայ և Անդրկովկասի մյուս ժողովուրդների կյանքի մի շարք կողմեր բացահայտող «Մեկ-երկու խոսք էլ հայոց վրա», «Գյուղական տների կառուցվածքը» և այլ գործերը:

Որքան էլ ճնշիչ, այնուամենայնիվ Աբովյանի կյանքի թիֆլիսյան երկրորդ շրջանը ամենից բեղունը եղավ և նշանավորվեց մի շարք գործերի ստեղծմամբ: Նա այստեղ է, որ 1841 թ. գրեց իր գլուխգործոցը՝ հայ ժողովրդին զարթոնքի ու մարտնչման կոչող, նրա գնալիք ուղին մատնացույց անող «Վերք Հայաստանի» վեպը, որը եկավ հաստատելու, որ ժողովրդի կյանքում հերոսի արյունը և գրողի մեղանը նույն մեծ արժեքն ունեն (վեպի առաջին՝ 1858 թ., և երկրորդ՝ 1908 թ., տպագրությունները եղել են հենց Թիֆլիսում: Երևանում այն առաջին անգամ տպագրվել է միայն 80 տարի անց՝ 1939 թ., իսկ վրացերեն՝ 1960 թ.): Դարձյալ Թիֆլիսում է, որ 1860 թ. տպագրվեց վեպի՝ նախկինում գրաքննության կողմից արգելված «Զանգի» հասվածը: Այստեղ է գրվել «Հազարփեշենի» նախնական տարբերակը, «Ամերիկու լիս քցիլը», «Պարապ վախտի խաղալիքը», «Զվարճալի ու կարճ պատմությունքը», «Թիֆլիզու հայոց հանգստարանը», նաև բազում առակներ և մի շարք ուսումնասիրություններ ու հոդվածներ, թարգմանվել Ա. Կոցեբուի «Ֆեոդորա» դրաման, որը վերնագրել է «Ֆեոդորա կամ որդիական սեր», պատրաստվել հայերենի և ռուսերենի քերականությանը վերաբերող նյութերը: Մինչև այդ՝ “Тифлисские ведомости” շաբաթաթերթի 1831 թ. թիվ 21-23 համարներում արդեն տպագրել էր «Ճանապարհորդություն պարոն պրոֆեսոր Պարրոտի և Խաչատուր դպիր Աբովյանի: Համառոտ ստորագրությամբ հանդերձ Արարատյան լեռին, որ է Մասիս» հոդվածը, որը նրա առաջին տպագիր գործն է, իսկ երկրորդ փորձը՝ տպագրել «Նախաշավիղ կրթությանը», կիսատ է մնացել: Այդ՝ ստեղծագործական առումով թիֆլիսյան երկրորդ շրջանը հարուստ եղավ, բայց և

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 243:



ուղեկցվեց տևական խոչընդոտներով, որոնց պատճառով, ինչպես երևում է 1839 թ. Մ. Ն. Մուսին-Պուշկինին, Խ. Ֆրենին, Ս. Ուվարովին գրած նամակներից, Աբովյանը փորձեր է արել ստանալու Կազանի համալսարանի հայոց լեզվի ամբիոնի ղեկավարումը կամ «Պետերբուրգում մի անկյուն գտնել», իսկ «գուցե հեռի նա», որտեղ կարողանար մի կտոր հաց հայթայթել: Թիֆլիսից հեռանալու պատճառների մասին գրողը 1847 թ. դեկտեմբերին Խ. Ֆրենին ուղղած նամակում գրել է. «Նախանձը և պաշտոնակիցներին կրած բազմատեսակ հալածանքները հարկադրեցին ինձ ընդմիջտ թողնել Թիֆլիսը և իմ սիրելի հաստատությունը (իմա՝ մասնավոր պանսիոնը - Ա. Ա.), որ ես բաց էի արել...»<sup>1</sup>:

1843 թ. Աբովյանը իր դիմումի համաձայն ազատվում է զբաղեցրած պաշտոնից և նշանակվում Երևանի նահանգային ուսումնարանի վերատեսուչ:

Աբովյանի գործունեությունը Երևանում կարճ տևեց, ընդամենը հինգ տարի՝ լի արագ զարգացող դեպքերով: Նրա կյանքի այդ հատվածի ուշագրավ երևույթներից մեկն այն է, որ XIX դարի հայ մշակութային ու գրական նշանավոր գործիչներից Աբովյանը միակն էր, որն ապրեց ու ստեղծագործեց բուն Հայաստանում:

Նա նախատեսում էր Երևանում հիմնել երեք տեսակի դպրոցներ, որոնք պիտի պատրաստեին ուսուցիչներ, կրոնավորներ, արհեստավորներ ու գյուղատնտեսությամբ զբաղվողներ: Այս ընթացքում նա գրում է «Առաջին սեր», «Թուրքի աղչիկը» և մի շարք այլ գործեր, 1847 թ. այցելում Անի և շարադրում «Ուղևորություն դեպի Անիի ավերակները»:

Երևանում Աբովյանը 1844 թ. մասնակցում է գերմանացի պրոֆ. Հ. Արիխի՝ Արարատի գագաթը բարձրանալու երեք ձախողված փորձերին, որի պատճառով հակասություն է առաջանում նրանց միջև, սակայն 1846 թ. անգլիական արշավախմբի հետ նա նորից է բարձրանում Արարատի գագաթը:

1845 թ. Աբովյանը դիմում է Ներսես Աշտարակեցուն՝ հոգևոր կոչում ստանալու համար, բանահյուսական նյութեր է հավաքում քրդերի ու եզդիների կենցաղի վերաբերյալ: 1846 թ. ստանում է կոլեգիական ասետրի աստիճան, այցելում Թիֆլիս: 1847 թ. Թիֆլիսի “Кавказ” թերթում տպագրում է «Նոր վերելք Արարատի գագաթը» հոդվածը: Նույն թվականին մահանում է նրա մայրը (հայրը մահացել էր 1834 թ.): 1848 թ. վերջին անգամ լինում է Թիֆլիսում: Հրաժարական է տալիս իր երևանյան պաշտոնից, հանձնում դպրոցի գործերը\*:

Աբովյանի՝ այս շրջանի կյանքը լեցուն էր ընտանեկան, անձնական ու կրթական խնդիրների բազում մտահոգություններով, որոնց հավելվում էին ազգային ու քաղաքական իրադարձությունների ողբերգական գործընթացները՝ ռուսական իշխանությունները ոչ միայն չէին նպաստում Հայաստանի

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 293:

\* Ստուգումները ցույց են տվել, որ գանձարկյում և գործերում որևէ խախտում չի եղել:

ինքնուրույն պետականության վերականգնման ծրագրերին, այլև արգելափակում էին ամեն մի նման փորձ կամ ձեռնարկում: Աբովյանը տեսնում էր, որ իր ժողովուրդը «դեռ հառաչում է բռնակալության լծի տակ»<sup>1</sup>, որ «...ախտք և ապականությունք, կեր և հափշտակություն, ամենայն ուրեք մաշէ և կեղեքէ զազգն ողորմելի»<sup>2</sup>, որոնք Աբովյանին մղում են հոգեկան ծանր ապրումների: Իր այդ վիճակի մասին նա գրում է ոչ միայն ժամանակի հայտնի մտավորականներին՝ Լազարյան ճեմարանի տեսուչ Մ. Էմինին, Խ. Ֆրենին, Պարրոտի այրի Է. Պարրոտին, Բարսեղ արքեպիսկոպոսին, Ներսես Աշտարակեցուն և այլոց ուղղված նամակներում, այլև անգամ իր գեղարվեստական գործերում: Օրինակ, «Թուրքի աղչիկը» պատմվածքում, որտեղ մեծ վշտով է արձանագրում իր ապրած սարսափի զգացողությունները, որոնք արդյունք էին Ռուսաստանից եկած «մեծ մարդու» գործունեության, «բարեկամների» դավաճանության ու «թշնամիների մատնության», և մանավանդ այն տհաճ զգացողության, որ հետևանք էր «Պետերբուրգ, Մոսկով, Թիֆլիզ լցված»<sup>3</sup> գանգատներով:

Պատմական անբարենպաստ դեպքերը, XVII դարի վերջերից սկսած, հայ ժողովրդին ստիպել էին իր հայացքը հառել դեպի Ռուսաստան: Պարսկաթուրքական դարեր տևած տիրապետությունները ոչ միայն ճնշել ու թալանել էին հայերին, այլև հաճախ ուղեկցվել Հայաստանի տարածքում միմյանց դեմ վարվող պատերազմներով, որոնց եկան ավելանալու Հերակլ II-ի 1751, 1765, 1779 թթ. արշավանքները դեպի Հայաստան: Դեռևս 1703 թ. հայ մելիքները աղերսներով դիմել էին Պետրոս Մեծին, թե նրանով պետք է լինի «ամենայն քրիստոնեից արձակումը»<sup>4</sup>: Իսկ ազատագրել Հայաստանը նշանակում էր նաև դեպի հայրենիք ճանապարհ բացել օտարության մեջ ապրող հայերի համար, որի վերաբերյալ Աբովյանը իր վեպում գրում էր. «... ցրվյալ ազգը էլ ետ իրանց աշխարհը բերել» (էջ 231):

Սակայն Աբովյանը տեսնում էր, որ նոր օրերում՝ պարսկաթուրքական բռնությունների վերացումից հետո էլ ոչինչ չէր փոխվել: Ավելին, կյանք էին ներխուժել նոր չարիքներ՝ իր խոսքով ասած՝ «խառնաբարոյությունը», բարքերի ապականությունը, խաբեբայությունը, մարդկանց ատելության մեծացումը, «հավատի հովիվների խառնակենցաղայնությունն» ու համընդհանուր սոցիալությունը: Այս իմաստով բնութագրական է Աբովյանի՝ Ներսես կաթողիկոսին\* ուղղած 1847 թվակիր նամակը, ուր նա գրում է, որ ինքը Հայաստան

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 242:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 267:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 20:

<sup>4</sup> Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Русско-армянские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, часть I, Ереван, 1964, с. 240.

\* Աբովյանի կյանքում մեծ դեր է խաղացել Ներսես Աշտարակեցին, որ Վրաստանի և Բեսարաբիայի հայոց հոգևոր առաջնորդ լինելուց հետո 1837 թ. ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս: Նա մասնակցել էր 1827 թ. մղված ռազմական գործողություններին, մշտապես

տան է եկել ուխտի, սակայն «չարաչար սխալվել է», որ իրականության իր տեսածն ու գտածը քարերին անցամ «աղաղակել» են տալիս: Աբովյանը այդ նամակում բողոքում է, թե «ընդէ ր խաբեն գմեգ կեղծավոր լրագիրք Կովկասի փառօք և բարեբախտութեամբ ազգի»: Նամակում Աբովյանն այն միտքն է հայտնում, որ Հայաստանի ազատությունից օգուտ չկա, և Հայաստանը իրականում «... առաւել ևս ի խաւարի տգիտութեան դանդաչէ, քան յաւուրս առաջինս ընդ բռնութեամբ բարբարոսաց»<sup>1</sup>:

Ահա հենց այս գաղափարադրություն է, որ խտացված է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի գլխավոր ասելիքը՝ **պայքար ամեն մի բռնակալության դեմ՝ ում կողմից և որ ժամանակահատվածում էլ այն դրսևորվի՝ մի գաղափար, որ արդիական հնչեղություն ունի բոլոր հայ սերունդների համար:**

Աբովյանի կյանքի այս վերջին շրջանի ամենաբնութագրական հատկանիշը իր փայփայած պատրանքներից վերջնականապես հիասթափությունն է, որի հիմնական պատճառն այն էր, որ **հայ մարդը շարունակում էր դուրս մնալ քաղաքակրթությունից, ու մանավանդ այն, որ ռուսական ողջունված մուտքը վերաճել էր ռուսական տիրապետության, ուր բացառվում էր դարերի ընթացքում ոչնչացված հայկական ինքնության վերականգնման որևէ հնարավորություն:** Աբովյանն իր վեպով իրականում հենց այդ առկա բռնատիրությունն էր քննադատում և ոչ թե լոկ ողջունում պարսկական կամ թուրքական բռնություններից ազատագրումը, որը վեպը գրելու ժամանակահատվածի հարաբերությամբ արդեն ժամանակավրեպ մի հարց էր, անցյալ և չուներ ոչ մի արդիականություն: Աբովյանը, այո՛, գրել է իր վեպում, թե ցանկալի է, որ Հայաստանը ռուսի «արծվի թների տակին գորանա», բայց և շարունակել, որ իր «դարդերը մոռանալուց հետո» ազգը պիտի միավորվի, իր երկիրը պիտի **«էլ ետ իր առջին փառքին հասնի»** (ընդգծումը մերն է – Ա. Ա.): Դիմելով ժողովրդին՝ Աբովյանը իր բանաստեղծություններից մեկում գրում է.

*Խելքդ ժողովես, լինիս կտրիճ հայ*

.....

*Փոքր դինջանաս ու քո աշխարհքին*

*Մուղայիթ կենաս, արյունդ թափես (էջ 204),*

որը նշանակում էր ինքնուրույնության, անկախության ու պետականության հասնել:

Աբովյանի՝ նոր իշխանությունների նկատմամբ քաղաքական դիրքորոշման փոփոխման ամենամեծ ապացույցն իհարկե մնում է իր վեպին տրված

---

հորդորել, որ ռուսներին ցույց տրվի օգնություն, հիմնել էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Թե՛ կրթական և թե՛ ազգային խնդիրներում Աբովյանի և կաթողիկոսի ծրագրերն ու աշխարհայացքը շատ բաներով համընկնում էին, սակայն կաթողիկոսը մինչև վերջ հավատարիմ չմնաց այդ ծրագրերին, և նրա վարած քաղաքականության մեջ նկատելի դարձան հետընթաց գործողություններ, որոնք Աբովյանը խիստ ցավալի տարավ:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 295:

վերնագիրը՝ «Վերք Հայաստանի» և դրան հավելագրած «Ողբ հայրենասիրի» ենթախորագիրը: Հիասթափության ու հուսահության այդ դրսևորումները նրա մեջ տեղ էին գտել դեռևս Դորպատից վերադառնալուց անմիջապես հետո, որոնք արտահայտվել են այդ ընթացքում շարադրած նրա մի շարք գործերում, այդ թվում և 1837 թ. գրված «Ձարթնուք ի միտս իմ կրկին կենդանի» տողով սկսվող բանաստեղծությունում.

*Ի վայրս ծննդեան ի ծոց հայրենեաց  
Թափառիմ անոյս, անճար, անմխիթար,  
Թէն խաւարին իմ կեանք խղճալի  
Չի՛ք որ՝ որ լիցի սրտառուչ ինձ աստ (էջ 467):*

Եվ իրոք, Աբովյանի կյանքի վերջին տարիներին «Չի՛ք որ», որ մխիթարեր ու օգներ «նեղեալ» Աբովյանին, ու հենց այդ պատճառով բանաստեղծության ավարտին գրողը ձևակերպել է իր «վերջին վճիռը».

Որոյ վերջին վճիռն է դառնալ ի հող:

Իր վեպի չափածո ընծայականում գրված ինքնաբնութագիրը՝ «Վաղուց գլխիկոր թախծեալ իմ քնար», հենց այն ճշմարտությունն էր, որ բաժին էր ընկել ոչ միայն Աբովյանի ստեղծագործությունների ճակատագրին, այլև Աբովյան մարդուն ու նրա ժողովրդին: 1845 թ. Ներսես Աշտարակեցուն գրած իր նամակում Աբովյանը մեկ անգամ ևս հավաստում է հայրենիքի համար իր գոհողության պատրաստակամության մասին. «Չի՛ք իմ այլ կեանք, քան բարեբախտութիւն Հայրենեաց: ... պատրաստ եմ հոգով և մարմնով և խաչ ելանել ի սիրոյ առ Հայրենիս»<sup>1</sup>:

Սկսած 1836 թ. մինչև իր կյանքի ողբերգական ավարտը՝ 1848 թ., այսինքն՝ տասներկու տարի, Աբովյանը, գոհողության ու ինքնամոռացության հասնող խիզախությամբ Թիֆլիսում և Երևանում նվիրվեց ուսուցչության. Կորյունի խոսքերով ասած՝ «ուսման բովի մեջ» մտցնելով իր աշակերտներին, զբաղվեց գրականությամբ, բանահավաքությամբ, թարգմանչությամբ, ազգային կյանքի մեծ ու փոքր խնդիրներով, և այդ ամենը անլուր հալածանքների ու չարախոսությունների ուղեկցությամբ, ընդհուպ այն աստիճան, որ արդեն 1846 թ. որոշել էր թողնել ամեն ինչ և զբաղվել միայն հողագործությամբ:

Շատ, չափազանց շատ էին այն պատճառները, որ Աբովյանի կյանքի վերջին տարիները լցվեին անհաղթահարելի դժվարություններով ու բարդություններով, որոնց մեջ ետին տեղ չէին զբաղեցնում նաև Երևանի գավառապետի ու ոստիկանապետի հալածանքները: Մի պահ ասես նոր դուռ էր բացվելու նրա հետագա հայրենանվեր գործունեության համար: Ներսես Աշտարակեցու կողմից նա նշանակվում է Տփղիսի Ներսիսյան դպրոցի տնօրեն: Դա կարող էր նրա կյանքի ևս մի թիֆլիսյան շրջան լինել... Սակայն 1848 թ. չարագուշակ առավոտը եկավ վերջ դնելու ամեն բանի:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 269:

Աբովյանի անհայտացումից հետո էլ նրա կյանքին հատկանշական որոշ երևույթներ շարունակվեցին. Էստոնիայում թեև կանգուն է Էմայիզի գետի ափին 1978 թ. կանգնեցված նրա հուշարձանը, սակայն այլևս չկա Աբովյանի անվան փողոցը, ավելի քան 20 տարի վերացվել էր Տարտուի համալսարանում բացված նրա անվան ամբիոնը (այն վերականգնվեց 2010 թ.՝ Աբովյանի ծննդյան 200-ամյակի և Արարատի գագաթը բարձրանալու 180-ամյակին նվիրված ուշացած ցուցահանդեսի բացման առիթով), իսկ 1980-ականների վերջերին Երևանում, ցավոք, վանդալիզմի հասնող վերաբերմունք ցուցաբերվեց հայ «վայ հայրենասերների» կողմից, ովքեր իրենց քաջությունը հաստատելու համար կրակեցին Աբովյանի արձանի վրա, որն առանց այդ էլ երկար տարիներ մնացել էր Փարիզի ձուլարաններից մեկում և միայն մի քանի նվիրյալ հայերի շնորհիվ հրաշքով փրկվել վերածուլումից, որը լինելով երբևէ մեր իրականության մեջ առհասարակ հայ գրողի պատվին կանգնեցված առաջին գործը՝ այն այսօր էլ շարունակում է մնալ չգերազանցված գործ:

Դորպատից Հովհաննես Կարբեցուն ուղղված 1832 թ. մարտի 2-ի թվակիր նամակում Աբովյանը գրել է. «... Իմ տուն՝ Հայրենիք իմ, իմ վայելչություն՝ մեռանիլ վասն նորա ...»<sup>1</sup>: Իր տարաբախտ Հայրենիքին օգնելը իրոք որ միշտ մնաց, ինչպես ինքն է գրում՝ «վերջին նպատակ կենաց իմոց»:

Ահա այսպես ու ահա այն, ինչ վիճակվեց, Կ. Ջարյանի խոսքերով ասած, հայ գրականության «մեծագույն դյուցազներգակին», նրան, որ «հայ վերածննդի հայրն» էր (Ն. Ադոնց), նրան, որ «մեծերից մեկն» էր (Հ. Սահյան), **նոր ժամանակներում առաջինը այն մարդկանցից, ով իր հայացքը հատել էր հեռուն՝ «Հայրենիքի սրտին ցրված կտորները գտնելու համար»<sup>2</sup> և հաստատելու, որ Հայաստան աշխարհը ունակ է «սեփական մեղեդիները հնչեցնելու»: Նա՝ Աբովյանը՝ ուժեղ ու անձնվեր մարդը, ստեղծագործողը, հանճարը: Նա՝ Աբովյանը, ում սիրտը, իր իսկ բառերով ասած, բաղկացած էր «միայն անբուժելի վերքերից»<sup>3</sup>:**

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 144:

<sup>2</sup> **Ջարյան Կ.**, Նավատումար, Երևան, 1999, էջ 91:

<sup>3</sup> **Աբովյան Խ.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, էջ 241:

### **Artsrun Avagyan, Khachatur Abovyan – *Three Periods of Life, Three Environments***

The following article represents the life of one of the writers of Armenian enlightenment and national promoters Khachatur Abovyan, particularly the three periods of his life – in Yerevan, Tiflis and Dorpat. It mainly covers educational, moral, political, religious and national interrelations in these environments that were directly connected with the writer's outlook, depiction and the fields of his activity.

The article develops the following idea – in Dorpat Abovyan's education was full of scientific high standards and comprehensiveness.

For fulfilling his plans in his motherland and Caucasus Abovyan had chosen European standards and had done his best to esdicate from an Armenian mental wretchedness, spiritual and national poverty which was the result of foreign yoke that had lasted for centuries. However, the ignoramus environment had always hindered and persecuted him; it had always forbidden the appliance of new methods at schools as well as the spread of enlightenment and advanced education at wider national levels. Abovyan was and still remains innovator and founder of Armenian new literature, the spreader of the seeds of national independence and the ardent supporter of ashkharhabar (new Armenian language) language, and, finally, the leader of Armenian people to the way of civilization and unity.

**ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆ. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ**

*Բանալի բառեր – արտալեզվական գործոններ, արևմտահայերենի որակավորման դասընթացներ, լեզվական նորմ, ամառային դպրոց, արևելահայերեն, լեզվի պահպանում, լեզվական նահանջ, հայերեն կրթություն ստանալ, հայաշատ համայնքներ, ընթերցանության պակաս, գերիշխող լեզու, լեզվական որակ*

Արդի հայերենագիտության մեջ և այլուր գրական արևմտահայերենի մշակման և պահպանման խնդիրների նկատմամբ ուշադրությունն աննախադեպ է: Եվ դա ունի հիմնավոր պատճառներ: Արևմտահայերենը հայտընվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «վտանգված լեզուներ»-ի ցանկում. այն աստիճանաբար դադարում է ընդհանուր հաղորդակցման լեզու լինելուց հենց սփյուռքահայերի համար: Տարբեր հաշվարկներով՝ հայկական սփյուռքում արևմտահայերենով հաղորդակցվում է ընդամենը 1.7-2 մլն մարդ: Օրեցօր նվազում է նաև այդ թիվը: Պատճառը, սակայն, մեզ բաժին ընկած ճակատագրի ու մեր լեզվի յուրահատուկ պատմության մեջ չէ միայն: Համաշխարհայնացման արդի պայմաններում հայրենի հողից տարագիր եղած հանրության համար, երբ վերջինս անմիջական ու առանձնաբար սերտ կապի մեջ չէ բնաշխարհի հետ, երբ օտար միջավայրը և արտաշխարհի հասարակական ու քաղաքական զարգացումները գնալով դառնում են պարտադրող, ազգային լեզվի ու մշակույթի պահպանությունը դառնում է դժվարին խնդիր:

Խնդրի լուծումը նախ և առաջ ենթադրում է պատճառների հետևողական և մանրակրկիտ ուսումնասիրություն, ապա նաև գործունեության իրական և հստակ ծրագրի մշակում: Հարցի վերաբերյալ մեր դիտարկումները հանգել են հետևյալին:

**Արևմտահայերենի նահանջի հիմնական պատճառները:** Գրական արևմտահայերենի այսօրվա վիճակը հուսադրող քիչ բան ունի: Զարգացման հեռանկարներն առավել քան անորոշ են: Հայկական սփյուռքի պայմանները գնալով լեզվի համար դառնում են աննպաստ և անհեռանկար: Արևմտահայերենը ցավալիորեն նահանջում է: Պատճառները բազմազան են:

Նահանջի առաջին և հիմնական պատճառներից մեկը **Սփյուռքում լեզվի պահպանումն ու զարգացումը ղեկավարող կենտրոնի չգոյությունն է:**

Աշխարհի տարբեր կողմերում սփռված հայությանը ընդհանուր գաղափարի շուրջ համախմբելը դժվարին գործ է: Բայց այդ գործը երիցս դժվար է, երբ խոսքը վերաբերում է լեզվին: Կենտրոնը պիտի ուղղություն տար, հա-

մախամբեր ուժերը լեզվական մեկ և նույն նպատակի շուրջ. այն է՝ կազմակերպել արևմտահայերենի պահպանման ու մշակման գործը: **Մփյուռքը դժբախտությունն ունեցավ այդպիսի կենտրոն երբևէ չունենալու:** Եղան անհատներ՝ գործի ու գաղափարի նվիրյալներ՝ Լևոն Շանթ, Արսեն Ղազիկյան, Շավարշ Նարդունի, Հակոբ Օշական, Զարեհ Մելքոնյան, Պետրոս Հաճյան: Այսօր էլ կան ու գործում են շատերը՝ Լիբանանում՝ Անդրանիկ Կոսնյան, Արմենակ Եղիայան, Կարո Առաքելյան, Հունաստանում՝ Հարություն Քյուրքճյան, Միացյալ Նահանգներում՝ Հովսեփ Նալբանդյան, Միրիայում՝ Հակոբ Չոլաքյան և ուրիշներ: Անհատական այդ ջանքերը, սակայն, այդպես էլ չդարձան հավաքական ուժ, չվերածվեցին նպատակային և համախումբ գործունեության:

«Հակիչ» կեդրոնի մը» բացակայությունը Պետրոս Բեդիրյանը համարում է արևմտահայերենի «գոյութեան ու զարգացումի ճամբուն վրայ եղած մեծագույն խոչընդոտներից մեկը. «Այս բոլորին ուղղակի հետեւանքը կ'ըլլայ անհատական ճաշակներու թելադրութիւնը,- գրում է նա,- քիչ թէ շատ դասական կրթութիւն ստացած մեկը, վստահ իր գիտելիքներուն, կը տրուի կարծել թէ ի՛ր գիտցած Հայերէնը ճիշդ է, ընդունելի, եւ այլն: Թող որ վերը յիշուածներու (Օշականներ, Թեքեյաններ, Շահնուրներ, Վահե-Վահյաններ և այլք – Յու. Ա.) աշակերտներուն շարքերն ալ օրէ օր կը նոսրանան, եւ ասպարէզը բնականաբար կը մնայ հայերէնի ուժացող դասաւանդութեանց հետեւած մարդոց»<sup>1</sup>:

**Արևմտահայերենի նահանջի երկրորդ հիմնավոր պատճառը հայերենով կրթություն ստանալու անհեռանկարն է:** Հայերենով բարձրագույն կրթություն ստացած հայ երիտասարդը այսօր Մփյուռքում իր կեցության խնդիրները լուծելու մեծ դժվարություններ ունի, հետևաբար խուսափում է այդ կրթությունն ստանալուց: Մփյուռքի հայագիտական միակ բարձրագույն հաստատության՝ Բեյրութի Հայկազյան համալսարանի հայերենագիտության բաժնում ամեն տարի ուսանելու է գալիս ընդամենը մեկ-երկու հայ ուսանող: Մփյուռքահայ մտավորականների զավակներն այսօր գերադասում են կրթություն ստանալ ոչ թե Երևանի պետական համալսարանում, այլ եվրոպական բուհերում: Մինչդեռ ընդամենը երեք-չորս տասնամյակ առաջ պատկերը բոլորովին այլ էր. 1960-1990-ական թվականներին Հայաստանի տարբեր բուհերում անվճար ուսում են ստացել ավելի քան 1000 մփյուռքահայ ուսանողներ:

**Երրորդ պատճառը կամ գործոնը երբեմնի հայաշատ և կենսունակ համայնքների աստիճանական տարրալուծումն է:** 1950-1960-ականների պատերազմական գործողությունների և վերջին տարիների ռազմական ու սոցիալական խժոժությունների հետևանքով ծանր հարվածներ կրեցին Եգիպ-

---

<sup>1</sup> Պետիրեան Պ., Եկեք ճիշդ խօսինք ու գրենք, Պոստոն, 1993, էջ 6:



**տոսի** և **Իրաքի** հայերը: Երբեմնի հայաշատ համայնքները խեղճացան, սփռվեցին աշխարհով մեկ, թուլացավ կապը արմատների հետ:

**Լիբանանը** վերջին տասնամյակներին կորցրեց իր երբեմնի գերակայությունը Սփյուռքում: Հայկական սփյուռքը գրկվեց սնուցող ու կենսունակ հզոր երակից, բայց մանավանդ ոգեշնչող կենտրոնից: 1975 թ. ծայր առած քաղաքացիական պատերազմը սկիզբ դրեց մինչև օրս շարունակվող արտագաղթի. հայության քանակը էապես նվազեց՝ 150.000-ից հասնելով 60.000-ի, պակասեց դպրոցների թիվը՝ 60-ից իջնելով 28-ի, աշակերտների թիվը՝ 25.000-ից՝ 7000-ի: Ըստ որում, Լիբանանում դպրոցահասակ հայ երեխաների թիվը այսօր հաշվվում է մոտ 14.000, բայց հայկական դպրոց է հաճախում նրանց միայն կեսը՝ 7.000-ը: Եվ սա այն դեպքում, երբ ամենահեռավոր հայկական դպրոցը ընդամենը կես ժամվա ճանապարհի վրա է<sup>1</sup>:

**Միրիայի** իշխանությունների և այսպես կոչված զինված ընդդիմության միջև շարունակվող պատերազմի պատճառով ծանր կացության մեջ հայտնվեց Միրիո հայկական գաղութը: Երբեմնի 80.000-անոց շեն համայնքից այսօր գրեթե խլյակներ են մնացել (ընդամենը մեկ տասնամյակ առաջ Միրիայում գործող հայկական դպրոցների թիվը երեք տասնյակից ավելի էր)<sup>2</sup>: Միրիահայերից շատերը (մոտ 12.000) Հայաստան եկան. հայրենիքում ապաստանած սիրիահայ աշակերտների թիվը անցնում է 1000-ից: Մյուսները գաղթեցին Լիբանան և այլուր: Շատերը հանգրվանեցին նախկին Խորհրդային Միության տարածքում՝ վերջնականապես խզելով կապը արևմտահայ արմատների հետ:

Նահանջում է նաև Ստամբուլը՝ արևմտահայ մշակույթի երբեմնի հզոր կենտրոնը: Ըստ սոցիոլոգիական հարցման արդյունքների՝ ներկայումս արևմտահայերենով հաղորդակցվում է պոլսահայերի ընդամենը 18%-ը<sup>3</sup>: Նվազում է նաև հայկական կրթօջախներում սովորող աշակերտների թիվը: 1972-1973 ուսումնական տարում Ստամբուլում գործել է հայկական 32 վարժարան՝ 7.366 աշակերտով: 2009-2010 ուսումնական տարում վարժարանների թիվը իջել է 16-ի. կեսից ավելի չափով պակասել է աշակերտների թիվը՝ հասնելով 3.029-ի<sup>4</sup>: Ֆինանսական խնդիրների և աշակերտների թվի նվազման պատճառով փակվել են նաև մի շարք մասնավոր

---

<sup>1</sup> Տե՛ս Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում. Գիտաժողովի նյութեր, Երևան, 2013, էջ 30-35:

<sup>2</sup> Տե՛ս **Հարությունյան Ն.**, Լիբանանի և Միրիայի հայկական դպրոցները, Երևան, 2002, էջ 205-206:

<sup>3</sup> Տե՛ս «21-րդ ԴԱԸ», Երևան, 2011, թիվ 4, (38), էջ 47:

<sup>4</sup> Վիճակագրական այս տվյալները հեղինակը վերցրել է Պոլտ Հայոց պատրիարքարանից, Ուսուցչական միությունից և «կարգ մը վարժարաններէն»: Տե՛ս **Գույումճեան Ս.**, Ակնարկ մը ստամբուլահայ վարժարաններու իրականութեան, Ստամբուլ, 2010, էջ 51:

վարժարաններ՝ Պերպերեան, Տայեան, Տիպար կրթարան (Սուլթանյան), Պեզազյան, «Նոր դպրոց» և այլն<sup>1</sup>:

**Լեզվական նահանջի հիմնավոր պատճառ է նաև Սփյուռքի հայ երիտասարդության շրջանում ընթերցանության և հայերենի նկատմամբ հետաքրքրության մեծ պակասը:** Ավելորդ չէմ համարում այս հարցի առիթով հիշեցնել հայ սփյուռքի ճակատագրով մտահոգ լիբանանահայ մտավորական գործիչ Արմենակ Եղիայանի տազնապը. «Նոյն այս յիսնամեակին էր, որ արևմտահայերէնը կորսնցուց իր հիմնական նեցուկներէն ընթերցասիրութիւնը ևս՝ թէ՛ հրապարակագրական, թէ՛ գեղարուեստական առումով: Կարգ մը հաշիւներ ու վկայութիւններ ցոյց կու տան, որ Լիբանանի մէջ 60-ական թուականներուն լիբանանահայ մամուլը՝ իր չորս օրաթերթերով, գրական երկու շաբաթաթերթերով և երկու ամսագրերով, չհաշուած տարեգիրքերը, պարբերաթերթերն ու պաշտօնաթերթերը, միասնաբար լոյս կը տեսնէր աւելի քան 20.000 տպաքանակով և յամառօրէն կ'ընթերցուէր աւելի քան 100.000 հայու կողմէ: Այս ընթերցողները ընդհանրապէս չափահասներ էին, 18-20-ը անցածներ, որոնց համար ընթերցումը իրենց ուսումին շարունակութիւնն էր և կը լրացնէր անոր բացը: Ասոր վրայ պէտք է աւելցնել ընթերցումը գրական և այլ բնոյթի, յատկապէս թարգմանական երկերու, որոնց տպաքանակը միջին հաշուով 2-3 հազար էր և յաճախ կը կրկնուէր. Ա. Ծառուկեանի «Թուրթ առ Երևան»-ը մինչև 60-ականները ունեցած է 12 հրատարակութիւն: Արդի սերունդները անոր անունն իսկ չեն գիտեր»<sup>2</sup>: Այսօր լիբանանահայ պարբերաթերթերի ընդհանուր տպաքանակը չի անցնում 5 հազարը, և եղածն էլ դժվարությամբ է իրացվում:

Արևմտահայերենի նահանջի գլխավոր պատճառներից մեկը **Սփյուռքում լեզվի մասնագետների պակասն է:** Ավելի ստույգ՝ հայերենագիտական բարձր որակի չգոյությունը: «Կարելի չէ աչք գոցել. Սփյուռքի մէջ, ներկայիս, սով է Հայերենի ուսուցիչներու, աւելի մեծ սով՝ ճիշդ արեւմտահայերենի տիրապետող ուսուցիչներու»<sup>3</sup>: Սփյուռքը բոլոր ժամանակներում էլ ունեցել է այդ պակասը: Սակայն վերջին շրջանում զանազան հաստատությունների փակումը (Մելքոնյան վարժարան, Նշան Փալաջյան ճեմարան, որը հիմնադրվել է 1929 թ. և ունեցել բեղմնավոր գործունեություն, Համազգային հայագիտական բարձրագույն հիմնարկ և այլն), հայեցի կրթության նկատմամբ աճող անհետաքրքրությունը, նվիրյալների մի ամբողջ սերնդի՝ ասպարեզից հեռանալը ստեղծեցին ծանր կացություն: Սիրողական մակարդակով ուսուցումը, դասագրքերի պակասը, նյութական սղությունը և մի շարք այլ հանգամանքներ դժվարացնում են մայրենիի դասավանդումը: Տակավի՛ն 1960-ական թվականներին Հայաստանի սփյուռքահայերի հետ մշակութային կա-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 26:

<sup>2</sup> Տե՛ս Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում, էջ 34-35:

<sup>3</sup> **Պետրեան Պ.**, նշվ. աշխ., էջ 6:

պերի կոմիտեն կազմակերպում էր սփյուռքահայ ուսուցիչների որակավորման ամենամյա դասընթացներ. յուրաքանչյուր տարի մոտ 50 ուսուցիչ մասնակցում էր օգոստոսյան խորհրդակցությունների և կամրնտրական դասընթացների: Վերջին երկու տարիներին Մփյուռքի նախարարության կազմակերպած ամառային դպրոցի դասերին արևմտահայ ուսուցիչների մասնակցության չափը (տարեկան 3 կամ 5 ուսուցիչ) շատ հեռու է գոհացուցիչ լինելուց: **Արևմտահայերենի վրա գնալով մեծանում է գերիշխող լեզուների ազդեցությունը. խոսքը մասնավորապես անզլերենի մասին է:** Այս լեզվից ոչ միայն գրական արևմտահայերենին են անցնում առանձին ոճեր ու ձևեր, այլև նրա ուժեղ ազդեցությամբ էապես աղավաղվում է կենդանի խոսակցական հայերենը: Մփյուռքահայի խոսքում սովորական են դառնում անզլերենով համեմված արտահայտությունները՝ *մեկ քանի խոսք չենք ըրինք, օթոս փարքինգ ըրի, արսիդանի մեջ ինկեր էի, ֆրիվեր էքզիթ ըրի, մյուզիք կը լսեի:* Դա խզում է առաջ բերում արևմտահայերենի խոսակցական և գրական տարբերակների միջև, որը և խաթարում է լեզվի բնականոն զարգացումը:

**Հիմնավոր պատճառ է նաև զուտ լեզվական գործոնը. վտանգված է արևմտահայերենի լեզվական որակը:** Նշված արտալեզվական գործոնները և լեզվական մի շարք այլ հանգամանքներ պատճառ դարձան արևմտահայերենի՝ երբեմնի կոկիկ ու հղկված գրական լեզվի նկարագրի աղավաղումին: Նորմավորման շրջանից ի վեր՝ XX դարասկզբից սկսած, գրական արևմտահայերենը երբեք այսքան «լքուածութեան ու անտիրութեան մատնուած» չի եղել: Արտասանական զուգաձևերի բազմազանություն, երկակի ուղղագրություն ունեցող բառերի առատություն, էական խզում արտասանության և ուղղագրության կանոններում, օտար բառերի տառադարձության անորոշ ու բարձիթողի վիճակ, ամենաթողություն քերականական տարբերակների գործածության մեջ, պարբերական մամուլի լեզվի անվերահսկելի կացություն. այս բոլորը միասին գրական արևմտահայերենի բախտը համառորեն մղում են դեպի զարգացման տխուր անհեռանկար:

Արևմտահայերենը 2010 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ճանաչվեց **վերջնականապես վտանգված լեզու:** Չանց եմ առնում հետնաբեմերում քննարկվող շարժառիթները: Բայց ուզում եմ հիշել, որ այդ կարգավիճակում հայտնված լեզուները բնութագրվում են հատկանիշներով, որոնք, մեղմ ասած, տազնապ են հարուցում. այդ լեզուն երեխաները այլևս տանը չեն սովորում ու չեն գործածում որպես մայրենի լեզու, էապես նվազում է լեզուն կրողների բացարձակ թվաքանակը, ընկնում է վտանգված լեզվի կենսունակությունը, դժվարանում է միջսերնդային փոխանցումը, անկում են ապրում լրագրողական և վարչական կիրառությունները, զգալիորեն պակասում է այդ լեզվով հրատարակվող գրականությունը<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս <http://azbarez.com/83944/western-armenian-in-peril-unesco%E2%80%99s-recognition-and-the-question-of-contemporary-literature-in-the-exilic-language/>

**Արևմտահայերենի պահպանման հեռանկարը:** Կարելի է նշել արևմտահայերենի նահանջի նաև այլ նշաններ: Մակայն կարծում եմ, որ ասվածը արդեն իսկ վկայում է, որ արևմտահայերենի պահպանման համար այսօր աննախադեպ ծանր պայմաններ են ստեղծվել Սփյուռքում: Այս պարագաներում արևմտահայերենը կենդանի պահելու հիմնական կենտրոնը մնում է Հայրենիքը:

Վերջին երկու տասնամյակում Հայաստանում մեծ աշխատանք է կատարվել այդ ուղղությամբ. ստեղծվել են արևմտահայերենի դասագրքեր ու ձեռնարկներ, հրատարակվել է արևմտահայերենի նոր բառարան, արևմտահայերենին վերաբերող թեմաներով պաշտպանվել են տասնյակից ավելի ատենախոսություններ, մի շարք բուհերում բացվել են արևմտահայերենի ուսուցման դասընթացներ, ԵՊՀ-ում հիմնարկվել է սփյուռքագիտության ամբիոն, որի ուսումնական ծրագրում առանձնահատուկ տեղ ունեն արևմտահայերենի ուսուցումը և ուսումնասիրությունը, նույն ամբիոնում ամենայն հավանականությամբ այս տարվանից կգործի սփյուռքահայ ուսուցիչների համար նախաձեռնված արևմտահայերենի երկամյա ուսուցման ծրագիրը, ընթացքի մեջ է Սփյուռքի համար արևմտահայերենի միասնական դասագրքի ստեղծման գործը, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում բացվել է արևմտահայերենի ուսումնասիրության բաժին, երկու տարի է՝ ԵՊՀ-ին կից սփյուռքահայերի համար գործում է Ամառային դպրոցը՝ արևմտահայերենի արագացված ուսուցման ծրագրով: Կարելի է շարունակել թվարկումների այս շարքը: Բայց անելու դեռ շատ բան կա, ինչպես, օրինակ՝ Սփյուռքի հանրալեզվաբանական վիճակի հետազոտություն, տարբեր տիպի բառարանների ստեղծում, ուսանողների փոխանակում ու փոխայցելություններ, երկլեզվյան դասագրքերի ստեղծում և մանավանդ Սփյուռքում արևմտահայերենը որպես երկրորդ լեզու ուսուցանելու փորձի տարածում և այլն: Վերջին շրջանում արևմտահայերենի պահպանման և մշակման համատեքստում հաճախ է խոսվում մեր գրական լեզվի երկու տարբերակների՝ **արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցման մասին:** Հարցը քննարկման առարկա է եղել դեռևս գրական աշխարհաբարի նորմավորման շրջանում: Հնչել են տարաբնույթ կարծիքներ ու առաջարկներ՝ հաճախ իրարամերժ:

XIX դարի վերջին Մանուկ Աբեղյանը Էջմիածնի «Արարատ» պարբերաթերթի էջերում հանդես եկավ առաջարկներով: Երկու գրականների միության խնդիրը որակելով չափազանց կարևոր ու անհրաժեշտ՝ նա միացումը հնարավոր էր համարում միայն քաղաքական մեծ հեղափոխումների կամ «մի ուրիշ նշանաւոր հանգամանքի» դեպքում<sup>1</sup>: Հետևաբար նրա առաջարկները ուղղորդվեցին միայն երկու գրականների մերձեցման խնդրին: Դրանք, սա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Աբեղեան Մ.**, Մեր երկու գրական լեզուի միութեան խնդիրը, «Արարատ», 1897, թիւ 9-10, էջ 424-431, թիւ 11-12, էջ 494-503:

կայն, մնացին թղթի վրա՝ ընդամենը հարուցելով արևմտահայ հատվածի մեծ դժգոհությունը, քանի որ արևելահայ երիտասարդ լեզվաբանը զիջումներ էր պահանջում միայն արևմտահայերենից: Բացի այդ, Աբեղյանի առաջարկություններում չափազանց մեծ էր նորմավորող մասնագետի միջամտության չափը՝ մի բան, որ սկզբունքորեն հակասում է լեզվի բնականոն զարգացման օրինաչափություններին:

Հարցը լուրջ քննարկումների առարկա դարձավ XX դարասկզբին արևմտահայ պարբերական մամուլի էջերում («Անահիտ» (Փարիզ), «Արևելք» (Կ. Պոլիս), «Բյուզանդիոն» (Կ. Պոլիս) և այլն): 1911 թ. Պոլսի «Ազատամարտ» շաբաթաթերթը հանդես եկավ հարցարանով՝ «Հայ գրական լեզուի ինդիքը» խորագրով, որի հիմնական հարցադրումը վերաբերում էր արևելահայերենի և արևմտահայերենի փոխհարաբերությանը: Հարցը ձևակերպված էր այսպես՝ «Բանաւոր (այստեղ՝ տրամաբանական – Յու. Ա.) եւ պատեհ կը գտնէ՞ք ձուլում մը՝ Արեւելեան եւ Արեւմտեան աշխարհաբարներու միջեւ եւ ի՞նչ պայմաններով: Եթէ կը մերժէք այդ գաղափարը, ի՞նչ են ձեր պատճառաբանութիւնները»<sup>1</sup>: Հարցարանին արձագանքեցին շատերը՝ շուրջ երկու տասնյակ մտավորականներ, քաղաքական և հոգևոր գործիչներ՝ Արշակ Չոպանյան, Դանիել Վարուժան, Ղազարոս Աղայան, Վրթանես Փափազյան, Հովհաննես Գազանձյան, Ռուբեն Զարդարյան, Ալեքսանդր Շիրվանզադե, Արտաշես Հարությունյան, Հակոբ Քյուֆեճյան (Հակոբ Օշական), Բաբգեն Եպիսկոպոս, Միքայել Վարանդյան, Կարապետ Բասմաջյան, Ստեփան Լիսիցյան և ուրիշներ: Հնչեցին հստակ և իրատեսական գնահատումներ: Եղան նաև փոխադարձ մեղադրանքներ և անձիշտ հարցադրումներ: Հայտարարվեց, օրինակ, որ լեզուն մեզանում պառակտված է, «բաժանուած է խորթ, հակամարտ հատուածների» (689), որ արևմտահայերենը չի կարող ինքնուրույն քաղաքակրթության լեզու դառնալ, և որ «արեւմտեան հայերու գրական սկզբնաւորութիւնը ...բնաշխարհիկ աղբիւրէն չբխեցաւ» (403): Այլ տեսակետի կողմնակիցները, սակայն, մերձեցումն ու ձուլումը անհրաժեշտ համարեցին արևմտահայերենի դրական ներգործությունը արևելահայերենի վրա ապահովելու համար, քանի որ «անձիշդ կերպով «Արեւելեան» անունը կրող մեր թոյլ, մեղկ, անջիղ – հետեւաբար իսկապէս Արեւելեան - գրականութիւնը պէտք ունի «Արեւմտեան» կոչուած ցնցող, հուժկու, և՛ եթէ կարելի է ըսել՝ առնական գրականութեան պատուաստման» (626): Իրավացիորեն նկատվեց, որ որևէ մերձեցում, առավել ևս ձուլում արհեստականորեն կամ մի քանի անհատների կամքով չի կարող կատարվել. «Լեզուական երեւոյթները անկախ են փափաքներէ, կամայականութիւններէ» (Ա. Հարությունյան, 15): Դա պետք է լինի «քաղաքական հանգամանքների բարեհաջող փոփոխութեամբ և երկար ժամանակի ընթացքում» (Ղ. Աղայան, 746): Հարցի լուծման

<sup>1</sup> «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1911, էջ 626: Այս պարբերաթերթից հղումները կտրվեն շարադրանքում. փակագծերում կնշվի միայն էջը:

մեջ առաջնային նշանակություն տրվեց նաև տնտեսական գործոնին: «Մի շոգեկառք,- գրում է Միքայել Վարանդյանը,- Ղարսից Էրզրում, Իգդիրից դեպի Վան՝ աւելի գործ կը կատարէ լեզուների միացման տեսակետից, քան մեր բոլոր գրագետների բաղձանքները: Մերձեցումը, ձուլումը անխուսափելիօրէն կը կատարուի, երբ քաղաքական յարաձուն ազատութիւնների շնորհիւ, առեւտրական ու արդիւնաբերական յարաբերութիւնները Ռուսահայի ու Թիւրքահայի միջեւ հետզհետէ կը կենդանանան, կ'աճի նաեւ մտաւոր հաղորդակցութիւնը, շփումը երկու տարբեր յատուածների միջեւ» (692): Ա. Շիրվանզադէն, անդրադառնալով հարցադրմանը, նշում է. «Թողնենք, որ երկու բարբառներն էլ զարգանան անկախ և ազատ: Ապագան ինքը կ'որոշի նրանց ճակատագիրը» (781): «Լեզուները կ'ապրին մեր հասողութենէն ազատ,- նկատում է Հակոբ Օշականը,- ...Ձուլում մը ոչ կարելի է, ոչ ալ փափաքելի: ...Միացումի այդ անկարելիութիւնը երբեք վրդովիչ ալ չէ: Երկու բարբառները իրարմէ զանազանող տարբերութիւնը այնքան թեթեւ է, որ գրագետներուն ինքնատպութիւնը կը բաւէ այդ անջրպետը լեցնելու: Ահարոնեանը կը սիրենք, վասն զի իր մէջ գրական կարգ մը գեղեցկութիւններ նոյն իսկ մութի մէջ կը թողուն լեզուական յարդարումը: Շիրվանզադէի խառնակ լեզուն անգամ հաճոյքով կը ներենք իրեն, վասն զի իր գրքերը մեծ չափով գրականութեան շահեկանութիւնը ունին: Ու կը հաւատամ թէ Պոլսահայերուն լաւագոյն գրողները կը հասկցուն ու կը սիրուն Կովկասի մէջ ալ» (733-734): Եղան նաև փոխզիջումներով մեր լեզվի երկու տարբերակները իրար մերձեցնելու առաջարկներ (Վ. Փափազյան, Յ. Շահրիկյան):

1911 թ. վերջին համարներից մեկում «Ազատամարտը» ամփոփեց բանավեճի արդյունքները: Հարցադրման վերաբերյալ ընդհանուր կարծիքն այն էր, որ արևելահայերենի և արևմտահայերենի միացման և մեկ միասնական լեզվի ստեղծման հիմնական նախադրյալը քաղաքական հեղափոխումներն են: Խոսքը Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածների միացման մասին է: Իսկ մերձեցումը հնարավոր է իրականացնել ոչ թե անհատների կամքով, այլ լեզվի բնականոն զարգացման ճանապարհով, որին ամենից առաջ նպաստելու է երկու հատվածների միջև տնտեսական, մշակութային և այլ կարգի հարաբերությունների ընդլայնումը:

Լեզվական այդ բանավեճից անցել է հարյուր տարի: Խնդիրը ժամանակ առ ժամանակ նետվում է քննարկումների հրապարակ: Տասնամյակները, սակայն, թե՛ քաղաքական և թե՛ գուտ լեզվական առումով, շատ բան չեն փոխել: 1991 թ. տպագրված հողվածներից մեկում ամփոփելով հայոց գրական լեզվի միասնության խնդրի վերաբերյալ իր դիտարկումները՝ Մ. Ասատրյանը հանգում է հետևյալ եզրակացությանը. «Արևմտահայերենը և արևելահայերենը փոխադարձորեն հասկանալի են, ուրեմն և նրանց գոյության փաստից ողբերգություն սարքելն անիմաստ է... հայ ազգային լեզվի միասնության խնդիրը սոսկ լեզվական հարց չէ, այլ միաժամանակ արտա-

լեզվական հարց է և կարող է լուծվել միայն քաղաքական փոփոխություններով կամ հեղափոխումներով<sup>1</sup>:

Լեզվական փոխազդեցությունների համար բարենպաստ պայմաններ են ստեղծվել վերջին տարիներին, քանի որ անհամեմատ ընդլայնվել են Սփյուռք-Հայրենիք կապերը: Փոխազդեցության նշանները ակնհայտ են. արևելահայերենը մեծապես օգտվում է արևմտահայերենի բառապաշարից՝ իր բառային կազմը հարստացնելով հայերենի բառակազմական միջոցներով կերտված նորաբանություններով և կամ դուրս մղելով արդեն գործածության մեջ եղած օտար բառերը: Իր հերթին արևմտահայերենը նկատելիորեն կրում է արևելահայերենի քերականական համակարգի ինչ-ինչ ազդեցություններ: Թե ինչ չափով և ինչ ուղղությամբ կընթանան փոխթափանցումները, ցույց կտա ժամանակը: Ի վերջո, մեր լեզվի երկու տարբերակների գոյությունը այսօր հաղորդակցման դժվարություններ չի ստեղծում. սփյուռքահայր առանձնակի դժվարությունը չունի հասկանալու արևելահայերեն, արևելահայերս էլ առանձնապես չենք դժվարանում ընկալելու արևմտահայ խոսքը:

Մի կողմ թողնելով հարցի հնարավոր կարգավորման այլևայլ ուղիների վերաբերյալ քննարկումները՝ ցանկանում եմ ուշադրություն հրավիրել Սփյուռքի մի կարևոր ձեռնարկումի վրա: Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինի նախաձեռնությամբ վերջերս Լիբանանում ստեղծվել է **«Արևմտահայերենի պաշտպանության հանձնաժողով»**, որի կազմում ընդգրկված են շուրջ հիսուն ազգայիններ՝ Սփյուռքի գրեթե բոլոր գաղթավայրերից ու խավերից: Հանձնաժողովը, ինչպես իրազեկվում է, գործելու է «մօտաւորապէս լեզուի ակադեմիայի կարգավիճակով»՝ նպատակ ունենալով վերացնելու կամ գեթ **նվազեցնելու արևմտահայերենի զարգացումը կասեցնող խոչընդոտները**<sup>2</sup>: Հանձնաժողովում ընդգրկված չեն հայաստանաբնակ անդամներ: Սակայն գործով մտահոգ հայաստանցիներս չենք կարող անմասն մնալ այս նախաձեռնումին: Գործակցության հարմար միջոց կարող է լինել Հայաստանում նման մի հանձնախմբի ստեղծումը, որը, սերտ կապի մեջ լինելով հիշյալ հանձնաժողովի հետ, իր փորձառությամբ և մասնագիտական կարողություններով և կամ աջակցության այլ ձևերով մեծապես կնպաստի ընդհանուր գործին՝ արևմտահայերենի պահպանությանը, քանզի արևմտահայերենը ոչ միայն մշակութային հարստություն է, այլև ազգային ինքնության պահպանման կարևորագույն գործիք ոչ միայն Սփյուռքում, այլև Հայաստանում:

<sup>1</sup> Բանբեր Երևանի համալսարանի (ԲԵՀ), 1991, թիվ 3, էջ 104-105:

<sup>2</sup> Տե՛ս Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում, էջ 40:

**Yuri Avetisyan – *Western Armenian: Problems and Perspectives***

The present state of Western Armenian literary language is not encouraging. The prospects of development are more than uncertain. The Western Armenian language is painfully retreating. The non-existence of guidance from one centre, the lack of specialist teachers, the strong influence of dominant languages, the lack of reading habits of the younger generation of the Diaspora, the gradual decomposition of once prosperous communities (Lebanon, Syria and elsewhere), the endangered linguistic quality of Western Armenian and a variety of factors persistently lead the prospect for the development of Western Armenian to lack of any prospect. In these conditions the main haven of protection of the Western Armenian language remains Armenia. In recent decades much work has been done in this connection: dictionaries and textbooks have been published, courses of Western Armenian have been organized in the corresponding departments of universities, a specified number of hours have been spared for teaching Western Armenian in public schools, a summer school with an accelerated learning program attached to Yerevan State University has been opened for Diaspora Armenians, the scientific interest towards Western Armenian has substantially grown, etc. The expansion of Armenia-Diaspora relations has created favorable conditions for the convergence of the two versions of Armenian. Armenia-Diaspora cooperation is the main prerequisite for successfully crowning the protection of Western Armenian.



**ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՈՒՄԸ**

*Բանալի բառեր* – Մփյուռք, գաղթաշխարհ, Հայաստանի Հանրապետություն, Խորհրդային Հայաստան, Ցեղասպանություն, ՀԲԸՄ, Հայրենիք-Մփյուռք հարաբերություններ, հայրենադարձություն

*Մուտք. գաղթաշխարհից դեպի Մփյուռք*

Մեր ուսումնասիրություններից մեկում<sup>1</sup> անդրադառնալով հայ գաղթաշխարհի պատմության պարբերացմանը՝ այն հասցրել ենք մինչև 1918 թ., երբ վերականգնվեց Հայաստանի քաղաքական անկախությունը: Խնդիրն այն է, որ հայ պատմագիտության մեջ ընդունված է հայոց նորագույն պատմությունը հաշվարկել 1918 թվականից<sup>2</sup>: Հիրավի, այդ թվականը նորագույն պատմաշրջանի սկիզբն է ոչ միայն հայոց, այլև համաշխարհային պատմության համար:

Հայ իրականության մեջ 1918 թվականը նոր էջ բացեց ոչ միայն հայրենիքում, այլև ի սփյուռս աշխարհի: Մինչ այդ գաղութահայությունը զրկված էր հայրենի պետությունից, ավելին՝ հայրենիքը ոչ միայն չէր կարող որևէ կերպ աջակցել աշխարհում սփռված իր զավակներին, այլև հենց ինքն օգնության կարիք ուներ: Այսպիսով՝ 1918 թվականը նորագույն դարաշրջանի մուտքն էր հայ գաղթաշխարհի համար առաջին հերթին այն տեսակետից, որ ստեղծվել էր հայկական պետություն՝ դրանից բխող բոլոր ակնկալիքներով:

Այդ ժամանակ իրավիճակը մեծապես փոխվել էր հայ գաղթաշխարհում: Ցեղասպանությունից փրկված հարյուրհազարավոր հայեր ցրվել էին աշխարհում՝ մի կողմից ավելացնելով վաղուց ի վեր գոյություն ունեցող գաղթավայրերի հայության թվաքանակը, իսկ մյուս կողմից՝ ստեղծելով նոր գաղթավայրեր: Այդ ժամանակներից գաղթաշխարհը սկսեց կերպափոխվել (տրանսֆորմացվել)՝ գաղթավայրային իրականությունից անցում կատարելով դեպի աշխարհայացքային և կազմակերպական առումներով որակապես տարբերվող նոր մակարդակ՝ «սփյուռքյան ձևաչափ»: Վերջինիս կարևոր բնութագրիչներն էին.

<sup>1</sup> Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Հայ գաղթաշխարհի պատմության պարբերացման փորձ, «Մփյուռքագիտություն», տարեգիրք, 2013, թիվ 2, էջ 3-28:

<sup>2</sup> Տե՛ս **Հովհաննիսյան Պ.**, Հայ ժողովրդի պատմության պարբերացման հիմնահարցին նվիրված համաժողով, Պատմաբանասիրական հանդես (ՊԲՀ), 1993, թիվ 4, էջ 148-161:

1. հայրենի պետության՝ որպես աշխարհասփյուռ հայությանը միավորող գործոնի գոյությունը, որի արդյունքում սկիզբ առավ Հայաստանի Հանրապետություն-Հայ Սփյուռք (այսուհետև՝ Սփյուռք) հարաբերությունների փուլը,
2. Հայոց ցեղասպանությունից հետո գաղթաշխարհի հայության թվի գրեթե կրկնապատկման հետևանքով բազմաթիվ համայնքներում նոր իրավիճակի ձևավորումը,
3. ցեղասպանության հետևանքով հայրենիքը լքած հայության՝ քանակապես և որակապես ազդեցիկ դիրքի հասնելը գաղթաշխարհում, որի պատճառով Սփյուռքը սկսեց դիտարկվել գլխավորապես որպես Ցեղասպանության հետևանք<sup>1</sup>,
4. համասփյուռքյան կազմակերպությունների գործունեության ընդարձակումը և աստիճանաբար նմանատիպ նոր կազմակերպությունների ստեղծումը, որը հետևանք էր վերոհիշյալ նոր իրողությունների պայմաններում հայությանը համախմբելու և ուղղորդելու պատմական անհրաժեշտության գիտակցման<sup>2</sup>,
5. 1920 թ. Հայաստանի Առաջին Հանրապետության խորհրդայնացումից հետո աշխարհասփյուռ հայության և հատկապես Սփյուռքի քաղաքական կազմակերպությունների նկատմամբ բացասական վերաբերմունքը և մի պահ նույնիսկ Խորհրդային Հայաստանի իշխանությունների կողմից հարաբերությունների խզումն արտասահմանի հայության հետ, որը վերջինիս ստիպեց կենտրոնանալու սեփական կյանքի կազմակերպման հիմնախնդրի վրա՝ ձևավորելով հայկական համասփյուռքյան կազմակերպությունների ցանց:

Սփյուռքի պատմության պարբերացման համար կարևորագույն նախապայմանը Սփյուռքի և համապատասխան հասկացության ի հայտ գալու ժամանակաշրջանի ճշգրտումն է:

Հ. Մելիքսեթյանը կարծում է, որ Սփյուռքը սկսել է կազմավորվել Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ հարյուրիցավոր հայեր հայտնվել են հին գաղթավայրերում, վերջնականապես ձևավորվել 1920-ական թթ., և մեզանում շրջանառության մեջ է դրվել «Ցրոնք» կամ «Սփյուռք» տերմինը<sup>3</sup>: Ի դեպ, նա համարում է, որ Սփյուռքի կազմավորումը տեղի է ունեցել Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմանը զուգահեռ: Այդ

---

<sup>1</sup> Տե՛ս **Մելիքսեթյան Հ.**, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Երևան, 1985, էջ 49:

<sup>2</sup> Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Հայաստանի Առաջին Հանրապետության դեկավարության հաստատումը Սփյուռքում. «Հոգևոր Հայաստան»-ի ստեղծումը (հայեցակարգային որոշ դիտարկումներ), «Հայ գաղթականությունը և Հայրենիք-Սփյուռք կապերը 1918-1985 թթ.» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2011, էջ 48:

<sup>3</sup> Տե՛ս **Մելիքսեթյան Հ.**, նշվ. աշխ., էջ 4:

Ժամանակ սփյուռքահայության թվաքանակը հասնում էր շուրջ մեկ միլիոնի<sup>1</sup>:

Կ. Դավաթյանը գաղթաշխարհի «սփյուռքացման» գործընթացն ընդլայնում է Լոզանի խորհրդածողովից (1923 թ.) մինչև 1931-1932 թթ. ընկած ժամանակահատվածը, երբ գաղթական հայությունը հիմնավորվեց տարբեր երկրներում, «թարմացրեց» գոյություն ունեցող ու մարող գաղթավայրերը և ձևավորեց ազգային հավաքական կեցություն՝ «Սփյուռք» ընդհանրական անվանումով<sup>2</sup>:

Ըստ էդ. Մելքոնյանի՝ հայ իրականության մեջ «Սփյուռք» հասկացությունը ծնունդ է առել 1920-ական թվականներին, երբ Հայոց ցեղասպանությունից փրկված հարյուրհազարավոր հայերը, զրկված հայրենիք վերադառնալու հնարավորությունից, ցրվեցին աշխարհում և, գիտակցելով կատարվածի ճակատագրական նշանակությունը, գաղթաշխարհին իր՝ որակապես այդ նոր փուլում սկսեցին անվանել Սփյուռք<sup>3</sup>:

Ամփոփելով վերոբերյալը՝ կարող ենք նշել, որ Սփյուռքի աստիճանական ձևավորումը տեղի է ունեցել Հայոց ցեղասպանությունից հետո, և 1920-ական թթ. հայկական իրականության մեջ հայտնվել է «Սփյուռք» հասկացությունը:

1918-1920 թթ. Հայաստանի առաջին հանրապետության իշխանությունները փորձ կատարեցին ամրապնդելու կապերը գաղթաշխարհի հայության հետ: Սակայն հայկական անկախ հանրապետությանը վիճակված էր կարճատև գոյություն, և շուտով գաղթաշխարհի հայությունը ստիպված եղավ հարաբերություններ «կառուցել» հայկական նոր պետության՝ Խորհրդային Հայաստանի հետ, որի քաղաքական և ազգային առաջնահերթությունները սահմանվում էին Խորհրդային Միության իշխանությունների կողմից: Ստեղծվեց նոր իրավիճակ, որն ուներ հետևյալ առանձնահատկությունները.

1. 1921 թ. գաղթաշխարհում հաստատվեցին Հայաստանի Առաջին Հանրապետության նախկին ղեկավարները, որոնք անմիջապես ձեռնամուխ եղան արտասահմանի հայության կյանքի կազմակերպման խնդրին,
2. հայկական քաղաքական կազմակերպություններն այդուհետև ստիպված եղան գործունեություն ծավալել բացառապես արտասահմանում,

---

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 49-53:

<sup>2</sup> Տե՛ս **Դավաթյան Կ.**, Հայ Սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 2004, էջ 75:

<sup>3</sup> Տե՛ս **Дятлов В., Мелконян Э.**, Армянская диаспора: очерки социокультурной типологии, Ереван, 2009, с. 42-43. Տե՛ս նաև **Մելքոնյան էդ.**, Սփյուռք, «Սփյուռք հանրագիտարան», Երևան, 2003, էջ 9:

3. ձևավորվեց որոշակի քաղաքական հակադրություն Խորհրդային Հայաստանի և արտերկրի հայության շրջանում գործող ամենաազդեցիկ կազմակերպությունների միջև,
4. արտերկրի հայության նկատմամբ Խորհրդային Հայաստանի իշխանությունների վերաբերմունքը սկսեց մեծապես ածանցվել վերոհիշյալ կազմակերպությունների նկատմամբ դիրքորոշումից, որոնց գործունեությունը երկրում արգելված էր,
5. Խորհրդային Հայաստանի իշխանություններն արտերկրի հայության հետ հարաբերվելու համար 1921 թ. ստեղծեցին Հայաստանի օգնության կոմիտեն, որի գործունեությունը գաղթաշխարհում հաջողված համարել չի կարելի նշված հակադրությունների պատճառով:

Նոր իրողությունների պայմաններում Սփյուռքում տարերայնորեն սկիզբ առավ ինքնակազմակերպման գործընթացը, որի առաջնեկը 1921 թ. մի շարք հասարակական-քաղաքական կազմակերպությունների միավորման արդյունքում վերջնականապես ձևավորված Ռամկավար ազատական կուսակցությունն էր<sup>1</sup>:

Այսպիսով՝ հնարավոր է վեր հանել նաև Սփյուռքի՝ որպես ազգային համակեցական միջավայրի ձևավորման որոշ էական առանձնահատկություններ: Սփյուռքը, դատելով վերոհիշյալից, իրենից ներկայացնում էր գաղթաշխարհի՝ ընկերային և արժեքային առումներով որակապես նոր մակարդակ, որին բնորոշ էին.

1. հայրենիքի հետ խիստ սահմանափակ հարաբերությունների առկայությունը, որի պայմաններում արտերկրի հայությունը ստիպված էր ապավինել միմիայն սեփական հնարավորություններին,
2. արտերկրի հայության շրջանում համասփյուռքյան բնույթի կազմակերպությունների գործունեության ծավալումը,
3. այդ կազմակերպությունների շուրջ քաղաքական, մշակութային, կրթական, բարեգործական, երիտասարդական, լրատվական և այլ համասփյուռքյան կառույցների ցանցի ստեղծումը,
4. հայկականության պահպանության առավել ընդգրկուն միջավայրի ձևավորումը:

Կարևոր է նաև նշել, որ, ի տարբերություն գաղթաշխարհի, երբ տարբեր ընկերային ու արժեքային համակարգերում հայության գոյատևման և համարկման խնդիրների պարզաբանումը նախատեսում էր ի սկզբանե տարբերակված և առանձին մոտեցում, ապա սփյուռքյան իրականությունը, պայմանավորված համասփյուռքյան կազմակերպությունների շուրջ ձևավորված ազգային համակեցական միջավայրերի գոյությամբ, հայկականության պահպանության առումով նախնառաջ պահանջում է գլխավորապես ամ-

<sup>1</sup> Տե՛ս **Դալլաքյան Կ.**, Ռամկավար Ազատական Կուսակցության պատմություն (1921-1940), գիրք I, Երևան, 1999, էջ 13, 21:

բողջական դիտարկում: Առավել կարևոր են դառնում ընդհանրական գործընթացները Սփյուռքում: Այդ առումով առաջին հորիզոնականում Սփյուռքահամակեցության աշխարհագրական, էթնոժողովրդագրական, պատմական, մշակութային, հոգևոր-կրոնական և այլ հենքերի առկայության և դրանց պահպանման մակարդակի քննությունն է: Եթե գաղթաշխարհի պարագայում բացակայում էր աշխարհագրական հենքը, ապա այժմ Սփյուռքը ստանում է նաև աշխարհագրական հենք՝ համաշխարհային սահմաններ: Այդ սահմաններում որպես հայապահպանության գրավական են դիտարկվում համակեցության բոլոր հենքային արժեքները:

### *Սփյուռքի պատմության պարբերացումը պատմագիտության մեջ*

Սփյուռքի պատմության պարբերացումը հաճախ է դարձել ուսումնասիրողների ուշադրության առարկա: Նրանք խնդրին անդրադարձել են տարբեր դիտանկյուններից և առաջարկել ուշագրավ պարբերացումներ: Ստորև կանդրադառնանք դրանցից հիմնականներին:

Կ. Դալլաքյանը կատարել է Սփյուռքի պատմության երկու կարգի պարբերացումներ՝ ելնելով Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների հիմնական զարգացումներից և Սփյուռքի պատմության հիմնական փուլերից: Նա Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները, առաջնորդվելով դրանցում առկա սկզբունքներով և կապերի աստիճանական ընդլայնման գործընթացով, բաժանում է հետևյալ ժամանակաշրջանների.

- ա. երբ դրանց հիմքում դրված էր ազգային միասնության սկզբունքը, և շեշտադրվում էր էթնիկ նույնության հանգամանքը. առաջին շրջանը ընդգրկում էր 1920-ական թթ. առաջին կեսերն ընկած ժամանակաշրջանը,
- բ. երբ հարաբերությունների հիմքում դրվեց դասակարգային շերտավորման սկզբունքը, և անհաշտ թշնամանք ձևավորվեց Սփյուռքի հայկական կուսակցությունների նկատմամբ: Սկսվեց Սփյուռքի հիմնական հատվածի օտարման գործընթացը հայրենիքից: Այս ժամանակաշրջանը տևում է 1920-ական թթ. երկրորդ կեսից մինչև 1960-ական թթ. սկիզբը,
- գ. երբ հարաբերությունների հիմքում դրված էր քաղաքական շերտավորման սկզբունքը: Այս ժամանակաշրջանում, որն ընդգրկում է 1960-ական թթ. սկզբից մինչև 1988 թվականը, Խորհրդային Հայաստանի իշխանությունները հարաբերություններ են հաստատում Ռամկավար ազատական և Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցությունների հետ՝ թշնամանք տաճելով միայն Հայ հեղափոխական դաշնակցության նկատմամբ: 1964 թ. ստեղծվում է Սփյուռքահայության հետ

մշակութային կապի կոմիտեն, որն իրականացնում է ծավալուն գործունեություն,

դ. երբ աստիճանաբար վերացվում են բոլոր տեսակի շերտավորումները, և ազատ հարաբերություններ են հաստատվում Հայրենիքի և Մփյուռքի միջև: Այդ շրջանը սկիզբ առավ Սպիտակի երկրաշարժից հետո և շարունակվում է մինչ օրս<sup>1</sup>:

Կ. Դավաքյանը Հայրենիք-Մփյուռք առնչությունների 1918-1920 թթ. ժամանակաշրջանը չի ընդգրկել իր կազմած՝ Հայրենիք-Մփյուռք հարաբերությունների ժամանակագրության մեջ՝ այն ներկայացնելով ներածության կարգով: Պատճառն այն է, որ նորանկախ Հայաստանի Առաջին Հանրապետության ղեկավարությունը ժամանակ չի ունեցել ծավալուն կապեր հաստատելու Մփյուռքի հետ՝ բավարարվելով միայն դժվարին դրության մեջ հայտնված հանրապետությանը Մփյուռքի օժանդակությունն ապահովելուն ուղղված քայլեր ձեռնարկելով<sup>2</sup>:

Դավաքյանը փորձել է փուլերի բաժանել նաև բուն Մփյուռքի պատմությունը: Ըստ նրա ընդհանուր առմամբ կարելի է կատարել հետևյալ պարբերացումը.

ա. գոյավորման փուլ (1920-ական թթ.), երբ գաղթաշխարհից անցում է կատարվում դեպի սփյուռքյան իրականություն,

բ. ինքնահաստատման փուլ (1930-1950-ական թթ.), երբ կայանում է սփյուռքահայ կյանքը, և ձևավորվում սփյուռքահայության հավաքական կեցության միջավայրը,

գ. զարթոնքի փուլ (1960-ական թվականներից մինչև մեր օրերը), երբ Մփյուռքում զարգացում են ապրել կրթությունն ու մշակույթը, ազգային-հոգևոր կյանքը և քաղաքական միտքը՝ ի դեմս Հայ դատի արդար լուծման համար մղվող պայքարի<sup>3</sup>:

Անտարակուսելի է, որ Կ. Դավաքյանը Մփյուռքի պատմության պարբերացումը ներկայացնում է գլխավորապես Հայրենիք-Մփյուռք առնչությունների լույսի ներքո: Թեև նա փորձ է կատարել փուլերի բաժանելու նաև Մփյուռքի պատմությունը՝ այնտեղ տեղի ունեցող հիմնական զարգացումների հենքի վրա, սակայն նրա մոտեցումն ակնհայտորեն թերի է, քանի որ Մփյուռքի պատմությունը բաժանելով գոյավորման, ինքնահաստատման և զարթոնքի փուլերի՝ հեղինակը դրանք հստակորեն ընդգծված ենթափուլերի չի բաժանել: Ուստի խիստ ընդհանրական այդ բաժանումն էական հետևությունների հիմք լինել չի կարող:

Ուսումնասիրողներից Ա. Բադալյանը մասնավորապես անդրադարձել է Խորհրդային Հայաստան-Մփյուռք կապերի պատմության պարբերացման

<sup>1</sup> Տե՛ս Կ. Դավաքյան Կ., Հայ Մփյուռքի պատմություն, էջ 23-51:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 22-23:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 78, 132-151:

խնդրին: Նրա կարծիքով՝ այդ կապերի պատմությունը կարելի է բաժանել երկու փուլի՝ 1921-1937 և 1945-1990 թթ.<sup>1</sup>: Առաջին փուլում Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը քայլեր է ձեռնարկել Սփյուռքի հետ առնչություններն առավել արդյունավետ դարձնելու համար, սակայն 1937 թ. խզել է կապերը նրա հետ<sup>2</sup>: Խզման ժամանակաշրջանն ընդգրկում է 1937-1945 թթ., որից հետո Ի. Ստալինը մեղմացրել է վերաբերմունքը Սփյուռքի նկատմամբ: Որոշվել է Սփյուռքի հետ կապերը կրկին դարձնել առավել արդյունավետ՝ հիմք ընդունելով հայապահպանությունը և Խորհրդային Հայաստանի քարոզչությունը<sup>3</sup>:

Սփյուռքի պատմության պարբերացմանը որոշ ընդհանուր գծերով անդրադարձել են նաև արտերկրում:

Խ. Թուրյանը Սփյուռքի պատմությունը բաժանում է հետևյալ փուլերի.

ա. 1923-1965 թթ.՝ վերականգնման կամ վերակառուցման փուլ, երբ գաղթաշխարհի հին ու նոր շերտերի ջանքերով աստիճանաբար ձևավորվում է Սփյուռքը, և հին կազմակերպություններից բացի՝ ստեղծվում են նաև նորերը,

բ. 1965-1988 թթ.՝ մարտահրավերների փուլ, երբ Սփյուռքում տեղի ունեցող կերպափոխումները սկսում են վտանգել վերակառուցման ժամանակաշրջանի ձեռքբերումները և ազգային արժեքների ու մասնավորապես լեզվի պահպանության միջավայրը: Միաժամանակ վերականգնվում են կապերը Խորհրդային Հայաստանի հետ: Կարևորագույն խնդիրներից մեկը Սփյուռքում սկիզբ առած այսպես կոչված «սերունդների պայքար»-ն էր, որն արտահայտվում էր ի դեմս Հայոց ցեղասպանությունը վերապրածների ու Հայաստանի խորհրդայնացումից հետո հայրենիքից արտաքսվածների միջև գաղափարաբանական հակասությունների: Այն առնչվում էր նաև Խորհրդային Հայաստանի իշխանությունների նկատմամբ թշնամական կամ բարեկամական մոտեցումների առկայությանը,

գ. 1988 թվականից մինչև մեր օրերն ընկած շրջափուլ, որը բնորոշվում է Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումով և Սփյուռքի էլիտաների միջև մղվող պայքարով<sup>4</sup>:

Խ. Թուրյանի պարբերացումը պարունակում է էական ընդգծումներ, որոնք օգնում են խորությամբ ըմբռնելու Սփյուռքի պատմության զարգացման մի շարք առանձնահատկություններ:

---

<sup>1</sup> Տե՛ս **Բաղայան Ա.**, Խորհրդային Հայաստան-Սփյուռք կապերի պատմության փուլերը, «Հայ գաղթականությունը և Հայրենիք-Սփյուռք կապերը 1918-1985 թթ.» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, էջ 69-76:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 69-72:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 73-74:

<sup>4</sup> Տե՛ս **Tölölyan Kh.**, Elites and Institutions in the Armenian Transaction, Diaspora, A Journal of Transnational Studies, vol. 9, N 1, spring, 2000, pp. 107-136.

Ս. Փեթթին առանձնացնում է Սփյուռքի պատմության երեք փուլ.

- ա. Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո մինչև 1960-ական թթ. սկիզբը, երբ սփյուռքահայության մեջ գերիշխողը Խորհրդային Հայաստան ներգաղթի գաղափարն էր, որը փուլային տարբերակով իրականացվում էր խորհրդային իշխանությունների կողմից,
- բ. 1960-ական թթ. սկզբից մինչև Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումը, երբ արտերկրի հայությունն ինքն իրեն համարում էր այլևս բնակության պետության մշտական բնակիչ, սակայն շարունակում զբաղվել ազգային խնդիրների լուծմամբ,
- գ. Հայաստանի քաղաքական անկախության շրջան, երբ սկսում է վերականգնվել ազգային միասնության (էթնիկ ընդհանրության) գաղափարը<sup>1</sup>: Նման բաժանումը թեև հիմնվում է Սփյուռքի զարգացման ընթացքում տեղի ունեցած կարևոր իրողությունների վրա, սակայն ակնհայտորեն ամբողջական համարվել չի կարող:

Հետաքրքրական է նաև «Policy Forum Armenia» կազմակերպության «Հայաստան-Սփյուռք հարաբերություններ. անկախությունից 20 տարի անց» վերնագրով զեկուցման մեջ տեղ գտած՝ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների պատմության պարբերացումը: Այն հանգում է հետևյալին.

- ա. նախապատերազմական փուլ (1920-1945 թթ.), երբ հայկական իրականությունը երկփեղկված էր, և տեղի էին ունենում «գուգահեռ» վերակառուցում կամ վերականգնում: Այս փուլում Հայաստանում կառուցվում էր խորհրդային տիպի պետություն, իսկ Սփյուռքում ձևավորում էին հավաքական կենսագործունեության միջավայր, կառույցներ ու կազմակերպություններ,
- բ. հետպատերազմական փուլ (1945-1988 թթ.), երբ Սփյուռքը բաժանված էր երկու մասի՝ արտաքին ու ներքին: Արտաքին Սփյուռքի հետ հարաբերությունները «կառուցվում» էին գաղափարաբանական հակադրությունների և ընդհանրությունների սկզբունքով, իսկ ներքին Սփյուռքն ամբողջությամբ ենթարկված էր խորհրդային ազդեցությանը,
- գ. 1988 թ. Ղարաբաղյան շարժմամբ Հայաստան-Սփյուռք հարաբերություններում սկզբնավորվում է նոր փուլ, որը կարելի է բնորոշել որպես հարաբերությունների վերականգնման շրջան, և որը ձգվեց մինչև 1991 թվականը,
- դ. անկախության փուլ, երբ Հայաստան-Սփյուռք հարաբերությունները կառուցվում էին «de jure» սկզբունքով<sup>2</sup>:

---

<sup>1</sup> St' u The Armenians. Past and Present in the Making of National Identity, ed. by Ed. Herzog and M. Kurkchian, New York, 2005, pp. 126-131.

<sup>2</sup> St' u Armenia-Diaspora Relations: 20 Years Since Independence, A Publication of Policy Forum Armenia, 2010, pp. 7-10.



Կարելի է նկատել, որ թեև սույն ստորաբաժանումը հիմնված է իրատեսական մոտեցումների վրա, սակայն դարձյալ ամբողջական չէ: Մասնավորապես, անդրադարձ չկա այն կարևոր իրողությանը, որ 1991 թ. ի վեր Հայաստանի Հանրապետությունից հեռացած տասնյակհազարավոր հայերի հաստատումը զգալի տեղաշարժեր առաջացրեց Սփյուռքում՝ ազդելով նաև Հայաստան-Սփյուռք առնչությունների վրա:

Դատելով վերոհիշյալից՝ ակնհայտ է, որ Սփյուռքի պատմության պարբերացումը անհրաժեշտ է կատարել՝ մի կողմից ըստ բուն սփյուռքյան զարգացումների, իսկ մյուս կողմից՝ ըստ Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների բնույթի ու բովանդակության: Ստորև փորձենք ընդհանուր գծերով ներկայացնել Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների և Սփյուռքի պատմության կարևոր իրադարձությունները, որոնց ընկալումը հնարավորություն կտա կատարել Սփյուռքի պատմության ամբողջական պարբերացումը:

### *Հայրենիք-Սփյուռք առնչությունների հիմնական դրսևորումները՝ որպես Սփյուռքի պատմության պարբերացման հիմք*

Ի տարբերություն հայ գաղթաշխարհի պատմության, երբ հիմնականում բացակայում էր հայրենի պետությունը, Սփյուռքի պատմության ամբողջ ընթացքն ուղեկցել է հայկական պետությունը: Ուստի՝ եթե հայ գաղթաշխարհի պատմության պարբերացումն իրականացվում է իր իսկ հիմնական զարգացումների հենքի վրա, ապա Սփյուռքի պարագայում դրան պետք է հավելել նաև առնչությունները հայրենի պետության հետ: Ավելին, 1918 թ. վերականգնված Հայոց պետականությունն անցել է երեք շրջափուլ՝ Առաջին Հանրապետություն, Երկրորդ կամ Խորհրդային Հանրապետություն և Երրորդ Հանրապետություն, որոնցից յուրաքանչյուրի ընթացքում Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները միմյանցից որակապես տարբերվել են գլխավորապես փոխընկալման ասպարեզում:

Դատելով վերոհիշյալից՝ Սփյուռքի պատմության պարբերացումն իրականացնելիս հարկ է հաշվի առնել երկու փոխկապակցված իրողություններ՝ հայրենի պետության առկայությունը և հիմնական զարգացումները Սփյուռքում:

Առաջին տեսակետից Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները XX դարում կարելի է բաժանել երեք հիմնական ժամանակաշրջանների՝ Առաջին Հանրապետության (1918-1920 թթ.), Երկրորդ կամ Խորհրդային Հանրապետության (1921-1991 թթ.) և Երրորդ Հանրապետության (1991 թվականից մինչև օրս):

*Առաջին ժամանակաշրջանը* Հայաստանի Առաջին Հանրապետության կարճատև գոյության և նրա դիմակայած ծայրահեղ դժվարությունների պատճառով կարելի է բնութագրել որպես զուտ Հայրենիք-Սփյուռք հարաբե-

րությունների սկզբնավորման փուլ: 1920 թ. պետության ղեկավարությունը, քննարկելով Արտաքին գործերի նախարարի զեկուցումը գաղութներում տարվելիք աշխատանքների մասին, որոշում է այդ նախարարության կազմում ստեղծել գաղութների բաժին՝ վերջիններիս «նյութական ու բարոյական ուժերը Հայաստանի օգտին օգտագործելու նպատակով»<sup>1</sup>:

*Երկրորդ ժամանակշրջանը* նշանավորվեց դեռևս առաջին փուլում նախանշված՝ գաղթականության ներգաղթի կազմակերպմամբ: 1920-1930-ական թթ. տասնյակի ազարավոր գաղթականներ տեղափոխվեցին Խորհրդրդային Հայաստան: Այդ ենթապարբերաշրջանում գաղթականության վերջին խումբը Խորհրդային Հայաստան տեղափոխվեց 1936 թ.<sup>2</sup>: Սակայն 1937 թ. Խորհրդային Հայաստանում Հայկական բարեգործական ընդհանուր միության (այսուհետև՝ ՀԲՄ) գործունեության կասեցումով Խորհրդային Հայաստանի և Սփյուռքի միջև դադարեցվեցին բոլոր կապերը<sup>3</sup>:

Սփյուռքի պատմության կարևոր փուլերից մեկը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին սփյուռքահայության օգնության կազմակերպումն էր Խորհրդային Հայաստանին: Չնայած խորհրդային իշխանությունների կողմից մերժված լինելուն՝ Երկրորդ աշխարհամարտի տարիներին Սփյուռքի ուշադրության կենտրոնում մայր Հայրենիքն էր, որը դարձյալ կանգնած էր վտանգի առջև<sup>4</sup>:

1946-1949 թթ. սփյուռքահայության ներգաղթը («Մեծ հայրենադարձություն») կարևոր երևույթ էր Սփյուռքի կյանքում<sup>5</sup>: Հասկանալի է, որ հայապահպանության հիմնական դրդապատճառն ու նպատակն առնչվում են հայության՝ հայրենիք վերջնական վերադարձին: Ուստի շուրջ 90.000 հայերի ներգաղթը Խորհրդային Հայաստան<sup>6</sup> վկայությունն էր այն բանի, որ հայապահպանությունը հասել է գլխավոր նպատակին: Չնայած դրան, այն զգալիորեն սրեց ներսփյուռքյան հակասությունները, մասնավորապես այդ գործընթացի նկատմամբ Սփյուռքի կազմակերպությունների դրական կամ բացասական վերաբերմունքի առկայության պայմաններում: Այսպես թե այնպես, ստալինյան բռնապետության պայմաններում նույնիսկ գերնպատակի իրականացման գործընթացը չէր կարող միանշանակ արձագանքների արժանանալ սփյուռքյան իրականության մեջ<sup>7</sup>: Ավելին, 1949 թ. ընդհատելով

<sup>1</sup> Տե՛ս **Մելիքսեթյան Հ.**, նշվ. աշխ., էջ 45:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 115:

<sup>3</sup> Տե՛ս **Մելքոնյան Էդ.**, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Խորհրդային Հայաստանում 1923-1937 թթ., Երևան, 1999, էջ 167-169:

<sup>4</sup> Տե՛ս **Մելիքսեթյան Հ.**, նշվ. աշխ., էջ 170-171, **Ղալաքյան Գ.**, նշվ. աշխ., էջ 41:

<sup>5</sup> 1946-1949 թթ. ներգաղթի մասին մանրամասն տե՛ս **Ստեփանյան Ա.**, XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Երևան, 2010, էջ 82-161:

<sup>6</sup> Տե՛ս **Մելիքսեթյան Հ.**, նշվ. աշխ., էջ 274:

<sup>7</sup> Տե՛ս **Ստեփանյան Ա.**, Հայրենադարձության հայկական փորձը (1946-1948 թթ.), ՊԲՀ, 2010, թիվ 1, էջ 149-160:

ներգադրի ծրագիրը և հալածանքների ենթարկելով ներգաղթածներին<sup>1</sup> ԽՍՀՄ իշխանությունները «հիմնավորեցին» Սփյուռքում բնակվող իրենց ընդդիմախոսների կռվանները:

1960-1980-ական թթ. Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների սերտացման կարևոր փուլ էին, երբ Խորհրդային Հայաստանը Սփյուռքի հետ իր առնչությունները բարելավվելու նպատակով 1964 թ. հիմնադրեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն<sup>2</sup>:

1988 թ. սկիզբ առան մի կողմից Սպիտակի երկրաշարժից տուժածների համար Սփյուռքում օգնություն հավաքելու, իսկ մյուս կողմից՝ հայ նորօրյա ազատամարտին աջակցելու կամ ուղղակի մասնակցության գործընթացները:

*Երրորդ ժամանակաշրջանը* նշանավորվեց 1991 թ. Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումով, երբ փաստացիորեն «օրինականացվեց» դեռևս 70 տարի առաջ հայրենիքից հարկադրաբար հեռացած կազմակերպությունների վերադարձի իրավունքը:

1991-1998 թթ. Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների զարգացումն ի վերջո ավարտվեց մասնակի բախմամբ, որն իր հիմնական դրսևորումը ստացավ 1994 թ. Հայաստանի Հանրապետությունում ՀՅԴ գործունեության ժամանակավոր կասեցմանը վերաբերող՝ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հրամանագրով: Բացի դրանից, խնդիրներ առաջացան Սփյուռքի մյուս կուսակցությունների և նրանց հայաստանյան մասնաճյուղերի միջև: Այս շրջափուլի հիմնական ձեռքբերումը եղավ «Հայաստան» համահայկական հիմնադրամի ստեղծումը 1992 թվականին:

Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում կարևոր փուլ էր 1998-2008 թթ. միջակայքը: 1998 թ. Սփյուռքի քաղաքական կազմակերպություններից առաջինը և առայժմ միակը՝ ՀՅԴ-ն, իր կենտրոնավայրը տեղափոխեց հայրենիք: Մյուս կողմից սկիզբ առավ Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների զարգացման նոր փուլը, որը նշանավորվեց քաղաքական ընդհանուր օրակարգի հստակեցման գործընթացով: Հայաստանի Հանրապետության իշխանությունները քաղաքական օրակարգի մաս դարձրին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը:

Հայրենիք-Սփյուռք միասնական օրակարգի մշակմանն էին միտված Հայաստան-Սփյուռք առաջին (1999), երկրորդ (2002) և երրորդ (2006) խորհրդաժողովները:

Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների պատմության հաջորդ ենթաշրջափուլը սկսվեց 2008 թ. և նշանավորվեց ՀՀ Սփյուռքի նախարարության ստեղծումով:

---

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>2</sup> Տե՛ս **Միքայիանյան Ռ.**, Հայրենիք-Սփյուռք մշակութային կապերը 1966-1990 թվականներին, Լրաբեր հասարակական գիտությունների (ԼՀԳ), 2008, թիվ 2, էջ 209-218:

*Մփյուռքյան հիմնական զարգացումները՝ որպես Մփյուռքի  
պատմության պարբերացման հիմք*

Ինչպես նշվեց, Մփյուռքն իրենից ներկայացնում էր հայ գաղթաշխարհի զարգացման որակապես նոր վիճակ, որի կարևոր բնութագրիչներից մեկը կազմակերպական բարձր մակարդակն էր:

Մփյուռքի կազմակերպման գործընթացն ընդգրկում է 1920-1930-ական թվականները: 1921 թ. մի շարք հասարակական-քաղաքական կազմակերպությունների միավորումը հանգեցրեց քաղաքական նոր կառույցի՝ Ռամկավար ազատական կուսակցության ստեղծմանը, որը եկավ համալրելու Մփյուռքի քաղաքական ներկայակերտը:

1921 թ. Մփյուռքում հաստատվեցին Հայաստանի Առաջին Հանրապետության նախկին ղեկավարները, որոնց ներկայությունը մեծ նշանակություն ունեցավ սփյուռքահայության կյանքում: Նախկինում առիթն ունեցել ենք անդրադառնալու 1920-1930-ական թթ. աշխարհասփյուռ հայության շրջանում «Հոգևոր Հայաստան» կոչվող համակեցական համակարգի ձևավորման նախաձեռնությանը, որի հիմնական նպատակը եղել է համասփյուռքյան բնագավառային-մասնագիտական կազմակերպությունների և համայնքային կառույցների միջոցով հայության համար ներազգային կենսագործունեության դաշտի ձևավորումը<sup>1</sup>: Շուտով նման համակարգեր սկսում են ձևավորել նաև արտերկրում գործող այլ համասփյուռքյան կազմակերպություններ: Դա յուրօրինակ մի պատասխան էր Խորհրդային Հայաստանի գրաված դիրքորոշմանը և համաշխարհային նոր իրողություններին: Հայաստանի Խորհրդային Հանրապետությունը կտրում էր կապերը Մփյուռքի հետ, որի հետևանքով սփյուռքյան ազդեցիկ կազմակերպությունները սկսում են սեփական ուժերով իրականացնել Մփյուռքի կազմակերպված վիճակ հաղորդելու առաքելությունը:

Համասփյուռքյան կառույցներից թերևս միակը, որը 1920-1930-ական թթ. պահպանում էր կապերը Խորհրդային Հայաստանի հետ, ՀԲԸՄ-ն էր: Վերջինս Խորհրդային Հայաստանի իշխանությունների համար ընդունելի էր համարվում այն պարզ պատճառով, որ Հայաստանի Առաջին Հանրապետության իշխանությունների հետ չէր համագործակցել<sup>2</sup>: Ուստի 1923 թ. Խորհրդային Հայաստանի իշխանությունները ՀԲԸՄ արտոնեցին երկրում հանրօգուտ գործունեություն իրականացնելու առաքելություն<sup>3</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս **Երիզազարյան Ա.**, Հայաստանի Առաջին Հանրապետության ղեկավարության հաստատումը Մփյուռքում, էջ 41-52: Տե՛ս նաև **Վրացյան Ս.**, Խոսք ընդ ուսուցչի, Տ. Տ. Գևորգ Զ արք. կաթողիկոսին, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի «Տարեգիրք», Երևան, 2009, էջ 207-213:

<sup>2</sup> Տե՛ս **Մելքոնյան Էդ.**, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Խորհրդային Հայաստանում, էջ 24:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 28:

Այս ամենից պարզ է դառնում, որ արտերկրի հայությունը կամ առնվազն վերջինիս կազմակերպված հատվածը ստիպված էր որդեգրելու զուտ սփյուռքյան գործունեություն: Այսպես, հաշվի առնելով նաև հայրենի պետության կողմից մերժված լինելու իրողությունը, աստիճանաբար ծնեց «Սփյուռք» հասկացությունը՝ որպես առանձին, ինքնակազմակերպվող և ինքնադեկլարվող ամբողջություն: Վերջինիս ձևավորումն իր արտահայտությունը գտավ նաև «Հոգևոր Հայաստան», «Անհայրենիք պետություն» և նմանատիպ այլ հասկացությունների ի հայտ գալով<sup>1</sup>:

Անմիջապես անցում կատարվեց սեփական ուժերով հայապահպանության ծրագրերի, հայության կազմակերպման և ուղղորդման խնդիրների լուծմանը: Մեկը մյուսի հետևից սկսեցին ծնունդ առնել կրթական, մշակութային, երիտասարդական և այլ կազմակերպություններ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով վտանգված հայության իրավունքների պաշտպանության հրամայականը 1940-ական թթ. աշխուժացնում է հայ քաղաքական միտքը Սփյուռքում, և հայության ներկայացուցիչները մի կողմից հարաբերությունների մեջ են մտնում նացիստական Գերմանիայի ղեկավարների հետ՝ հայ ռազմագերիների կյանքը փրկելու և գրավյալ տարածքներում հայության անվտանգությունն ապահովելու նպատակով<sup>2</sup>, իսկ մյուս կողմից՝ 1944 թ. ԱՄՆ-ում կյանքի են կոչում քաղաքական բնույթ ունեցող Հայ դատի հանձնախումբը, որի առջև դրվեց հայության քաղաքական, սոցիալական, տնտեսական և այլ իրավունքների պաշտպանության խնդիր<sup>3</sup>:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սկիզբ առած սառը պատերազմը երկվեղկեց հայկական իրականությունը նաև աշխարհաքաղաքական առումով: Խորհրդային պետության սահմաններում բնակվող հայությունը և Սփյուռքը փաստացիորեն հայտնվեցին երկու հակադիր ճամբարներում:

Չնայած 1946-1949 թթ. սփյուռքահայերի զանգվածային ներգաղթի կարևորությանը, դրա հետևանքները Սփյուռքում զգալի էին: Մի շարք համայնքներ զգալիորեն տուժել էին և դարձել ավելի սակավաթիվ: Նրանց առաջ դարձյալ ծառացավ կայացման և գոյատևման խնդիր<sup>4</sup>:

1940-1950-ական թթ. Սփյուռքի պատմության մեջ մտան որպես համասփյուռքյան մշակութային կառույցների ստեղծման ժամանակահատված:

---

<sup>1</sup> Տե՛ս «Յուսաբեր» օրաթերթ, Գահիրե, 22 հունվար, 1924:

<sup>2</sup> Տե՛ս «Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության, քառաստոր շարք՝ նվիրված ՀՅԴ 113-ամյակին, Դ հատոր, Երևան, 2003, էջ 341-347: Տե՛ս նաև **Նավասարդեան Վ.**, Անպարկեշտ արշավի մը առթիվ, Գահիրե, 1948:

<sup>3</sup> Տե՛ս «Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության, Դ հատոր, էջ 308:

<sup>4</sup> Իրանահայ համայնքի խնդիրների վերաբերյալ մասնավորապես տե՛ս **Ստեփանյան Ա., Մարգարյան Հ.**, Իրանահայերի ներգաղթն ու վերաբնակեցման խնդիրները (1946-1970-ական թվականներին), ՊԲՀ, 2009, թիվ 1, էջ 43-53:

Ռամկավար ազատական կուսակցությունը 1947 թ. հիմնադրեց «Թեքեյան» մշակութային միությունը, իսկ Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցությունը 1955 թ. ստեղծեց «Նոր Մերունդ» մշակութային միությունը: Դեռևս 1928 թ. ՀՅԴ կողմից ստեղծվել և Սփյուռքում ծավալուն գործունեություն էր իրականացնում Համազգային հայ կրթական և մշակութային միությունը:

Հայ դատի լուծման և Հայոց ցեղասպանության ճանաչման հրամայականը սփյուռքահայ որոշ շրջանակներում աստիճանաբար ի հայտ բերեց արմատական տրամադրություններ, որոնց հետևանքով 1970-ական թթ. Սփյուռքում սկիզբ առավ ռազմաքաղաքական պայքարի փուլը, որը շարունակվեց մինչև 1980-ական թթ. երկրորդ կեսը: Զինված պայքար են սկսում Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը և Հայոց ցեղասպանության արդարության մարտիկները<sup>1</sup>: Այդ պայքարն սկսեց մարել 1980-ական թթ. վերջերին, սակայն սկիզբ առնող Արցախյան շարժումը և մոտալուտ ինքնապաշտպանական կռիվները նոր մարտադաշտ տրամադրեցին տասնամյակից ավելի տևած զինված պայքարում թրծված մարտիկներին: Վերջիններից շատերը մարտնչեցին Արցախում և փառքով պսակեցին իրենց անունները:

1991 թ. սկիզբ առած նոր շրջափուլի կարևորագույն առանձնահատկություններից էր այսպես կոչված Նոր Սփյուռքի «ի հայտ գալը»: Նախկին խորհրդային հանրապետություններում բնակվող հայերը, որոնք մինչ ԽՍՀՄ փլուզումը միասնական պետության քաղաքացիներ էին, վերածվեցին ազգային փոքրամասնության ներկայացուցիչների, իսկ ընդհանուր առմամբ՝ Սփյուռքի: Ակնհայտ է, որ կազմակերպական խնդիրները հետխորհրդային հայ համայնքներում այնքան էլ բարձր մակարդակի վրա չէին, ուստի շատ արագ անհրաժեշտություն ծագեց կյանքի կոչելու համայնքային կազմակերպություններ: Բացի տեղային համայնքային կազմակերպություններից՝ շուտով հիմնադրվում են առավել ընդգրկուն հայկական կազմակերպություններ, որոնցից կարևորներն էին 2000 թ. ստեղծված Ռուսաստանի հայերի միությունը և 2001 թ. ստեղծված Ուկրաինայի հայերի միությունը:

*Սփյուռքի պատմության պարբերացումը սփյուռքյան զարգացումների և Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների ընդհանուր համատեքստում*

Վերը քննարկված իրողությունները ցույց են տալիս, որ Սփյուռքի շուրջ 100-ամյա պատմության պարբերացումն անհնար է արդյունավետորեն իրականացնել՝ առանց հաշվի առնելու Սփյուռքի հիմնական զարգացումները և Հայրենիք-Սփյուռք առնչության խնդիրը:

Մեր նախորդների մոտեցումները, լինելով խիստ իրատեսական, շրջանցել են մեկ կարևոր իրողություն. ***Սփյուռքի ամբողջ պատմությունը, ի տար-***

<sup>1</sup> Տե՛ս Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության, Դ հատոր, էջ 371-404:

*բերություն հայ գաղթաշխարհի պատմության, մշտապես ուղեկցվել է հայրենի պետության առկայությամբ, չնայած Հայոց պետականությունը տարբեր կերպափոխումներ է ունեցել:* Միյուրքի վրա այս կամ այն չափով իրենց ազդեցությունն են թողել հիմնականում այդ կերպափոխումները: Խնդիրն այն է, որ հայկական երեք հանրապետություններից Միյուրքը տևականորեն առնչվել է Խորհրդային Հայաստանի հետ, երբ Միյուրքի հետ հարաբերություններում առկա էին անլուծելի մի շարք խնդիրներ: Այդ իսկ պատճառով, չնայած հայրենի պետության առկայությանը, տասնամյակներ շարունակ Միյուրքը նրա հետ հարաբերություններ չի ունեցել:

Մյուս կարևոր խնդիրն առնչվում է Հայաստանի քաղաքական անկախության վերականգնմանը հաջորդած առաջին տարիներին երկրում սկիզբ առած արտագաղթի հետևանքով տասնյակհազարավոր հայերի հաստատմանը Միյուրքում, որին, ինչպես վերը տեսանք, Միյուրքի պատմության պարբերացումներում էական նշանակություն չի տրվել:

Հաշվի առնելով նաև վերոհիշյալը՝ ներկայացնենք Միյուրքի պատմության պարբերացման մեր հայեցակետը.

*1. Միյուրքի ձևավորման և Հայրենիք-Միյուրք հարաբերությունների սկզբնավորման ժամանակաշրջան (1918-1920 թթ.):*

Այդ ժամանակաշրջանում՝

ա. ցեղասպանությունից փրկված և հայ գաղթաշխարհի շարքերը համալրած հարյուրհազարավոր գաղթականների առկայությամբ աստիճանաբար ձևավորվում է և կայանում Միյուրքը՝ որպես աշխարհասփյուռ հայության հավաքական կենսագործունեության միջավայր,

բ. նորաստեղծ Հայաստանի Առաջին Հանրապետությունը, ի սկզբանե գտնվելով բարդ քաղաքական գործընթացների կիզակետում, Միյուրքի հետ կայուն ու զարգացող հարաբերություններ հաստատել չկարողացավ, չնայած փորձ կատարեց ապահովելու Միյուրքի աջակցությունը:

*2. Միյուրքի կազմակերպակառուցվածքային զարգացման և Հայրենիք-Միյուրք հարաբերությունների անկման շրջան (1921-1937 թթ.):*

Այդ ժամանակաշրջանում՝

ա. Միյուրքում վաղուց ի վեր գոյություն ունեցող կուսակցություններից և համասփյուռքյան կազմակերպություններից (ՄԴՀԿ, ՀՅԴ, ՀԲԸՄ, Հայ օգնության միություն և այլն) բացի ձևավորվում են նաև հասարակական-քաղաքական (Ռամկավար ազատական կուսակցություն) և կրթամշակութային (Համազգային հայ կրթական և մշակութային միություն) բնույթի համասփյուռքյան կազմակերպություններ, որոնց առաքելությունը հայապահպանությունն էր և հայության կազմակերպումն ու միավորումը,

- բ. Սփյուռքի տարբեր համայնքներում ձևավորվում են համայնքային-տեղական կազմակերպություններ, որոնք գործում էին առանձին վերցրած պետության, երկրամասի կամ քաղաքի հայության շրջանում,
- գ. 1921 թ. Փետրվարյան ապստամբության ճնշումից հետո Սփյուռքում հաստատվում են Հայաստանի Առաջին Հանրապետության ղեկավարները, որոնք մշակում են աշխարհասփյուռ հայության հավաքական կենսագործունեության՝ «Հոգևոր Հայաստան» անունը ստացած միջավայրի ձևավորման հայեցակարգը, որի վերջնականպատակը տարաբնույթ ապակուսակցական համասփյուռքյան կազմակերպությունների միջոցով սփյուռքահայության կյանքի համակարգումն էր,
- դ. Խորհրդային Հայաստանի իշխանությունները Սփյուռքի օժանդակությունն ապահովվելու համար 1921 թ. կյանքի են կոչում Հայաստանի օգնության կոմիտեն, իսկ այնուհետև անհրաժեշտաբար ձեռնամուխ լինում գաղթականների մասնակի ներգաղթ կազմակերպելու գործին,
- ե. Խորհրդային Հայաստանում աստիճանաբար արգելվում է Սփյուռքի կազմակերպությունների գործունեությունը, և միակ բացառությունը մինչև 1937 թ. երկրում օրինական ներկայացուցիչ ունեցող ՀԲԸՄ-ն էր:

*3. Սփյուռքում քաղաքական մտքի վերելքի և Խորհրդային Հայաստան-Սփյուռք քաղաքական հակասությունների շրջան (1937-1964 թթ.):*

Այդ ժամանակաշրջանում՝

- ա. Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով վտանգի ենթարկված հայության խնդիրների լուծման հրամայականն աշխուժացնում է հայ քաղաքական միտքը Սփյուռքում, որը սկսում է հայության կյանքի անվտանգության ապահովման ուղիների փնտրտուք՝ հարաբերությունների մեջ մտնելով նացիստական Գերմանիայի իշխանությունների հետ և ԱՄՆ-ում հիմնադրելով հայության իրավունքների պաշտպանությանը միտված Հայ դատի հանձնախումբը,
- բ. Խորհրդային իշխանությունները, հետապնդելով զուտ քաղաքական նպատակներ<sup>1</sup>, 1946-1949 թթ. կազմակերպեցին սփյուռքահայության ներգաղթը, որը ոչ միայն չնպաստեց Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների վերականգնմանը, այլև սրեց հարաբերությունները Սփյուռքում՝ կապված այդ գործընթացի նկատմամբ սփյուռքյան կազմակերպությունների դիրքորոշման, ինչպես նաև ներգաղթողների նկատմամբ կիրառվող հալածանքների հետ,
- գ. Առաջին աշխարհամարտին հաջորդած սառը պատերազմի հետևանքով հայությունն աշխարհաքաղաքական առումով երկփեղկվեց, ըստ որում՝ Խորհրդային Հայաստանը և Խորհրդային Միության հայությունը հայտնվեցին այսպես կոչված սոցիալիստական, իսկ սփյուռքահայությունը՝ հակառակ ճամբարներում,

<sup>1</sup> Տե՛ս **Ստեփանյան Ա.**, XX դարի հայրենադարձությունը..., էջ 85-88:



դ. այդ պատճառով սփյուռքահայության հետագա ներգաղթը շուրջ երկու տասնամյակով հետաձգվեց,

ե. Մփյուռքում սկսվեց համասփյուռքյան մշակութային նոր կազմակերպությունների ստեղծման գործընթացը, և եթե ՀՅԴ-ը նման կազմակերպություն ստեղծել էր դեռևս 1928 թ., ապա ՌԱԿ-ի կողմից «Թեքեյան» մշակութային միությունը հիմնադրվեց 1947 թ., իսկ Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցության «Նոր սերունդ» մշակութային միությունը ստեղծվեց 1955 թ.: Այս գործընթացը հետևանք էր այն իրողության, որ Մփյուռքի կուսակցություններում գիտակցել էին Հայրենիք-Մփյուռք հարաբերությունների երկարատև խզման հեռանկարը և ձեռնարկել միայն սեփական ուժերով սփյուռքահայության կրթամշակութային կյանքի կազմակերպումը:

*4. Մփյուռքում նոր զարգացումների և Խորհրդային Հայաստան-Մփյուռք հարաբերությունների բարելավման շրջան (1964-1988 թթ.):*

Այդ ժամանակաշրջանում՝

ա. սփյուռքահայ կրթամշակութային կյանքի զարգացումը և քաղաքական մտքի վերելքի շարունակությունը 1972 թ. ԱՄՆ-ում ծնունդ տվեցին Ամերիկայի հայկական համագումար կազմակերպությանը<sup>1</sup>,

բ. Հայ դատի լուծման և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հրամայականը Մփյուռքում արմատական քայլերի դրդեց որոշ անհատների ու կազմակերպությունների, որի հետևանքով 1970-ական թթ. սկզբին ծնունդ առան հայկական ռազմաքաղաքական և վրիժառուական կազմակերպություններ, որոնցից ամենահիշարժանը Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակն ու Հայոց ցեղասպանության արդարության մարտիկներն էին,

գ. 1961 թ. Խորհրդային իշխանությունը որոշում ընդունեց սփյուռքահայերի նոր ներգաղթ կազմակերպելու վերաբերյալ, որի արդյունքում 1960-1970-ական թթ. Խորհրդային Հայաստան ներգաղթեց ավելի քան 30 հազար սփյուռքահայ<sup>2</sup>,

դ. 1964 թ. Խորհրդային Հայաստանի իշխանությունները Մփյուռքի հետ կապերի վերականգնման և ամրապնդման նպատակով հիմնադրեցին Մփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն, որը բեղմնավոր գործունեություն ծավալեց 1960-1980-ական թվականներին,

ե. Խորհրդային իշխանություններն աստիճանաբար սկսում են մեղմացնել անհաշտ քաղաքականությունը Մփյուռքի կազմակերպություններ-

<sup>1</sup> Տե՛ս **Նահապետյան Գ.**, Ամերիկայի հայկական համագումարի կազմավորումը, նպատակներն ու կառուցվածքը, ԼՀԳ, 1997, թիվ 3, էջ 25-32:

<sup>2</sup> Տե՛ս **Մելիքսեթյան Հ.**, նշվ. աշխ., էջ 255-258:

րի նկատմամբ՝ որպես բացառություն պահպանելով թշնամանքը միայն ՀՅԴ նկատմամբ<sup>1</sup>:

5. *Մփյուռքի՝ դեպի Հայրենիք շրջադարձի, Հայրենիք-Մփյուռք ազատ հարաբերությունների և Նոր Մփյուռքի ձևավորման շրջան (1988 թվականից մինչև օրս):*

Այդ ժամանակաշրջանում՝

- ա. սկիզբ առած Արցախյան շարժումը, հայերի նոր ցեղասպանությունը Սոււզայիթում, ինչպես նաև ավերիչ երկրաշարժը համայն հայության ուշադրությունը և պայքարի ավյունն ուղղորդեցին դեպի հայրենիք,
- բ. Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումը նոր լիցք հաղորդեց արդեն իսկ սերտացող Հայրենիք-Մփյուռք հարաբերություններին, և Մփյուռքի առաջ վերջապես բացվեցին հայրենի պետության փակ դռները,
- գ. Հայաստանի քաղաքական անկախության վերականգնմանը հաջորդած առաջին տարիներին ստեղծված դժվարին իրավիճակից դրդված՝ տասնյակհազարավոր հայեր արտագաղթեցին երկրից, որի հետևանքով ավելի մեծացավ սփյուռքահայության թվաքանակը, և Մփյուռքում իրավիճակը որոշակիորեն փոխվեց,
- դ. 1992 թ. ստեղծվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամը հայկական երկու հանրապետությունների կենսական մի շարք խնդիրները համահայկական միջոցներով լուծելու նպատակով,
- ե. Հայրենիք-Մփյուռք հարաբերությունները որոշակի տեղատվություն ապրեցին սփյուռքյան քաղաքական կազմակերպությունների՝ Հայրենիքում ունեցած հիմնականում քաղաքական խնդիրների պատճառով, սակայն դրանք ի գործու չեղան խափանելու Հայրենիք-Մփյուռք համախմբման անբեկանելի ընթացքը,
- զ. Հայաստանի Երրորդ Հանրապետության երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի օրոք վերջնականապես լուծում ստացան Հայրենիք-Մփյուռք հարաբերություններում առկա մի շարք խնդիրներ, և մասնավորապես ձևավորվեց ընդհանուր քաղաքական օրակարգ,
- է. 1999, 2002 և 2006 թթ. տեղի ունեցան Հայաստան-Մփյուռք երեք խորհրդաժողովներ, որոնց հիմնական նպատակը համազգային օրակարգի, հայության առաջ ծառայած խնդիրների լուծման համատեղ ձևաչափերի և Հայրենիք-Մփյուռք հարաբերությունների համակարգման մեխանիզմների մշակումն էր,
- ը. ԽՍՀՄ տարածքում բնակվող հայությունը 1991 թ. ի վեր կանգնեց «սփյուռքացման» գործընթացի անհրաժեշտության առջև, որի արդյունքում գրեթե բոլոր նախկին խորհրդային պետություններում աստիճանաբար հիմնադրվեցին ընդհանուր և տեղային բնույթի հա-

<sup>1</sup> Տե՛ս **Դավաքյան Գ.**, Հայ Մփյուռքի պատմություն, էջ 46:

մայնքային հասարակական կազմակերպություններ՝ հայության տարբեր հատվածների համար հավաքական կենսագործունեության միջավայրեր ձևավորելու նպատակով,

- թ. 2005 թ. սահմանադրական հանրաքվեի արդյունքում Հայաստանի Երրորդ Հանրապետությունում ներդրվեց երկքաղաքացիության ինստիտուտը, որը Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների սերտացման և սփյուռքահայության ինտեգրման կարևոր միջոց էր,
- ժ. 2008 թ. Հայաստանի Երրորդ Հանրապետության երրորդ նախագահ Ս. Սարգսյանի հրամանագրով ստեղծվեց ՀՀ սփյուռքի նախարարություն, որը նոր շրջափուլ բացեց Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում՝ նախանշելով հայրենի պետության նպատակադիր ընթացքը դեպի երկկողմ ինտեգրում:

Այս պարբերացումն ուսումնասիրողների առջև լայն հորիզոններ է բացում առաջին հերթին և գլխավորապես Սփյուռքը որպես ամբողջական համակեցական համակարգ դիտարկելու տեսանկյունից: Մյուս կողմից, հավասարապես կարևորելով սփյուռքյան զարգացումներն ու Հայրենիք-Սփյուռք առնչությունները, այն հնարավորություն է ընձեռում բացահայտելու Սփյուռքի պատմության այս կամ այն պարբերաշրջանի առանձնահատկությունները և զարգացման օրինաչափությունները:

Նշենք նաև, որ մեր առաջադրած պարբերացումն ամեննին չի հավակնում վերջնական համարվելու: Այն կարող է լրացվել և ամբողջացվել նոր հետազոտությունների արդյունքներով:

#### **Arman Yeghiazaryan – *Periodization of the Armenian Diaspora (Spyurk) History***

A number of scientists have approached the problem of periodization of the Armenian Diaspora (Spyurk) history. Some of them have attempted to periodize the history of the Spyurk based on the Homeland-Spyurk relations. Others have observed the problem through the main developments of the history of Spyurk.

The author suggests a periodization model which includes the basic principles of the both above mentioned approaches. The model is based on the main developments and events either of the Spyurk history or the Homeland-Spyurk relations.

ՄԱՂԱՔԻԱ ՕՐՄԱՆՅԱՆԻ ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Բանալի բառեր – Մաղաքիա Օրմանյան, բարենորոգումներ, Օսմանյան կայսրություն, Հայոց պատրիարքարան, Արևմտյան Հայաստան, Կ. Պոլիս, քրիստոնյա, բանախոս, հայրենիք, ժողովուրդ, արևմտահայեր*

Կաթոլիկ ընտանիքում ծնված, Հռոմում կրթություն ստացած Մաղաքիա Օրմանյանը (1841-1918) գործունեության արշալույսին կռահում է այլ դավանանքի քրիստոնյաներին իր մեջ ձուլելու պապականության՝ կաթոլիկ եկեղեցու ջանքերը: Դեռևս 1870-ական թվականների սկզբին այդ իրողության ազդեցությունը կրած՝ հոգով հայ երիտասարդը պայքար է ծավալում պապականության դեմ, որն արտահայտվում է 1872 թ. հունիսին իտալերենով «Ռեներսուրուս կամ Թուրքիա և պապականություն, իրավաբանական ուսումնասիրություն», այնուհետև սեպտեմբերին ֆրանսերենով «Արևելքի կաթոլիկների քաղաքական իրավունքները և կրոնական ազատությունը» գրքույկների հրատարակմամբ<sup>1</sup>: Պայքարը զագաթնակետին հասավ 1873 թ. օգոստոսին, երբ դարձյալ ֆրանսերենով նա հրատարակեց «Վատիկանը և հայերը» ծանրակշիռ հատորը<sup>2</sup>: Այդ աշխատությունների լույսընծայումը հանդգնություն էր դեռևս կաթոլիկ հոգևորական (վարդապետ) Օրմանյանի համար: Հեղինակի դրույթները թեպետ ոչ ոք չհերքեց, սակայն նրա աշխատություններն ընդգրկվեցին պապականության կողմից արգելված գրքերի ցանկում: Նա երեք տարի մնաց Հռոմում, վտանգավոր կացության մեջ, սակայն պայքարի դրոշն արդեն ծածանվում էր:

1876 թ. ապրիլի վերջին Օրմանյանը վերադարձավ Կ. Պոլիս: Պապական անսխալականության կոնդակը, նրա դեմ պայքարողների հոսանքը (որոնց շարքում էր նաև նորընծա վարդապետը) մեծ հեղաբեկում առաջացրին երիտասարդ հայ կաթոլիկի հոգում: Իր ժողովրդի պատմության քաջատեղյակությունը, հայ եկեղեցու՝ իբրև հայության ազգային դիմագծի պահպանման գործոնի դերի գիտակցումը, համեմատության զուգահեռների անցկացումը կաթոլիկ եկեղեցու, պապականության և հայ առաքելական եկեղեցու լայնախոհության, ազատամտության, ազգային ավանդույթներին հավատարմու-

<sup>1</sup> Sté u **Ormanian M.**, Il Reservurus, ovvero la Turchia ed il papato, studi giuridici, Roma, 1872; *Առլյմի*՝ Les droits civils et la liberté religieuse des catholiques d'Orient, Rome, 1872:

<sup>2</sup> Sté u **Ormanian M.**, Le Vatican et les Arméniens, Paris, 1873:

թյան միջև զարկ են տալիս նրա ներքնաշխարհում բորբոքված ուժգին պայքարին, որն ավարտվում է հոգուտ Հայոց եկեղեցու:

Կ. Պոլսում Օրմանյանը վճռում է առաջին քայլերը կատարել՝ Հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանի հետ առնչություններ սկսելով: Այդ նպատակով նա հարաբերություններ է հաստատում ավագերեց, պատրիարքական փոխանորդ Հովհաննես քահանա Մկրյանի հետ, նրա միջոցով ներկայանում Հայոց պատրիարքին, հաղորդում իր խնդրանքը՝ Հայոց եկեղեցու գիրկը դառնալու ջերմ փափագը: Ն. Վարժապետյանը, որ տեղյակ էր 1870-ականների սկզբին ընդդեմ պապականության լույս տեսած նրա «արգելված գրքերին», հասունյան և հակահասունյան պայքարում նրա դերակատարությանը, հարազատի նման հրահանգում է. «Մենք քեզ կճանչնանք, ուր որ ալ ըլլաս, մերն ես. տեղդ նստէ եւ խմորէ»<sup>1</sup>: Աստիճանաբար նա հայտնի է դառնում Կ. Պոլսի հայ շրջանակներում: Հայկական խնդրի համար պատրիարքարանը ձեռնամուխ է լինում ազգահամար կատարել, որի համար ստեղծվում է հանձնաժողով: Վարժապետյանի հանձնարարությամբ Օրմանյանն ընդգրկվում է այդ հանձնաժողովի կազմում: Գնահատելով նրա գիտելիքները և զարգացման մակարդակը՝ դարձյալ պատրիարքի խորհրդով 1878 թ. օգոստոսի 17 (29)-ին նրան կարգում են Ազգային Մատենադարանի վերատեսուչ, ինչպես նաև Ղալաթիո եկեղեցու քարոզիչ<sup>2</sup>: Քանի որ Ազգային ժողովի նիստերը գումարվում էին Ղալաթիայում, Մատենադարանի սրահը երեսփոխանների համար հաճախ ծառայում էր իբրև հանգստյան սենյակ կամ սպասասրահ: Այդ ընթացքում Օրմանյանը շփվում էր հասարակական նշանավոր գործիչների հետ: Հարաբերությունները երկուստեք նպաստավոր էին: Փոքր անց՝ սեպտեմբերի 19-ին<sup>3</sup>, Պետերբուրգից Կ. Պոլիս է ժամանում արևելահայ նշանավոր մշակութային գործիչ, ռուսական աստիճանավոր Կարապետ Եզյանը (Эзов), որը, շփվելով Օրմանյանի հետ, նրան առաջարկում է վերադառնալ Հայոց եկեղեցու գիրկը և իր հովանավորությամբ էջմփածոնում ստանձնել ճեմարանի տեսչի պաշտոն: Վերջինս նրան հաղորդում է պատրիարքի և իր պայմանավորվածության մասին:

Ժամանակաշրջանը շահեկան էր Մ. Օրմանյանի համար. ավարտվել էր 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը՝ հույսեր և ակնկալիքներ արթնացնելով հայության բոլոր հատվածներում, նաև Կ. Պոլսում: Գրեթե բոլոր թաղերում հայտնի դեմքերը բանախոսություններ էին կարդում Օսմանյան կայսրության մայրաքաղաքի հայ բնակչության համար: Այդպիսի հրավեր ստանում է նաև Օրմանյանը: Վերջինս ուրախությամբ է ընդունում հրավերը և 1879 թ. հունվարի 8 (20)-ին Օրթաքեռյի (Օրթագյուղի) լսարանում հանդես է գալիս բանախոսությամբ՝ «Հայուն անցեալը, ներկայն և ապագայն» թեմա-

<sup>1</sup> Օրմանյան Մ., Ազգապատում, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, հ. Գ, էջ 503:

<sup>2</sup> Տե՛ս Մ. Օ., Խոհք եւ խօսք, Երուսաղէմ, 1929, էջ 101:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

յով, որը լավ ընդունելության է արժանանում ունկնդիրների կողմից: Ժամանակի հայ մամուլի օրգանները բուռն արձագանքում են դրան, իսկ «Մասիսը» մեկ շաբաթ անց, հունվարի 16-ից անընդմեջ տպագրում է նրա բանախոսության բնագիրը<sup>1</sup>:

Ի՞նչն էր այդպես հուզել ունկնդիրներին. բանախոսությունում արտահայտված գաղափարները հարիր էին ժողովրդի ակնկալիքներին, հույսերին և ձգտումներին: Բանախոսության սկզբում հեղինակն իր մտորումներն ու տարակույսներն է կիսում ունկնդիրների հետ, տեղեկացնում, որ դժվար է եղել բանախոսության թեմայի ընտրությունը. սկզբից խորհել է գնալ հայր Կղեմես Միպիլյանի<sup>2</sup> հետքերով, որը հայությանը ծանոթացնում էր Տիգրան II-ի և դեռևս նրանից առաջ հայտնաբերված հայկական դրամներին՝ դրանցով ապացուցելով, թե որքան հինավուրց են հայ ժողովրդի քաղաքակրթության արմատները, ապա հրապուրվել է վարդապետ Գարեգին Սրվանձտյանցով<sup>3</sup>, որը պատրիարքի հրահանգով շրջագայում էր Արևմտյան Հայաստանի գավառներում, տեղագրում երկիրը և իր ժամանակակից, նաև ապագա սերունդներին հորդորում ճանաչել հայրենիքը, միշտ ապրել նրա ծոցում: Այդ անունները հուշում էին նրա ունկնդրին, ապա ընթերցողին, նաև հետագա սերունդներին, թե ինչ նկատառումներով է առաջնորդվել բանախոսն իր թեմայի ընտրության հարցում: Խորշելով վերացականությունից և վերամբարձ խոսքերից՝ նա իր ունկնդիրներին հաղորդում է, որ հետամուտ է «գործնական և իրական խնդիրների»: Օրմանյանը նշում է, որ հայի անցյալը պետք է մեկնաբանի և ներկայացնի ոչ թե ըստ Սուրբ գրքի էջերի, Նոյյան տապանի, Հայկի ու Բելի, Մար Աբաս Կատինայի փաստերի կամ Խորենացու՝ Հայկ, Արամ, Տիգրան հերոսների և Իշպուհինի, նաև Ուրարտու երկրների, այլ այդ հիմնահարցերը թողնելով «հնախույզների» (հնագետների) վերլուծությանը՝ նկարագրելու է իր մերձակա վայրերը, կիսաքանդ պյուններն ու տաճարները, ավերակ Հայաստանը: «Աւերակ է Հայաստան, ավերակ է Հայ ազգը, իւր ավերակաց նշխարքը բոլոր աշխարհի երեսը սփռուած են. այդ ավերակները թող մեզի իմացնեն Հայոց անցեալը»<sup>4</sup>:

Նշելով քաղղեացիների, բաբելացիների, պարսից և մարաց անունները՝ բանախոսն ընդգծում է, որ այսօր դրանցից «ոմանց անունն իսկ կորսուած է»,

---

<sup>1</sup> Տե՛ս «Մասիս», 1879, թիվ 2230-2240 ներառյալ 1879 թ. հունվարի 16-ից 27-ը:

<sup>2</sup> Կղեմես Միպիլյանը Մխիթարյան Միաբանության անդամ էր, նշանավոր հնագետ և դրամագետ (հակահասունյան), վախճանվել է 1878 թ. մայիսի 11 (23)-ին Սևերեկում: Նրա հոգեհանգիստը տեղի է ունեցել Օրթաքեռյի եկեղեցում, իսկ դամբանականն արտասանել է Օրմանյանը, որը և տվել է նրա գիտական գնահատականը: Այն տպագրվել է «Մասիսում» և ունեցել բազմաթիվ հրատարակություններ:

<sup>3</sup> Հայ ազգագրության հիմնադիր Գարեգին Սրվանձտյանցը՝ հայկական էպոսի առաջին հայտնաբերողն ու հրատարակիչը, իր «Թորոս Աղբար ճամփորդ Հայաստանի» (հ. I-II) աշխատությամբ հայությանը ծանոթացնում էր պատմական հայրենիքի ներկա կացությանը:

<sup>4</sup> «Մասիս», 1879, թիվ 2230:

և նրանք դարձել են թանգարանային նմուշներ, իսկ հայը գոյություն ունի: Ձեռնպահ մնալով սնապարծությունից՝ Օրմանյանը հիշատակում է վաղուց չքացած անցյալի հզոր տիեզերակալ պետությունների մասին և գուգահեռաբար շեշտում. «Եթե մեր անցելոյն մեջ քիչ է Հայաստանի փառքը իբր պետութիւն, բայց շատ է Հայուն փառքը իբր ազգ»: Թեև կարելի է վիճարկել այս թեզը, սակայն ճիշտ է, որ հայ ժողովուրդը գոյատևում էր: Վկայակոչելով այն հանգամանքը, որ հայերն իրենց երկիրն անվանել են Մեծ Հայք, այլ ոչ թե Մեծ Հայաստան, Օրմանյանն ընդգծում է, որ դա վկայում է իր ժողովրդի խելամտության մասին: Բազմաթիվ «գորաւորագոյն ազգեր» անհետացան պատմության թատերաբեմից, իսկ հայ ազգը կա և կարող է մրցել օտար ազգերի հետ: Վերլուծելով հայի անցյալը՝ բանախոսն ընդգծում է, որ այլ ազգերի համեմատությամբ հայն ունի ազգային գծեր, որոնցով գերազանցում է շատ հին ազգերի, սակայն անկողմնապահորեն փաստում է նաև, որ հայը բնավորության այնպիսի հատկանիշներ ունի, ի գորու որոնց «ուրիշ հին ազգաց շատերուն յետադասելի է»<sup>1</sup>: Բանախոսը հատուկ ընդգծում է, որ «Հայուն անցեալը անհատական կատարելութեանց նշանակ է», և ամեն մի հայ անհատ ունի նույն իդձերը, ինչ ամբողջ ազգը: Նրա կարծիքով, մի փոքրիկ ժողովուրդ՝ «ափ մը մարդիկ», կարողացան դիմակայել ահեղ բանակների, հավատարիմ մնալ լեզվին, կրոնին, ծեսին... Չնայած հայը պատմական հանգամանքների բերումով դարձել է աշխարհասփյուռ, սակայն ուր գնացել է, հասել է «բարձր դիրքերի»:

Օրմանյանը հիշատակում է աշխարհահռչակ Դավիթ Անհաղթի, Անանիա Շիրակացու, Գրիգոր Նարեկացու անունները, նշում, որ հռչակավոր անհատներն այնքան բազմաթիվ են, որ բոլորին թվարկելն անհնար է, սակայն չի վարանում ընդգծել հայ «ընդհանրութեան մեջ» նկատելի պակասությունները. «Ինչ որ պակասեց հայոց յընդհանուրն, լրացաւ առաւելոքն Հայ անհատից ճարտարութեամբ և գործնական հմտութեամբ»<sup>2</sup>: Չնայած պատմական «ահաւոր վայրիվերումներին»՝ հայը, ըստ նրա, հասել է իր ներկա վիճակին, որի քննությանն է անցնում բանախոսը: Նա նշում է, որ ժամանակին թուրք սուլթանները երկիրը շենացնելու համար հայերի զանգվածային ներգաղթ են կազմակերպել: Ֆաթիհ սուլթանը հատուկ պատվի է արժանացրել հայությանը՝ «ելմտական գործոց մեջ նորա ճարպկութեամբ շահեցան»: Իսկ Բեռլինի դաշնագրով հայը ներկայացավ ամբողջ աշխարհին: Ըստ Օրմանյանի՝ հայն ունի բոլոր հատկանիշները «քաղաքակիրթ ազգ կազմելու համար», որոնցից առաջինը լեզուն է, որը պետք է մաքրել «օտար լեզուներից», խրթին արտահայտություններից: Լեզվից հետո ընդգծելով դպրության և գիտության կարևորությունը՝ բանախոսը նշում է, որ գիտական հրատարակություններն ավելի քիչ են, քան պատմական և բանասիրական գրքերը:

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում, թիվ 2231:

Այդ բոլորով հանդերձ՝ նա ընդգծում է, որ հայ Մատենադարանը «երկու բիր գիրք է ավելի ունի»: Տպագրության գյուտից հետո գրեթե բոլոր քաղաքներում գործում են տպարաններ: Նշելով այդ փաստերը՝ նա նշում է, որ հայ հասարակության մեջ գործող բժիշկները, ճարտարապետները, երաժիշտները հետ չեն մնում օտարներից: Փաստելով այդ ամենը՝ Օրմանյանը հավելում է, որ չնայած դրան՝ օտարները կարծում էին, թե հայերը հաջող չեն «զինուց վարժութեան մեջ»: Սակայն 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, երբ «դրացի պետությունը»՝ Ռուսաստանը, հայերին հնարավորություն ընձեռեց գենք վերցնելու, հանրության առջև ի հայտ եկան հայտնի հայեր՝ Մաղաթովներն ու Արղությանները, Բեհբությաններն ու Բագրատիոնները, և ամբողջ Եվրոպայում դեռ վառ են մնացել Լոռիս-Մելիքովի, Հովհաննես Լազարևի, Արշակ Տեր-Ղուկասովի սխրանքները:

Դրանց հետ միասին բանախոսն ընդգծում է «հայագրի սպայակույտի, Գարապաղի այրիւձիոյն և Կովկասեան թնդանոթաձիգներու քաջագործութիւնը»: Չնայած վերոհիշյալներն արևելահայեր էին, բանախոսը շեշտում է՝ «ազգը նոյնն է և արիւնը նոյն»: Բացահայտելով ամբողջ հայության և ընդգծելով մասնավորապես արևմտահայության մտավոր նկարագիրը և զբաղեցրած դիրքը՝ նա արձանագրում է, որ չնայած հայ ժողովուրդն ինքնուրույն պետություն չունի, սակայն թուրք սուլթանները 1461 թ. հաստատել են հայոց պատրիարքությունը, որը յուրատեսակ «ազգապետություն» է և ինքնուրույն գործունեություն է ծավալել ամուսնությունների, ժառանգությունների, ազգահամարի, կրթական և բարեգործական հաստատությունների մեջ: Իսկ 1860 թ. արևմտահայոց ազգային սահմանադրությամբ հայերն ունեցան գոնե քաղաքական «անկատար կերպարանք»: Օրմանյանի աչքից չեն վրիպել հայագրի կաթոլիկներն ու բողոքականները, որոնք թեև Մահմանադրությամբ չեն առաջնորդվում, բայց կառավարվում են մոտավորապես նույն ձևով:

Բանախոսը հատուկ ուշադրություն է դարձնում արևելահայությանը («ռուսաբնակ հայեր»), որոնք չնայած չունեն հատուկ վարչություն, և նրանց գավառները ղեկավարում է փոխարքան, բայց պետական պաշտոնյաների թվում մեծաթիվ հայեր կան: Առավել կարևորն այն է, որ հայոց կաթողիկոսությունն է այնտեղ՝ Էջմիածնում, իսկ այդ հանգամանքը «հայոյն առանձնական դիրք մը կընձայե»: Արևմտահայերը գիտեն նաև, որ Եգիպտոսում Նուբար փաշան «պետութեանց նախարարութեանց կը նախագահե», իսկ Օսմանյան կայսրության պետական ապարատում ծանրակշիռ տեղ են գրավում «Սազրզլեան մը, Վահանեան մը, Օտեան մը»: Ռուսական կայսրության, պարսկական պետության մեջ ևս «ներկայիս հայն կը ցուցնե այն տաղանդը, որ ժամանակին գերագոյն հանճարն է՝ քաղաքագիտութիւնը»<sup>1</sup>: Չնայած այդ բոլորին՝ բանախոսը գտնում է, որ ազգի ներկան և դիրքը կատարյալ չեն լինի առանց քննելու «իւր կրոնական ներկան»: Բայց շրջանցելով կրոնական

<sup>1</sup> Նույն տեղում, 1879, թիվ 2232:



տարբերությունները՝ նա այդ խնդիրը թողնում է հոգևորականների վերլուծությանը: Նա նշում է, որ ամբողջ Եվրոպայում տիրում են դավանական տարբերություններ, և ընդգծում, որ «հայուն ոգին աւելի վեհանձն և նուազ փոքրոգի է, քան թե այլոց ազգաց քրիստոնեական ոգին»<sup>1</sup>:

Հայ հոգևորականությունը սերտ կապված է իր ժողովրդի հետ, եկեղեցու մատակարարությունը գտնվում է ժողովրդի ձեռքին: Մյուս կողմից, ժողովրդի հոգսերը հոգացողը և նրա պաշտպանը Հայոց եկեղեցին է: Հատուկ բացատրում է և ընդգծում, որ հայ ժողովրդի կարիքների և վշտերի համար բողոքողը Հայոց պատրիարքն է: Դա հարուցել է քաղաքակիրթ Եվրոպայի զարմանքը և հարգանքը, որ հայ ազգի վշտերը «համաշխարհային Արիոպագոսին ներկայացողները» երկու հայ արքեպիսկոպոսներն էին, իսկ հայության իրավունքը պաշտպանողները՝ «եկեղեցական համագումար ժողովրդ»:

Բանախոսը մատնանշում է, որ ունկնդիրներին ներկայացրեց հայության մտավորական, քաղաքական և բարոյական ներկան, բայց իր առջև պահանջ է դնում ներկայացնելու նաև հայի նյութական կողմը: Նա իր համոզմունքն է հայտնում, որ ներկա պայմաններում հայը տեսականորեն ունի ազգ կազմելու բոլոր իրավասությունները: Մակայն այդ ժամանակաշրջանում հային նա համեմատում է «քամուց ծեծված ծառի տերևների հետ», որ սփռվել է աշխարհի չորս կողմը, իսկ «ազգութեան ծառը» գոյություն չունի: Ամբողջ աշխարհում գոյություն ունեն հայկական գաղթօջախներ՝ Վրաստանում, Պարսկաստանում, Միջագետքում, Ասորիքում, Եգիպտոսում, Փոքր Ասիայում, Թրակիայում, Մաճառստանում (Հունգարիա), Լեհաստանում, Ռուսաստանում, Հնդկաստանում, նույնիսկ Աֆղանստանում<sup>2</sup>: Գաղթականության ամենամեծ դժբախտությունը նա համարում է Հայրենիքից հեռու լինելը, բայց ընդգծում, որ գաղթածներն «ավելի երջանիկ ու հանգիստ են, քան Հայաստանում ապրողները», որը խիստ այժմեական հարցադրում է: Օրմանյանը շեշտում է, որ, չնայած շարունակվող գաղթին, հայության մեծ մասը գտնվում է Հայաստանում. «Բարձր Հայք ու Վասպուրական (Կարս և Վանա կուսակալութիւնք և իրեն գլխավոր քաղաքներ՝ Կարին, Վան, Մուշ, Խարբերդ, Երզնկա, Բաբերդ և այլուր)»: Նա նշում է, որ այդտեղ պետք է փնտրենք «մեր ազգի դիրքը և արմատը», երկար կանգ է առնում հայի ներկա թշվառ կացության վրա, որը «հարստահարութեան և կեղեքման հետեւանք է»: Բարձր Դուռը չի կատարում բարենորոգումների պաշտոնական խոստումները, իսկ եվրոպական պետությունների հսկողությունը ոչ մի արդյունք չի տալիս: Բանախոսն ընդգծում է՝ «կուզեմ հավատալ», որ հզոր պետությունների խոստումները պիտի կատարվեն: Ըստ Օրմանյանի՝ հայերի թիվը հասնում է հինգ միլիոնի, ավելի ստույգ՝ 4.735.000-ի: Հայերի քանակը համարելով ոչ թե չափազանցված, այլ ստույգ՝ նա չի կարողանում կողմնորոշվել, թե որտեղ են

<sup>1</sup> Նույն տեղում, թիվ 2233:

<sup>2</sup> Նույն տեղում:

հայերը մեծամասնություն կազմում, և եզրակացնում է, որ հին ազգի մնացորդ հայր «բարոյական կենդանությունը կորսնցուցած չէ»: Ըստ նրա՝ հայր «տերեւաթափ ծառ է, բայց ոչ չորացեալ ու փտած»<sup>1</sup>. հասել է նրա «վերընծիւղելու գարունը և դալար բողբոջները ամեն կողմէ կարծակեն»: Հայության ծառի բողբոջները, ըստ Օրմանյանի, բազմաթիվ են, դրանց շարքում են՝ «կրօնք և եկեղեցականություն, լեզու և ընդունակություն, դպրություն և գիտություն, վարչություն և զինուորություն, քաղաքագիտություն և վաճառականություն»<sup>2</sup>: Սակայն նա մտավախություն ունի, որ այդ բողբոջները կարող են թառամել, որովհետև երկու դարից ավելի է, որ հայը դիմում է քաղաքակիրթ ազգերի օգնությանը, սակայն արդյունքը շոշափելի չէ. «Ինչ որ կայ՝ դեռ տկար և յողողողուն է, դեռ նեղ ու անձուկ է»: Ներկա կացության շարադրանքը հեղինակին ուղղորդում է դեպի հայի ապագան, որը, ըստ նրա, սերտորեն կապված է ազգի կրթության հետ: Մեփական փորձով նա համոզվել է, որ եթե հայ գեղջուկին համեմատեն եվրոպացու հետ, կտեսնեն, որ նա «շատ ավելի ուշիմ և մտացի բան գիտցող և խոսք հասկցող է», քան եվրոպացի շինականը: Դա համարելով բնական տաղանդ՝ Օրմանյանն ընդգծում է, որ հայությունը կարիք է զգում «նախնական, երկրորդական և բարձր վարժարանաց»:

Ամենից շատ նա ընդգծում է բարձր վարժարանի կարևորությունը հայ կյանքի և եվրոպական մրցակցությանը դիմակայելու համար: Նշելով, որ հայկական գյուղերում ընդհանրապես վարժարան գոյություն չունի, բանախոսը կարծիք է հայտնում, որ նոր ստեղծվող ընկերությունները պետք է ջանքեր թափեն նոր վարժարաններ հիմնելու ոչ թե Կ. Պոլսում, այլ բուն Արևմտյան Հայաստանում: Այդ առումով նա բարձր է գնահատում Արարատյան ընկերության կատարած աշխատանքը, որի շնորհիվ երկուսուկես տարում մի քանի վարժարաններ են բացվել Վասպուրականի գյուղերում<sup>3</sup>, ձեռնարկվել են քայլեր Վարժապետանոց հիմնադրելու համար, և որդեգրվել է «Հայաստանի մեջ ձրիաբար ուսում ծավալելը» կարգախոսը: Նման գործունեություն ծավալելու համար ստեղծվել են «Դպրոցասիրաց-Արևելյանը», «Բարեսերը», «Ընթերցասիրացը»<sup>4</sup>: Բանախոսը գոհունակություն է հայտնում, որ նախակրթարանները երկսեռ են, որովհետև նրանք կոչված են կրթելու «հաջորդ սերնդեան մայրերը», սակայն դառնացած խոստովանում է, որ «բարձր ուսումը» հայ հասարակությունն անպետ, նույնիսկ վնասակար է

---

<sup>1</sup> Նույն տեղում, թիվ 2234:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս **Կոստանդյան Է.**, Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Երևան, 2005, էջ 27-40:

<sup>4</sup> Հետագայում դրանք միավորվել են «Միացյալ ընկերությունք Հայոցի» մեջ: Տե՛ս նույն տեղում, էջ 14-17:

համարում կանանց համար, և խիստ վշտանում է, որ «բարձր ուսմանց դռները գոց են աղքատաց և կարոտելոց համար»<sup>1</sup>:

Բոլոր ժամանակներում ուսման համար կարևոր միջոցը համարելով դրամը՝ նա նշում է այն հայթայթելու երկու միջոց՝ «ազգային քսակը» (պատրիարքարանի միջոցները) և ազգի մեծահարուստների հնարավոր օգնությունը: Արևելահայերի և մյուս գաղթօջախներում երկու տեսակի թե միջոցի գոյությունը եղելություն համարելով՝ բանախոսն ընդգծում է, որ արևմտահայ իրականության մեջ «ընդհանուր ազգը» գտնվում է «ետնեալ վիճակի մը մեջ»: Դրա պատճառը նա համարում է «զավառաց ցարդ տիրած վարչական ընթացից թերությունները»<sup>2</sup>: Հայ «տառապեալ հողագործը» իր հողի տերը չէ, որովհետև կաշառակեր հարկապահանջը նախատեսվածից շատ է հարկ գանձում, իսկ «բռնավոր հողատերը, ընդդեմ օրինաց, ուզածին չափ կառնի»: Օրմանյանը հայտարարում է, որ գործադիր օրենք չկա փաստորեն, որովհետև նա կա՛մ չի կարողանում, կա՛մ չի ուզում գործել: Հրապարակային դասախոսության ընթացքում նման մոտեցման ցուցաբերումն այն ժամանակ խիստ հանդուգն քայլ էր: Բանախոսը գտնում էր, որ հայի ապագան պահանջում է, որ այդ «դարմանը հոգացուի»:

Մեծ տերությունների հասցեին նա հնչեցնում է իր քննադատական խոսքը, որոնք չնայած «իրենց ձեռքն են վերցրել Թուրքիայի ապագան», և հայությունը հույսեր էր տածում, որ «իր ցավին ցավակից կա», սակայն շուտով նրանց գործունեությունը ցույց տվեց, որ նրանք «Թուրքիայում գտնվող բոլոր ազգերի համար չեն հոգում»: Այդ պատճառով նա Հայոց պատրիարքարանի գործն է համարում՝ «գրել, աղաչել և պահանջել... հայոց ապագան երաշխավորել»: Շնորհակալությամբ ընդունելով պատրիարք Ն. Վարժապետյանի ծավալած գործունեությունը հայ ժողովրդի ապագան ապահովելու հարցում՝ նա կոչ է անում պանդուխտ հայերին վերադառնալ հայրենիք և շենացնել իրենց հայրերից ժառանգած երկիրը: Երկրագործը պետք է զբաղվի երկրագործությամբ, վաճառականը՝ վաճառականությամբ, արհեստավորը՝ զարկ տա իր արհեստին. շատ գործ կա անելու հայրենիքում, այնպես որ, ինչպես ցավով եզրահանգում է նա, «գործ կայ, գործող չկայ»<sup>3</sup>: Բանախոսը գտնում է, որ ազգի ապագան ապահով կլինի, երբ բոլոր ուժերը «կեղրոնանան որոշեալ սահմանին մեջ»<sup>4</sup>, սակայն դա դեռևս հնարավոր չի համարում, քանի որ «հայը բաժանեալ է քաղաքականապես»: Օրմանյանը երկար է խորհում, թե որտեղ է հայության ապագան՝ նկատելով, որ թեև որոշ ազգերի «անհաղթ ու անկործանելի էին» համարում, բայց նրանք անհետացան:

<sup>1</sup> «Մասիս», 1879, թիվ 2236:

<sup>2</sup> Նույն տեղում, թիվ 2237:

<sup>3</sup> Նույն ժամանակ Գ. Սրվանձտյանցը գրում էր. «Հայաստանի մեջն է բուն հայկական ինդիքը, իսկ մենք Պեղինի մեջ կորոնենք զայն»: Տե՛ս **Սրվանձտյանց Գ.**, Թորոս աղբար Հայաստանի ճամփորդ, Կ. Պոլիս, 1879, հ. 1, էջ 270:

<sup>4</sup> «Մասիս», 1879, թիվ 2238:

Արդյո՞ք Բեռլինի վեհաժողովի ներկայացրած «կազմակերպության ձևը» կարող է լինել հայի ապագան: Այս անգամ խոհական ընթացքին հետևող քանախոսը շեշտում է, որ վարչության այդ ձևը հայերին չի գրգռում օսմանյան հպատակության դեմ. ի՞նչ է իրենց պահանջածը՝ վարչական բարենորոգություն, իսկ կառավարությունը հայտարարել է, որ դա առանձնաշնորհում չէ: Սակայն Օրմանյանը հավատում է, որ գավառական բարենորոգությունները պետք է կատարվեն, քանի որ դա վճռված է «արքունի հրամանաւ և երաշխաւոր պետութեանց հաւանութեամբ»: Նա ցանկանում է իր խոսքն ավարտել ունկնդիրներին հավատ ներշնչելով. ոչ թե Կ. Պոլիսն է հայության ապագան, այլ բուն Հայաստանը՝ «գավառները». «Հայր իր մերձավոր ապագան և առաջադիմութիւնը ըմբռնում է հայ գավառների մեջ»: Սակայն գործնական քայլերը նա թողնում է ունկնդիրներին. ամենակարևորն ազգի առաջադիմության համար միջոցներ հայթայթելն է, որի համար ոչ թե պետք է տուրք հաստատվի, այլ բոլոր ազգայինները պետք է աշխատեն այդ ուղղությամբ: Նա ոգեկոչում է ամբողջ հայությանը. «Հայեր և հայուհիներ, ազգերնիս առանց ապագայի չէ, աշխատեցեք, օգնեցեք»<sup>1</sup>: Քառասուն դար հարատևող ժողովուրդը «ասկե ետքն ալ չոչնչանար»: Պատմության ելևէջներին, վայրիվերումներին դիմակայող ժողովուրդը չի կարող ապագա չունենալ: «Ապագայն ձերն է, բայց և ազգին հետ մերն է նաև «ապագային պատասխանատուութիւնը»: Նրա ընդարձակ բանախոսությունը, որն ավարտվում է նման արտակարգ եզրակացությամբ, արժանանում է ունկնդիրների բուռն ընդունելությանը:

Առաջին բանախոսության հաջողությունը նպաստել է Օրմանյանի բանախոսությունների շարքին: Օսմանյան կայսրության մայրաքաղաքի տարբեր թաղամասերի հայերը խնդրանք՝ հրավերներ էին ուղարկում նրան նոր բանախոսություններ ունկնդրելու համար:

Երկրորդ անգամ Օրմանյանն ընդունում է բանախոսության հրավերը 1879 թ. մայիսի 26-ին: Այս անգամ նրան մեծ հարգանքով ընդունում է Ուսկյուտարի Կրթասիրաց ընկերությունը<sup>2</sup>: Քանի որ հրավիրողները բանախոսին են թողնում «նիւթի ընտրութեան իրավունքը», ուստի նա բացատրում է ունկնդիրներին, որ ամենակարևոր հետազոտության նյութ կարող է լինել

---

<sup>1</sup> Նույն տեղում, թիվ 2240:

<sup>2</sup> Ինչպես առաջին բանախոսությունը, երկրորդը ևս հրատարակվում է ժամանակի հայ մամուլում, իսկ 85 տարի անց՝ 1955 թ., Կիլիկիայի կաթողիկոսության պատվերով Անթիլիասում այն վերահրատարակվում է երկրորդ անգամ (տե՛ս **Օրմանեան Մ.**, Հայութեան հոգին: Բանախոսութիւն արտասանեալ ի լսարանի կրթասիրաց ընկերութեան Յիւսկիւտար ի 26 մայիսի 1879, Բ պապագրութիւն, Անթիլիաս, 1955): Երկրորդ բանախոսության հրատարակիչը՝ Տաճատ Սրապյանը, «Մեր նպատակը» խորագրով առաջաբանում բացատրում է, որ հրատարակության նպատակն է «տարածել մեր ազգային կեանքին մեջ՝ եղբայրասիրութեան, փոխադարձ յարգանքի եւ հասկացողութեան ոգի մը, որ եկած է առհասարակ մեր Եկեղեցիէն եւ եղած՝ մեր ոյժը»:

«ամենայն հայոց հոգեկան հարաբերութեանց բովանդակութիւնը» մեկնաբանելը, և այդ պատճառով բանախոսությունը պետք է նվիրվի «Հայության ոգուն»: Գտնելով, որ հայության հոգուն խորքային բացատրություն տալը կհանգեցնի իմաստասիրական և քաղաքագիտական խնդիրների պարզաբանմանը, և դա չհամարելով իր նպատակը՝ նա ունկնդիրների ուշադրությունը ցանկանում է հրավիրել ավելի գործնական խնդիրների վրա:

Հայության հոգին ամեն մի անհատի ոգին է, որը քիչ թե շատ տեղյակ է իր ազգի պատմությանը, ուստի խոսելիս, հանգամանքների բերումով, կա՛մ այն բարձրացնում է մինչև երկինք, կա՛մ իջեցնում անդունդի խորքերը. կարծես երևան են գալիս նոր Խորենացիներ, ովքեր հայի ողբն են հնչեցնում: Կան հայ մարդիկ, ովքեր իրենց դժբախտ են համարում իրենց իսկ գործած սխալների պատճառով՝ մատնանշելով Մերուժան Արծրունուն, Վասակ Մյունիին, Վեստ Սարգսին և ուրիշներին, և կրկնում են, որ նման իրավիճակում հայտնվել են իրենց անմիաբանության պատճառով: Բանախոսն ընդգծում է, որ իր ելույթի նպատակը ոչ թե հայ ազգությանն այպանելն է, այլ նրան ներկայացնելն այնպիսին, ինչպիսին այն կա: Եթե ոմանք հայությանը ներկայացնում են իբրև անմիաբան և պատմական փաստեր են բերում, թե Արշակունիների և Բագրատունիների ժամանակ ինչպես էին հայ նախարարներն իրենց թագավորներին հանձնում թշնամուն, ապա Օրմանյանն ընդգծում է, որ պատմությանը քիչ թե շատ տեղյակ մարդիկ գիտեն, թե որքան շատ ավելի վատ գործեր են կատարվել Եվրոպայում: Ամենից գորավոր, «իմաստուն և խոհեմ կարծուաց ազգաց մեջ» «լատին և գերմանացի ազգերը» միջին դարերում տապալել են սեփական թագավորությունը: Բանախոսն ապացուցում է, որ հայության գոյությունն իբրև ազգություն պետք է խոստովանել, «թե հայոց ներքին արդիւնքն ու արժանիքն են»: Ինչպես նա նշում է, ավելի քան 500 տարի առաջ, այն է՝ 1375 թ. ի վեր, հայությունը կորցրել է իր պետականությունը Կիլիկիայում և առաջնորդվում է միայն հոգու բնական մղումներով: Ըստ Օրմանյանի՝ հայը նվաճել է իր Ազգային Սահմանադրությունը «իբրև հոգու պահանջ»: Ժամանակակիցները դա համարում են «նախանձելի միութեամբ և միաձայնութեամբ» կատարված իրողություն: Բանախոսն ընդգծում է հայության ոգու բոլոր հատկանիշները և հմտորեն դրանց տալիս է բացատրություններ: «Հայութեան հոգին ունի աննկուն յարատեւութիւն... բարուց չափաւորութիւն... ունի այն միաբանութիւնը, որով ազգային անհատներ իրարու միանալով կրնան ընդհանուր բարին և ընդհանրութեան աւանդ եղող բարիքը պահպանել, պաշտպանել, յառաջացնել և կատարելագործել»: Հայության հոգու ամենամեծ արտահայտությունը հեղինակը համարում է ազգասիրությունը, որը հավասարեցնում է ազգային մարտիրոսությանը: Քանի դար շարունակ հայը պայքարել է, հայկական դրոշը պատվով ծածանել են «Մամիկոնեանք, Բագրատունիք, Արծրունիք, Ռուբի-

<sup>1</sup> Լույն տեղում, էջ 23:

նեանք, Օրբելեանք, Դաւիթ և Մխիթար Միւնեցիք...», հիշատակում է նույնիսկ անպարտ Ուլնիան (Զեյթունը), որը պաշտպանում է իր ազատությունը «ապահով լերանց վրա»: Թվարկելով պատմական և ժամանակակից ազատագրական պայքարի փաստերը՝ Բանախոսը դրանք արժևորում է իբրև հայության ազգային ոգու դրսևորումներ: Այդ ամենով հանդերձ, նա նշում է նաև թերությունները՝ նախօրոք խոստովանելով, որ չի ցանկանում «դատախազի և ամբաստանողի ձև առնել», այլ հարցերը քննարկել իբրև բարեկամ: Հետաքրքիր է նրա քննադատությունը, ըստ որի՝ լավ պտուղ ունենալու համար լավ սերմը բավական չէ, անհրաժեշտ է այն լավ մշակել ու խնամել, ապա թե ոչ՝ «ամենէն ընտիր հունտը վտիտ և տկար, որդնոտ և փտած պտուղներ կուտա...»<sup>1</sup>: Տարբեր պետություններ, որոնց տիրապետության ներքո էին գտնվում հայերը, ստիպում էին իրենց հպատակներին յուրացնել կամ ընդունել իրենց հատկանիշները և, փաստորեն, իրենց թերությունները «պատվաստում էին» հայերի վրա: Բայց քանի որ ճակատագրի կույր հարվածներով հայերն ընկան «ներհակ ընդդեմ զորութեանց մեջ», ազգը բաժանվեց տարբեր տիրողների մեջ և «տարբեր ազգին ծառայութեան ներքեւ ինկաւ, և անոր ազդեցութեանց ենթարկուեցավ»<sup>2</sup>: Բանախոսը գտնում է, որ հայության ուսուցիչները պարտավոր են ժողովրդին տալ ազգային դաստիարակություն՝ ըստ ազգային լեզվի, նյութի և ուսմունքի, և եզրակացնում, որ միայն այդ ձևով չենք կորցնի մեր «հայութեան ոգին»: Որքան վատ լինի ազգի անցյալը, պետք է վստահել հայության հոգուն, որը կարողանում է փարատել ապագայի վտանգը և պահպանում է աննկուն ոգին և նույնիսկ «միջազգային ատեաններում» (ակնարկում է Բեռլինի վեհաժողովը) բարձրացնում իր փրկության հարցը: Հարկ է ազգային կրթություն տալ, փարատել վհատությունն ու երկյուղը, վերացնել մեր հոգու վրա դրսից ներմուծված արատները: Այդ պայմաններում միայն կգորանա հայության հոգին, կդառնա «զարգացեալ ժողովուրդ»: Սակայն դրա համար երկու անհրաժեշտ պայմաններ են պետք. մեկը բնական տաղանդն է, որով օժտված է մեր ժողովուրդը, մյուսը՝ «ուսումնական դաստիարակութիւնն է, և անոր մեջ շատ պակասութիւններ ունինք տակավին»<sup>3</sup>:

Օրմանյանը հայտնում է, որ հանդգնում է խորհուրդներ տալ ազգային գործիչներին և ժողովրդին. առաջինին՝ հարգել ժողովրդի կարծիքը, նկատի առնել նրա միտքն ու կամքը և պաշտպանել նրան: Իսկ ժողովրդին տված նրա ամենաանկեղծ խորհուրդն է խստապահանջ լինել «ձեր իշխանութեանց հետ», որն ունի արդիական հնչեղություն, և «ձեզի հետ»: Բանախոսությունն ավարտվում է միասնության խորհրդով. անհրաժեշտ է միանալ, կազմել ընկերություններ: Նա ուրախանում է, որ նման ընկերություններ ստեղծվել

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 28:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 30:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 37:

են Վասպուրականում, Տարոնում, Կիլիկիայում, Փոքր Հայքում: Փաստորեն բազմապատկվում են «գործողները»: «Ազգանվեր հայուհյաց» ընկերության ստեղծումը Կ. Պոլսում բանախոսին մեծ ուրախություն է պատճառում, և նա առաջարկում է ստեղծել ընկերությունների կենտրոնական հանձնախումբ՝ կրթական և ազգային գործերը բաշխելու համար: Մտորում է, թե արդյոք բանախոսությունը հասավ իր նպատակին, և վերջին պատգամն է տալիս ունկնդիրներին. «Ազգութիւնը կործանումից փրկելու միակ միջոցը արիութիւնն է եւ միաբանութիւնը»<sup>1</sup>: Բանախոսության վերջում Օրմանյանը հետաքրքիր առաջարկություն է անում՝ նշելով, որ այլազգիները միմյանց դիմելիս գործածում են տիրոջ անունը (господи, տեր, տիրայր): Նա հաղորդում է, որ ռամիկ հայ շինականը հարևանին դիմելիս օգտագործում է «ախպար» (եղբայր) բառը, և համոզմունք հայտնում, որ եղբայր բառից ավելի նախընտրելի դիմելաձև չկա, ուստի հղում է Մ. Պեշիկթաշլյանին.

«Ընդ աստեղօք ինչ կա սիրուն,

Քան գանձկալի եղբայր անուն ...»<sup>2</sup>:

Բանախոսությունն Օրմանյանը եզրափակում է ունկնդիրներին հիշեցնելով, թե շուտով լրանալու է Ազգային Մահմանադրության 19-րդ տարեդարձը (նա, ի դեպ, գտնում է՝ սուլթանի կողմից «թլփատված» սահմանադրությունն ընդունվել է ոչ թե 1863 թ., այլ 1860 թ.), և ամբողջ հայությունը պատրաստվում է տոնախմբության: Ինչպես առաջին, նրա երկրորդ բանախոսությունը ևս մեծ արձագանք է գտնում Կ. Պոլսի գաղթօջախի հայության շրջանում: Բանախոսությունների հրավերների հոսքը մեծանում է: Մակայն մինչև երրորդ բանախոսությունը Օրմանյանի կյանքում տեղի է ունենում իր համար ամենացանկալի իրադարձություն:

1879 թ. հոկտեմբերի 28-ին արտակարգ հանդիսավորությամբ՝ գրեթե ժողովրդական ցույցի տեսքով կաթոլիկ Օրմանյանը վերադառնում է Հայոց եկեղեցու գիրկը: Իրավացի է Հ. Միրունին, երբ նշում է, որ ուղղակի «ժողովրդական ցույցի կերպարանք առավ այդ դարձը»<sup>3</sup>: Իրական դարձն Օրմանյանի հոգում և նրա շրջապատի գործիչների համար տեղի էր ունեցել ավելի վաղ: Նրա հետ Հայոց եկեղեցու գիրկը վերադարձան յոթանասուններկու հայ: Այն ժամանակ (ինչպես ինձ թվում է, նաև այսօր) Հայոց եկեղեցին այն «շաղախն էր», որ միավորում էր հայ ազգության աշխարհասփյուռ հատվածները: Հայոց եկեղեցու գիրկը վերադարձողներն Օրմանյանի հետ գնացին Հայոց պատրիարքարան, որտեղ շրջապատված հայ հոգևորականներով՝ վերջինս գրավոր ուղերձ կարդաց՝ նշելով դավանական անջատումների չարիքները, ընդգծելով առաջին հերթին հայոց միասնությունը և կոչ անելով միավորվել ու միաբանվել: Պարտրիարքը փիլոն և վեղար նվիրեց

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 44:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 45:

<sup>3</sup> Միրունի Հ. Ճ., Օրմանյանը և իր ժամանակը, Էջմիածին, 1961, թիվ Ե, էջ 42:

Օրմանյանին, շնորհեց Մայր եկեղեցու ծայրագույն վարդապետության աստիճան (կաթոլիկ եկեղեցում, ինչպես վերը նշվեց, նա արդեն վարդապետ էր): Հայոց եկեղեցու գիրկը վերադառնալն ինքը բացատրում է ոչ թե որպես «վարկենական բռնկումի արդիւնք», այլ երկարատև խորհրդածությունների և ներքին խոր համոզման արդյունք: Նա այդ վճիռը կայացրեց գիտական հսկա պաշարով: «Մասիսը» 1879 թ. նոյեմբերի 11-ի թիվ 2469-ում հատուկ հոդված նվիրեց նրա դարձին: Տպագրվեց նաև «Գերապատիվ Օրմանեան Մաղաքիս վարդապետի ուղերձը» կաթոլիկությունից Հայոց եկեղեցու գիրկը դառնալու մասին: Ուղերձի հեղինակը հայության դժբախտությունն է համարում նրա բաժանումը տարբեր մասերի, ցանկանում է, որ Հայոց եկեղեցու գիրկը վերադարձողների շարքը երբեք չընդհատվի, երագում, որ «բոլոր հայազգիք միասին և միաբերան մի մարմին, մի հասարակութիւն և մի եկեղեցի ըլլային միշտ»: Ուղերձին հետևում է պատրիարք հոր պատասխանը:

Օրհնելով այդ մեծ խմբի դարձը մայր եկեղեցի՝ պատրիարքը նշում է, որ անկախ այն հանգամանքից, թե թշնամիները որքան են հարձակվել «հայոց տան վրա», այն չի կործանվել, որովհետև հիմնված է եղել հաստատուն հիմքի՝ «Քրիստոսի սիրոյ» վրա: Պատրիարքն այդ դարձը չի համարում կրոնափոխություն, այլ վերադարձ այն տունը, որտեղ «ծնած ու սնած էին Ձեր Հայրերը»: Բարի գալուստ մաղթելով նրանց՝ պատրիարքը ցանկանում է, որ «միւս բացակայ եղբայրներն բարով գան, հազար բարով»:

Հոգևորական գործերով Եգիպտոսում գտնվող Հովհաննես քահանա Մկրյանը ողջույնի նամակ է հղում Օրմանյանին՝ հայտնելով, որ նրա առաջ բացվել է գործունեության լայն ասպարեզ. «Աշխատեցեք ի նմա բուն հայկական ոգով և աշխուժի»<sup>1</sup>: Օրմանյանի վայելած ջերմ համակրանքի և գնահատականի մասին է վկայում այն փաստը, որ նրան Պետերբուրգից ողջունել է նույնիսկ «Ուսումնական և բազմարդին» քահանա Գաբրիել Պատկանյանը: Օրհնելով նրա դարձը Հայոց եկեղեցու գիրկը՝ նա ավստասանք է հայտնել, որ հեռու է մարմնով, փոխարենը նշել, որ «այլ հոգի իմ յոյժ մերձ է վայրաց՝ ուր կացեալ են ոտք քո...»<sup>2</sup>: Մեկ ամիս անց Մաղաքիս ծայրագույն վարդապետը Հայոց եկեղեցու գիրկը վերադառնալու առիթով հնազանդության գիր է ուղղել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Գևորգ Դ-ին և նրանից ստացել օրհնության կոնդակ<sup>3</sup>:

Այժմ շատ ավելի մեծ թվով բանախոսությունների հրավերներ տեղացին, որոնք ընդհատվել էին կարճ ժամանակով: Դեռ մի ամիս չանցած՝ 1879 թ. նոյեմբերի 17-ին, դարձյալ Ուսկյուտարի կրթասիրաց ընկերության լսարանում նա հանդես եկավ «Միութիւն Հայութեան» խորագրով բանախոսությամբ: Նույն թաղամասում երկրորդ անգամ բանախոսելը տեղի հանրու-

<sup>1</sup> «Մասիս», 1879, թիվ 2493:

<sup>2</sup> Նույն տեղում, թիվ 2496:

<sup>3</sup> Նույն տեղում, թիվ 2519:



թյան արտակարգ վերաբերմունքի ապացույցն էր<sup>1</sup>: Պատահական չէր բանախոսության թեմայի ընտրությունը: Հայության ոգին բացատրելուց և մեկնաբանելուց հետո անհրաժեշտ էր հայության միությունը, որն ազգի գոյության երաշխիքն էր դառնալու: Ըստ բանախոսի, դարերի ընթացքում տոկացող հայը չտոգորվեց «միութեան գաղափարներով»: Հայերը հեղեղի դեմ թումբ էին բարձրացնում՝ աշխատելով իրենց անձի համար «օգուտ մը պտղաբերել»: Դրանից ազգության շենքի որմերը սկսեցին բարձրանալ, իսկ շաղախը դարձավ միության գաղափարը: Հայության մասերն իրար հետ սկսեցին խոսել միության մասին. «Իմացական միութիւն, սիրոյ միութիւն, սրտի միութիւն, ըղձից միութիւն, բաղձանաց միութիւն»<sup>2</sup>: Օրմանյանը նշում է, որ անցյալ դարում հայության մասերը մերձենում էին միմյանց. բարգավաճ ճեմարան, ուսումնաստենչ միաբանություն, «ազգանվեր անձինք», սակայն չնայած այդ մակարդակին՝ կար ոչ թե միության կապ, այլ «սրտի և ըղձի կապ»: Յուրաքանչյուրը ցանկանում է մի լավ բան անել ազգի համար, բայց հայության միության հարցը, ըստ բանախոսի, վերելք էր ապրում «վերջին ժամանակներում»: Բանախոսն ունկնդիրներին տեղեկացնում է պատմական այն իրադարձություններին, երբ X դարում Բագրատունիների օրոք միավորված հայկական թագավորությունում ստեղծվել են Կարսի, Անիի, Վասպուրականի, Կիլիկիայի մանր թագավորությունները: Իսկ «լատինների» միջամտությամբ հայությունը բաժանվել է նոր մասերի: Օրմանյանը ցավով է արձանագրում, որ հայերը բաժանված են եկեղեցիով, ազգով, տեղով, պետությամբ, լեզվով և իշխանությամբ, որոնք նա մեկ առ մեկ մեկնաբանում է: Չնայած բոլոր հայերը քրիստոնյա են, սակայն տարբեր են դավանանքները (մի մասը հետևում է հռոմեական՝ կաթոլիկ եկեղեցուն, մյուս մասն աշակերտում է բողոքականներին), որոնք բաժանվել են հայ ուղղափառ առաքելականներից: Օրմանյանը հատուկ ընդգծում է, որ հարգում է դավանանքի ազատությունը, բայց դա խանգարեց հայության միությանը. եղբայրը դուրս եկավ եղբոր դեմ, հայությունը բաժան-բաժան եղավ, և «հայ հայու դեմ կրցան ըսել՝ էս քո ազգեղ չեմ»<sup>3</sup>: Բանախոսը գտնում է, որ կրոնն աստվածային ըմբռնում է, բայց այն պետք է նպաստի ոչ թե ազգի բաժանմանը, այլ միասնությանը: Նա իր ունկնդիրներին համոզում է «յանուն Քրիստոսի» ոչ թե բաժանվել, այլ Քրիստոսին պատվել ազգի միությամբ:

Ազգի բաժանության գործոններից է նաև գաղթը: Թողնելով Եփրատի և Երասխի ափերը, Արարատի և Տավրոսի լեռներն ու հովիտները, Բզունյաց (Վանա) և Գեղամա ծովեզերքը՝ հայերը ցրվեցին աշխարհով մեկ, նրանց մի մասին հաջողվեց իրենց ապրած երկրներում «պզտիկ Հայաստաններ ստեղ-

---

<sup>1</sup> Սյս բանախոսությունը ևս ունեցել է երկրորդ հրատարակությունը: Տե՛ս **Օրմանեան Մ.**, Միութիւն հայութեան (II տպագր.), Փարիզ, 1958:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 9:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 17:

ծել»: Սակայն ամենաբացասականն այն է, որ բուն հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում, հայր «խեղճութեամբ կը հեծէ և չարաչար կը հարստահարուի»<sup>1</sup>, իսկ պանդուխտներն օտարության մեջ ապրում են հանգիստ և ապահով: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ ծագեց Հայկական հարցը, Բանախոսը վշտացած արձանագրում է, որ պետությունները «Հայության երկիրը փնտրեցին», որովհետև նույնիսկ հայության կեսն իր բնիկ «հայ հողոյն» վրա չէր ապրում: Նրա այս դիտարկումը ևս ունի խիստ արդիական հնչեղություն: Ըստ նրա՝ մեր ազգության պատակտողները ոչ միայն դավաճաններն են՝ Մերուժանները, Վասակները և Վեստ-Սարգիսները, այլև օտար պետությունները: Նշենք, որ Բանախոսության պահին Հայաստանը բաժանված էր Ռուսաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի միջև, ինչը հայությանը պատճառել է մեծ դժբախտություններ:

Նա հիշատակում է չորս բաժանում՝ «եկեղեցով, ազգով, տեղով, պետությամբ»: Բանախոսը շեշտում է, որ դժվար է դրանք վերացնել. թմբկահարել եկեղեցու միջոցով միության հասնելու հանգամանքը՝ նշանակում է անտեսել խղճի ազատության օրենքը: Պետության միությունը հակասում է միջազգային իրավունքով ամրագրված դիվանագիտական օրենքներին: Փաստորեն, հայության իրական միության դեմ այնպիսի օրենքներ են գործում, որոնց դեմ պայքարելը Բանախոսն անհնար է համարում: Փոխարենն ի՞նչ միջոցներ է առաջարկում նա. ամենից առաջ անհրաժեշտ է «վերանորոգել հայ ազգին եկեղեցական միութիւնը... և գորացուցանել Հայության միութիւնը ըստ Աստծո կամքի»<sup>2</sup>: Օրմանյանն ընդգծում է, որ շուրջ կես դար է, ինչ մեզնից ավելի հետ կանգնած ազգերը «մեզմե աւելի յառաջ գացին», իսկ մենք «մաքառել ենք իրար դեմ, աշխատել ենք իրար կործանել»: Հայտնելով, որ այդ միտքն իր հետ ունեցած զրույցում հայտնել է իր կողմից շատ բարձր գնահատված Հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը, նա ոչ թե ողբի կոչ է անում, այլ առաջարկում միջոցներ որոնել հայության միության համար: Դիվանագիտական հնարքներով նա գովաբանում է «քաջայաղթ Օսմանեան աշխարհակալին կամքը», որ չորս դար առաջ (1461 թ.) ստեղծեց «հայոց պատրիարքություն»: Նրա վարչության ներքո ազգային միությունը Բանախոսը գործնականում անհնարին է համարում, որովհետև հայության մեջ անընդհատ հնչում են «Մեք Հայութիւնը մի ազգ կուզենք, և ո՛չ մի եկեղեցի» խոսքերը<sup>3</sup>: Օրմանյանը գտնում է, որ այդ կարծիքը ո՛չ անարգում է և ո՛չ պախարակում առկա կացությունը, բայց կոչում է՝ «պատուեցեք զՔրիստոս Ձեր միութեամբ»:

Բանախոսությունը նա շարունակում է աշխարհագրական և պետական բաժանումների բացատրությամբ. Մեծ Հայքի 15 գավառները, որոնք տարբեր

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 21:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 34:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 41:

պետությունների տիրապետության ներքո էին գտնվում, չեն սահմանափակում հայերի աշխարհագրական տեղաբաշխումը, հայությունն ապրում է նաև Փոքր Հայքում, Պոնտոսում, Կիլիկիայում, Միջագետքում, Ատրպատականում, Ադվանքում և Վիրքում: Բոլոր այդ վայրերում հայերը բնիկներ են: Բանախոսի շուրթերից հնչում է հետաքրքիր դիտողություն. նա նշում է, որ թուրքերն ու քրդերն օտարազգիներ են, բայց «կրթութիւնը եւ բնակութիւնը եւ յառաջադիմութիւնը կրնան շնորհել վերստին իրենց սկզբնական ազգութեան»<sup>1</sup>: Փաստորեն, բանախոսն ուզում է հասկացնել ունկնդիրներին, որ քրդերի և թուրքերի մի մասն ուծացված հայեր են: Հայության թիվը նա պարփակում է չորս միլիոնի սահմանում, որոնց երկուսուկես միլիոնը, ըստ նրա, ապրում էին Արևմտյան Հայաստանում, սակայն նրանց պակասում են տեղում ապրելու խիզախությունը, կամքն ու ուժը: Նա նրանց կոչում է չլքել իրենց երեխաներին, «մանկահասակ հարսներին, անկար ծերունիներին», չմեկնել պանդխտության, օտար քաղաքներում «գրաստաբար» չաշխատել՝ մի փոքր գումար վաստակելու և «կաշառակեր և յափշտակող» հարկահավաքին վճարելու համար: Ըստ երևույթին դիվանագիտական նպատակներով՝ Օրմանյանը հայտարարում է, որ իբր կայսրը (սուլթանը) ցանկանում է ապահովել բոլոր գավառներում բնակվողների երջանկությունը և հայերից սպասում է, որ իրենց գործունեությամբ նրանք կնպաստեն գավառների խաղաղությանն ու բարեկարգությանը: Ուստի Օրմանյանը կոչ է անում վերջ տալ պանդխտությանը կամ առնվազն այն նվազեցնել, չգնալ նույնիսկ Կոստանդնուպոլիս, որտեղ կկորցնեն թե՛ նյութական և թե՛ բարոյական արժեքները: Բայց նա ընդգծում է նաև, որ պանդխտության կանխարգելումը մեծապես կախված է հարստահարության վերացումից, և փաստում, որ միայն դա կերաշխավորի գաղթի և պանդխտության վերացումը, ինչը կարող է իրականանալ Հայաստանի բնիկ բնակչության «գործունեա և արիական մասնակցութեամբ»:

Այս անգամ ևս Օրմանյանը քանիցս ընդգծում է գավառներում վարժարաններ բանալու անհրաժեշտությունը: Նա ուրախությամբ հայտնում է, որ այդ նպատակով բուն Հայաստանում «ժրաջանութեամբ կը գործեն» Արարատյան, Դպրոցասիրաց, Արևելյան և Կիլիկյան ընկերությունները, որոնք քսանչորս վարժարան են բացել Արևմտյան Հայաստանի հայաշատ վայրերում (Վասպուրականում, Տարոնում, Տավրոսում և Կիլիկիայում), սակայն միաժամանակ ավստասանք է հայտնում, որ դրանք «կարոտութեան հարիւրին» տալիս են ընդամենը մի դարման: Համոզված, որ շոշափելի արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է միավորել այդ ընկերությունները, նա ուրախությամբ հայտնում է, որ այդ ուղղությամբ քայլեր են կատար-

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 44:

վում<sup>1</sup>: Բանախոսն ընկերությունների հիմնադիրներին համոզում է ծախսեր չանել Հայաստանից դուրս: Դեռ վրա է հասնելու «Դեպի երկիր կոչելու» օրը, որին այժմվանից նախապատրաստվել է պետք: Նա գտնում է, որ նույնիսկ տարբեր պետություններում ցաքուցրիվ հայությունը պետք է միասնության (միության) հասնելու փորձեր ձեռնարկի: Գտնելով, որ եկեղեցական միությունն ապահովում է հայության մեծ մասի միությունը (ըստ Բանախոսի՝ 87 %-ը), նա ընդգծում է Հայրապետական Աթոռի իրավասությունն ապահովելու Էջմիածնի գերակայությունը մյուս բոլոր հոգևոր կենտրոնների նկատմամբ: Ըստ Օրմանյանի՝ հայերը պետք է գործադրեն բոլոր միջոցները հայության «իրական միությունը» ստեղծելու համար: Նա հույս է հայտնում, որ «հայութեան մոխիրներէն կը վերածնի Հայութեան միութիւնը, իւր երջանիկ փինիկահան, որ ոչնչանալէն ետքը դարձեալ կը կենդանանա իւր իսկ մոխիրներէն առանց արտաքին գործողի...»<sup>2</sup>: Բանախոսությունն ավարտվում է ապագայի նկատմամբ հույսով լի և հուզիչ կոչով՝ ամեն մի հայ պետք է պատրաստ լինի հաղթահարելու արգելքները, ստեղծելու «իրական Միութիւն»: Դա յուրաքանչյուրի պարտքն է և նպատակը:

Օրմանյանի բանախոսությունների շարքը, սակայն, դրանով չի ավարտվում: 1879 թ. դեկտեմբերի 23-ին Գատրգյուղի (Գատրքեռ) Արամյան վարժարանի լսարանում նա հանդես է գալիս «Հայ ազգութիւն» թեմայով<sup>3</sup>: Նրա նպատակն էր լսարանին ներկայացնել հայ ազգության էությունը: «Անկապտելի իրաւունք» համարելով առաջադեմ ազգերի շարքում դասվելը՝ նա համեմատության եզրեր է անցկացնում. «Եթէ Յոյնն ու Պուլկարը, Ալպանացին ու Եգիպտացին» իրենց ազգություն են համարում և աշխատում են ազգի համար, ապա հայերը եթէ ոչ առավել, գոնէ հավասար իրավունք ունեն իրենց ազգության ինդիքը պաշտպանելու պետությունների առջև: Բանախոսը հարցնում է իր ունկնդիրներին, թե այս իրավիճակում կարո՞ղ է արդյոք հայությունը դասվել Արևելքի առաջադեմ և զարգացած ազգերի շարքը: Հայության առաջին ձիրքը համարելով իր գոյությունը, լեզուն և եկեղեցին պահպանելը՝ նա նշում է, որ հայությունը ոչ քաղաքական դիրք ունի կամ քաղաքական կենտրոն ունի և ոչ նույնիսկ նման կենտրոն ունենալու հույս: Աշխարհով մեկ սփռված հայերը կորցրել են իրենց հայրենիքը: Բանախոսը նրանց համեմատում է հրեաների հետ՝ արձանագրելով շատ տարբերություններ և նմանություններ: Նա հեռու է այն մտքից, թե հայությունն ունի ազգության «կատարեալ արդիւնքը», բայց անվարան հայտարարում է, որ «ազգութեան ամեն ձիրքերը կը պարունակէ»<sup>4</sup>: Օրմանյանն ազգության

<sup>1</sup> Այս առնչությամբ նա հայտնում է, որ ստեղծվել է «Միացեալ Ընկերութիւնք հայոց»: Տե՛ս **Կոստանդյան Է.**, նշվ. աշխ., նշել էջ 14-16:

<sup>2</sup> **Օրմանեան Մ.**, Միութիւն հայութեան, էջ 58:

<sup>3</sup> Տե՛ս **Օրմանեան Մ.**, Հայ ազգութիւն, Կ. Պոլիս, 1880:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 12:

«ձիրքերը» (հատկանիշներն) է համարում «բազմությունը» (թվաքանակը), լեզուն, կենտրոնը, «կազմակերպությունը, յոդակապություն մը և նպատակ մը»: Նա մանրամասնում է, որ եվրոպական ժողովուրդների համար ազգ բառը պետությանը հոմանիշ է, սակայն հայերը զուրկ են դրանից: Այս ամենով հանդերձ՝ բանախոսը շեշտում է, որ հայն ունի «ազգային գոյութեան ամեն ձիրքերը», բացի պետականից. բայց արևմտահայերն ունեն Ազգային Պատրիարքություն, որը, ըստ նրա, մարմնավորում է ազգի քաղաքական դիրքը: Հայն ունեցել է աշխարհի հնագույն պետությունը, հայտարարում է նա, ընդգծելով հայազետ Անդրե Մորսմանի կատարած հնագիտական պեղումները, իր և հայության կողմից արտահայտում սրտի խորին կսկիծը նրա վաղաժամ մահվան առիթով: Նա ուրախությամբ արձանագրում է, թե Ցիցերոնն ինչպիսի «պերճախոսությամբ» է վերլուծել Տիգրան Մեծի սխրանքները, հավելում, որ նման փաստերը բազում են:

Օրմանյանը միաժամանակ ընդգծում է, որ թվաքանակն ազգության կարևոր հատկանիշը չէ. նա վկայակոչում է 60 միլիոն գերմանացու և երկու միլիոն դանիացու գոյության փաստը, որոնք համարվում են ազգ: Կարծելով, որ հայությունն իր փառքի և հզորության ժամանակ բավականին մեծ թիվ է կազմել, իր օրերի հայության քանակը ներկայացնում է ավելի քան չորս միլիոնի սահմանում՝ միաժամանակ դա համարելով բավականին համեստ: Ըստ նրա՝ «միլիոն ու կես հաշուին ռուսահայք» (հղում է պետական վիճակագրության տվյալները), միլիոն և մեկ քառորդ «Օսմանեան Մեծ Հայքի բնակիչներն են» (նկատի ունի Կարինի, Վանի, Բաղեշի և Տիգրանակերտի կուսակալությունները), մեկ միլիոնի է հասնում օսմանյան գավառների՝ Հին Փոքր Հայքում, Պոնտոսում, Կապադովկիայում և Կիլիկիայում բնակվող հայության թվաքանակը, իսկ քառորդ միլիոնի՝ աշխարհում սփռված հայության: Ի մի բերելով այդ թվերը, նա հայտարարում է, որ «Հայութիւնը ազգութիւն մի է»<sup>1</sup>: Այդուհանդերձ, մեր կարծիքով, նրա մատուցած վիճակագրական տվյալներն ամեննին ամբողջական չեն:

Ազգության առաջին նախապայմաններից մեկն Օրմանյանը համարում է սեփական լեզու ունենալը, որը «սեփական ազգութեան թե՛ ռահահորդն է և թե՛ գրավականը»: Հետաքրքիր վերլուծություններ է կատարում բանախոսը, ընդգծում գրոց լեզվի՝ գրաբարի խրթինությունը, նաև ճոխությունը, իսկ «խոսից լեզուի»՝ աշխարհաբարի պարզությունը, բայց նաև ցամաքությունը: Այդուհանդերձ, նա կասկած իսկ չի տածում, որ երկու լեզուն «հավասարապես մերն են» և ծնողի ու զավակի նման միացել, առավել հարուստ են դարձել: Թվարկելով հայերին պատկանող պատմական տարածքները՝ «Վրկանա, Եվքսիսեան, Միջերկրյա և Պարսկային ծովեր, Եփրատ ու Տիգրիս, Կուր և Երասխ կ'ոռոգանեն, Մասիսք և Տարոնք կը պաշտպանեն, Բզնունեաց, Գեղամայ և Ուրմիոյ ծովակք կը զարդարեն», նա փաստում է, որ դա մեր

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 19:

երկիրն է, ուր փոփոխակի «փառքը ցուցցավ», և «թշուառութիւնը թագաւորեց» «Հայութեան աշխարհը և Հայ ազգութեան Հայրենիքը»<sup>1</sup>: Բանախոսն ընդգծում է, որ չնայած հայրենի այդ հոյակապ տարածքին՝ հայությունը կենտրոն չունի, և երկար խորհելուց հետո հայտարարում, որ Հայոց պատրիարքը ոչ թե միայն հոգևոր առաջնորդ է, այլև ազգապետ (միլլեթ բաշի)՝ ազգային վարչության ղեկավար, որի շուրջը բոլորել են Ազգային ժողովի բաղադրիչները՝ կրոնական և քաղաքական կառույցները: Փաստորեն, Սահմանադրությունը միավորում է միայն օսմանահպատակ հայությանը: Արևելահայությանը, արևմտահայությանը, աշխարհասփյուռ հայությանը հողակապողը «Լուսավորչահիմն կաթողիկոսական աթոռն է Ամենայն Հայոց», որը հայությանը ներկայացնում է ոչ միայն իբրև եկեղեցի, այլև «հայ եկեղեցին ազգութեան կը փոխարկե»<sup>2</sup>: Քննարկելով հայության կացությունը XIX դարի երկրորդ կեսին՝ Օրմանյանն այն ներկայացնում է իբրև «թշուառ և հիւանդ անձ», որը ձեռնամուխ է եղել ապաքինման գործընթացին: «Կշռելով իր կատարած գործերը և վայելած անունը»՝ բանախոսը հայտնում է, որ երբեք չի կարելի հայ ազգին բնորոշել իբրև «անձև և անկերպարան» կարգավիճակ ունեցողի: Մասնավանդ հայության մեջ շարժում է սկսվել, որպեսզի այն «կառավարութեան համար նորոգեալ և բարեփոխեալ» ձև ստանա: Այդ շարժման պարագլուխ համարելով Կ. Պոլսի Հայոց պատրիարքին և նրան վերագրելով «ղիցցազնական առաջին քայլերը», որոնց արդյունքը Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածն է և մեծ պետությունների վեհաժողովի 61-րդ հոդվածը<sup>3</sup>, բանախոսն այդքան բարձր բնորոշումից հետո սթափ արձանագրում է, որ հայերն ակնկալված արդյունքին «կատարելապես չհասան»: Ընդգծելով հայ ազգության գոյության փաստը՝ նա շեշտում է, թե հարկ է ջանքեր գործադրել լուծելու «Հայաստանի կառուարութեանը աւելի օգտակար և աւելի օրինաւոր ձեւ տալու խնդիրը...»: Այդ նպատակով Օրմանյանն ազգանվեր պատրիարքին «Պատրիարքական և Ազգապետական, վարչական և օրենսդրական բարձր իշխանութիւն (կառավարութիւն)» հաստատելու պահանջ է ներկայացնում, որպեսզի ազգը բավարարվի ոչ թե սոսկ գոյությամբ, այլ առաջադիմությամբ: Դիտողություն անելով իր նախնիներին և ժամանակակիցներին, որ չունենք մեր քաջ նախնիների՝ Հայկերի, Արամների, Արտաշեսների, Տիգրանների, Վարդանների պատկերները (թեկուզև անարվեստ, միայն թե լինեին), բանախոսն առաջարկում է հայ մանուկներին հայկական երգեր սովորեցնել, որը նաև ժամանակակից պահանջ է, քանի որ օտար երգերը երեխաներին օտարում են ազգությունից, իսկ գողթան երգիչների գործերը դարեր ի վեր հուզում են մեր սրտերը: Նա մատնանշում

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 22:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 27:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 31:

է Պեշիկթաշյանի «ազգասիրական երգերը», որոնք մղում են «նոր յառաջադիմութեան քայլերի»:

Օրմանյանն ազգության էությունն անաղարտ պահելու համար անհրաժեշտ է համարում, որ ազգային պատմությանը տեղյակ լինեն ոչ միայն աշակերտները, այլ «չափահասները», և գտնում, որ դրա համար պարտադիր է ոչ թե պատմաբան լինել, այլ պատմության հետ հաղորդակցվել: Իսկ դրա համար անհրաժեշտ են թանգարաններ, գեղարվեստական գրքեր, երգեր, դասախոսություններ: Ըստ նրա՝ ամենակարևոր գործը հայության թվաքանակը հավելելն է և Հայաստանը հայաբնակ դարձնելը: Դրա առաջին քայլը հարկ է, որ լինի պայքար պանդխտության դեմ, որի պատճառով Հայաստանից մեկնում են բազմահազար մարդիկ, իսկ Հայրենիքը զրկվում է նաև նրանց սերունդներից: Հետաքրքիր է մանրամասնել, որ քաջատեղյակ չլինելով արևելահայության կացությանը՝ Օրմանյանը նշում է, թե «ռուսահայոց մեջ պանդխտութիւնը պակասել է և այնտեղի գիւղերը դարձել են ապահով»<sup>1</sup>: Իբրև արևմտահայ պանդուխտների թվի ավելացման գործոն, բանախոսը մատնանշում է «հարստահարութեանց և թշուառութեանց և առտնին կենաց վտանգները»: Այն գյուղերում, որտեղ հարստահարությունները համեմատաբար նվազ են, այնտեղ պանդուխտներ չկան: Պանդխտության դեմ պայքարելու համար Կ. Պոլսում աշխատանք են ծավալում՝ հայրենի երկիր նրանց վերադառնալու ծախսերը հոգալու նպատակով: Ազգության թվաքանակն ավելացնելու համար անհրաժեշտ է, որ երիտասարդներն ամուրի չմնան, ընտանիք կազմեն, զավակներ ունենան: Քանի որ ազգի կենդանության և հարատևման գործոններից կարևորը լեզուն է, յուրաքանչյուր անհատ պետք է խոսի հայերեն և ճիշտ խոսի, գրի հայերեն և առանց սխալների: Հարկ է նպաստել նաև լեզվի ներքին զարգացմանը և առաջադիմությանը: Լեզվի զարգացման համար նա վերստին շեշտում է գրաբարի և աշխարհաբարի միմյանցով հարստանալու անհրաժեշտության փաստը:

Երկրորդ պահանջն է «հայութիւնը բազմամարդացնել», որպեսզի Հայաստանն աշխարհը «Հայութեան աշխարհի» հայ ազգության կենտրոն լինի: Կարևոր պահանջներից է նաև այն, որ մեծահարուստ հայերը հողատեր դառնան Հայաստանում և ճոխացնեն իրենց հայրենիքը, այնինչ իրականում նրանք հաճախ կավվածքներ են ձեռք բերում Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Եգիպտոսում և այլուր: Փաստելով, որ արևմտահայությունը պատրիարքական և ազգապետական իշխանությամբ պահպանել է ազգությունը՝ հայությունը, նա խնդրում և պահանջում է, որ հայ գավառների կառավարությունը (նահանգապետներ, գավառապետներ) հանձնվի բնիկ հայերին: Խնդրանք, որն իհարկե երբեք չէր կարող իրականանալ: Ազգապետական ասպարեզում նա երեք պահանջ-պայմաններ է առաջադրում՝ գործող անձը, դրամը և ժամանակը (ատենը): Ըստ բանախոսի՝ գործող անձինք բազմաթիվ չեն և

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 40-41:

«ազգին պիտոյից չեն բավեր»: Դրամը շատ չէ, իսկ նրա կարիքը մեծ է: «Ատենը նեղ է և հակիրճ»<sup>1</sup>: Այդ երեք պահանջն Օրմանյանը համարում է «հայ ազգութեան ներկայիս գաղտնիքը և ապագային խորհուրդը»: Ժողովրդի մեջ պարտքն ու իրավունքը պայմանավորվում են միմյանցով, որոնք ապահովում են «Հայոց փառաւոր և արդինաւոր ազգութիւնը»: Այդ հույսերով, ակնկալիքներով է ավարտվում հայրենասիրական և ազգասիրական մեծ ավյունով լեցուն բանախոսությունը:

«Հայ ազգություն» թեմայով 1879 թ. ավարտվում է Օրմանյանի բանախոսությունների շարքը: Հայությունը թեակոխում է 1880 թ.: Այդ տարի՝ փետրվարի 10-ին, դարձյալ Օրթաքեոյում՝ «Ընթերցասիրաց ընկերութեան» լսարանում, Օրմանյանը հանդես է գալիս նոր բանախոսությամբ՝ «Կարոտ ենք» (Կարիքի մեջ ենք) թեմայով: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի պատճառով Արևմտյան Հայաստանում մոլեգնում էր սովը: «Սովելոց հանձնաժողով» էր ստեղծվել ամբողջ Հայաստանում: Վկայակոչելով սովյալների սրտառուչ աղաղակը, նշելով, որ մեր հայ եղբայրները «նուաղեալ կը տառապին ի Վան, ի Պայազետ, ի Պաշգալե, յԱլաշկերտ... և այդ քաղաքների շուրջը գտնվող վայրերում», նա հարցնում է ունկնդիրներին, թե որևէ մեկն արդյոք տվել է իր «հացին կեսը, գոնե քառորդը, գոնե հարիւրերորդը»<sup>2</sup>: Բանախոսն օգտագործում է արտակարգ հնարքներ՝ ունկնդիրներին հուզելու և դրամ հանգանակելու համար, հայտնում, որ հանգանակությամբ հավաքվել է շատ փոքր գումար: Նա ունկնդիրներին հաղորդում է, թե ազգի առաջադիմության համար ինչ միջոցառումներ են ձեռնարկվել, որպեսզի բարեկարգություններ կատարվեն, և հարստահարություններին վերջ տրվեն: Տեղեկագրերը, բողոքագրերը, խնդրագրերը և աղերսագրերը «ի լուր աշխարհի կարդացուեցան»: Դիմել են բոլոր հնարավոր միջոցներին: Ազգության «մարմնի» բաղկացուցիչ և ամենամեծ մասը գավառի հայ բնակիչներն են: Իսկ «Հայն գաւառաց մեջ աղքատ է և եղկելի», աղքատությունից փրկվելու համար անհրաժեշտ է հող մշակել, աշխատանքի արդյունքը «ժողովել և վաճառել»: Բայց հայը հողը մշակելու հնարավորություն չունի, ուրեմն չի կարող նաև բերք հավաքել, վաճառելու ոչ մի բան չունի, ուստի ինչպե՞ս դրամ հայթայթի: Համեմատելով արևմտահայերի և հույների հանգանակած դրամները՝ Օրմանյանը հայտնում է, որ հույների հանգանակությունները հասնում են «հարիւրաւոր և հազարաւոր ոսկիների», իսկ հայերինը՝ «տասնաւորներու սահմանին մեջ կը շրջին»<sup>3</sup>: Նա նշում է, որ արևմտահայերի մեջ ևս կան առատաձեռն մարդիկ, բայց նրանց անունները չի հիշատակում: Համեմատելով արևելահայերին և արևմտահայերին՝ նա ընդգծում է արևելահայերի մեջ նշանավոր «մեծահարուստների» առկայությունը և հայտնում, որ այնտեղ

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 58:

<sup>2</sup> **Օրմանեան Մ.**, Կարոտ ենք, Կ. Պոլիս, 1880, էջ 4:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 11:



աղքատներ չկան, ինչն ի հարկե չի համապատասխանում իրականությանը: «Ռուսաբնակներից» բանախոսը սպասումներ ունի, որպեսզի հայ ազգությունը վայելի նրանց «ունենորութեան արդիւնքը յօգուտ ընդհանուր հայ ազգութեան և... լլկեալ ու լքեալ գաւառացն Հայաստանի»<sup>1</sup>: Մեզ հայտնի չեն, թե արդոյք իրականացան բանախոսի ակնկալիքները:

Շարունակելով Օրմանյանը հայտնում է նաև, որ բարեկեցիկ և ունևոր հայեր կան հայ գաղթօջախներում, առանձնապես նշում «ի Հնդկս և ի Ռումենս», սակայն ընդգծում, որ այդ հեռավոր աշխարհների մեծահարուստ հայերի նվերները դեռևս չեն հասել «Կեդրոնի հայութեանը»՝ նկատի ունենալով բուն Արևմտյան Հայաստանի բնակչությունը: Նա ընդգծում է երկու կարևոր հանգամանք. կարիքները՝ «պետքերը շատ են», միջոցները՝ քիչ: Բանախոսը գտնում է, որ անհրաժեշտ է կարիքները նվազեցնել, իսկ միջոցները՝ բազմապատկել, և միայն այդ դեպքում կբուժվի «կարոտութեան» (աղքատության) ախտը:

Օրմանյանը նշում է, որ հայության մեջ կան այնպիսի անձինք, ովքեր իրենց ներդրած համեստ լումայով օգնում են ազգությանը, գտնում, որ այդ մարդկանց միջոցով է շարժվում ազգության մեքենայի գլխավոր անիվը, ապահովվում նրա ապագան: Նա երազում է տեսնել նման համեստ անձանց թվի բազմապատկումը՝ «ի միութարութիւն և ի վայելս Հայութեան»: Այլ ազգերի համեմատությամբ՝ ազգի կարիքները հոգալու համար հայության հանգանակած գումարները մեծ չեն, սակայն նույնիսկ այս պարագայում «Հայքս կրնամք պարծենալ»: Եթե օտար ազգերի շրջանում 500 ոսկին հավաքում են հինգ հոգուց, ապա հայերի շրջանում այդ նույն գումարը հավաքվում է 500 հոգու միջոցով, քանի որ յուրաքանչյուրը հատկացնում է միայն մեկ ոսկի: Օրմանյանը դա համարում է մեր ազգի առավելությունը, որովհետև սակավ ունեցվածքի տեր մարդիկ, թվով 500-ը, մասնակցում են համայն հայության հանգանակությանը, իսկ այլազգի հինգ մեծահարուստ, «իրենց ավելորդ» գումարով դառնում են առատաձեռն: Այդ պատճառով է բանախոսն ընդգծում, որ եթե ամբողջ աշխարհի չորս միլիոն հայությունից գոնե երեք միլիոնը մասնակցի հանգանակությանը ընդամենը երկուսից երեք դահեկանով, «ապա 6 կամ 9 միլիոն դահեկանի ահաւոր գումար կը հաւաքուի», որով հայությունը մեծ գործեր կանի ազգի կարիքները հոգալու համար: Օրմանյանը ցանկանում է, որ յուրաքանչյուր հայ «այդ պարտքը իրեն նուիրական ճանչնա»<sup>2</sup>: Նա գտնում է, որ հանգանակության համար նոր ընկերություններ հիմնելու հարկը չկա, քանի որ այդ գործը կարող է իրականացնել Արևմտյան Հայաստանում ստեղծված կրթական ընկերությունների միավորումը (Արարատյան, Դպրոցասիրաց-Արևելյան և Կիլիկյան): Մովի աղետը տարածվել է Արևմտյան Հայաստանի տարածքի գրեթե մեկ երրորդում և դեռ կարող է

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 20:

շարունակվել, եթե կանխարգելիչ միջոցներ չգործադրվեն: Առնվազն մեկ տարի է անհրաժեշտ, որ Կ. Պոլսում ընթացող հանգանակության գործը տարածվի ամենուր, թափանցի յուրաքանչյուր գյուղ և կիրառվի: Եթե այդ ժամանակ արևմտահայությունն աղեկեզ սրտով կանչում է ու գոչում՝ «Կարոտ ենք», բանախոսը երագում է, որ մի տարի անց այնքան միջոցներ կհանգանակվեն, որ բոլոր պետքերին դարմաններ լինեն, իսկ ինքը հրճվանքով աղաղակի՝ «Եղբայրք, այլևս կարօտ չեմք»<sup>1</sup>:

Մի քանի օր անց՝ 1880 թ. փետրվարի 24-ին, Օրմանյանը բանախոսելու հրավիրվեց Կ. Պոլսի Սամաթիա թաղամասի Ս. Մահակյան սանուց ընկերության լսարանը: Այս անգամ բանախոսությունը նվիրված էր հայ երիտասարդությանը: Օրմանյանը սկզբում բացատրում է, թե ինչ է երիտասարդությունը: Ոմանք, ըստ Օրմանյանի, հայությունը համարում են ծերացած ազգ, որը «ժողուուրդ հզոր և ազգ կատարեալ էր... ետք տկարացաւ և գորութենէ ինկաւ, որով հնութեան և ծերութեան վիճակին մեջ մտավ»<sup>2</sup>: Հայտնելով, որ ինքը չի հարում այդ տեսությանը, նա գտնում է, որ ժողովուրդն ու ազգը տարբերվում են անհատից: Նա փաստում է ընդամենը չորս տարիք. մինչև 20 տարեկանը համարում է մանկության շրջան, 20-40-ը՝ երիտասարդության, 40-60-ը՝ կատարյալ այրի, փորձառուի, իւելացիի, որն իրավասու է բարձր պաշտոններ վարելու, իսկ 60-80-ը՝ ծերության: Երիտասարդության պայման է նկատում սկզբնական կրթություն ստանալը. պիտի սովորի, որ հատուկ մասնագետ դառնա, ստանա «բժշկագիտական, փաստաբանական, ճարտարապետական ընթացք և համալսարանական ուսմունք»<sup>3</sup>: Ըստ բանախոսի՝ հայ երիտասարդությունը չպետք է տարբերվի աշխարհի կամ գլխավոր ազգերի երիտասարդությունից: Մանկությունը և ծերությունը բանախոսը համարում է ուժից ու կարողությունից զուրկ, բայց գտնում է, որ հասարակության մեջ երկու հասակներն ունեն իրենց տեղը, դերը և անելիքը: Ամենից գորավորը, սակայն, մյուս երկու տարիքներն են՝ երիտասարդությունը և կատարյալ այրերը. կյանքի ասպարեզը նրանցն է: Օրմանյանը գտնում է, որ եթե չլիներ երիտասարդություն, աշխարհում ոչ մի օգտակար բան չէր կատարվի, սակայն նա ազգության պարագլուխը չէ, այլ «գործադիրը»: Նա քննարկում և համեմատում է բոլոր տարիքները, ընդգծում, որ աշխարհում երիտասարդության դերը մեծանում է: Ովքեր հատել են 40-ից 60 տարիքը, նրանք եղել են ընտիր երիտասարդներ, և ազգը երախտապարտ է նրանց կատարած գործերի համար: Բանախոսը նշում է, որ 19-րդ դարի առաջին քառորդը նշանավորվել է հայերի թերուս մանկությամբ, սակայն նրանց հաջորդած երիտասարդները դժվարություններից չեն խուսափել և սկսել են ազգի մեջ «ուսում և դաստիարակութիւն տարածել»: Բացվել են

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 23:

<sup>2</sup> **Օրմանեան Մ.**, Հայ երիտասարդութիւն, Կ. Պոլիս, 1880, էջ 4:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 8:

վարժարաններ, դաստիարակվել է երիտասարդությունը, որը նրանց գերազանցել է:

Օրմանյանն արձանագրում է, որ Ազգային Սահմանադրության հաստատմանը մասնակցել է հին և նոր երիտասարդությունը: Նշելով ազգի կացությունը 1860-ից 1880 թվականների միջև՝ նա գտնում է, որ այդ ժամանակաշրջանում շատ բան է փոխվել: Հայ երիտասարդությունը, գիտակցելով իր պարտքը, «կռուեցավ արիաբար, շահատակեցաւ դիւցազնաբար», և այդ պատճառով նա գովեստով ու օրհնութեամբ է հիշում նրանց: Քանի որ լսարանի մեծ մասը երիտասարդներ են եղել, նա գտնում է, որ բավական է ջատագովել նրանց, ովքեր իրենց իրավունքը համարձակությամբ պաշտպանել են: Բանախոսը երիտասարդությանը համարում է մարդկային հասարակության ռահվիրա, կատարյալ հարգանք և համակրանք տաճելով նրան կատմամբ՝ նշում, որ նրա ձեռնարկները հաճախ ավարտվում են ձախողմամբ: Այդ պատճառով նա հորդորում է լսարանին՝ «զգույշ ըլլալ և խոհեմ», չհուսահատվել, որովհետև ձախորդությունները «յաջողութեան բարձունքը հասնելու սանդուխ կըլլան»<sup>1</sup>: Հաջողությունն ու ձախորդությունը, ընկնելն ու կանգնելը համարելով մարդկային կյանքի ճանապարհին միանգամայն բնորոշ իրողություններ՝ Օրմանյանը գտնում է, որ պետք է ճշտել «հայ երիտասարդութեան պարտքերը» այդ կացության մեջ: Նա բաղձում է տեսնել «դաստիարակեալ» հայ երիտասարդություն, նշում, որ հայրենի եզերքից Կ. Պոլիս պանդխտած հայերը «դաստիարակեալ չեն»: Դա համարելով «ցավալի ճշմարտութիւն»՝ նա հայտնում է իր համոզմունքը, որ Հայաստանում «ուսում ծաւալելու» ուղղությամբ մայրաքաղաքի երիտասարդները պետք է մեծ աշխատանք իրականացնեն:

Այստեղ ևս խոսելով Արևմտյան Հայաստանում դպրոցներ հիմնելու նպատակով ստեղծված ընկերությունների մասին՝ Օրմանյանը նշում է, որ այնտեղ բացվել են 30-ի չափ վարժարաններ, որն այդ մեծ տարածքի համար աննշան թիվ է: Քանի որ հայությունը միջոցներ չունի բազմաթիվ վարժարաններ բացելու, «ազգը պարտաւոր է լումաներէ դահեկան, դահեկաններէ քսակ, քսակներէ դրամագլուխ կազմել և ըստ այնմ գործի ձեռնարկել»<sup>2</sup>: Նա փաստում է, որ այդ գործի կատարումն ընկնում է հայ երիտասարդության վրա, քանի որ նրանց չի օգնի ո՛չ պետությունը և ո՛չ ազգը:

Օրմանյանը նաև ընդգծում է, որ շատ կարևոր է արհեստների զարգացումը. արհեստով պետք է զբաղվեն նաև կրթված անձինք, որոնց միջոցով արհեստը կարող է ավելի բարձր մակարդակի հասնել. «Եվ արհեստներով ազգը կհարստանա»: Արհեստների պակասության պատճառով մեր կարիքները չենք հոգում և օտար աշխարհների ենք նայում: Օտարները մեզ չեն օգնի, մենք պետք է մեզ համար բարիք ստեղծենք: Հայաստանի գավառներում

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 27:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 33:

տիրում է անապահովությունը: Կրթված երիտասարդությունն իր ձեռքը պետք է վերցնի արհեստների զարգացման գործը: Արհեստներով ազգը կհարստանա, մտորում է Օրմանյանը: Բավական է օտարներին հարկատու լինել: Հայաստանի գավառների անապահովությունը պետք է վերացնել, ինչը նա համարում է յուրաքանչյուրի պարտքը: Նա կոչ է ուղղում երիտասարդությանը, որ «կրթեալ և դաստիարակեալները» իրենց ձեռքը վերցնեն «արհեստից գորութիւնը, ճոխութեանց մեծ աղբիւրը» և դառնան ազգի բարերարները և օգուտ ստանան թե՛ իրենք և թե՛ ազգը: Ըստ Բանախոսի՝ «դժուար գործերի մեջ մեծ է երիտասարդութեան պարտքը»: Օրմանյանը պահանջում է երիտասարդությունից՝ հարստահարությունների մասին տեղյակ պահել «օգոստոսափառ կայսեր»: Միամտությամբ թե դիվանագիտությամբ կարծում է, որ սուլթանը դրան տեղյակ չէ: Մակայն անմիջապես հավելում է, որ պետք է «զգուշութիւն պահպանել և ազգային գործեր կատարել»<sup>1</sup>:

Բանախոսը փաստում է, որ քաղաքներում բնակվող երիտասարդները խոսքի մեջ եռանդուն են, սակայն «հարստահարող կեղեքիչի» ձեռքը չեն կաշկանդում: Պետության տված խոստումները հայկական գավառներին չեն հասել: Այդ պատճառով նա հարցնում է հայ երիտասարդությանը՝ ի՞նչ է նա հնձելու, եթե ոչինչ չի ցանել: Նա ցանկանում է, որ երիտասարդությունն իր վրայից թոթափի փոշին, «ճանաչի իրեն, իր ազգին, մտածի նրա ապագայի մասին»: Նա հայտարարում է, որ ազգի համար պետք է աշխատեն պատրիարքի նախագահության ներքո գտնվող Կրոնական և Քաղաքական ժողովները, Ընդհանուր ժողովը, գավառների մեջ՝ Թաղական խորհուրդները, Պատրիարքից մինչև Ավագերեցը և ամենակարևորը՝ հայ երիտասարդությունը: Նրա համոզմամբ, քանի որ ընտրողի կարգավիճակ ունեն 25 տարեկանները, իսկ ընտրյալի՝ 30-ը բոլորած անձինք, ուրեմն պետք է աշխատեն, որ երիտասարդությունը մասնակցի ազգային գործերին: Օրմանյանը դժգոհում է, որ 30 տարեկան երիտասարդը «իրեն դիմաց փակեալ կը գտնի պաշտամանց (պաշտոնյաների – Է. Կ.) դռները»<sup>2</sup>: Երիտասարդությունը վարժ չէ իր անձնական գործերին հետևելու, ուրեմն պետք է այնպես անել, որ տեր կանգնի հասարակության իրավունքներին: «Մարդկութիւնը ոչխարների հոտից տարբերվում է իր մարդկային գիտակցութեամբ և բարոյականութեամբ», – նշում է նա: Ուրեմն, բնական առաջադիմության հետ պետք է պահանջել բարոյական առաջադիմություն: Այն առաջադիմությունը, որ «գրարոյականութիւն կանարգե, իրական և տեւական լինել կարող չէ»<sup>3</sup>:

Օրմանյանի բանախոսության մեջ կարևոր տեղ է գրավում ընտանիք-ազգ հարաբերության խնդիրը: Ազգը, ինչպես նա մեկնաբանում է, «ընտանեաց միաւորութիւն է», իսկ ընտանիքն ազգության բաղկացուցիչ մասն է:

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 43:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 48:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 58:

Նա սխալ է համարում այն երիտասարդների վարքագիծը, որոնք խորշում են ընտանիք կազմելուց և դրանով, փաստորեն, ազգին զրկում «ստղաբեր արդիւնքներէ»: Ազգային բարոյականության հիմքը նա համարում է արդարությունը և սերը. «Արդարութիւնը՝ չարին նկատմամբ և սերը՝ բարւոյն նկատմամբ»:

Երիտասարդության ուշադրությունն Օրմանյանը հրավիրում է կրոնի վրա: Շատերը գտնում են, որ կրոնը կասեցնում է «մտքի թռիչքը»: Փաստելով, որ բազմաթիվ ազգեր իրենց առաջադիմությունը կապում են կրոնի հետ, նա դրանց թվում մատնացույց է անում հրեաներին և հույներին: Նրա կարծիքով հայ երիտասարդը պետք է պարծենա, որ «իր առաջին պաշտպանը հայ կրօնքը եղաւ, առաջին օթեւանը՝ Հայ Եկեղեցին, առաջին զինուորը՝ հայ կրօնականը»<sup>1</sup>: Հայերի կրոնը, ըստ Օրմանյանի, ազգային բարիք է: Քանի որ մեր եկեղեցին հարուստ է Գրիգորներով ու Ներսէսներով, Սահակներով ու Մեսրոպներով, Եղիշէներով ու Ղևոնդներով, հայ երիտասարդությունը պարտավոր է հետևել նրանց օրինակին և կրոնասեր ու ազգասեր լինել: Բանախոսության վերջում ծայրագույն վարդապետ Մ. Օրմանյանը դիմում է հայ երիտասարդությանը, շեշտում, որ այս ամենը նրա համար էր և նրա մասին, որ նա պետք է կատարի իր պարտքը երկրի և ժողովրդի առջև, իսկ ինքը ոգևորված գոչում է. «Կեցցե հայ երիտասարդութիւն»:

Այս բանախոսությամբ ավարտվում է Մաղաքիա Օրմանյանի հրապարակային դասախոսությունների շարքը: Կ. Պոլսում հասարակական գործունեություն ծավալած ծայրագույն վարդապետի ազգասիրական գործունեության լուրերը հասել էին Արևմտյան Հայաստան: Բարձր Հայքի կենտրոն Էրզրումի (Կարին) հոգևոր առաջնորդը տարիներ շարունակ արքեպիսկոպոս Հարություն Վեհապետյանն էր, որի պահպանողական պահվածքը վրդովեցնում էր տեղի երիտասարդությանը: Ժամանակի մամուլի շնորհիվ նրանք տեղյակ էին հայ եկեղեցու գիրկը վերադարձած երիտասարդ Օրմանյանի գործունեությանը: Երիտասարդ կարնեցիները ստիպեցին Վեհապետյանին հրաժարական ներկայացնել հոգևոր առաջնորդի պաշտոնից: 1880 թ. ապրիլի 2-ին երիտասարդ Մաղաքիա Օրմանյանն ընտրվեց Կարինի հոգևոր առաջնորդ, ուստի մայիսի վերջին նա արդեն Կարինում էր:

Օրմանյանը Կ. Պոլսում երկար չմնաց, նույնիսկ մեկուկես տարուց էլ քիչ: Մակայն այդ ժամանակաընթացքում նա այնպես շփվեց տեղի հայ մտավորականության, ազգային ու հոգևոր գործիչների, Արևմտյան Հայաստանից Կ. Պոլիս եկած հայ պանդուխտների տարբեր շերտերի հետ, որ կարծես մերվեց նրանց, դարձավ բոլորի հոգիների, իղձերի, հոգսերի, ցանկությունների արտահայտիչը: Այդ ընթացքում Կ. Պոլսի հայկական թաղամասերում կարդացած բանախոսություններն արևմտահայության առջև բացեցին նրա հոգու հարուստ ծայքերը, վշտերն ու ուրախությունները:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 63:

Օրմանյանի՝ 130 տարվա վաղեմություն ունեցող բանախոսությունների թեմաների գերակշռող մասն այսօր ևս խիստ արդիական է: Դրանցում վերհանված են այնքան հրատապ և այժմեական հնչեղություն ունեցող հիմնախնդիրներ, որոնք անտարբերությամբ շրջանցելը նույնիսկ մեր օրերում անհնար է: Հավատով ես լցվում, որ վրա կհասնի այն օրը, որ «երթանք, մըր երգիրը»: Ուստի գերադասում ենք ավարտել Օրմանյանի խոսքերով. «Եղիցի՛, եղիցի՛»:

**Emma Kostandyan – *The Speeches of Maghakia Ormanyan***

The article is devoted to the speeches of Maghakia Ormanyan. He made his first speech entitled “The Past, Present and Future of the Armenians” in Constantinople on the 8th of January, 1879. The second speech on the topic “The Soul of the Armenians” was made in the auditorium of the book-lovers’ society in Scutari Constantinople on the 26th of May. The speaker “dared” advise the Armenians to be strict towards the authorities and the national leaders to respect the opinion of the people. On the 28th of October, 1879, after returning to the Armenian Church, former Catholic Ormanyan made a speech on “The Union of Armenians” which was generally speaking of vital importance for the Armenians. In Gatygyugh College he spoke on “The Armenian Nation” and stated that the Armenians were a “productive nation” and had much to do in the future. The Speech “We Are in Need” delivered by Ormanyan in 1880 was an urgent call to all Armenians to help the starving Western Armenians. In his speech entitled “The Armenian Youth” the speaker left the solution to the matters troubling the Armenians to the youth. His speeches have still maintained their relevance.

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՀԱՅ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՌԱՄԿԱՎԱՐՆԵՐԸ**

*Բանայի բառեր – Պողոս Նուբար, Տամատյան, Հայկական հարց, ՀՍՌԿ, Ռամկավարներ, պատրիարքարան, կոտորածներ, պատվիրակություն, Հայաստանի Հանրապետություն, Թուրքիա, Ռուսաստան*

XX դարի սկզբին թուրքական հայաստյաց քաղաքականությունից խիստ թուլացած, գերտերությունների պաշտպանությունից զրկված և նրանց զավթողական ծրագրերի իրականացման նկրտումների խաղաքարտը դարձած հայ ժողովուրդն աշխարհակործան մարտահրավերներին դեմ առ դեմ կանգնեց միայնակ: Մակայն, շնորհիվ առաջադեմ մտավորականության և ազգային կուսակցությունների քարոզչական և կազմակերպչական աշխատանքների, կարողացավ արագ սթափվել և ստեղծված իրավիճակից դուրս ելնելու ուղիներ փնտրել:

Ընդգծենք, որ Հայկական հարցը սուկ դիվանագիտական եզրույթ չէ, հետևապես հարկավոր է այն դիտարկել նաև իրավաբանական, տնտեսագիտական, ժողովրդագրական, մշակութային և էթնոհոգեբանական տեսանկյուններից: Ընդհանուր առմամբ, այդ հարցի պատմությունը վատ չէ ուսումնասիրված, սակայն այդ առնչությամբ ավանդական ազգային կուսակցությունների վերաբերմունքի առումով դեռևս շատ բան կա ասելու:

\*\*\*

Իբրև Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս՝ Հայկական հարցը միջազգային դիվանագիտական փաստաթղթի տեսքով ձևակերպվեց 1878 թ. փետրվարի 19-ի (մարտի 3-ի) Ման Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 16-րդ և 1878 թ. հունիսի 1-ի (13-ի) Բեռլինի վեհաժողովի պայմանագրի 61-րդ հոդվածներով: Այնուհետև Հայկական հարցը դարձավ հայ ժողովրդի անբաժանելի ուղեկիցն առ այսօր՝ հաճախ տեղիք տալով բուռն քննարկումների, հուսախաբությունների և հուսալքումների, ինչպես նաև ազատագրական պայքարի վերելքների:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից ու Բեռլինի վեհաժողովից հիասթափված Արևմտյան Հայաստանում մեկը մյուսի ետևից ասպարեզ իջան ազգային կուսակցություններ. 1885 թ.՝ Արմենականը, 1887 թ.՝ Հնչակյանը և 1890 թ.՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, որոնք հետապնդում էին մեկ հիմնական նպատակ՝ օսմանյան գեղենից ազատագրել իրենց բռնազավթված հայրենիքն ու տառապյալ հայ ժողովրդին, լուծում տալ Հայ-

կական հարցին: Հայաստանի<sup>1</sup> ազատագրմանը նպատակաուղղված նրանց ծրագրերի միջև եղած տարբերությունը սուկ այդ գերնպատակին հասնելու միջոցների զանազանությունն էր:

1908 թ. Արմենական և Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունների միաձուլումով ստեղծվեց Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցությունը (այսուհետև՝ ՀՍՌԿ), որի քաղաքական հավատամքը դարձան թե՛ համամարդկային (հավասարություն, ազատություն, օրենքի գերակայություն) և թե՛ ազգային (հայ ժողովրդի կյանքի բարելավման ու բարեկեցիկ պայմաններում ապրելու) իրավունքի նվաճմանը միտված սկզբունքները:

Թուրքական մշտակեղծ քաղաքականության պայմաններում ՀՍՌԿ-ն անընդհատ փորձում էր հզորանալ և կազմակերպված հանդես գալ որպես հայության շահերի պաշտպան ու կազմակերպիչ, սակայն միահեծանորեն իշխող օսմանյան բռնապետության օրոք հմտորեն գործող լրտեսական համակարգը և քաղաքական ուժերի անհանդուրժողական կեցվածքը մամլիչի տակ էին պահում կուսակցության թույլ կառույցները, և նա ստիպված գործում էր Հայոց պատրիարքարանի հովանու ներքո:

1912 թ. Հայկական հարցի վերաբացվելուց հետո հայ իրականության մեջ գործող բոլոր քաղաքական ուժերը, այդ թվում և ՀՍՌԿ-ը, հետամուտ էին այդ հարցի արդարացի լուծմանը, որն ամրագրվեց կուսակցության ծրագրային փաստաթղթերում, բազմիցս քննարկվեց ընդհանուր պատգամավորական և այլ մակարդակի ժողովներում: ՀՍՌԿ-ը որդեգրել էր արմենական տեսաբան Սեպուհի առաջադրած տեսական դրույթը. այն է՝ Հայկական հարցն առաջացել է պատմականորեն, իսկ արևմտահայությունը երկար ու համբերատար սպասել է դրա լուծմանը, սակայն ապարդյուն, որովհետև սուլթանական կառավարությունն այն զանց է առել: Ուստի հայն «իրաւունք ունէր ապստամբելու: Միայն հարկաւոր էր ոյժ գոյացունել, քանի որ գաղափարական շէնքը իրական հողի վրայ պիտի կառուցանէլ և ոչ թէ օդի մէջ»<sup>2</sup>:

ՀՍՌԿ-ի ծրագիրն Օսմանյան կայսրությունում բնակվող ժողովուրդների գոյության ապահովման երաշխիքներ էր համարում զանազան արտոնությունների վերացումը, թափառաշրջիկ և մակաբույծ ցեղերի զինաթափումն ու նրանց նստակյաց դարձնելը, համիդիե գորագնդերի վերացումը<sup>3</sup>: Ընդգծենք, որ ռամկավար առաջնորդները թուրքական դժնդակ իրականությանը քաջածանոթ արևմտահայեր էին, որոնք ծրագիրը գրելիս, անկասկած, հաշվի էին առել իրենց մտադրությունների իրականացմանը նպաստող կամ արգելակող բոլոր հնարավորություններն ու խոչընդոտները: Գտնվելով իրա-

---

<sup>1</sup> Մինչև XX դարի սկիզբը Հայաստան ասելով նկատի էր առնվում բացառապես Արևմտյան Հայաստանը:

<sup>2</sup> **Ղարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, Երևան, 2003, էջ 170:

<sup>3</sup> «ՌԱԿ վավերագրեր», կազմեց դոկտ. Վ. Ղազարեան, Պէրյուժ, 1988, էջ 30:



դարձությունների կիզակետում՝ նրանք չէին կարող առաջարկել իրականությունից կտրված ու անիրագործելի ծրագրեր:

1912 թ. ՀՄՌԿ Վասպուրականի շրջանակի «Վան-Տոսպ» պաշտոնաթերթը<sup>1</sup> հաճախ էր անդրադարձնում Հայկական հարցին: Չկար թերթի գրեթե մեկ համար, որտեղ անդրադարձներ չլինեին այդ հարցին: Հաշվի առնելով անցյալի դառը փորձը՝ ռամկավարներն ի սկզբանե որոշակի վերապահությամբ էին մոտենում հայկական գավառներում բարենորոգումներ իրականացնելու օսմանյան իշխանությունների խոստումներին: «Վան-Տոսպի» խմբագրականներից մեկում ընդգծվում էր, որ ամեն անգամ, երբ բարենորոգումների հարցը դառնում էր քննարկումների առարկա, թուրքական պաշտոնական շրջանակները հանգստացնում էին ժողովրդին՝ ասելով. «Սպասեցեք քիչ մը, պատերազմը անցնի, անգամ մը ինքզինքնիս գտնենք, յետոյ Ձեր մասին բան մը կընենք անպատճառ»<sup>2</sup>:

Պարբերականի «Հրագրան» կեղծանունով հոդվածագիրը Հայկական հարցի վերաբացումը հայության համար համարում էր վտանգավոր և անսքող ակնարկում, որ 1890-ական թվականներից ի վեր այդ հարցի բուռն քննարկումներին միշտ հաջորդել են հայկական ջարդերը, ուստի մարգարե դառնալու կարիքը չէր զգում գուշակելու համար «արիւնտս դէպքերու մեծ հաւանականութիւնը»<sup>3</sup>: Պարբերականի մեկ այլ համարում թղթակիցը, վկայակոչելով զինվորական վարժարանում թուրք սպաներից մեկի արած՝ «Պատերազմէն յաղթական ելնենք, թե ոչ, գիտենք ինչ դաս պիտի տանք անհատարիմ հայերուն և քիւրտերուն» հայտարարությունը<sup>4</sup>, լրջորեն զգուշացնում էր մոտալուտ վտանգի մասին: Թեև «Վան-Տոսպի» հայտնած այս տեսակետը հեռու չէր ճշմարտությունից, սակայն քանի որ Հայկական հարցը վերաբացվելու էր Ռուսաստանի նախաձեռնությամբ, այդ իսկ պատճառով մեր ազգային շրջանակները շարունակում էին վառ հույսեր փայփայել:

Չափավոր պահանջներով հանդես եկող ռամկավարները դեմ էին հեղափոխական կամ ապստամբական ելույթներին և պաշտպանում էին օսմանյան ժողովուրդների հետ արևմտահայության խաղաղ գոյակցության գաղափարը: Իրականում թուրքական բռնապետության պայմաններում գործող

---

<sup>1</sup> Պարբերականը՝ որպես կիսամսյա գիտական, կրոնական հանդես, լույս է տեսել 1911-1914 թթ. Վանում: 1912 թ. սկսվում է թերթի նոր շրջանը: Այն դառնում է ՀՄՌԿ Վասպուրականի շրջանակի պաշտոնաթերթ, որի խմբագիրն էր նախ Եղան Հակոբյանը, ապա Վարդան Պապիկյանը: Այնուհետև՝ 1915-1918 թթ., որպես Հայ Ռամկավարների պաշտոնական օրգան, այն հրատարակվել է Թիֆլիսում: Պատասխանատու խմբագիրն էր Արտակ Դարբինյանը: 1919 թ. հասարակական, քաղաքական, գրական այդ շաբաթաթերթը, վերանվանվելով «Հայաստանի ձայն», սկսում է լույս տեսնել Երևանում: Տե՛ս Հայ պարբերական մամուլը, մատենագիտական համահավաք ցուցակ 1794-1980, կազմեց Բաբոյան Ս. Ա., Երևան, 1986, էջ 90:

<sup>2</sup> «Վան-Տոսպ», 1912, թիվ 28:

<sup>3</sup> Նույն տեղում, թիվ 1:

<sup>4</sup> Նույն տեղում, թիվ 2:

արևմտահայ քաղաքական ուժերի գերակշիռ մասը հարկադրված եղավ սատարել իշխանությանը՝ քարոզելով հայ ազգաբնակչությանը գորավիզ լինել օսմանյան հայրենիքին:

Ռամկավարներն առաջադրում էին Հայկական հարցի լուծման իրենց բանաձևը, որն ամբողջանում էր ի դեմս «Կեանքի, գոյքի և պատուի անձեռնմխելիության սրբազան իրաւունքի» պահանջի<sup>1</sup>: ՀՍՌԿ-ի տեսաբանները գտնում էին, որ իրենց պահանջներն օգտակար են ոչ միայն հայերի, այլև նրանց հարևանների համար. «Մենք ապստամբներ չենք և Հայկական հարցը անջատողական շարժում մը չէ եղած երբեք, մեր պահանջները տարրական արդարութեան պահանջներ են, որոնց իրագործումով հաւասարապէս պիտի օգտուին նաև քուրդ ու թուրք ժողովուրդները և ի վերջո ամբողջ պետութիւնը»<sup>2</sup>:

Ակնդետ հետևելով օրեցօր վտանգավոր դարձող զարգացումներին և խոսքն ուղղելով իշխանություններին՝ ռամկավարներն անհրաժեշտ էին համարում հաճախակի կրկնել. «Մի անգամ ընդմիջտ կը հայտարարենք, լավ մտիկ ըրեք, հայ ազգը դժգոհ է, բայց ոչ ապստամբ», թե նա ամբողջ 30 տարվա ընթացքում ուրիշ նպատակ չի ունեցել, քան «հայ ցեղի ինքնուրույն կուլտուրական զարգացումը նորոգուած ու բարեկարգ օսմանյան պետութեան մէջ... այս է եղած մեր ազգային նշանաբանը»<sup>3</sup>:

Ընդհանրապէս, ամեն անգամ, երբ միջազգային ասպարեզում սասանվում էին Օսմանյան կայսրության դիրքերը, արևմտահայության մեջ վերստին արթնանում էին օսմանյան լծից ազատագրվելու հույսերը: Նման իրավիճակ առաջացավ նաև 1911 թ.՝ թուրք-իտալական և այնուհետև Բալկանյան պատերազմների ժամանակ: Այդ հույսերը իսպառ վերացնելու նպատակով օսմանյան իշխանությունները Բալկանյան թերակղզուց խուճապահար գաղթող և քրիստոնյա հպատակների հանդեպ կատաղի ատելությամբ լի մուսուլմաններին բնակեցնում էին հայկական վիլայեթներում՝ սրելով առանց այն էլ վաղուց ի վեր այնտեղ գոյություն ունեցող հակամարտությունները: Բացի դրանից, պատերազմներում կրած պարտության մեղքերն իշխանություններն սկսեցին բարդել հայ բնակչության վրա, ինչն ավելի էր շիկացնում լարված իրավիճակը: Այդ ընդգծված հակահայկական մթնոլորտը խիստ անհանգստացնում էր ՀՍՌԿ-ին ու ստիպում նրան փրկության միջոցներ որոնել:

Այդ ժամանակաշրջանում առաջացել էին Հայկական հարցի վերաբացման համար բոլոր անհրաժեշտ նախադրյալները.

ա) Բալկանյան պատերազմում Թուրքիան պարտվել էր,

---

<sup>1</sup> Նույն տեղում, թիվ 4:

<sup>2</sup> Նույն տեղում, 1913, թիվ 1:

<sup>3</sup> Նույն տեղում, թիվ 2:

բ) մեծ տերությունները լրջորեն հետաքրքրված էին այդ պատերազմի արդյունքներով,

գ) ռուսական դիվանագիտությունն ընդգծված բարյացակամ վերաբերմունք էր դրսևորում Հայկական հարցի նկատմամբ:

Այս պայմաններում Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն 1912 թ. հոկտեմբերի 15-ին, ապա դեկտեմբերի 24-ին դիմեց ռուսական իշխանություններին՝ Լոնդոնում գումարված դեսպանաժողովում Հայկական հարցը պաշտպանելու խնդրանքով, իսկ նոյեմբերի 10-ին Պողոս Նուբարին հատուկ կոնդակով լիազորեց Բեռլինի համաձայնագիրը ստորագրած պետությունների առջև բարձրացնել Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման հարցը: Այդ ժամանակից սկսած՝ Պողոս Նուբարի ղեկավարած Ազգային պատվիրակությունը գտնվում էր Փարիզում և արտահայտում հայ ժողովրդի հավաքական շահերը:

1913 թ. հուլիսին Կ. Պոլսում տեղի ունեցավ ՀՄՌԿ Բ ընդհանուր պատգամավորական ժողովը: Համագումարում ի գիտություն ընդունվեց այն իրողությունը, որ 1912 թ.՝ Հայկական հարցի վերաբացումից հետո, միջազգային տարբեր աստիճաններում արևմտահայության շահերը ներկայացնում էր կաթողիկոսի ներկայացուցիչ Պողոս Նուբարի Ազգային պատվիրակությունը, որի գործունեությունը որոշակի հույսեր էր ներշնչում, սակայն մեծ տերությունների մրցակցությունը կարող էր ավելի վատթարացնել հայերի կացությունը<sup>1</sup>: Ելնելով դրանից՝ իրատես ռամկավարները որոշեցին կոչ անել բոլորին առավել զգույշ լինել: Երկար քննարկումների արդյունքում ընդունվեցին կարևոր որոշումներ.

ա) սպասել Հայկական հարցի վերաբերյալ մեծ տերությունների մոտալուտ՝ հաշտության վեհաժողովի որոշումներին,

բ) մինչ այդ «Արևելեան նահանգներում զարկ տալ ինքնապաշտպանութեան գործին»<sup>2</sup>,

գ) հայաշատ երկրներում ձեռնարկել բացատրական աշխատանքներ, լուսաբանել պահի լրջությունը, ներկա փուլում Հայկական հարցի առանձնահատկությունները և օրախնդիր շատ այլ հարցերի վերաբերյալ ՀՄՌԿ-ի տեսակետները:

Կուսակցության մեկ այլ պաշտոնական օրգան «Ազգը» նշում էր, որ քանի դեռ հայ ժողովուրդն իր սեփական ճակատագրի դեկը չի վերցրել իր ձեռքը և ամբողջ ուժը չի կենտրոնացրել դրա շուրջ, «Հայկական հարցը ամեն ատեն տառապանքի, արիւնի և աւերի գնով երևան պիտի գայ պետութեանց մասնաւոր շահերուն ծառայելու համար: Պէտք է մեկընդմիջտ իմանանք, որ մարդկային ու ազգային բոլոր իրաւունքները հիմնուած են շահի վրայ ու զանոնք ձեռք ձգելու համար սեփական ուժն է միակ դարմանն ու միջոցը, ուժ

<sup>1</sup> Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 231:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 235:

խելքի, ուժ՝ սրտի, ուժ՝ շրջահայեցութեան, ուժ՝ բազուկի ու զէնքի»<sup>1</sup>: Միաժամանակ, խմբագրականում չէր անտեսվում արտաքին օգնության կամ դիվանագիտական աջակցության կարևոր դերակատարությունը:

Ռամկավարները սկզբում դրական վերաբերմունք ցուցաբերեցին 1914 թ. հունվարի 26-ին ընդունված հայկական բարենորոգումների ռուս-թուրքական համաձայնագրին<sup>2</sup>՝ այն բնութագրելով որպես «հաջող վերջավորություն»: Նրանք գրում էին, թե հայ ժողովուրդն «այսօր ուրեմն կրնա քիչ մը ավելի յոյսով ու վստահութեամբ նայիլ ապագային...»<sup>3</sup>: Բայց հետո թերահավատությամբ լցվեցին այդ ծրագրի հանդեպ, իսկ այնուհետև չցանկանալով վատատես լինել, այնուամենայնիվ գերադասեցին գրավել չեզոք դիրքորոշում: «Չենք կրնար գուշակել, – գրում էին նրանք «Ազգում» մարտի 18-ին, – թե ապագայ պիտի ունենա, որչափ տոկոսն ու տևական պիտի ըլլա ծրագիրը, բայց պետք է որ առանց հոռետեսութեան քիչ մը յոյսով նայինք անոր վրա և մեր կողմէ աշխատինք դյուրացնել անոր գործադրութիւնը»<sup>4</sup>:

ՀՄՌԿ-ի որոշումներն ու որակումներն ակնհայտորեն անորոշ էին ու հեղեղուկ, քանի որ ռամկավարները փնտրտուքի մեջ էին և Հայկական հարցի լուծումը կամ հայկական նահանգներում բարենորոգումների իրականացումը կապում էին միաժամանակ թե՛ մեծ տերությունների, թե՛ իրօթի-հաղական կառավարության և թե՛ արևմտահայ հասարակական-քաղաքական ուժերի հետ:

Ռամկավարները հանդես եկան հայտարարությամբ, որտեղ Օսմանյան սահմանադրությանը հաջորդած տարիները բնորոշեցին իբրև արևմտահայության համար ազգային հուսախաբության ժամանակաշրջան, որի գագաթնակետը համարեցին 1909 թ. կիլիկիահայության կոտորածները: ՀՄՌԿ-ը խիստ կարևորում էր ինքնապաշտպանության կազմակերպումը, որը, սակայն, նրա անդամների կարծիքով, թերի էր<sup>5</sup>: Համենայն դեպս ակնհայտ էր, որ ռամկավարներից շատերը, մասնավորապես նրանց արմենական հատվածը, արևմտահայության ազատագրության հույսը շարունակում էր կապել Ռուսաստանի հետ:

Արևմտահայ իրականության մեջ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ի նպաստ Հայկական հարցի ծավալվեց շարժում բոլոր ուժերի համախմբման համար: Պատրիարքարանը դատապարտում էր միջկուսակցական պայքարը<sup>6</sup>, «Մշակը» ողջունում էր համախմբման գաղափար

---

<sup>1</sup> «Ազգ», 1914, թիվ 31:

<sup>2</sup> Տե՛ս բնագիրը՝ «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», պրոֆ. Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 339-342:

<sup>3</sup> «Ազգ», 1914, թիվ 37:
Diese Rede hatte die Regierung so stark besorgt, dass sie für den folgenden Tag eine große Pressekonferenz organisierte, auf der der Regierungssprecher die Beschreibung von Lepsius als übertrieben und die türkischen Maßnahmen, der türkischen Version entsprechend, als Reaktion auf Wühlarbeiten der Entente bezeichnete<sup>5</sup>. Auf dieser Konferenz wurde auch die folgende Anweisung an die Presse erteilt: „Über die Armeniergräuere ist folgendes zu sagen: Unsere freundschaftlichen Beziehungen zur Türkei dürfen durch diese innertürkische Verwaltungsangelegenheit nicht nur nicht gefährdet, sondern im gegenwärtigen, schwierigen Augenblick nicht einmal geprüft werden. Deshalb ist es einstweilen Pflicht zu schweigen. Später, wenn direkte Angriffe des Auslandes wegen deutscher Mitschuld erfolgen sollten, muss man die Sache mit größter Vorsicht und Zurückbehaltung behandeln und später vorgeben, dass die Türken schwer von den Armeniern gereizt wurden“<sup>6</sup>.

Lepsius wollte auf keinen Fall nachgeben und beschloss, die evangelische und katholische Kirche zu mobilisieren. Zum 15. Oktober lud er Vertreter aller im Orient arbeitenden Missionsgesellschaften in Berlin ein<sup>7</sup>, unterbreitete ihnen sein Material und veranlasste sie, eine Eingabe an den Reichskanzler zu unterzeichnen, die dann, mit 50 Unterschriften versehen, an ihn verschickt wurde. Darin hieß es: „In dem guten Gewissen, mit dem wir alle Gott um den Sieg für unsere Waffen anrufen, wurzelt die Widerstandskraft unseres Volkes. Diese Einmütigkeit und Freudigkeit droht erschüttert zu werden, wenn bekannt wird, dass von unseren andersgläubigen Bundesgenossen Hunderttausende unserer Glaubensgenossen grundlos und sinnlos zu Tode gehetzt werden, ohne dass unsererseits das Mögliche zu ihrer Rettung geschah“<sup>8</sup>.

Auf Veranlassung von Lepsius sandten auch Repräsentanten des katholischen Deutschlands am 29. Oktober ein ähnliches Schreiben an den Kanzler<sup>9</sup>. Die deutsche Regierung aber hatte nicht nur keine Absicht, ihre vorbehaltlose Duldung aufzugeben, sondern ordnete, wie schon erwähnt, vollkommenes Schweigen zur jungtürkischen

---

<sup>1</sup> **Trumpener U.**, *Germany and the Ottoman Empire 1914-1918*, Princeton, 1968, S. 221.

<sup>2</sup> **Feigel U.**, *Das evangelische Deutschland und Armenien*, S. 214.

<sup>3</sup> Ebd., S. 214.

<sup>4</sup> **Lepsius J.**, *Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915*, „Der Orient“, 1919, S. 31.

<sup>5</sup> Ebd., S. 214-215.

<sup>6</sup> **Vierbücher H.**, *Was die kaiserliche Regierung den deutschen Untertanen verschwiegen hat. Armenien 1915*, Hamburg 1930, S. 78. Vgl. **Feigel U.**, *Das evangelische Deutschland und Armenien*, S. 214-215.

<sup>7</sup> **Schäfer R.**, *Geschichte der Deutschen Orient-Mission*, S. 89.

<sup>8</sup> *Deutschland und Armenien 1914-1918*, Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919, S. 186.

<sup>9</sup> **Lepsius J.**, *Der Todesgang...*, S. XXIV.



Vernichtungspolitik an. Es muss festgestellt werden, dass alle sich dieser Anordnung fügten, mit Ausnahme von Lepsius. Es lag ihm nun vor allem daran, aufgrund der ihm zur Verfügung stehenden Informationen einen ausführlichen Bericht an die Missionsfreunde und evangelischen Pfarrer Deutschlands zu versenden, der unter anderem das Ziel hatte, wie Lepsius später schrieb, „die deutsche Öffentlichkeit vor einer weiteren Irreführung durch die türkischen Communiqués zu schützen“<sup>1</sup>, ferner, „durch eingehende Aufklärung der Tatsachen und ihres Ursprungs in der evangelischen Kirche Deutschlands für die Notwendigkeit eines umfassenden Hilfswerks und einer Waisenfürsorge in den Maßstäben, wie es die Not erforderte, Teilnahme zu wecken und dadurch von der deutschen Christenheit den Vorwurf abzuwenden, dass sie an den Leiden eines christlichen Brudervolks mitleidlos vorübergegangen ist“<sup>2</sup>. Die Verschickung des Berichts, deren Kosten die Deutsche Orient-Mission tragen sollte<sup>3</sup>, musste vertraulich geschehen, weil sie ansonsten scheitern würde<sup>4</sup>.

Als der Bericht über die Lages des armenischen Volkes ausgearbeitet und Anfang Sommer 1916 in einer Auflage von 20.500 Exemplaren gedruckt worden war, verweigerte aber das Kuratorium der DOM, das sich ohne Wissen von Lepsius beim Auswärtigem Amt verpflichtet hatte, die damals so genannte Armenische Frage zu verschweigen, die Kostenübernahme des Versands<sup>5</sup>. Beim Tragen der Versandkosten standen Lepsius einige Diasporaarmenier bei, und er besorgte zusammen mit einigen engen Freunden und Mitarbeitern, ja, sogar mit der Hilfe seiner Kinder den Versand des Berichts in 20.000 Exemplaren an seine Missionsfreunde und an die evangelischen Pfarrämter. Weitere 500 Exemplare wurden an offizielle Persönlichkeiten, an Mitglieder des Reichstags und des württembergischen Landtags sowie an Redaktionen der größten deutschen Tageszeitungen versandt<sup>6</sup>.

Nach Schätzung von Lepsius musste jedes deutsche evangelische Pfarramt im Besitz seines Berichts und dadurch eines durch keinerlei türkische Lügendepeschen bestochenen Urteils über die Tatsachen sein, wenn die Superintendenten und Vertrauensmänner, denen die Pakete zugingen, ihre Schuldigkeit getan hätten, was leider nicht immer der Fall gewesen ist<sup>7</sup>.

Nach der Veröffentlichung und Versendung des Berichts fiel es Lepsius schwer, in Deutschland zu bleiben. Er begab sich Anfang August ins Exil nach Holland, wo er gegen den Willen der deutschen Regierung eine ausgedehnte proarmenische Tätigkeit entfaltete<sup>8</sup>. Am 7. September, nach Bekanntwerden seines Berichts, wurde von der Regierung dessen Beschlagnahmung angeordnet, aber die Zensur konnte nur die für

---

<sup>1</sup> Ebd., S. XXIV.

<sup>2</sup> Ebd., S. XXVI. Vgl., **Lepsius J.**, *Meine Mission*, „Mitteilungen aus der Arbeit von Dr. Johannes Lepsius“, 1918, S. 50.

<sup>3</sup> Ebd., S. 50.

<sup>4</sup> Ebd.

<sup>5</sup> **Schäfer R.**, *Geschichte der Deutschen Orient-Mission*, S. 91.

<sup>6</sup> **Lepsius J.**, *Der Todesgang...*, S. XXVII.

<sup>7</sup> **Lepsius J.**, *Was hat man den Armeniern getan?*, „Mitteilungen...“, 1918, S. 115-116.

<sup>8</sup> **Goltz H.**, *Zwischen Deutschland und Armenien*, „Theologische Literaturzeitung“, Berlin (1983), S. 875. Vgl. **Lepsius J.**, *Persönliches*, „Der Orient“, 1925, S. 104.

die Abgeordneten des Reichstages und des württembergischen Landtags aufgegebenen 191 Exemplare beschlagnahmen<sup>1</sup>.

Lepsius blieb tatsächlich der Einzige in Deutschland, der sich in voller Entschlossenheit den Anforderungen der Regierung und der Zensur widersetzte, indem er unentwegt den Weg der Moral und des Gewissens ging. Selbst dann, als er in Holland war, versuchte die kaiserlich deutsche Regierung ihn nicht zuletzt durch Druck auf seine eigene Missionsgesellschaft von seiner Aufklärungsarbeit über die Lage der Armenier abzubringen, oder, ich zitiere direkt Lepsius, ihn dazu zu zwingen, „die armenische Frage bis zum Ende des Krieges mit vollkommenem Schweigen zu behandeln“. Lepsius antwortete darauf, dass ihm sein Gewissen verbiete, dieser Forderung nachzukommen<sup>2</sup>. Als er sich davon überzeugt hatte, dass das Kuratorium der Deutschen Orient-Mission zu einem Werkzeug der Regierung gegen seine Tätigkeit geworden ist, sah er sich verpflichtet, sich auch von der DOM zu trennen. Nachdem er am 15. Juni 1917 seinen Austritt erklärt hatte, schrieb er in seiner zwei Wochen später an das Kuratorium der DOM geschickten „Begründung“ unter anderem: „Eine Orientmission, die an dem Sterben eines Christenvolkes, unter dem sie zwanzig Jahre gearbeitet hat, schweigend vorübergehen will und angesichts des Hungerleidens von Hunderttausenden unschuldiger Frauen und Kinder irgendetwas anderes als ihre Rettung sich zur Hauptaufgabe sucht, ist nicht mehr die Mission, die ich begründet habe“<sup>3</sup>.

Noch in Holland gründete Lepsius zusammen mit den ihm treu gebliebenen Mitarbeitern eine neue Missionsgesellschaft, die Dr. Lepsius° Deutsche Orient-Mission, mit der er sein Hilfswerk fortsetzen konnte. Nach dem Waffenstillstand kam er nach Berlin zurück und konnte beim Auswärtigen Amt die Veröffentlichung einer Sammlung der deutschen diplomatischen Aktenstücke über den Völkermord an den Armeniern erwirken. Zugleich setzte er sich für eine Entschädigung für die aus ihrer Heimat vertriebenen hilfsbedürftigen Armenier ein. Mit seiner neuen Missionsgesellschaft übernahm er zugleich die Unterkunft und Verpflegung von über 400 armenischen Waisen im Libanon und organisierte humanitäre Hilfe für die armenischen Flüchtlinge in Syrien, deren Zahl sich auf mehr als 50.000 belief. Darüber hinaus unterstützte er nach Kräften die von der Dänin Karen Jeppe übernommene Rettungsarbeit für die in muslimischen Haushalten gewaltsam festgehaltenen Armenierinnen. Selbst während der schweren Krisenzeit in Deutschland konnte er die Loskaufgelder von 705 der insgesamt von K. Jeppe befreiten 1900 Armenierinnen besorgen. Lepsius hat durch sein Leben und Werk eine neue Schule des Humanismus begründet, und es verwundert nicht, dass die Dr. Lepsius° Deutsche Orient-Mission nach seinem Tode sein Hilfswerk fortsetzte. Es konnte selbst die für die Missionsgesellschaften in der Nazi-Zeit herbeigerufenen zahlreichen Gefahren und Hindernisse überstehen und kam erst im Jahr 1943, nachdem alle männlichen Mitarbeiter der Mission einberufen waren, zu einem Ende.

Selbstverständlich wird das Andenken an Johannes Lepsius in Armenien mit besonderer Liebe und Dankbarkeit gepflegt. In der armenischen Hauptstadt tragen eine Schule und eine Straße seinen Namen, der im Übrigen in jeder armenischen Familie als

---

<sup>1</sup> Lepsius J., Der Todesgang..., S.XXVII.

<sup>2</sup> Lepsius J., Austrittserklärung von Dr. Lepsius, „Mitteilungen...“, S. 147-148.

<sup>3</sup> Lepsius J., Meine Mission, ebd., S. 49, 53.

Inbegriff für Gerechtigkeit und Humanismus fortlebt. Der Völkermord an den Armeniern zählt zu den ersten großmasstäbigen Verbrechen gegen die Menschheit im 20. Jahrhundert, das aber bis heute unbestraft blieb und vom Nachfolgestaat des Osmanischen Reiches offiziell geleugnet wird. Vermutlich hätte im Fall einer erfolgreichen gerichtlichen Bestrafung durch ein internationales Tribunal, wie es die Entente 1915 der jungtürkischen Regierung angedroht hatte, Adolf Hitler nicht vor dem Überfall auf Polen am 22. August 1939 in einer Ansprache an die Oberkommandierenden der Wehrmacht gesagt: “Wer redet denn heute noch von der Vernichtung der Armenier?”

Das Andenken an Persönlichkeiten, wie Lepsius, besitzt eine große Bedeutung für die Erziehung der Generationen und für die Verhinderung weiterer Verbrechen gegen die Menschheit, ja, für die Heilung der Gegenwart und die Rettung der Zukunft. Die Tätigkeit des Lepsiushauses ist auch im Hinblick darauf höchst begrüßenswert. Heutzutage, wenn viele an einem Konzept für eine globale Erinnerungskultur arbeiten, ist es sehr wichtig, darauf zu achten, dass eine solche Erinnerungskultur erst dann lebensfähig sein kann, wenn sie nicht monozentrisch bzw. eurozentrisch gestaltet wird, sondern polyzentrisch. Ferner ist es wichtig, dass in der zu gestaltenden Erinnerungskultur weder die Vielfalt der Erfahrungen der ohnmächtigen Opfer, noch die ihrer Helfer zusammengeschmolzen werden dürfen, was die Gefahr mit sich bringt, die einzelnen Erinnerungen in ein allgemeines Gedächtnis umzuwandeln. In diesem Fall würden künftigen Generationen ihre besten Vorbilder weggenommen, die einerseits an die Notwendigkeit der Priorität der Moral vor der Real- und Machtpolitik erinnern und andererseits darauf hinweisen, dass man sich von keinerlei Entbehungen abhalten lassen darf, um gerade das zu erreichen. Ich glaube, dies auch im Namen der Opfer aller Völkermorde gesagt zu haben.

**Աշոտ Հայրունի – Յոհաննես Լեփսիուսը և հայերը. որո՞նք են  
գլոբալ հիշողության մշակույթի առաջնայնությունները**

Հողվածում համառոտակի, սակայն ամբողջականորեն ներկայացվում է և գնահատվում դոկտոր Յոհաննես Լեփսիուսի հայանպաստ գործունեությունը: Փաստարկվում է, որ Մեծ եղեռնի ժամանակահատվածում նա Գերմանիայում միակն էր, որ գերմանա-թուրքական դաշինքի հետևանքով այդ երկրում հայանպաստ գործիչների համար ստեղծված խիստ աննպաստ իրադրության, վտանգների և արգելքների պայմաններում չընկրկեց դրանց առջև, այլ հավատարիմ մնալով խղճին ու բարոյականությանը և մինչև իսկ բազմիցս վտանգելով իր անձը՝ շարունակեց իր հայանվեր գործունեությունը: Լուսաբանվում են նաև գլոբալ հիշողության մշակույթի այն հիմնական առաջնայնությունները, որոնց առկայության պարագայում միայն նման մշակույթը, որի հայեցակարգային սկզբունքների ձևավորմամբ ներկայումս շատերն են զբաղվում, կարող է կենսունակ լինել և հարասուել: Յուր է տրվում, որ այդօրինակ մշակույթը պետք է լինի բազմակենտրոն, այլ ոչ միակենտրոն կամ եվրակենտրոն, ինչպես հարցով զբաղվող շատ եվրոպացի հետազոտողներ են դա պատկերացնում, և, բացի այդ, ընդգծվում և հիմնավորվում է, որ գլոբալ հիշողության մշակույթի ցանկացած հայեցակարգ ստեղծելիս պետք է լրջորեն նկատի առնել այն հանգամանքը, որ ինչպես ցեղասպանությունների զոհերի, այնպես էլ նրանց մերձավորների փորձառություններն ու առանձին հիշողությունները չպետք է մեկ ընդհանուր հիշատակի վերածվեն:

**ԵՐԿՈՒ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ X ԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

*Բանայի բառեր – Սնանուն Արծրունի, Հովհաննես Դրասխանակերտցի, Սմբատ I, Գագիկ, Յուսուփ, Հայաստան, Վասպուրական, թագավոր, իշխանություններ, պայմանագիր*

IX դարի 80-ական թվականներին Հայաստանի պետական անկախության վերականգնումը նպաստավոր պայմաններ ստեղծեց հայ մշակութային-ինձացական կյանքի և մասնավորապես պատմագրության զարգացման համար: Պատմագրական երկասիրությունների մեծ մասի առանցքը դարձան օտար տիրապետությունների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի հարուստ դրվագների բացահայտումն ու երկրի պետական անկախության վերականգնման և պահպանման գաղափարը:

Հայ պատմագրության մեջ երևան եկան նոր երևույթներ, որոնք սերտորեն աղերսվում էին ժամանակի քաղաքական իրադարձություններին: Բազրատունիների կենտրոնական և գավառական թագավորությունների միաժամանակյա գոյատևումն ինքնին պայմանավորում էր գաղափարական և քաղաքական երկու ուղղության հանդես գալը պատմագրության մեջ: Դրանցից մեկը կոչված էր ջատագովելու միասնականությունն ու կենտրոնացված ուժեղ թագավորության գաղափարը, իսկ մյուսը՝ հատվածականության ու գավառական անջատողականության հայեցակետը: Թեպետ Բագրատունյաց Հայաստանի առանձին նահանգներն ու երկրամասերը լեզվով, կրոնով, մշակույթով, տնտեսական ու քաղաքական շահախնդրություններով կապված էին միմյանց և ընդգրկված մեկ պետությունում, այնուամենայնիվ, ինչպես այլ երկրներում, հայ ավատատիրական հասարակությանը ևս հատուկ էին կենտրոնախույս տրամադրությունները, երկրի ընդհանրական թագավորի գերիշխանությունից դուրս գալու և ինքնուրույն, անկախ քաղաքական միավոր ստեղծելու միտումները: Այս հանգամանքը ցցուն դրսևորվում էր մանավանդ այն ժամանակ, երբ Հայաստանի կենտրոնական իշխանությունը հայտնվում էր արտաքին ու ներքին անբարենպաստ պայմաններում:

Ավատատիրական տարբեր ընտանիքների, ինչպես նաև նրանց ու կենտրոնական իշխանության միջև գոյություն ունեցող հակամարտությունները կամա թե ակամա իրենց անդրադարձն էին գտնում նաև պատմագրական երկասիրություններում: Փաստորեն, ավատական մասնատվածությունն իր կնիքն էր դնում հայ մտաշխարհի ու գաղափարախոսության վրա և դառնում իշխանական առանձին, առավել հզոր տների պատմությունների

ստեղծման հենքը: Տոհմական պատմագիրները ձգտում էին իրենց տունն ու բնակված երկրամասերում տեղի ունեցող իրադարձությունները ներկայացնել բացառիկ լուսավոր, դրական և վառ, իսկ ընդդիմադիրներին՝ մռայլ, գորշ և բացասական գույներով: Պատահական չէ, որ հենց պատմական այս ժամանակաշրջանում ի հայտ եկան գավառական, տոհմական պատմագիրների երկասիրությունների առաջին ազդօրինակները: Նկատի ունենք Բագրատունյաց տան պատմությանը նվիրված, սակայն մեզ չհասած Շապուհ Բագրատունու<sup>1</sup>, Արծրունյաց տանն ընծայված Թովմա և Անանուն Արծրունիների, Անանուն Զրուցագրի (Կարծեցյալ Շապուհ Բագրատունի)<sup>2</sup> ջատագովական երկասիրությունները: X դարի առաջին կեսի հայ պատմագիր Մովսես Դասխուրանցին ավարտին հասցրեց VII դարի հեղինակ Մովսես Կաղանկատվացու՝ Հայոց Աղվանքին նվիրված «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկասիրությունը<sup>3</sup>:

Մյուս կողմից՝ հանդես եկան մի շարք պատմագիրներ, որոնց աշխատությունների գլխավոր լեյտմոտիվը համահայկական շահախնդրություններն էին, միացյալ, ուժեղ, կենտրոնացված պետության գաղափարի ջատագովությունը: Նախ և առաջ նկատի ունենք Հովհաննես Դրասխանակերտցու և Ստեփանոս Տարոնեցու (Ասողիկ) երկասիրությունները<sup>4</sup>:

Անհրաժեշտ չհամարելով առանձին-առանձին անդրադառնալ X դարի հայ պատմագրության մեջ ի հայտ եկած պատմագրական այս ուղղություններին հետևած բոլոր ներկայացուցիչների աշխարհայացքին ու պատմահայեցողությանը՝ առանձնացնենք դրանցից մեկական պատմագրի՝ Հովհաննես Դրասխանակերտցուն և Անանուն Արծրունուն (այսուհետև՝ Անանուն), որոնք իրադարձությունների ժամանակակիցներն են ու մասնակիցները:

---

<sup>1</sup> Շապուհ Բագրատունու մեզ չհասած երկասիրության մասին տե՛ս **Հովհաննիսյան Պ. Հ.**, Անանուն Զրուցագիրը և իր Պատմությունը, «Մատենագիրք Հայոց» (ՄՀ), Թ հատոր, Թ դար, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 1001-1005; **Առաքելյան Վ.**, Շապուհ Բագրատունի և Անանուն Զրուցագիր, Կարծեցյալ Շապուհ Բագրատունի, Պատմություն: Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Առաքելյանի, Երևան, 2011, էջ 3-53 (տե՛ս հատկապես հավելվածները՝ էջ 186-224):

<sup>2</sup> **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց: Քննական բնագիրը և ներածությունը Գ. Տեր-Վարդանյանի, ՄՀ, ԺԱ հատոր, Ժ դար (պատմագրություն, գիրք Ա), Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 15-313; **Անանուն Զրուցագիր (Կարծեցյալ Շապուհ Բագրատունի)**, Պատմութիւն: Աշխատասիրությամբ՝ Մ. Օ. Դարբինյան-Մելիքյանի, ներածությունը՝ Պ. Հ. Հովհաննիսյանի, ՄՀ, Թ հատոր, Թ դար, էջ 1001-1052:

<sup>3</sup> **Մովսես Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի: Քննական բնագիրը Վ. Դ. Առաքելյանի, ներածությունը՝ Պ. Հ. Հովհաննիսյանի, ՄՀ, ԺԵ հատոր, Ժ դար (պատմագրություն, գիրք Բ), Երևան, 2011, էջ 27-437:

<sup>4</sup> Յովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմութիւն Հայոց: Քննական բնագիրը և ներածությունը՝ Գ. Տեր-Վարդանյանի, ՄՀ, ԺԱ հատոր, Ժ դար (պատմագրություն, գիրք Ա), էջ 317-358; **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ**, Պատմութիւն տիեզերական: Քննական բնագիրը և ներածությունը՝ Գ. Մանուկյանի, ՄՀ, ԺԵ հատոր, Ժ դար (պատմագրություն, գիրք Բ), էջ 619-829:

Նրանց երկասիրություններն առաձնահատուկ նշանակություն ունեն պատմաշրջանի Հայաստանի իրական նկարագիրն ու պատմագրական երկերում արտացոլված քաղաքական նկրտումները բացահայտելու հարցում:

Հովհաննես Դրասխանակերտցին եղել է Բագրատունյաց Հայաստանի պետական անկախության հռչակման ականատեսներից, այդ պետականության պահպանման համար մղվող պայքարի եռանդուն մասնակիցներից և վերջապես 898-929 թթ.՝ Հայոց կաթողիկոսը: Անանուն Արծրունյաց ընտանիքի քաղաքական վարկի բարձրացմանը և Վասպուրականի առանձին թագավորության հռչակմանն առնչվող իրադարձությունների ժամանակակիցն է, միգուցե նաև մասնակիցը: Երկու պատմագիրներն իրենց երկասիրությունները շարադրել են պատվերով: Դրասխանակերտցու պատվիրատուներն են Սմբատ I (890-914) և Աշոտ II Երկաթ (914-929) թագավորները: Ըստ հեղինակի հավաստման՝ նա իր «Պատմություն Հայոցը» գրել է «ի հրամանե թագաւորաց»<sup>1</sup>: Փոխարենը՝ Անանունի պատվիրատուն եղել է Վասպուրականի Գագիկ Արծրունի թագավորը, որին և ուղղված են հետևյալ հատկանշական տողերը. «Եւ եւ մեծի գովութեանց արժանաւոր. գոր եւ ես քեզ սիրելի քաջ, եւ քաջի արանց նախնական, որ եւ զպատմութիւնս յինէն **պահանջեցեր**, ոչ իբրու յայլոց համբաւոց տեղեկացեալ ընծայեալ արձանացուցանեմ քեզ ստայօդ բանից պաճուճեալ առասպելս, այլ **ականատես եւ ականջալուր, եւ իմով իսկ ձեռաւք շաւշափեալ**»<sup>2</sup> (ընդգծումները մերն են – Պ. Հ.):

Այս էական հանգամանքներն իրենց մնայուն հետքն են դրոշմել երկու պատմագիրների հակոտնյա աշխարհայացքների վրա: Իբրև տոհմական պատմիչ՝ Անանունն արդարացնում է Արծրունիների ոչ միայն հակադրությունը, այլև հակամարտությունը Բագրատունիների կենտրոնական թագավորությանը: Նրա աշխարհայացքի հիմքում խարսխված է այդ տների միջև գոյություն ունեցող հակասության ու լարվածության իրողությունը, որն իր գագաթնակետին հասավ հատկապես X դարի սկզբներին: Դա մի այնպիսի ժամանակաշրջան էր, երբ նորահաստատ Բագրատունյաց պետականությունը, չնայած վիթխարի ջանքերին, չկարողացավ պահպանել երկրի քաղաքական ամբողջականությունը, հաղթահարել ավատատիրական մասնատվածության դրսևորումները: Երկրում աստիճանաբար խորանում էին իշխանական տների ապակենտրոն նկրտումները՝ սպառնալով ծանր փորձությունների ենթարկել մեծ դժվարությամբ ավարտին հասցված Հայաստանի միասնությունը: Այս առումով տխուր դեր էր վիճակված գլխավորապես Վասպուրականի տիրակալներին: Հայաստանի քաղաքական մասնատվածության և պառակտման առաջին օրինակը տվել է այդ երկրամասը, որը պարզորոշ արտացոլված է Դրասխանակերտցու երկասիրությունում:

<sup>1</sup> **Յովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցու**, էջ 582:

<sup>2</sup> **Անանուն**, էջ 285:

Սմբատ I-ը, Վասպուրականի իշխան Գագիկի գործողությունները դիտարկելով իբրև երկրի ամբողջականությանը սպառնացող՝ քողարկված վտանգներ, որոշակի ջանքեր է գործադրել նրա քաղաքական հետագա առաջխաղացումը սահմանափակելու համար: Բայց արքան հաջողության չի հասել, մանավանդ որ միասնական երկրի ուժերի ջլատմանն ամեն կերպ օժանդակում էին Ատրպատականի իշխանավորները: Հակամարտությունը կենտրոնական իշխանության ու Արծրունիների միջև սրվեց հատկապես Նախճավանի հարցի շուրջ, երբ 908 թ. Սմբատ I-ը այդ քաղաքը հանձնեց Սյունյաց տերերին: Գագիկ Արծրունին, հիմնվելով պատմական իրողությունների վրա, դիմեց Հայոց արքային՝ քաղաքն իր օրինավոր տերերին, այն է՝ Արծրունիներին վերահանձնելու խնդրանքով, որը, սակայն, մերժվեց: Այնուհետև դեպքերը զարգացան գլխապտույտ արագությամբ: Վրդովված Գագիկն անմիջապես մեկնեց Ատրպատականի ամիրա Յուսուփի մոտ՝ ջանալով հայցել նրա հովանավորությունն ու խնամարկությունը: Այս քայլով նա, փաստորեն, անցնում է Հայաստանի ամենառիսկերիմ թշնամու կողմը և համագործակցում նրա հետ՝ ընդդեմ Հայաստանի կենտրոնական իշխանության: Այսպիսով, առանց զգալի ջանքեր գործադրելու Յուսուփը հասավ իր հետամտած նպատակին. Հայաստանը պառակտված էր: Մա անդառնալի հարված էր երկրի միասնությանը, նրա պետականությանն ու ազգային շահախնդրություններին, հարված թիկունքից, և ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, դա ոչ միայն անկասելի էր, այլև դարձավ տխուր օրինակ հայկական առանձին այլ իշխանությունների համար: Այժմ հետևենք, թե ինչպես են այս հանրահայտ իրողություններն ու դրանց հետ կապված մյուս դեպքերն անդրադարձել պատմագրական վերոնշյալ երկերի վրա:

Ժամանակագրական առումով խնդրո առարկա իրադարձություններին ավելի մոտ է Հովհաննես Դրասխանակերտցին, որն առաջինն է դրանց գնահատականներ տվել: Նրան միանգամայն բնորոշ է պատմական իրադարձությունների էությունը ճիշտ ըմբռնելու և արժևորելու կարողությունը: Երբ Յուսուփը Բագրատունիների պետության միասնությունը խախտելու նպատակով թագադրում է Գագիկ Արծրունուն, պատմիչն արձանագրում է. «Իսկ նորա (Յուսուփը – Պ. Հ.) ախորժաբար ընկալեալ, տայր նմա թագ արքայական եւ պատիւս եւ պարգէս արքունականս՝ **ի քակտումն միաբանութեան նոցա** զայն հնարեալ գործել զի դիւրադաւ լիցին այնուհետեւ իւրաքանչիւրն առ ի նմանէ դըրժելոյ»<sup>1</sup> (ընդգծումը մերն է – Պ. Հ.): Այս «կորստական դուռն» Աստծուց բացի ոչ ոք այլևս չէր կարող փակել:

Հովհաննես Դրասխանակերտցին համոզված է, որ կատարվածի կորըստաբեր բնույթը նախ և առաջ շահավետ էր Յուսուփի համար, որը միայն դրանից հետո է լայնածավալ ռազմական գործողություններ սկսել Բագրատունիների դեմ: Երկրի և ժողովրդի համար այս ճակատագրական պահին

<sup>1</sup> **Յովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցույ**, էջ 487:

պատմիչը կոչ է անում նախ մոռանալ ցանկացած վիրավորանք, անարգանք, ապա միավորել բոլոր ուժերը, սատար կանգնել Հայոց արքային և այս կերպ վերջ տալ օտարի շահատակություններին: Նա դառնորեն է նշում, որ հայոց իշխանները փոխանակ օտար կողոպտիչների դեմ եղբայրաբար միանալու և պայքարելու վարվում էին հակառակ ձևով. «Եւ յուսացեալ սպասեաք ոչ եւս ընդ փորձութեանն խառն վրիպիլ սոցա եւ անկանիլ, այլ ջան առաջի դնել եւ ելս նեղութեանն հնարել եւ վայելչաբար ի միասին կապակցիլ հասարակ եղբայրութեամբ, եւ իբրեւ զմի այր միանալ»<sup>1</sup>: Նախանձն ու չարակամությունը, միմյանց նկատմամբ ատելությունը, ծավալված եղբայրասպան կռիվները երկիրը դարձնում են անպաշտպան, իսկ ժողովրդին՝ անզոր օտար նվաճողների հանդիման. «Իսկ թագաւորք մեր եւ պետք եւ իշխանք, գորս ի բնէ նախարարութիւնքն էին, ջանային վարատել եւ խզել իւրաքանչիւրոցն բնակութեանց, եւ ըստ ախորժից իմն ձեռական եւ նոր ստեղծանել պայազատս եւ սպասաւարս: Այլ եւ եղբայր ընդ եղբար եւ ազգայինք ընդ ազգայինս ընդվզեալ ի նախանձ եւ ի չարակնութիւն եւ ի գրգռութիւն եւ ի կատարեալ ատելութիւն ընդ միմեանս բերէին: Եւ այսպէս համագունդ ընդ միմեանս հարեալք, ի հակառակութիւն եւ ի կռիւ պայքարէին. եւ միշտ սուր յազդէր ունելով՝ բազում եւս քան թշնամիսն հեղուին միմեանց զարեան ճապաղիս, եւ առ հասարակ զքաղաքս եւ զգեաւոյս եւ զաւանս եւ զագարակս, այլ եւ զտունս իւրեանց քանդէին ձեռաւք իւրեանց, եւ գրեթէ այն իսկ աւճիրք հակառակութեան գտան պատճառք հինիցն եկելոց ի վերայ մեր»<sup>2</sup>:

Մեծ վարպետությամբ է պատմագիրը վեր հանել հայոց միասնությունը ոգեկոչող, պահպանող, պետականության ջատագով գլխավոր դեմքի՝ Սմբատ I-ի հերոսական ու ողբերգական կերպարը: Նա անթաքույց հիացմունքով է գրում հայոց թագավորի մասին, որը գործադրում էր ցանկացած ջանք՝ հանուն իր քաղաքագետ հոր թողած ժառանգության՝ հայոց պետականության պահպանման: Դրա համար նա ստիպված էր մարտնչել և՛ հագարացիների (արաբների), և՛ պարսիկների (Ստրպատականի ամիրայության), և՛ Դվինի ամիրայության և, որն ամենացավալին է, հայոց անմիաբան ու տիրադավ իշխանների դեմ: Հայոց օծյալ թագավորի եղբրական մահն անմիջական հետևանքն էր իշխանների եսականության և հատվածականության: Հայաստանը, իբրև մի կազմակերպված ամբողջություն, չդիմադրեց օտարին: Ազգային միասնության, ընդհանուր շահերի ըմբռնում չկար: Չստեղծվեց ոչ միայն համահայաստանյան քաղաքական դաշնություն, այլև հայ հասարակությունն ի վիճակի չեղավ ըմբռնելու համայն հայության ընդհանուր հայրենիքի պահպանման գաղափարը:

Պատմագիրն անարգանքի սյունին է գամում դավաճաններին, ատելությամբ խոսում հայության դիտրիմ թշնամու նկատմամբ կրավորական դիր-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 517:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 517-518:



քորոշում որդեգրածների՝ անկախ այն բանից իշխանի, թե հոգևորականի մասին: Նա հանդես է գալիս իբրև Հայաստանի միասնության և նրա պետականության գաղափարախոս, մեծ ոգևորությամբ արձագանքում հայոց պետականության վերականգնմանը և դրվատում Աշոտ I-ին՝ որպես իմաստնագույն և հանճարեղ գործչի, որին և պարտական էր հայ ժողովուրդին իր վերագտած անկախության և հայկական տարածքների վերամիավորման համար: Գահ բարձրանալուց հետո Աշոտ I-ը «բազում եւ երեւելի կարգս յարդարէր աշխարհի տէրութեան իւրոյ, յաւրինուածս տանց, ազգաց, քաղաքաց, շինից, դաստակերտաց, եւ հարթ հաւասար ըստ իւրաքանչիւրոցն կատարէր կարգս՝ լեռնականացս եւ ջերմահովիտ բարեխառն դաշտականաց, եւ զամենայն տափարակ տեղիս ազարակս եւ գոմս դնէր. եւ զմարմանդս յայգիս եւ ի բուրաստանս զարդարէր. եւ զամենայն որ ինչ արեւն է թագաւորութեան եւ որ շուրջ թագաւորութեամբ՝ ոչ ինչ իմիք կասեցուցանէր. եւ գրեթէ հարստագոյն եւ խոհեմագոյն քան զամենայն թագաւորութիւնս գտանէր: Եւ այսպէս ի նորոգատուր թագաւորութեանն բարձրացուցանէր զազգս Թորգոմեան»<sup>1</sup>: Դեռ ավելին, Աշոտը հնազանդեցնում է «զհիւսիսական կողմամբք, ... մեծի լերինն Կովկասու, եւ բնակիչսն Գուգարաց եւ զելուզակատուտ մարդիկ Ուտի գաւառի: Այլ եւ թագաւորն եւս Եգերացոց»<sup>2</sup>: Իրոք որ, Աշոտ I-ը մարմնավորում էր թագավորի, պետական գործչի, հայ մարդու մի գաղափարապաշտ կերպար, որը պատմագիրը կերտել է մեծ հուզականությամբ և վարպետությամբ, ինչպես, օրինակ, Սովսես Խորենացին Մեծն Տիգրանին: «Այլ ինձ աստանոր,– գրում է Դրասխանակերտցին,– ոչ արդեաւք այլ ինչ է բանս սիրելի, քան թէ դեգերիլ ի բանս գովեստից, որ վասն Աշոտոյ իշխանաց իշխանին են հետեւմունք: Վասն զի ի տիս հասեալ միջակութեան՝ քաջահասակ էր նա և անձնեայ, եւ թիկնաւէտ եւ զուարթերես, եւ մրայան նկարէն իմն, եւ նիշ արեան յաչսն ունելով՝ որպէս զյակինթ կարմիր ի մէջ մարգարտի ծագեալ, եւ վայելչացեալ գեղեցկութեանն ալեաւք. մեծիմաստ եւ քաղցրաբան, եւ առ կերակուրս խրախճանաց արինաւոր. ոչ խանդուցեալ նորա ընդ լաւագոյնսն եւ ոչ արհամարհեալ զնուաստագոյնսն, այլ հասարակաց ի վերայ տարածէր զգեստ խնամոց իւրոց, եւ լծակաւք իմն կշռէր նախ զիւր եւ ապա զամենեցուն կենցաղս. միանգամայն իսկ ասե, եթէ որ ինչ մարդկութեանս է պիտանի՝ ոչ ինչ կասեցուցանէր»<sup>3</sup>: Նույն պատկառանքն ու հիացմունքն առկա են նաև Սմբատ I-ին նվիրված հատվածներում, քանզի իր գործունեությամբ արքան «... ձգեալ աճեցուցանէր զշառաւիղ տէրութեան իւրոյ յարեւմտից հիւսիսոյ, մինչեւ զԿարնոյ քաղաք, եւ անդր եւս քան զԿղարջս՝ քերեալ մինչեւ առ ափն ծովուն մեծի, եւ մինչեւ ցսահմանս Եգերեացոց եւ մինչեւ ցստորոտ մեծի լերինն Կովկասու, զԳուգարացիս եւ Ծանարս՝ մինչեւ

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 443:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 444:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 442-443:

ցԴուռն Ալանաց, առեալ եւս յինքն եւ զամբոց Դրան Պահակի նոցա. եւ անտի ի հարակողմն կոյս՝ զԿուր գետով մինչեւ ի քաղաքն Տփխիս. եւ զՈւտի գաւառ մինչեւ ի քաղաքն Հունարակերտ եւ մինչեւ ի Տուս եւ ի Շամքոր:

Եւ այսպէս ընդարձակեալ զսահման տերութեան իւրոյ, որք ընդ լծով արքունի սակից եւ բեկարաց եւ մաքսից կացուցեալ, զզէն քաջութեան մարտի իւրոյ նշան յաղթութեան կանգնէր»<sup>1</sup>: Սա փառաբանական, գովաբանական ներբող չէ, հեղինակը չի խնկարկում իր գովերգուի կարծեցյալ բարեմասնությունները կամ նրա չկատարած գործերը: Նրա համար առաջնայինը երկրի միավորումն է, տերութեան սահմանների ընդլայնումը՝ արևելքից արևմուտք և հյուսիսից հարավ, ըմբոսներին հնազանդեցնելը, ժողովրդի բարեկեցության ապահովումը: Ուստի բնական է, որ այս կուռ և միասնական շինության առանձին հատվածների ավերմանն ուղղված յուրաքանչյուր գործողություն, որի խոտոր ընթացքը նպաստում էր Սմբատ I-ի և Աշոտ I-ի հերոսական ու հետևողական ջանքերով կերտված ամբողջական կառույցի մասնատմանը, պատմագիրը որակում է իբրև «աղետագոյն աղետք ազգապղծութեան»: Նա կոչում է հայ իշխաններին լինել միաբան, միակամ, միախորհուրդ և չհետևել եղբայրասպան Կայենին. «Այլ ես այսուհետև մաղթանս առաջի ձեզ եւս վերստին յայս տեղի տանջանաց, յորս եւ այժմ առ հասարակ թմբրեցաք ի ծուխ մեղաւորաց: Այլ ախորժաբար լսող լինել աղերսալի իմոյս բանից և բաղաձայնութեան խրատու՝ լինել ձեզ զաւակ լավագունի պատարագեցելոյն Սեթայ եւ գրիլ յորդիս Աստուծոյ. այլ ոչ խառն ընդ անիծեալ եղբայրագրաւն Կայենի զարմից կապիլ ի կնատ եւ ի մեղմէիս եւ ի վայրաքարշ դստերս մարդկան»<sup>2</sup>: Տեսնելով Գագիկ Արծրունու՝ հայրենիքի մասնատմանն ուղղված պարսավելի գործողությունների անմիաբան ընթացքը, նրա իսկ քարոզած հայոց միաբանության փլուզումը՝ պատմագիրը դառնորեն գրում է. «Ամենայն առաքինի քաջողութիւն եւ շինութիւն եւ խաղաղութիւն քայքայեցաւ, եւ եղծումն եւ ապականումն գտեղի փոխաբերեաց»<sup>3</sup>:

Հակադրվելով կաթողիկոս պատմագրին՝ Անանունը փորձում է ամեն գնով արդարացնել Գագիկ Արծրունու անջատողական գործունեությունը, դիմում անգամ հանրահայտ իրողությունների ակնհայտ խեղաթյուրման: Նա փորձում է հավաստիացնել, թե տեղի ունեցածի համար պատասխանատուն և մեղավորը ոչ այլ ոք է, քան ինքը՝ Սմբատ I-ը: Վերջինիս իբր հանգիստ չէր տալիս Գագիկի փառքը, և նա այրվում էր Արծրունյաց իշխանին կործանելու, նրան ասպարեզից հեռացնելու մոլար ցանկությամբ: Այդ նպատակին հասնելու համար Սմբատն անգամ «ջանայր զայլազգիսն (արարներին – Պ. Հ.) կրկին անգամ զարթուցանել ի վերայ իշխանին»<sup>4</sup>: Սա չափազանց լուրջ մե-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 457:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 582:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 518:

<sup>4</sup> **Անանուն**, էջ 279:

ղաղրանք է, որը, սակայն, չունի համապատասխան անդրադարձ ոչ միայն այլ սկզբնաղբյուրներում, այլև իր իսկ՝ Անանունի մոտ: Այդ պատճառով է, որ «չար կասկածն ընկած» յուրաքանչյուրի սիրտը, և Սմբատն ու Գագիկը «ոչ սիրով խաղաղութեամբ զմիմեամբք թեւակոխէին որպէս յառաջագոյնն»<sup>1</sup>: Ուրեմն մարդկային հանապազօրյա, ամենասովորական նախանձն է եղել Հայոց երկրի խաղաղությունը վրդովելու պատճառը: Ակներն է, որ պատմագիրը քաղաքական ծայրաստիճան ողբերգության շարժառիթը չափազանց էժանացրել է, մանրացրել, դարձրել կենցաղային, առօրեական մի միջադէպ: Ընդ որում, ստեղծված անմխիթար կացության ամբողջ պատասխանատվությունը նա վերագրում է միայն Հայոց թագավորին:

Արծրունի տոհմագիրը դարձյալ անկեղծ չէ, երբ գրում է, թե Յուսուփն ինքն է իր մոտ հրավիրել Գագիկին, որի քաջագործությունների, իմաստնության ու սրբակենցաղության մասին բազմիցս լսել էր ուրիշներից և այժմ ցանկանում էր նրա հետ անձամբ ծանոթանալ: Այդ մասին պատմիչը գրում է. «Իսկ ամիրայն Յուսուփ քանզի լսելով լսէր զանուն և զգործս **արիական քաջութեանն**, միանգամայն եւ **զիմաստակիր խոհականութիւն հանձարէլ եւ մեծանուն** իշխանին Գագկայ, ցանկայր եւ ի բազում ժամանակաց տեսանել զնա: Ուր եւ անդէն իսկ վաղվադակի դեսպանս առաքէ հրովարտակաւք եւ բազում խոստմամբք, եւ իսպառ **թախանձեալ** զիշխանն, կոչէ ի հանդիպումն իւր: Եւ նորա զնացեալ զկնի կոչողացն անյապաղելի եւ սիրով խաղաղութեան, որ ի հասանելն առ միմեանս՝ մեծաւ փառաւորութեամբ շքեղացուցանէ զիշխանն»<sup>2</sup> (ընդգծումները մերն են – Պ. Հ.): Ինչպէս տեսնում ենք, նա ուրվագծում է կատարյալ հովվերգական պատկեր: Ուրեմն, Յուսուփ ամիրան է թախանձել հանդիպելու Վասպուրականի իշխանին, իսկ Գագիկը, մեծահոգաբար ընդառաջելով նրա աղերսանքին, մեկնել է Ատրպատական: Այս հանդիպումից հետո և դրա տպավորության ներքո է, որ Յուսուփը Գագիկ Արծրունուն հոչակել է Հայոց թագավոր. «Եւ տեսեալ (Յուսուփը – Պ. Հ.) եթէ ոչ ոք է, որ կարողանայ տիրել եւ ունել զաշխարհս Հայոց, բայց միայն Գագիկ, զորոյ զփորձ առեալ զիտէր զնա այսպիսի այր, զոր ոչ թողեալ ի կամս անձնիշխան կամացն, թագաւորեցուցանէ զնա ի վերա ամենայն Հայոց»<sup>3</sup>:

Ըստ Անանունի առաջադրած ժամանակագրական համակարգի՝ Գագիկ Արծրունու թագադրությունը տեղի է ունեցել Սմբատ I-ի եղերական մահից հետո: Արդի պատմագիտության մեջ որևէ կասկած չկա Սմբատի վախճանի թվականի շուրջ. նա մահկանացուն կնքել է 914 թվականին: Հետևաբար, ըստ Անանունի, Գագիկը Հայոց թագավոր է հոչակվել նույն թվականին:

Նման մեկնաբանությունն առնվազն տարօրինակ է: Հարկ է ուշադրություն դարձնել մի շատ կարևոր հանգամանքի: Ինչպէս Թովման, այնպէս և

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 280:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 281:

Անանունը 908 թ. տեղի ունեցած Նախճավանի իրադարձությունների մասին ընդհանրապես որևէ մանրամասն չեն հաղորդում: Թվում է, թե նրանց անձանոթ է այդ միջադեպը, որը դարձավ հետագա եղբայրասպան ողբերգության պատճառը: Անկասկած, Արծրունի պատմիչները դեպքերի զարգացման ընթացքին հիանալի ծանոթ են եղել, սակայն դրանք վերլուծել են կամայականորեն՝ իրենց տոհմին, մանավանդ Գագիկին ցանկալի լույսի ներքո: Ըստ Անանունի՝ Յուսուփի և Գագիկի առաջին հանդիպումը տեղի է ունեցել Սմբատի մահից հետո, այն է՝ 914 թվականին: Ուստի քանի որ Նախիջևանի հիմնահարցն Արծրունի պատմագիրները չեն ընդգրկել իրադարձությունների շղթայում, և իբր այդ առիթով չէ, որ Յուսուփն ու Գագիկն առաջին անգամ հանդիպել են միմյանց, ապա ծագել է դեպքերի հետագա զարգացումը Սմբատ I-ի այն անհետատես քայլով բացատրելու անհրաժեշտությունը, որի արդյունքում Հայոց արքան հրաժարվել է արքունի հարկերը Յուսուփին վճարելուց: «Եւ ինքն Սմբատ ոչ խնդրեաց երթալ զհետ խաղաղութեան, տալ զհարկս արքունի, որպէս հրամայեաց Տէր զսակ անդրանիկացն ի ձեռն Պետրոսի ընծայեալ այնոցիկ, որք զդիդրամայն պահանջէին, եւ այն ասէ. «Տո՛ւք զկայսերն կայսեր, եւ զԱստուածոյն Աստուծոյ», եւ այնքան արժանապէս նշանակեաց տալ զսակն արքունի»<sup>1</sup>: Փոքր-ինչ ուշ Անանուն ժամանակագիրն առավել անաչառորեն և հստակորեն շեշտում է, որ Գագիկը, «ապստամբեալ ի Սմբատ թագաւորէ»<sup>2</sup>, ներկայացել է Յուսուփին:

Ստեփանոս Օրբելյանը դեպքերը ներկայացնում է անկողմնակալորեն: Ինչպես նա փաստում է, հայոց պառակտումը մի չնչին («դոյզն ինչ») պատճառով եղավ՝ «...զի խնդրէր ի Սմբատայ թագաւորէն առնուլ զՆախջաւան յիշխանէն Սիւնի Սմբատայ և տալ նմա. զոր ոչ կամեցաւ վասն բնական հայրենեացն»<sup>3</sup>: Այս մերժումից հետո է, որ Գագիկը «ապստամբեալ գնաց առ Յուսուփ. եւ թագ կապեալ ինքեան՝ կամէր թագաւորել ի վերայ Հայոց»<sup>4</sup>, որով իր գործակիցների հետ «ածին խաւար մեծ ինքեանց եւ Աշխարհս Հայոց»<sup>5</sup>:

Ժամանակագրական առումով իրադարձություններին մոտ կանգնած ճշմարտախոս պատմիչ Ստեփանոս Ասողիկը հականե-հանվանե Գագիկ Արծրունուն համարում է «առաջնորդ Յուսուփայ», այսինքն՝ վերջինիս խորհրդատուն, ուղղորդողը: Գագիկն է, որ գործակիցների հետ «նենգագործն նախանձեալ ընդ շինութիւն աշխարհիս Հայոց, ամենայն զօրօքն իւրեանց միաբանին ընդ նմա (Յուսուփին – Պ. Հ.)՝ թողլով ի բաց թագաւորն Սմբատ»<sup>6</sup>:

---

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> «Մանր ժամանակագրություններ». XIII-XVIII դարեր, հ. I, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 384:

<sup>3</sup> **Ստեփանոս Օրբելեան**, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 187:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> **Ստեփանոս Տարնեցի Ասողիկ**, էջ 164, 168:

Անանունից բացի և ոչ մի պատմագիր Գագիկ Արծրունուն չի ներկայացնում որպես ընդհանրական Հայոց թագավորի: Բոլորը շեշտում են նրա՝ միայն Վասպուրականի թագավոր լինելու հանգամանքը<sup>1</sup>: Դեռ ավելին, պատմիչների մեկ այլ խումբ նշում է, որ Սմբատի չարանենգ սպանությունից հետո «զամս **եօթն** անիշխան լեալ երկիր»<sup>2</sup>, կամ՝ «յետ սպանմանն Սմբատայ թագաւորի Տիեզերակալի... անիշխան լեալ երկիրս ամս **Է**» (ընդգծումները մերն են – Պ. Հ.)<sup>3</sup> և կամ՝ «այլ երկիրս մնաց անթագաւոր զամս **Է** [7]»<sup>4</sup>: Իսկ Ստեփանոս Օրբելյանը, որը բազմաթիվ առիթներով անդրադարձել է Գագիկ Արծրունու գործունեությանը, միշտ նրան հիշատակում է որպես «թագաւորն ի Վասպուրական աշխարհի»<sup>5</sup>: Ժամանակագիր Դավիթ Բաղիշեցին իրերն անվանում է ուղղակի իրենց անունով. «Գագիկ Վասպուրականին տիրեաց մասնավոր»<sup>6</sup>: Այս ամենից հետո հարց է ծագում, թե ինչպես հաշտեցնել Գագիկի՝ միմյանց անհարիր՝ «թագաւոր ամենայն Հայոց» և «թագաւոր Տանն Արծրունեաց» կարգավիճակները: Բնական և տրամաբանական է պնդել, որ Գագիկի թագավորական տիտղոսը՝ որպես դավաճանության փոխհատուցում, վերաբերում է միմիայն նրա՝ Վասպուրականի թագավոր լինելու պարագային: Հակառակ դեպքում պատմիչները համերաշխորեն չէին շեշտի 914 թ. Սմբատ I-ի մահից հետո մինչև 921 թ. Աշոտ II Երկաթի գահ բարձրանալը յոթ տարվա թագավորական իշխանության պարապուրդի մասին:

Ուստի զարմանալի չէ, որ Անանունն ընդհանրապես չի հիշատակում Սմբատ I-ի հաջորդի՝ Աշոտ II Երկաթի անունը: Նրա համար այդպիսի թագավոր չի եղել: Նրա մոտ ինչ-ինչ հիշատակություններ կան միայն Աշոտ II-ի հաջորդի՝ Աբաս թագավորի մասին: Այն է՝ ըստ Անանունի ըմբռնման՝ Սմբատ I-ից հետո գահ է բարձրացել Աբասը, բայց թե ե՞րբ և ի՞նչ հանգամանքներում, նա չի շեշտում և մեկնաբանում: Անժխատելի է, որ 929-953 թվականների ընթացքում՝ շուրջ 15 տարի (929-943), Աբաս Բագրատունին և Գագիկ Արծրունին եղել են համաժամանակյա գահակալներ: Բայց չէ՞ որ գրեթե նույնքան ժամանակահատվածում՝ 914-929 թթ., և միննույն տարիներին գործել են նաև Աշոտ II Երկաթն ու Գագիկ Արծրունին: Կարծում ենք, որ նման լրությունը, ավելի ճիշտ՝ անտեսումը, պետք է բացատրել 922 թ.

<sup>1</sup> «Գագիկ թագաւոր տանն Արծրունեաց» (տե՛ս **Վարդան վարդապետ**, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 87), «Գագիկ թագաւորէ ի Վասպուրականի» (տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. I, էջ 384): Հատկանշական է Կիրակոս Գանձակեցու բնորոշումը. «Ոմն Գագիկ՝ Դերենիկի որդի» (տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 83):

<sup>2</sup> **Վարդան վարդապետ**, էջ 87:

<sup>3</sup> **Մամուէլ Անեցի**, Հաւաքումնք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Երևան, 2011, էջ 117:

<sup>4</sup> **Դավիթ Բաղիշեցի**, Ժամանակագրութիւն, «Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ.», հ. II, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 337:

<sup>5</sup> **Ստեփանոս Օրբելեան**, էջ 183, 184, 275:

<sup>6</sup> **Դավիթ Բաղիշեցի**, էջ 337:

Ձաֆար իբն ալ-Մուքթադի խալիֆի կողմից Աշոտ II-ին շնորհած «շահն-շահ» տիտղոսի տվչությանը, որով նա ճանաչվել է Հայոց (այդ թվում և Վասպուրականի), Վրաց և Աղվանից թագավոր: Հետևաբար, առանց դժվարության հերքվում են Անանունի հիացական ներբողներն «ամենայն հայոց թագավոր» Գագիկ Արծրունու մասին. «Բայց ինձ ահա յոյժ սիրելի է աստանար զբարձրագոյն իմն իրէ բունն հարկանել, առ ի յիշատակ թողլով զկնի եկելոց, եւ եւ ի պարճանս տանն Արծրունեաց, յիշատակել զիմաստակիր խոհականութեան գործ մեծի արքային Հայոց Գագկայ, որ քաջութեամբ եւ աշխարհաշէն խաղաղասիրութեամբ հոգաբարձեր իբրեւ զհայր խնամածու ի վերայ աշխարհիս Հայոց, որ եւ ի վերայ ամենայն բարեխնամող գթութեանց՝ որով զաղքատս դարմանէր, զգերեալս դարձուցանէր, զգրկեալս փրկէր, դատ առնէր որքոց եւ տայր իրաւունս այրեաց, եւ զայն եւս աւարտ եւ զլուխ դնէր ամենայն առաքինասէր վարուց»<sup>1</sup>: Անշուշտ, իրավացի է Վ. Վարդանյանը, երբ գրում է, թէ Գագիկ Արծրունու՝ ամենայն Հայոց թագավորի տիտղոսը, ըստ էության, «Վասպուրականում տիրող մտայնության արգասիք էր»<sup>2</sup>:

Դարձյալ մանրուք թվացող մի քանի փաստերի մասին: Անդրադառնալով Սմբատ I-ի ձերբակալությանը՝ Անանուն Արծրունին չի կարողանում զսպել հեզնանքն ու սարկազմի հասնող արհամարհանքը. «Յուսփ յարձակեցաւ ի վերայ Հայաստանեայցս...եւ զկնի սակաւ աւուրց ըմբոնէ զնա (Սմբատին – Պ. Հ.) իբրեւ զանգար տղայ»<sup>3</sup>: Տարօրինակ է, սակայն, Անանունն անգամ հաշվի չի առել իր նախորդի՝ Թովմա Արծրունու՝ Սմբատին տված եզակի դրական գնահատականը. «Այր քաջայայտ եւ հանճարեղագոյն, լի եւ առոյգ յամենայն իրողութիւնս, որ ինչ ընդ երկնաւս համառատաբար լրութիւն պատկանաբար պիտանան, հաճոյ Աստուծոյ եւ ընտիր մարդկան»<sup>4</sup>: Փոխարենն Անանունը Գագիկին հաճախ հորջորջում է իբրև «Մեծ արքայ Հայոց Գագիկ», «Մեծ թագաւոր Հայոց Գագիկ», «հայր խնամածու ի վերայ աշխարհիս Հայոց», դեռ ավելին՝ երևակայական «արքայ զաշխարհս Հայոց և Վրաց»<sup>5</sup> և գովերգում նմանատիպ այլ՝ իրականությանը չհամապատասխանող ջատագովական մակդիրներով: Պատմագիրը չի զլանում գովաբանել անգամ վայրագ բռնակալ Յուսուփին և փառաբանել նրան. «Ոստիկան ոմն մեծ, այր խրոխտ եւ բազմանշան եւ ահարկու քան զբազումս որ յառաջ քան զնա էին»<sup>6</sup>: Ահա թե ուր կարող է հասցնել, այսպես կոչված, «տեղային հայրե-

<sup>1</sup> Անանուն, էջ 285:

<sup>2</sup> Վարդանյան Վ. Մ., Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը. 908-1021 թթ., Երևան, 1969, էջ 79:

<sup>3</sup> Անանուն, էջ 281:

<sup>4</sup> Թովմա Արծրունի, էջ 238: Ավելորդ չէ նշել, որ Ասողիկը Սմբատ I-ին անվանում է «Մեծ թագավոր Հայոց» (Ստեփանոս Տարունցի Ասողիկ, էջ 280), իսկ Վարդան վարդապետը՝ «Պատուական թագաւորն Հայոց» (Վարդան վարդապետ, էջ 87):

<sup>5</sup> Անանուն, էջ 284, 285, 287, 292, 294:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 280, 281:

նասիրությունը»: Հիացմունքով արձանագրելով Յուսուփի և Գագիկի միջև հաստատված բարեկամությունը՝ Անանունը, այնուամենայնիվ, չի անդրադառնում այն իրողությանը, թե Հայոց աշխարհին ի՛նչ չարիքներ պատճառեց Յուսուփը, քանզի նրան լիովին բավարարում էր այն հանգամանքը, որ իր հայրենի Վասպուրականը զերծ էր մնացել այդ ավերումներից, իսկ իր քաղաքական իդեալն արժանացել էր թագավորական պատիվների: Հետաքրքիր է, որ Հովհաննես Դրասխանակերտցին, որը 924 թ. ապաստան էր գտել Գագիկ Արծրունու արքունիքում և վայելում էր վերջինիս հոգատարությունը, նուրբ հումորով հեզնում է նրան՝ անվանարկելով «թագակերպեալ իշխան»<sup>1</sup>: Մի թե կաթողիկոս պատմիչը թույլ կտար քամահրանքով արտահայտվել «խոհական», «աշխարհաշէն», «բարեխնամ», «առաքինասէր», «մեծի արքային Հայոց» հանդեպ: Անշուշտ ո՛չ, եթե դրանք դույզն – իսկ չափով համապատասխանեին իրականությանը:

Գագիկ Արծրունու պառակտիչ գործունեությանը պատմական ու բարոյական արդարացում տալու միտումով Արծրունի պատմիչները ջանք չեն ինսայել իրենց տոհմի առավելություններն ու բարեմասնությունները՝ առաքինություն, սրբակենցաղություն և ավետարանական ուսմունքին հավատարմություն, թմբկահարելու համար: Նրանց կարծիքով, Արծրունյաց թագավորության հռչակումը նախասահմանված է եղել ի վերուստ, քանզի Արծրունյաց բարձրագահ, մեծատուն տոհմը սերում էր աստվածաշնչյան Դավիթ Մարգարեից և Ասորեստանի Սենեքերիմ թագավորից<sup>2</sup>: Հետևաբար, նաև ի վերուստ՝ նախախնամության կամքով է տեղի ունեցել նրանց թագավորության հռչակումը: Թովման մի փաստ է վկայակոչում այն մասին, որ դեռևս Վարդանանց պատերազմի ժամանակ նախարարները խորհում էին թագավոր հռչակել «ի վերայ Հայոց» Վահան Արծրունի անունով իշխանին: Սակայն իբր անմիաբանության պատճառով նրանք հրաժարվել են այդ մտքից<sup>3</sup>: Բերելով այս օրինակը՝ պատմիչը փորձում է Արծրունիների թվում «թագավորի թեկնածուներ» որոնել նույնիսկ հեռավոր անցյալում: Վերջապես, դարձյալ ըստ Թովմայի, Հայաստանում քրիստոնեություն առաջինն ընդունել է Խուրան անունով Արծրունի իշխանը, որը մկրտվել է Թադեոս առաքյալի կողմից և զգալի ջանքեր գործադրել Հայաստանում քրիստոնեական վարդապետության տարածման համար<sup>4</sup>: Բնականաբար, Քրիստոսը ևս պետք է բարի աչքով նայեր այդ տոհմին և նրա ներկայացուցիչներից մեկին արժանացնել արքայական ծիրանու: Ահա, վերջապես, ներկայացել էր բարեպատեհ առիթը՝ Արծրունյաց ընտանիքում ծնվել էր հրաշագեղ Գագիկ մանուկը, «զի անդստին ի տղայական հասակէն հրաշագարդ

<sup>1</sup> **Յովհաննես Դրասխանակերտցի**, էջ 487:

<sup>2</sup> **Թովմա Արծրունի**, էջ 254, 255:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 117:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 90, 91:

փառաք փայլեր ի մէջ եղբարց իւրոց»<sup>1</sup>: Նա վայելում էր Ամենաբարձրյալի հովանավորությունը. «Եւ Գագիկ իշխանն երթալով երթայր եւ մեծանայր, եւ Տէր ամենակալ էր ընդ նմա»<sup>2</sup>: Նրա թագավոր օձվելը եղել է Աստծո կամքով<sup>3</sup>:

Ջատագովական մոլուցքը պատմիչին ավելի հեռու է տանում, երբ նա գրում է, թե իբր մինչև Գագիկի ծնվելն Աստված արդեն կանխավ գիտեր, որ նա թագավոր է դառնալու և դեռ մոր՝ տիկին Սոփիի որովայնում նրան օժտել է իմաստուն ոգով<sup>4</sup>: Ահա թե ինչու բովանդակ Հայաստան աշխարհը փառաբանում էր նրան և ամենքն աղաղակում էին. «Տէ՛ր, կեցո՛ զթագաւորն եւ լո՛ւր մեզ»<sup>5</sup>: Իրավացի է Մ. Աբեղյանը, որը, այս առնչությամբ շեշտել է. «Սրա նման մի գովք թագավորի շատ չենք գտնիլ մեր հին գրականության մեջ: Դա մի ամբողջ ճառ է և ճառորեն կրկնությամբ հորինված»<sup>6</sup>:

Այս հետևությունների համաձայնապատկերին միանգամայն ակներև է, որ Անանունի երկասիրությունն ընդամենը ճառային, ներբողական, ջատագովական երկի ակնբախ օրինակ է և ոչ թե պատմագիտական հստակ կանոններին ենթակա աշխատանք, որպիսին է Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոցը»:

Այս հետևությունների ետնախորքի վրա միանգամայն ակներև է, որ Անանունի երկասիրությունն ընդամենը ճառային, ներբողական, ջատագովական երկի ակնբախ օրինակ է, այլ ոչ ոչ թե պատմագիտական հստակ կանոններին ենթակա աշխատանք, որպիսին է Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոցը»: Ուստի օրինաչափ է, որ նրա անունը, ի շարս այլ հայտնի հայ պատմիչների՝ Մովսես Խորենացու, Եղիշեի, Կորյունի, Ղազար Փարպեցու, Ագաթանգեղոսի և այլոց, ընդգրկված է «Մեծ պատմաբանները Անտիկ դարաշրջանից մինչև 1800 թ.» ամերիկյան հեղինակավոր հանրագիտարանային հրատարակության մեջ<sup>7</sup>:

#### **Petros Hovhannisyán – Two Directions in the Historiography of X Century**

As a result of political fragmentation peculiar to a feudal society in X century in the Armenia of Bagratunis local, provincial kingdoms were formed the most famous of which was the Kingdom of the Artsrunis of Vaspurakan (908).

The political fragmentation leaves its trace on the ideology of the time and first of all in the field of historiography. Individual authors, condemning the phenomena of fragmentation, advocate the idea of centralized, strong statehood (Hovhannes Draskhanakerttsi), and some authors try to substantiate and justify the process of organizing provincial kingdoms (Tovma Artsruni, Anonymus Artsruni).

The ideological tendencies of the given directions are discussed in the article.

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 269:

<sup>2</sup> **Անանուն**, էջ 277:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 270-271:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 294:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 295:

<sup>6</sup> **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 502:

<sup>7</sup> **Maksoudian K. H.**, *Yohannes Draxanakerce'i, Great Historians from Antiquity to 1800. An International Dictionary*, Lucian Boia, Editor-in Chief, New York, Westport, Connecticut, London, 1989, p. 19.



ՀՊԱԿԱՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ  
ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

*Բանայի բառեր – հպականների քառաշարք և եռաշարք համակարգեր, կատկայինների տեսություն, ընդհանուր հնդեվրոպական լեզու, ձայնեղների/չնչեղ ձայնեղների կարգ, խուլերի/չնչեղ խուլերի կարգ*

Հնդեվրոպական համեմատական լեզվաբանության շուրջ երկուհարյուրամյա պատմության ընթացքում արձանագրվել են շրջադարձային նշանակության բացահայտումներ, որոնք էապես խթանել են հնդեվրոպական լեզվաբանության ընթացքը՝ նրա համար կանխորոշելով տասնամյակների զարգացման նոր հուն: Այդպիսի առաջին բացահայտումը գերմանական «բաղաձայնների տեղաշարժի» մասին դրույթի ձևակերպումն էր Յ. Գրիմի կողմից, որն ստացել է «Գրիմի օրենք» անվանումը<sup>1</sup>: Ընդհանուր հնդեվրոպական նշանակություն են ունեցել

- ✓ «հնչյունական օրենքի» ըմբռնումը, որը ձևակերպեցին երիտքերականները,
- ✓ հ.-ե. նախալեզվում կոկորդային հնչյունների գոյության կանխադրումը («կոկորդայինների տեսություն»/«ларингальная теория») Ֆ. դը Սոսյուրի կողմից դեռևս իր գիտական գործունեության նախաշեմին («Նկատառումներ հնդեվրոպական լեզուներում ձայնավորների նախնական համակարգի մասին»/«Mémoire sur le système primitif de voyelles dans les langues indo-eropéennes», 1879), որն իր ամբողջացնող ձևակերպումն ստացավ շուրջ հիսուն տարի անց՝ 1927 թ., Ե. Կուրիլովի կողմից՝ խեթերենի նյութի հիման վրա,
- ✓ թռխարական և խեթա-լուվական լեզուների հ.-ե. բնույթի հաստատումը XX դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում և այլն:

---

<sup>1</sup> Գերմանական լեզուներում «բաղաձայնական տեղաշարժերի» մասին առաջին դիտարկումները հանդիպում են Ռ. Ռասկի «Հին հյուսիսային կամ իսլանդերեն լեզվի ծագման ուսումնասիրություններ» (1818) աշխատության մեջ, որին Յ. Գրիմը ծանոթացել էր, «երբ ավարտել էր իր «Քերականության» առաջին հատորի նախապատրաստումը հրատարակության» (1819), բայց դրանք միայն առանձին դիտարկումներ էին, որոնք բավարար չեն «Ռասկի միասնական և ամբողջական օրենքի մասին խոսելու» համար (տե՛ս **Прокош Э.**, Сравнительная грамматика германских языков, М., 1954, с. 38): Ըստ Պոռկոշի՝ «Գրիմի ծառայությունն այն է, որ նա սահմանեց տեղաշարժի տարբեր գործընթացների միջև գոյություն ունեցող ներքին կապը: Նա առաջինը կարողացավ միասնական օրենքի մասին թե՛ գ առաջադրել, որը միավորում է տեղաշարժի բոլոր փուլերը» (նույն տեղում):

Որոշ բացահայտումներ վերաբերում էին առանձին լեզվաճյուղերի կամ լեզուների, ինչպես, օրինակ,

- ✓ Ն. Հյուբշմանի կողմից հ.-ե. լեզվաընտանիքում հայերենի տեղի ճշտումը (1875),
- ✓ Վեռների օրենքը (1877), ըստ որի՝ գերմանական «բաղաձայնների առաջին տեղաշարժով» (Գրիմի օրենք) ընդհանուր գերմանականում առաջացած  $f(<*p)$ ,  $p(<*t)$ ,  $h(<*k)$ ,  $s(<*z)$  խուլ շփականները ձայնեղների միջավայրում ձայնեղանում են (հմմտ.  $f>b$ ,  $p>ð$ ,  $h>ʒ$ ,  $s>z(>r)$ ),
- ✓ գերմանական բաղաձայնների երկրորդ կամ «վերին գերմանական» տեղաշարժի բնորոշումը որպես հնչյունափոխական նեղ գերմանական ոչ բոլոր լեզուներն ընդգրկող երևույթ,
- ✓ Բարթոլոմեի օրենքը հնդ-իրանական լեզուներում ընդհանուր արիական \*p, \*t, \*k շնչեղ խուլերի՝ նախորդող \*b, \*d, \*g շնչեղ ձայնեղներին նմանվելու մասին (1885) և այլն:

Ինչպես նշված, այնպես էլ այդ շրջանի մյուս բոլոր հայտնագործություններն արվել են պատմահամեմատական մեթոդով կատարված հետազոտությունների հիման վրա: Միաժամանակ, յուրաքանչյուր նոր բացահայտում հերքել կամ հարցականի տակ է դրել մինչ այդ շրջանառվող, ավելին՝ ամրագրված առանձին տեսակետներ ու գաղափարներ, որոնցից էին, օրինակ, հ.-ե. լեզուների երկու մեծ խմբերի՝ centum (արևմտյան) և satəm (արևելյան) տարբերակման դրույթը կամ ձայնեղ հպական \*b-ի (ոմանց կարծիքով էլ՝ խուլ հպական \*p-ի) վերականգնման հավաստիությունը:

Համեմատական հնդեվրոպաբանության մեջ այդպիսի նոր որակական փուլի սկիզբը ազդանշանեցին Թ. Վ. Գամկրելիձեի և Վ. Վ. Իվանովի «Լեզվաբանական տիպաբանությունը և հնդեվրոպական հպականների համակարգի վերականգնումը»<sup>1</sup> զեկուցումը և Պ. Ջ. Հոպերի «Կատկայնացած և շնչային հպականները հնդեվրոպական լեզվում» հոդվածը<sup>2</sup>, որոնց *հիմնական նորույթը ավանդական հնդեվրոպաբանության կողմից նախալեզվի համար առաջարկվող պարզ ձայնեղների (\*b, \*d, \*g) փոխարինումն էր կատկայնացած խուլերով (\*p, \*t, \*k)*: Այս գաղափարը խորքի մեջ հեղափոխական էր, որովհետև արմատական փոփոխություն էր առաջարկում նախալեզվի ոչ միայն հնչույթային, այլև ձևահնչույթաբանական և ձևաբանական համակարգերում, հետևաբար առհասարակ վերանայում էր հ.-ե. նախալեզվի մասին ավանդական պատկերացումը: Այդ տեսությունը, որն ստացավ «կատկայինների տեսություն» («глоттальная теория») անվանումը, ուղղակիորեն հարվածում էր ավանդական հնդեվրոպաբանության հիմքերին, որովհետև

<sup>1</sup> St' u Гамкредидзе Т. В., Иванов В. В., Лингвистическая типология и реконструкция системы индоевропейских смычных. Предварительные материалы. («Конференция по сравнительно-исторической грамматике индоевропейских языков» [12-14 декабря]. М., 1972, с. 15-18):

<sup>2</sup> St' u Hopper Paul J., Glottalized and murmured occlusives in Indo-European, Glossa, 7.2, 1973, pp. 96-134:

նրա ընդունումը նշանակում էր. ա) հրաժարում հ.-ե. նախալեզուն հնդկահունա-լատինական կադապարով վերականգնելու պրակտիկայից, որպիսի ուղղվածություն հ.-ե. համեմատական լեզվաբանությունն ուներ սկզբնավորման պահից ի վեր, բ) «Գրիմի օրենք» կոչվող երևույթի, հետևաբար՝ գերմանական «բաղաձայնների տեղաշարժերի» մասին դրույթի մերժում և դրա օրինակով նաև հայկական «բաղաձայնական տեղաշարժերի» դրույթի վերանայում, գ) հ.-ե. նախաձևերի վերականգնման հարցում հայերենի, գերմանական, իտալա-լուսիական և թոխարական լեզուների տվյալների կարևորում, որովհետև «կատկայինների տեսությունը» առաջին հերթին հենվում է այդ լեզուների ընձեռած նյութի վրա:

«Կատկայինների տեսության»<sup>1</sup> Թ. Վ. Գամկրելիձեի և Վ. Վ. Իվանովի առաջարկած տարբերակն ամբողջական տեսք ստացավ ավելի ուշ հրատարակված «Ընդհանուր հնդեվրոպական լեզվի հպականների համակարգի վերականգնումը: «Կատկայնացած հպականները հնդեվրոպականում» հոդվածում և հատկապես «Հնդեվրոպական լեզուն և հնդեվրոպացիները» հիմնարար աշխատության մեջ<sup>2</sup>:

«Կատկայինների տեսության» Թ. Գամկրելիձեի, Վ. Իվանովի և Պ. Հոպերի վերականգնումներն ունեն հետևյալ տեսքը.

Հ.-ե. հպականների համակարգն ըստ Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի			Հ.-ե. հպականների համակարգն ըստ Պ. Հոպերի		
I	II	III	I	II	III
(p')	b <sup>h</sup> /b	p <sup>h</sup> /p	(p')	bh	p
t'	d <sup>h</sup> /d	t <sup>h</sup> /t	t'	dh	t
K'	G <sup>h</sup> /G	K <sup>h</sup> /K <sup>2</sup>	k'	gh	k <sup>3</sup>

Այս երկու աղյուսակների համեմատությունից երևում է, որ, ընդհանուր լինելով հիմնական սկզբունքի՝ «կատկայնացած» բաղաձայնների շարքի ճանաչման հարցում, հեղինակների պատկերացումներն ունենին նաև տարբերություններ: Մասնավորապես, Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի հարացույցում խուլերի շարքը ներկայացված է շնչեղ/պարզ (իմա՝ ուժեղ/թույլ) հա-

<sup>1</sup> St' u Գамкредидзе Т. В., Иванов Вяч. В., Реконструкция системы смычных общеиндоевропейского языка. Глоттализованные смычные в индоевропейском, Вопросы языкознания (шпунհետև՝ ВЯ), 1980, N 4, с. 21-35; *նյնի*՝ Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, т. I, 1984, с. 5-17:

<sup>2</sup> St' u Նոյն տեղում, էջ 16:

<sup>3</sup> St' u Գамкредидзе Т. В., Иванов Вяч. Вс., Индоевропейский язык и индоевропейцы, т. I, с. 15; Хопер П. Дж., Типология праиндоевропейского набора сегментов, Новое в зарубежной лингвистике (шпунհետև՝ НЗЛ), вып. XXI, М., 1988, с. 169; *նյնի*՝ Языки “decem” и “taihun”: индоевропейская изоглосса, նոյն տեղում, էջ 173: Շարքերի համամասնությունը պահպանելու համար բաց ենթ թողնում նաև Հոպերի հարացույցում ներկայացված շրթնահետաքննարկայինների շարքը:

մակցային տարբերակով<sup>1</sup>, իսկ Պ. Հոպերի հարացույցում այն ներկայացված է միայն պարզերի (թույլերի /tenues) տարբերակով:

Հիմք ընդունելով հ.-ե. հպականների՝ ըստ «կատկայինների տեսության» վերամեկնաբանված իրենց հարացույցը՝ Թ. Գամկրելիձեն հին հայերենի հպականների համակարգից՝ ա) դուրս է մղում պարզ խուլերի շարքը (p, t, k), բ) ավանդական ձայնեղների շարքը ներկայացնում է *շնչեղ ձայնեղ/ձայնեղ* (bh/b, dh/d, gh/g) կադապարով՝ որպես նախալեզվի նույնաբնույթ շարքից ուղղակիորեն սերված, որը նշանակում է, որ այդ (II) շարքի հնչույթն ունեցել է երկբնույթ հնչյունական իրացում՝ պարզ (կամ թույլ) և շնչեղացած, գ) ձայնեղների ավանդական շարքի փոխարեն առաջարկում է կատկայինների շարքը ((p[ʔ]), t[ʔ], k[ʔ]), դ) շնչեղ խուլերի շարքը համարում է հ.-ե. շնչեղ խուլ/խուլ (III) շարքից սերված<sup>2</sup>:

Հպական բաղաձայնների՝ ավանդական հնդեվրոպաբանության կողմից վերականգնվող համակարգը վերանայելու գաղափարն ունեցել է բազմաթիվ կողմնակիցներ (Օ. Ս. Շիրոկով, Յ. Ռասմուսեն, Ա. Օդրիկուր, Ժ. Օդրի, Ֆ. Կորտլանդ և ուրիշներ). սա նշանակում է, որ հնդեվրոպական բաղաձայնների, մասնավորապես՝ հպականների ավանդական (իմա՝ երիտքերականական) վերականգնումը վերանայելու միտքը միայն առանձին գիտնականների «քմահաճույքը» չէր: Ավելին, այդ միտքը չի ծնվել միանգամից, այն ունեցել է նախապատրաստական փուլ՝ ի դեմս ավանդական հնդեվրոպաբանության մեջ հաճախակի հնչող բարեփոխական առաջարկների: Դրան նպաստեց մի կողմից՝ կառուցվածքային հնչույթաբանության, մյուս կողմից՝ տիպաբանության սկզբունքների ու մեթոդների փոխադրումը համեմատաբանական ուսումնասիրությունների ոլորտ: Այս կարգի առաջին դիտարկումներից մեկը հեղինակել է XX դարի I կեսի ֆրանսիացի նշանավոր լեզվաբան Ա. Մարտինեն իր «Խնայողության սկզբունքը հնչյունական փոփոխություններում» աշխատության մեջ: Այստեղ նա մասնավորապես կասկածներ է հայտնում շրթնային \*b-ի վերականգնման առնչությամբ. «Լուրջ հիմքեր կան կասկածելու այն բանին, որ հնդեվրոպական լեզվի զարգացման հին փուլերում գոյություն է ունեցել հնչույթ, որը սովորաբար վերականգնվում է որպես \*b: Որքանով որ այդ հնչույթը գտնվում է \*d, \*g, \*g<sup>w</sup> կարգի և p, b<sup>h</sup> շրթնային շարքի հատման կետում (ընդ որում՝ այդ կարգի և այդ շարքի գոյությունը արժանահավատորեն վերականգնված է), պիտի ենթադրել դատարկ վանդակի առկայությունն համակարգում»<sup>3</sup>: Իսկ մինչ այդ նմանօրինակ կարծիք էր հայտնել

<sup>1</sup> Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի հարացույցում G<sup>b</sup>/G, K<sup>b</sup>/K-ն խորհրդանշում են ընդհանրապես հետնալեզվայինների (հետնաքմային, քմային, շրթնահետնաքմային) կարգը (տե՛ս Գամկրելիձե Թ. Վ., Իվանով Վյաչ. Վ., նշվ. աշխ., էջ 13 (տղտղ. 1)):

<sup>2</sup> Տե՛ս Գամկրելիձե Թ. Վ., Индоевропейская “глоттальная теория” и система древнеармянского консонантизма, Միջազգային հայերենագիտական գիտաժողով, Երևան, 1984, էջ 33:

<sup>3</sup> Մարտինե Ա., Принцип экономии в фонетических изменениях, М., 1960, с. 123-124. Հմմտ. Martinet A., Économie des changements phonétiques. Traité de phonologie diachronique, Bern, 1955:

դանիացի ակնավոր հնդեվրոպաբան Հ. Պեդերսընը<sup>1</sup>, որը, լինելով *դասական հնդեվրոպական լեզվաբանության*<sup>2</sup> ներկայացուցիչներից, շատ հարցերում հակադրվել է այդ փուլի համեմատաբանության մեջ իշխող գաղափարների: Ըստ ամենայնի, սխալված չենք լինի, եթե ասենք, որ Հ. Պեդերսընը *համեմատական հնդեվրոպաբանության հետդասական փուլը նախապատրաստող լեզվաբաններից էր*: Հնդեվրոպական հպականների վերականգնման ավանդական համակարգը վերանայելու վճռական ազդակ եղավ 1957 թ. Ռ. Յակոբսոնի կողմից «Տիպաբանական ուսումնասիրությունները և նրանց ներդրումը պատմահամեմատական լեզվաբանության մեջ» գեկուցումում ձևակերպված լեզվական ընդհանրությո՞ր, ըստ որի՝ *գոյություն ունեցող և ոչ մի լեզվում չի նկատվել դեպք, որ լինի շնչեղ ձայնեղների շարք, առանց համապատասխան խուլերի առկայության* (հմմտ. «Որքանով ինձ հայտնի է, չկա ոչ մի լեզու, որտեղ /t/-/d/ գույզին ավելանար շնչեղ ձայնեղ /d<sup>h</sup>/, բայց բացակայեր նրա խուլ /t<sup>h</sup>/ համապատասխանը, մինչդեռ /t/, /d/ և /t<sup>h</sup>/-ն հաճախ են հանդիպում, առանց համեմատաբար հազվադեպ հանդիպող /d<sup>h</sup>-ի...»<sup>3</sup>): Այսօրինակ բարեփոխական առաջարկներն ավանդական պատկերացումների կրողներից ոմանք փորձեցին հակակշռել նախալեզվում հպականների չորրորդ՝ շնչեղ խուլերի շարքի ընդունումով՝ փաստորեն վերադառնալով հպականների վերականգնման երիտքերականական կադապարին, բայց քիչ չեն նաև եռաշարք հայեցակարգին հետևողները<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., նշվ. աշխ., էջ 6:

<sup>2</sup> Այս բնորոշմամբ նկատի ունենք 1870-1950-ական թթ. ընկած մոտ ութսունամյա ժամանակահատվածը, այսինքն՝ երիտքերականների գործունեության և դրան հաջորդող շուրջ երեսնամյա շրջանը, որը հնդեվրոպական համեմատական լեզվաբանության մեջ հատկանշվում է մի կողմից գաղափարների ու սկզբունքների բյուրեղացմամբ, իսկ մյուս կողմից՝ նոր որոնումների անսխաղեպ ակտիվությամբ՝ պայմանավորված հատկապես թոխարական և իեթա-լուվական լեզուների հ.-ե. բնույթի հաստատումով:

<sup>3</sup> Якобсон Р., Типологические исследования и их вклад в сравнительно-историческое языкознание, Новое в лингвистике (այսուհետև՝ НЛ), вып. III, М., 1963, с. 103. Ռ. Յակոբսոնի այս գեկուցումը («Typological studies and their contribution to historical comparative linguistics») տպագրվել է Օսլոյում հրատարակված «Proceedings of the Eighth international congress of linguists» ժողովածուում 1958 թ.:

<sup>4</sup> Հ.-ե. հպականների չորս շարք է վերականգնում, օրինակ, Օ. Սեմերենյին (տե՛ս Семереньи О., Введение в сравнительное языкознание, М., 1980, с. 65-83. Այս գրքի առաջին՝ գերմաներեն տարբերակը լույս է տեսել 1970 թ.): Օ. Սեմերենյիցից դեռևս մի քանի տասնամյակ առաջ Ա. Մեյեն, ընդհանուր հնդեվրոպական լեզվի համար վերականգնելով հպականների երեք շարք՝ ձայնեղ, շնչեղ ձայնեղ, պարզ խուլ հակադրությամբ, չորրորդ՝ շնչեղ խուլերի շարք է վերականգնում «երթե ոչ ողջ հնդեվրոպականի համար ամբողջությամբ, ապա բոլոր դեպքերում հնդ-իրանական, հայերեն և հունարեն լեզուներով ներկայացված շրջանի համար»՝ հիմք ընդունելով այդ լեզուներում առկա տվյալները (հմմտ. Мейе А., Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1938, с. 116-117): Ուշագրավ է նաև Ա. Մեյեի դիտարկումը \*b-ի «համեմատաբար հազվադեպ» հանդիպելու մասին. «.....այն չի հանդիպում ոչ մի կարևոր ածանցում և ոչ մի վերջավորության մեջ. այն երկրորդային ծագում ունի բառերի մի մասում, որոնցում հանդիպում է» (նույն տեղում, էջ 115): Հպականների քառաշարք համա-

Հ.-ե. հպական բաղաձայնների ավանդական համակարգի վերանայման կողմնակիցների հիմնավորումներն ընդհանուր առմամբ նույնն են: Ինչպես արդեն նշվել է, դրանք հիմնված են կառուցվածքաբանական և տիպաբանական մոտեցումների վրա: Պ. Հոպերն այդ մոտեցումներին ավելացնում է նաև երկու հնչույթաբանական ընդհանրույթ. 1) *երկու կատկայնացած հնչույթ չեն կարող հանդիպել մեկ արմատի մեջ*, 2) *միևնույն արմատի մեջ չեն կարող հանդիպել խուլ հպականը (tenuis) և շնչեղ ձայնեղը (media aspirata)*. «...երրորդ սահմանափակումը բխում է առաջինից՝ որպես *երկու չկատկայնացած բաղաձայնների ըստ ձայնեղության առնմանության* հետևանք»<sup>1</sup>:

Դասական հնդեվրոպաբանության սկզբունքների հետևորդները, չանտեսելով տիպաբանական և կառուցվածքային սկզբունքների կիրառման արդյունավետությունը, այնուամենայնիվ արտահայտվել են դրանց գերազնահատման դեմ, և կարծում ենք՝ ոչ անտեղի: Այդպիսի տեսակետներից մեկի համաձայն՝ «...տիպաբանական փաստարկներն ամենակարևորները չեն վերականգնման մեջ: Վերականգնումը պիտի հենվի ամենից առաջ իր սեփական նյութի վրա»<sup>2</sup>: Իսկ մինչ այդ մատնանշվել էին «կատկայինների տեսության» այլ խոցելի կողմեր ևս: Մասնավորապես՝ ա) հ.-ե. և ոչ մի լեզվում չկան կատկայնացած բաղաձայններ, հետևաբար չկա կատկայինների և ոչ կատկայինների հակադրություն, «հայերենի որոշ բարբառներում խուլ հպականների կատկայնացումը ակնհայտորեն երկրորդային բնույթ ունի. վրացերենի ազդեցություն է»<sup>3</sup>, բ) ոչ լիովին են պարզաբանվում այդ համակարգից հնդեվրոպականին անցման պայմանները, գ) թեպետև \*b հնչույթը բառասկզբում հազվադեպ է հանդիպում, սակայն բառամիջում այն հաճախ է հանդիպում, ուստի ճիշտ չէ \*b-ի գոյության բացառումը<sup>4</sup>:

---

կարգ են ընդունել նաև Թ. Բարրուն (հմմտ. Барроу Т., Санскрит, М., 1976, с. 66) և Գ. Ջահուկյանը (հմմտ. Джаукян Г. Б., Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, с. 51; նույնի՝ Сравнительная грамматика армянского языка, Ереван, 1982, с. 21; նույնի՝ Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 37): Ընդհանուր հնդեվրոպականում հպականների երեք (\*t, \*d, \*dh) շարք են կանխադրում Ա. Սավչենկոն՝ «առավել հավանական համարելով այն դրույթը, որ շնչեղ խուլերը կազմվել են միայն հնդեվրոպական բարբառների մի խմբում՝ կապված «կոկորդայինի» անկման հետ» (հմմտ. Савченко А. Н., Сравнительная грамматика индоевропейских языков, М., 1974, с. 69), և Է. Մակևը, ըստ որի՝ «շնչեղ խուլերի շարքը բացակայել է ընդհանուր հնդեվրոպականում և ուշ ծագման տարածաշրջանային նորակազմություն է» (տե՛ս Макаев Э. А., Передвижение согласных в армянском языке, ВЯ, 1961, N 6, с. 25):

<sup>1</sup> St և Хоппер П. Дж., նշվ. աշխ., էջ 174:

<sup>2</sup> Красухин К. Г., Введение в индоевропейское языкознание, М., 2004, с. 61: Ըստ էության, նմանատիպ մոտեցում ունի նաև Ժ. Օդրին (հմմտ. «Տիպաբանությունը պիտի կիրառել վերականգնման մեջ, բայց բավարար հիմնավորումով, և չպահանջել նրանից այն, ինչը նա չի կարող տալ...»): Одри Ж., Типология и реконструкция, НЗЛ, вып. XXI, с. 190):

<sup>3</sup> Джаукян Г. Б., Сравнительная грамматика армянского языка, с. 22.

<sup>4</sup> St և նույն տեղում:

Տիպաբանությունը փորձում է բացահայտել լեզուների միջև առկա կառուցվածքային ընդհանրությունները և վերջին հաշվով հիմնվում է լեզվական ընդհանրությունների վրա: Տիպաբանական ուսումնասիրությունների փորձը ցույց է տալիս, որ այդ ոլորտի բացահայտումները ոչ միշտ ունեն բացարձակ բնույթ<sup>1</sup>: Տիպաբանական գուգահեռները մեծացնում են առաջադրվող դրույթի հավանականությունը, բայց նրան բացարձակ բնույթ չեն հաղորդում: Առավել ևս, եթե խոսքը մեզանից հազարամյակներ առաջ եղած մի լեզվավիճակի մասին է, որին վերաբերող յուրաքանչյուր տեսակետ նոր բացահայտումների լույսի ներքո միշտ կարող է փոխվել: Ռ. Յակոբսոնի վերոհիշյալ տիպաբանական բացահայտումը, որի հիմքում գործառական և երկատոմային հնչույթաբանությունների համադրական կադապարն է<sup>2</sup>, անշուշտ, քայլ առաջ էր նախորդ դարի կետերի համեմատական լեզվաբանության ընդհանուր հենքի վրա, բայց այն նույնպես ոչ միայն չի տալիս բոլոր հարցերի պատասխանը, այլև երբեմն ավելի է դժվարացնում դրանց որոնումը: Այսպես, եթե, մի կողմից, այն հաստատում է հ.-ե. նախալեզվում «կոկորդային բաղաձայնների» (մասնավորապես *h*-ի տեսքով) գոյության վարկածը<sup>3</sup>, ապա, մյուս կողմից, դուռ է բացում մերժողական գաղափարների համար, ինչպիսին էր, օրինակ, *լեզվաբնտանիքի՝ որպես լեզվական ընդհանուր հիմքից սերված լեզուների ամբողջության*՝ ավանդական հնդեվրոպաբանության մեջ ընդունված դրույթի մերժումը ոմանց կողմից: Լեզվաբնտանիքի ավանդական (բայց ոչ շլայխերյան ուղղագիծ պատկերացումով) ըմբռնման դեմ հետևողականորեն հանդես են եկել իտալական նեոլինգվիստիկայի ներկայացուցիչները, օրինակ՝ Վ. Պիզանին (հմմտ. «...համեմատական հնդեվրոպական լեզվաբանությունը լիարժեք գոյության իրավունք կունենա միայն այն դեպքում, եթե այն սահմանափակվի երևույթների համեմատությամբ ու «նախաերևույթների» («*появлениям*») և ոչ թե «նախալեզուների» վերականգնումով՝ խիստ միակերպ լեզվական համակարգերի իմաստով<sup>4</sup>: Իհարկե, հետշլայխերյան հնդեվրոպական լեզվաբանության մեջ թերևս ոչ ոքի մտքով չի անցել, որ հնարավոր է վերականգնել հ.-ե. նախալեզուն՝ որպես երբեմնի լեզվական իրողություն, որով հնարավոր է հաղորդակցվել թեկուզև այնպես, ինչպես, օրինակ, լատիներենով: Հ.-ե. նախալեզվի հնարավոր վերականգնումը իրատեսական չի համարել նաև Ա. Մեյեն (հմմտ. «Լեզուների որևէ

<sup>1</sup> Ռ. Յակոբսոնի կողմից առաջարկված մի քանի հնչույթաբանական ընդհանրություններից բացառությունների մասին տե՛ս **Хоккетт Ч. Ф.**, Проблема языковых универсалий, НЛ, вып. V, М., 1970, с. 72-73:

<sup>2</sup> Տե՛ս **Якобсон Р., Фант Г. М. и Халле М.**, Введение в анализ речи. Различительные признаки и их корреляты, Новое в лингвистике (սլայխեսուն՝ НЛ), вып. II, М., с. 173-230; **Якобсон Р. и Халле М.**, Фонология и ее отношение к фонетике, նույն տեղում, էջ 231-278:

<sup>3</sup> Տե՛ս **Иванов Вяч. В.**, Типология и сравнительно-историческое языкознание, ВЯ, 1958, N 5, с. 37:

<sup>4</sup> Տե՛ս **Пизани В.**, К индоевропейской проблеме, ВЯ, 1966, N 4, с. 10:

խմբի համեմատական քերականության խնդիրը այդ լեզուներով ներկայացված համապատասխանությունների ուսումնասիրությունն է»<sup>1</sup>), բայց նա, այնուամենայնիվ, լեզվաընտանիքի ավանդական պատկերացման կրող է<sup>2</sup>: Լեզվաընտանիքի, ավելի շուտ՝ «լեզվական ընդհանրության» մասին Պիզանիի պատկերացումից մինչև Ն. Ս. Տրուբեցկոյի առաջ քաշած «լեզվամիություն» վարկածը մի քայլ է<sup>3</sup>:

Նկատի ունենալով այն մեծ կարևորությունը, որ համեմատական հնդեվրոպաբանության մեջ ի սկզբանե տրվել է հպական բաղաձայնների բնույթի որոշմանը, չափազանցություն չի լինի ասել, որ այդ հիմնահարցը վերածվել է համեմատական լեզվաբանության յուրօրինակ փորձաքարի: Նախալեզվում հպական բաղաձայնների շարքերի թվի և տեսակների ճշտումը, ինչպես ցույց է տալիս համեմատաբանական ուսմունքների պատմությունը, կարող է արմատապես վերափոխել ոչ միայն հ. -ե. նախալեզվի, այլև՝ հ. -ե. լեզվաընտանիքում առաջին բարբառների կատարած դերի մասին մեր պատկերացումները: Ըստ էության, այդպիսի հայտ է ներկայացրել «կատկայինների տեսությունը», որի առաջադրումից մոտ տասը տարի անց Պ. Հոպերը գրել է. «...կատկայինների տեսությունը պատմականորեն գտնվում է զարգացման այն աստիճանում, որում գտնվում էր կոկորդայինների տեսությունը Ֆ. դը Սոսյուրի «Նկատառումներ հնդեվրոպական լեզուներում ձայնավորների նախնական համակարգի մասին» հրապարակումից անմիջապես հետո. առաջադրվելով և հիմնավորված լինելով ամենից առաջ կառուցվածքային և տեսական հիմքերի վրա, այն այժմ պիտի մտնի որոշակի դրույթների որոնման փուլ»<sup>4</sup>: Պիտի ասել, որ այդ տեսությունը, հատկապես Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի առաջարկած տարբերակով, հնդեվրոպական հնչույթային համակարգի մասին երբևէ մշակված ամբողջական և ինքնատիպ հայեցակարգերից է: Սակայն, ինչպես տեսանք, այն նույնպես միանշանակ չի ընդունվում արդի հնդեվրոպաբանության մեջ: Ավանդական հնդեվրոպաբանության հետևորդներից բացի, այդ տեսության դեմ առարկություններ է ներկայացնում նաև «բնական լեզվաբանությունը»<sup>5</sup>:

«Կատկայինների տեսությունը» առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես հետևյալ առումներով. 1) վերանայում է հ. -ե. նախալեզվի նկարագրի համար ավանդական հնդեվրոպաբանության կողմից հիմնական դիտված լեզուների (հին հնդկերեն, հին հունարեն, լատիներեն) ցանկը՝ դրանք փոխարինելով հայերեն, գերմանական, իսթա-լուվական և թոխարական լեզուներով, այլ կերպ ասած՝ վերջին լեզուներին նախկին՝ «եզ-

<sup>1</sup> Տե՛ս **Мейе А.**, նշվ. աշխ., էջ 48:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 50:

<sup>3</sup> Տե՛ս **Трубецкой Н. С.**, Мысли об индоевропейской проблеме, Избранные труды по филологии, М., 1987, с. 44-59:

<sup>4</sup> **Хоппер П. Дж.**, նշվ. աշխ., էջ 178:

<sup>5</sup> Տե՛ս **Գաբրիելյան Յու.**, Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, Երևան, 2001:



րային» կարգավիճակի փոխարեն տրվում է առաջնային նշանակություն, 2) հ.-ե. նախահայրենիքի տեղադրությունը Եվրոպայից տեղափոխում է Ասիա (ի նպաստ այդ տեսակետի վկայում են նաև նոստրատիկ լեզվաբանության տվյալները, որոնք հ.-ե. լեզվաբնտանիքը դիտարկում են Առաջավոր Ասիային հարակից տարածաշրջաններում տեղակայված ոչ հ.-ե. լեզուների՝ սեմականի, իբերա-կովկասյանի, թյուրքականի ևն հետ հնարավոր առնչությունների տիրություն), 3) վերանայման է ենթարկում գերմանական և հայկական «բաղաձայնական տեղաշարժերի» հարցը, ավելի ճիշտ՝ մերժում է այդպիսի տեղաշարժերի հնարավորությունը:

Ասվածից պարզ է դառնում, որ հպական բաղաձայնների բնույթի որոշման հարցն ընդհանուր հնդեվրոպական նշանակություն ունի: Հպականներին վերագրվող համակարգային նկարագրով պայմանավորված՝ կարող են վերանայվել ոչ միայն առանձին տեսակետներ, այլև համեմատական հնդեվրոպաբանության հիմնարար դրույթներ, իսկ դրա հետևանքով կարող է հիմնովին փոխվել մեր պատկերացումը ինչպես հ.-ե. նախալեզվի, այնպես էլ ընդհանրապես հ.-ե. լեզվաբնտանիքի մասին: Կարծում ենք՝ ինչպես առհասարակ լեզվական վերականգնումների դեպքում, այնպես էլ հպականների վերականգնման դեպքում պետք է նկատի առնվեն հետևյալ իրողությունները:

1) *Լեզվաբնտանիք* և *լեզվամիություն* հասկացությունները մեկը մյուսին չեն բացառում, ինչպես երբեմն դա ներկայացվում է համեմատաբանական ուսումնասիրություններում<sup>1</sup>: Ճիշտ է, լեզուների պատմության մեջ եղել են դեպքեր, երբ լեզվական փոխադրությունների հետևանքով լեզուներից մեկը հեռացել է իր ծագումնաբանական ակունքներից և ձեռք է բերել այլ լեզվահամակարգին բնորոշ գծեր, այսինքն՝ լեզվական նոր նկարագիր է առաջացել զուգամիտման (կոնվերգենտ) ճանապարհով, սակայն օրինաչափական է լեզուների ու բարբառների առաջացումը տարամետ (դիվերգենտ) զարգացման ճանապարհով: Հետևաբար ծագումնաբանական ակնհայտ ընդհանրությունների դեպքում (որոնք, ի դեպ, առկա են ինչպես լավ ուսումնասիրված հնդեվրոպական, այնպես այլ լեզվաբնտանիքների պարագայում), ավելի տրամաբանական է նոր լեզուների առաջացման համար ենթադրել տարամետ, այսինքն՝ տրոհման ուղին, քան զուգամետ, այն է՝ միավորման ուղին: Սրանից հետևում է, որ շատ հեռավոր մի ժամանակաշրջանում՝ մեզանից հազարամյակներ առաջ (ըստ Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի՝ մ. թ.

---

<sup>1</sup> Տե՛ս **Пизани В.**, նշվ. աշխ.: չմտ. նաև. «Այն, ինչը մենք անվանում ենք «հնդեվրոպական լեզու», մի կողմից կարող էր գոյություն ունենալ միայն որպես մեկը մյուսից խիստ տարբեր տարածական բարբառների բազմություն, իսկ մյուս կողմից՝ այդ ձևով պիտի գոյություն ունենար շատ երկար ժամանակ, որի ընթացքում լեզվում տեղի են ունեցել զգալի փոփոխություններ, որոնք ներառել են բարբառների մերթ մի, մերթ մյուս մասը» (տե՛ս **Пизани В.**, *Общее и индоевропейское языкознание*, *Общее и индоевропейское языкознание*, М., 1956, с. 165): Նրա կարծիքով, «ամեն ինչ հանգում է, ըստ էության, բոլոր հնդեվրոպական լեզուները ներառող զուգաբանությունների շարքը ճշտելուն» (նույն տեղում, էջ 166):

ա. IV հազարամյակում), այնուամենայնիվ եղել է մի լեզվավիճակ, որից պարբերական և երկարատև տրոհումների հետևանքով առաջացել են հ.-ե. առաջին բարբառները: Մինչև տրոհումը այդ լեզվավիճակին բնորոշ են եղել զգալի քանակով ընդհանուր լեզվական հատկանիշներ՝ զուգաբանություններ: Այդ լեզվավիճակը կարելի է բնութագրել իբրև *բարբառային տարրերով հազեցած լեզվական հիմք*, որին էլ հնդեվրոպական լեզվաբանության նախահայրերը տվել են *հ.-ե. նախալեզու* անվանումը: Այդպիսի լեզվական հիմքի մերժումը նույնն է, թե ասել՝ երբևէ գոյություն չի ունեցել միասնական հայոց լեզու, այլ եղել են միայն զուգահեռ գործառոց հայերեն բարբառներ:

2) Նախալեզվի՝ *որպես երբեմնի գոյություն ունեցած լեզվական իրողության* դրույթի ընդունումը ենթադրում է նաև *նախածողովրդի* և *նախահայրենիքի* դրույթների ընդունում, որքան էլ որ այդ հասկացությունների շուրջ գիտնականների պատկերացումները շատ տարբեր լինեն: Կարծում ենք՝ նախահայրենիքի տեղադրության հարցում առավել համոզիչ են Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի փաստարկները, ըստ որոնց՝ հ.-ե. նախահայրենիքը եղել է Մերձավոր արևելքում՝ Բալկաններից մինչև Թուրքեստան ընկած տարածքում<sup>1</sup>: Ավելի վաղ այդպիսի տեսակետ առաջադրել էր Գ. Ջահուկյանը<sup>2</sup>:

3) Նախալեզվական վիճակը վերականգնելիս հ.-ե. առաջին բարբառներում (=լեզուներում) դիտարկվող տվյալները պետք է հաշվի առնվեն *հավասարապես*, և ոչ թե, այս կամ այն կանխադրությից ելնելով, նախապատվությունը տրվի դրանցից մի քանիսին, ինչպես սովորաբար արվել է թե՛ ավանդական և թե՛ «կատկայինների» կամ այլ տեսություններում<sup>3</sup>: Որքան էլ տրամաբանորեն ընդունելի լինի նախալեզվական վիճակը վերականգնելիս առաջնահերթությունը նախահայրենիքում և նրան մերձ տարածքներում խոսվող լեզուներին տալու դրույթը, չպետք է բացառել, սակայն, որ այդ լեզուները, հազարամյակների ընթացքում շփվելով ոչ ցեղակից լեզուների հետ, կարող էին ենթարկվել ենթաշերտային, մակաշերտային և առշերտային փոխներթափանցումների (որոնց հետքերը համեմատական լեզվաբանությունը բավարար չափով բացահայտել է նախորդ դարի ընթացքում), հետևաբար ոչ պակաս չափով կարող էին հեռանալ նախալեզվական դրությունից: Ա. Մեյեն, օրինակ, խոսում է հայերենի և կովկասյան լեզուների, մասնավորապես՝ վրացերենի հպական և հպաշփական բաղաձայնների հա-

<sup>1</sup> Տե՛ս Գамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тбилиси, 1984, с. 869-871:

<sup>2</sup> Տե՛ս Դжаукян Г. Б., Очерки дописьменного периода армянского языка, Ереван, 1967, с. 38-39:

<sup>3</sup> Այս առումով, կարծում ենք՝ լիովին իրավունք ունի Վ. Պիզանին՝ գրելով. «... եթե մենք, օրինակ, վերանանք հունարենից և սանսկրիտից, ապա, հասկանալի է, հնդեվրոպական զուգաբանությունների համակարգը շատ ուժեղ կերպով կտարբերվի այդ լեզվի Բրուգմանի տված բնութագրից, և կարել կլինի հարց առաջադրել՝ արդյո՞ք այդ երկու լեզուները հնդեվրոպական են: Իսկ ո՞վ է մեզ իրավունք տվել ... հունարենը համարելու ավելի շատ հնդեվրոպական, քան, օրինակ, լատիներենը կամ կելտերենը» (տե՛ս Փизани В., նշվ. աշխ., էջ 173, 174):

մակարգային համընկնելիության մասին. այս դիտարկումը հատուկ նշանակություն է ձեռք բերում, երբ նկատի ենք ունենում, որ հպաշփականները բացակայում են եվրոպական տարածաշրջանի հ.-ե. լեզուներում<sup>1</sup>: Նշանակում է՝ «կատկայինների տեսության» հիմնական կովաններից մեկը՝ հայերենի որոշ բարբառներում ենթադրյալ կատկայնացած հնչյունների գոյության հանգամանքը, իսկապես բավարար չէ ինչպես հ.-ե. նախալեզվում, այնպես էլ հին հայերենում կատկայինների շարք տարբերակելու համար, որովհետև՝

1) դրանք կարող էին լինել հարևան ոչ հ.-ե. (օր.՝ սեմական, քարթվելական) լեզուներից ներթափանցումներ, 2) ապացուցված չէ՝ դրանք (եթե, իհարկե, եղել են) ունեցել են հնչույթային և արժեք, թե՛ միայն հնչյունական:

Հայտնի է, որ շնչեղ հպականների շարքերը հ.-ե. նախալեզվում վերականգնվում են հիմնականում հին հնդկերենի և հին հայերենի տվյալների հիման վրա: Ըստ այդմ՝ շնչեղ ձայնեղների շարքը (b<sup>h</sup>, g<sup>h</sup>, d<sup>h</sup>) վստահորեն վկայված է միայն հին հնդկերենում, իսկ շնչեղ խուլերի շարքը (p<sup>h</sup>, k<sup>h</sup>, t<sup>h</sup>)՝ հին հնդկերենում և հին հայերենում: Ենթադրաբար շնչեղացած են եղել նաև հին հունարենի խուլերը. այս լեզվում սնակ. p<sup>h</sup>, իրան. f և հյ. փ (p<sup>h</sup>)-ի համապատասխանն է ֆ-ն, \*t<sup>h</sup>-ի ներկայացուցիչներն են համարվում τ-ն և θ-ն, իսկ \*k<sup>h</sup>-ի ներկայացուցիչը՝ χ-ն<sup>2</sup>: Եթե նույնիսկ շնչեղ խուլեր ենթադրվեն ևս մի քանի լեզուների համար, օր.՝ ընդհանուր գերմանականի<sup>3</sup>, միևնույնն է, անհամեմատ մեծ է այդ շարքը չտարբերակող լեզուների թիվը, էլ չենք խոսում շնչեղ ձայնեղների շարքի մասին: Բայց և այնպես, ինչպես նկատել է Ա. Մեյեն, այս փաստերն անտեսել չի կարելի: Լայն առումով նմանատիպ երևույթները կարելի է դասել օրինաչափություններից շեղումների կարգին, որոնց, ի դեպ, Ա. Մեյեն մեծ նշանակություն է տվել նախաձևերի վերականգնման հարցում: Ուստի ոչ պատահականորեն հպականների վերականգնման ավանդական սխեման մերժողները ևս հիմնականում ընդունում են շնչեղների շարքերը և առաջին հերթին մեկ լեզվով՝ հին հնդկերենով ներկայացված շնչեղ ձայնեղների շարքը: Վերջիններս, սակայն, մերժում են պարզ ձայնեղների, երբեմն էլ՝ պարզ խուլերի շարքը՝ դրանք փոխարինելով, օրինակ, «կատկայինների» ենթադրյալ շարքով:

Եթե հին հնդկերենում շնչեղ ձայնեղների շարքը վկայված է գրավոր հուշարձաններով և որպես այդպիսին՝ մասնագիտական շրջանակներում տարակարծությունների տեղիք չի տվել, ապա գրաբարյան տեքստերը (բնականաբար՝ նաև մաշտոցյան այբուբենը) հին հայերենում այդպիսի շարքի մասին

<sup>1</sup> Sté u Meillet A., Les dialectes indo-européens, Paris, 1950, pp. 90-91, 138: Այս հարցում այլ տեսակետ է հայտնել Հ. Պեդերսընը: Վերջինս հպաշփական հնչյունների առաջացումը բացատրում է հ.-ե. այլ լեզուներում տեղի ունեցած հնչյունական զարգացումների համատեքստում (տե՛ս Պեդերսըն Հ., Հայերեն եւ դրացի լեզուները, Վ., 1907, էջ 165-167):

<sup>2</sup> Sté u Meյe A., նշվ. աշխ., էջ 116; Семереньи О., Введение в сравнительное языкознание, М., 1980, с. 82:

<sup>3</sup> Sté u Семереньи О., նշվ. աշխ.:

վկայություններ չունեն: Ումանք, նկատի ունենալով, որ հայերենի որոշ բարբառներում տարբերակվում են շնչեղ ձայնեղներ (ընդ որում՝ այդ բարբառներին վերագրվել է գրաբարից ավելի մեծ հնություն), հակված են նախագրաբարյան հայերենում ևս ընդունելու նմանատիպ հնչույթների գոյությունը: Ուրիշներն էլ շնչեղ ձայնեղների գոյություն են ենթադրել հենց գրաբարյան հայերենի փուլում: Վերջիններիս կարծիքով, հյ. բ, գ, դ, ձ, ջ տառերը իրականում եղել են ձայնեղ շնչեղների և ոչ թե պարզերի գրային նշանները: Այդ մասին առաջինը կարծիք է հայտնել Հ. Պեդերսընը (հմմտ. «Միակ միջոցն է ընդունիլ թե հին հայերենի այն ձայները՝ որոնք *q, d, n, p* գրերով կը գրուին (եւ որոնք ի մէջ այլոց յուն. *γ, δ, β* ձայները տառադարձելու կը գործածուին), իրապէս անփոփոխ միջակ-թաւերը կը ներկայացնեն, ուրեմն իբր *gh, zh, dh, bh* (*ջ* տառն ալ ըստ այսմ՝ իբր *zh*) արտաբերվելու են»<sup>1</sup>): Հ. Պեդերսընի այս տեսակետը հավանական է համարել Ա. Մեյեն և իր «Հնդեվրոպական բարբառները» ուսումնասիրության մեջ, հղում անելով Է. Ջիվերսի և Հ. Աճառյանի կողմից հայերենի մի քանի բարբառներում ու խոսվածքներում (Մուշի, Մեքաստիայի, Աշտարակի) մատնանշված համապատասխան տվյալներին, գրել է. «Բնական կլիներ ընդունել, որ ընդհանուր հայերենի *b, d, g*-ն իրենց բնույթով ունեցել են հնդեվրոպական շնչեղ ձայնեղներին նման յուրահատկություն»<sup>2</sup>: Այդ միտքը տեղ է գտել նաև Մեյեի «Գերմանական խմբի լեզուների հիմնական առանձնահատկությունները» գրքում՝ հայերենի և գերմանական լեզուների «բաղաձայնական տեղաշարժերի» քննության առնչությամբ (հմմտ.«... *bh, dh, gh*-ը նրանցում ներկայացված են եղել ինչպէս *b, d, g*, երկու լեզուներում էլ սկզբնապէս եղած լինելով, ըստ երևույթին, շնչեղներ»<sup>3</sup>): Հին հայերենում շնչեղ ձայնեղների գոյությունն ընդունել են նախորդ դարի առաջին կեսի այլ հնդեվրոպաբաններ ևս (Ժ. Ֆուրկե, Է. Բենվենիստ, Վ. Գեորգիև, Հ. Ֆոգտ, Վ. Պիզանի, Ու. Լեման, Ֆ. Ֆելդի, Վ. Իվանով): Ուրիշներն էլ (Է. Աղայան, Գ. Ջահուկյան, Յա. Օտրեմբսկի, Լ. Ջաբրոցկի, Է. Մական) մերժել են այդ տեսակետը: Հին՝ նախագրաբարյան հայերենի (ըստ Գ. Ջահուկյանի՝ *նախահին հայերենի*) բաղաձայնական համակարգի բնույթի վերաբերյալ վերոհիշյալ հեղինակների տեսակետները տեղ են գտել, մասնավորապէս, «Вопросы языкознания» ամսագրի 1959-1962 թթ. մի շարք համարներում: Այդ հարցի շուրջ բանավեճն սկսվել է Ա. Ղարիբյանի «Հայերենի բաղաձայնական համակարգի մասին» հոդվածով, որում հեղինակը հայերենի արևմտյան և արևելյան բարբառախմբերի որոշ բարբառներում (Ակնի, Մեքաստիայի, Արաբկիրի, Շապին-Գարահիսարի, Համշենի, Արարատյան ևն) առկա շնչեղ ձայնեղների հիման վրա փորձ է արել ապացուցելու, թե նշված բարբառները գրաբարից ավելի հին են, և այդ հնչյունները նրանք ուղղակիորեն ժառանգել են հ.-ե. նախալեզ-

<sup>1</sup> Հ. Պեդերսըն, նշվ. աշխ., էջ 8:

<sup>2</sup> A. Meillet, աշխ., էջ 13:

<sup>3</sup> A. Meïe, Основные особенности германской группы языков, М., 1952, с. 41.

վից<sup>1</sup>: Ա. Ղարիբյանի հարցադրումը, ինչպես նկատել են բանավեճի մասնակիցները, կարևոր նշանակություն ուներ ոչ միայն պատմահամեմատական հայերենագիտության համար, այլև առհասարակ համեմատական հնդեվրոպաբանության համար, քանզի այդ վարկածի ընդունումը կնշանակեր՝ 1) ընդունել նաև համապատասխան բարբառների՝ գրաբարից ավելի հին լինելը, հետևաբար՝ 2) վերամեկնաբանել հայերենի «բաղաձայնական տեղաշարժի» մասին դրույթը, չնայած որ Ա. Ղարիբյանը փորձում է իր մեկնաբանության մեջ նույնպես «տեղաշարժ» ցույց տալ<sup>2</sup>: Վերջին կետի առնչությամբ Վ. Ժիրմունսկին բանավեճի արդյունքներն ամփոփող հոդվածում գրել է. «Եթե համաձայնվենք Ա. Ա. Ղարիբյանի դրույթի հետ, որ «հայկական բարբառների խմբավորումն ըստ բաղաձայնների համակարգի արտացոլում է հայոց լեզվի տարածումը պատմական Հայաստանի տարածքում»..., ապա հայկական և գերմանական տեղաշարժերի միջև ծագումնաբանական կապի հնարավորությունը լիովին վերանում է, և նրա վրա հիմնված տեսությունները պահանջում են համապատասխան վերանայում»<sup>3</sup>: Ա. Ղարիբյանի տեսակետը մերժողները

<sup>1</sup> См' u **Гарибян А. С.**, Об армянском консонантизме, ВЯ, 1959, N 5, с. 81-90: Ա. Ղարիբյանին՝ որպես բանավեճի նախաձեռնողի, նույն ամսագրի էջերում երկրորդ հրապարակման հնարավորություն է տրվել (հմմտ. **Гарибян А. С.**, Еще раз об армянском консонантизме, ВЯ, 1962, N 2, с. 18-23): Նկատելի է, որ վերջին հրապարակումը, առաջինի դրույթները պաշտպանելով հանդերձ, ունի ավելի մեղմ տոնայնություն: Մեր կարծիքով այդ հանգամանքը պիտի բացատրել նրանով, որ նույնիսկ հիմնական հարցում իրեն համախոհներից ոմանց կարծիքները քննադատական շեշտադրումներ են պարունակում հարակից հարցադրումների առնչությամբ: Մինչ այդ նշված հարցի շուրջ բանավեճը սկսվել էր «Պատմաբանասիրական» հանդեսի էջերում, որին մասնակցել էին Է. Բ. Աղայանը, Գ. Բ. Ջահուկյանը, Ժ. Ֆուրկեն և Գ. Սևակը (տե՛ս **Սևակ Գ.**, Հայ բարբառների ծագման հարցի շուրջը, ՊԲՀ, 1959, թիվ 1, էջ 224-245):

<sup>2</sup> Բանավեճի մասնակիցներից ոմանք իրավացիորեն նկատում են, որ Ա. Ղարիբյանի կողմից նշված հնչյունական (հնչույթային) անցումները դասական իմաստով չեն համապատասխանում «տեղաշարժի» ըմբռնմանը, որպիսին տեղի է ունեցել, օրինակ, գերմանական բաղաձայնների դեպքում, որովհետև, ի տարբերություն գերմանական «բաղաձայնների տեղաշարժի», որը կրել է համակարգային բնույթ (իմա՝ ներառել է հպականների բոլոր շարքերը), Ա. Ղարիբյանի սխեմայում այն համակարգային բնույթ չունի, ավելին՝ հակասում է նաև հայերենի «բաղաձայնական տեղաշարժի» մասին ավանդական հնդեվրոպաբանության մեջ դեռևս Ա. Մելեի ժամանակներից և նրա հետևողությամբ ընդունված պատկերացումներին (տե՛ս **Бенвенист Э.**, Проблемы армянского консонантизма, ВЯ, 1961, N 3, с. 38; **Макаев Э. А.**, Передвижение согласных в армянском языке, ВЯ, 1961, N 6, с. 23): Ըստ էության, այդ ըմբռնումն ընկած է նաև Է. Աղայանի և Գ. Ջահուկյանի համապատասխան հոդվածների հիմքում (տե՛ս **Աղայան Է. Բ.**, Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի մասին, ՊԲՀ, 1958, թիվ 1, էջ 211-233; **Ջահուկյան Գ. Բ.**, Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը, ՊԲՀ, 1959, թիվ 2-3, էջ 282-319; **Агаян Э. Б.**, О генезисе армянского консонантизма, ВЯ, 1960, N 4, с. 37-52; **Джаукян Г. Б.**, К вопросу о происхождении армянских диалектов, ВЯ, 1960, N 6, с. 39-49): Ուշագրավ է հատկապես *հնչունական տեղաշարժի* հասկացությանը Է. Մակաևի կողմից տրված մեկնաբանությունը (տե՛ս նույն տեղում):

<sup>3</sup> См' u **Жирмунский В. М.**, Некоторые итоги дискуссии об армянском консонантизме, ВЯ, 1962, N 5, с. 34:

մասնավորապես նշում էին, որ՝ ա) միայն շնչեղ ձայնեղների առկայությունը բավարար չէ այդ բարբառները գրաբարից ավելի հին համարելու համար, որովհետև դրանք կարող էին լինել նաև հետագա զարգացման արդյունք (հմմտ. «...հայերեն բարբառների շնչեղ ձայնեղները ներկայացնում են ոչ թե հնդեվրոպական նույն բաղաձայնների ուղղակի շարունակությունը, այլ հին հայերենի բ, գ, դ, ձ, ջ ձայնեղների հետագայում շնչեղացած վիճակը»<sup>1</sup>: Հմմտ. նաև՝ «Ես կարծում եմ, որ բարբառային bh, dh, gh-ը ավելի ուշ, արդեն հայկական ծագման նորույթներ են»<sup>2</sup>). բ) պարզ չէ՝ շնչեղ ձայնեղները եղել են ինքնուրույն հնչույթներ, թե *շնչեղ ձայնեղ/ձայնեղ* (հմմտ. B<sup>3</sup> տիպի) համակցային հնչույթի այլահնչակներ, մասնավանդ որ այդ հնչունների հնչույթաբանական կարգավիճակը պարզ չէ նաև ժամանակակից հայերենի բարբառներում, որոնք էլ, ըստ էության, մեկնակետ են եղել գրաբարյան և նախագրաբարյան հայերեններում շնչեղ ձայնեղների շարքի կանխադրման համար<sup>3</sup>: Մաշտոցյան գրային համակարգում բ, գ, դ, ձ, ջ տառերը շնչեղ ձայնեղների գրային նշաններ համարելու դեպքում մենք կասկածի ենք ենթարկում այդ այբուբենի հնչույթային ճշգրտության մասին մինչև այժմ բազմիցս (և ոչ միայն հայագրի մտավորականների կողմից) արտահայտված մտքերը: Ընդ որում՝ *միայն ենթադրությունների ու վարկածային կանխադրումների հիման վրա*: Այդ դեպքում տրամաբանական չէ, արդյոք ք այն հարցը, թե ինչպես է, որ Մաշտոցը կարողացավ կռահել խուլերի երկու առանձին հնչույթային շարքերի՝ պարզերի և շնչեղների (հմմտ. *պ, կ, տ, ծ, ճ*, և *փ, ք, թ, ց, ջ*) գոյությունը գրաբարյան հայերենում, բայց չկռահեց ձայնեղների երկու հնչույթային շարքերի գոյությունը: Մեզ համար (ինչպես և մեզանից առաջ՝ շատերի) պատասխանը միանշանակ է. *որովհետև գրաբարյան հայերենում ձայնեղները ներկայացված են եղել միայն մեկ կարգով՝ պարզերի*: Ասվածը, սակայն, չի նշանակում, թե գրաբարում բացառվում էր նաև շնչեղ ձայնեղների՝ որպես ձայնեղների կարգի այլահնչակների, ավելի պարզ հնչունների գոյությունը: Իսկ նախագրաբարյան փուլում նրանց հնչույթային կարգավիճակի հարցը մեծապես պայմանավորված է հ. -ե նախալեզվում, հատկապես նրա *ընդհանուր հնդեվրոպական* փուլում (որին հաջորդել է նախալեզվի տրոհումը) այդպիսի հնչույթային կարգ ճանաչելու կամ չճանաչելու հանգամանքով:

Հին հայերենի որևէ փուլում (նախագրաբարյան կամ գրաբարյան) շնչեղ ձայնեղների գոյության ընդունումը հնդեվրոպական լեզվաբանության համար կարևոր նշանակություն ուներ այն առումով, որ հայերենը դառնում էր

<sup>1</sup> Աղայան Է. Բ., նշվ. աշխ., էջ 219:

<sup>2</sup> **Отрембский Я.**, По поводу армянского консонантизма, ВЯ, 1961, N 3, с. 44. Յան Օտրեմբսկու վարկածի համաձայն՝ հայերենի բարբառային շնչեղ ձայնեղները «...նախ ի հայտ են եկել որպես շնչեղ խուլերի համապատասխան ձայնեղներ բառերի որոշակի խմբի հուզարտահայտչական ձևերում, գլխավորապես՝ բառասկզբում (ph:bh, th:dh, kh:gh) և հետո աստիճանաբար սկսել են տարածվել b, d, g-ի հաշվին» (նույն տեղում, էջ 43-44):

<sup>3</sup> Տե՛ս **Макаев Э. А.**, նշվ. աշխ., էջ 28:

շնչեղ ձայնեղների շարք տարբերակող երկրորդ լեզուն՝ հին հնդկերենի հետ միասին, ուստի ավելի համոզիչ էր դառնում հ.-ե. նախալեզվում այդպիսի կարգի վերականգնումը, որի գոյությունը նախորդ դարի երկրորդ կեսին տիպարանական և կառուցվածքաբանական փաստարկումներով սկսել էին մերժել: Այդ ընդհանուր միտումից բացի, կային նաև մասնավոր միտումներ, որոնք նկատելի են վերոհիշյալ բանավեճի առանձին մասնակիցների տեսակետներում. նախագրաբարյան (կամ գրաբարյան) փուլում շնչեղ ձայնեղների կարգի տարբերակումը դառնում էր այս կամ այն վարկածի լրացուցիչ կովան: Այսպես, նախագրաբարյան հայերենում շնչեղ ձայնեղների տարբերակման դրույթը բուլղարացի գիտնական Վ. Գեորգիևի համար դառնում է հիմնական կովաններից մեկը՝ ասելու, որ «հայոց լեզուն ներկայացնում է փոյուզերենի հետագա զարգացումը կամ ծայրահեղ դեպքում՝ հայերենը և փոյուզերենը մեկ ընդհանուր լեզվի բարբառներ են»<sup>1</sup>:

Հ.-ե. նախալեզվի հպականների համակարգը վերականգնելիս, ըստ ամենայնի, հատուկ կարևորություն պիտի տալ տիպարանական տվյալներին և առաջին հերթին՝ միևնույն լեզվաընտանիքի լեզուներում առկա տվյալներին: Ըստ այդմ՝ հ.-ե. թե՛ հին լեզուների և թե՛ նորերի գերակշռող մեծամասնությունը տարբերակում է հպականների միայն երկու շարք՝ ձայնեղ/խուլ (b/p, g/k, d/t) տիպի կամ ձայնեղ/շնչեղ խուլ (b/ph, g/kh, d/th) տիպի: Առաջին տիպին են վերաբերում խեթա-լուվական լեզուները, հին սլավոներենը, հին ռուսերենը, լատիներենը, հին պարսկերենը, գոթերենը, հին անգլերենը, ժամ. ֆրանսերենը, ժամ. ռուսերենը և այլն: Երկրորդ տիպին է վերաբերում, օրինակ, ժամ. անգլերենը: Իհարկե, պիտի նկատի ունենալ, որ նշված տիպերին վերաբերող լեզուների հպականների համակարգերը լիովին նույնական չեն: Օրինակ՝ լատիներենը, գոթերենն ու խեթերենը ունեն գ, որը հնչարտաբերական որակներով մոտ է [kh]-ի, հին անգլերենում ինքնուրույն հնչույթներ են համարվում կրկնակ գրույթներով արտացոլվող pp, bb, gg, քմային g'g', k'k' և միագրույթ քմային g', k'-ն<sup>2</sup>, գոթերենում b, d, g-ն եղել են Ծ (b), ծ(d), Յ(g) շփականների դիրքային տարբերակներ և ոչ թե ինքնուրույն հնչույթներ<sup>3</sup> և այլն, բայց այդ ամենն ընդհանուր սկզբունքին չի հակասում: Միայն հին հնդկերենն է տարբերակել հպականների չորս շարք (p, ph, b, bh), իսկ երեք շարք տարբերակել են հին հայերենը, հին հունարենը և ավեստայի

---

<sup>1</sup> Георгиев В. И., Передвижение смычных согласных в армянском языке и вопросы этногенеза армян, ВЯ, 1960, N 5, с. 35: Այդ մասին Վ. Պիզանին գրել է. «Վ. Բ. Գեորգիևը առաջադրեց հայերի ծագման փայլուն վարկած, որը, սակայն, առնվազն ներկա ժամանակի համար մնում է անընդունելի» (տե՛ս Սմիրնիցկի Ա. И., Об армянских отражениях индоевропейских взрывных, ВЯ, 1961, N 4, с. 49-50): Տե՛ս նաև Ջահուկյան Գ. Բ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970, էջ 122; նույնի՝ Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 87-88:

<sup>2</sup> Տե՛ս Սմիրնիցկի Ա. И., Древнеанглийский язык, М., 1955, с. 70-73:

<sup>3</sup> Տե՛ս Գухман М. М., Готский язык, М., 1958, с. 60-62:

լեզուն: Շնչեղների շարքում հայերենի Փ (p')-ի դիմաց հունարենը և ավեստան ունեն F (հմպտս. փ և f), իսկ Զ (k')-ի դիմաց՝ KH (x). վերջինները հայերենի շնչեղների հետ ունեն հնչույթային համապատասխանություն, բայց համարժեք չեն հնչունական (այն է՝ ձայնաբանական-արտաբերական) հատկանիշներով: Շնչեղ ձայնեղների շարք տարբերակող մեկ (հին հնդկերեն) և շնչեղ խուլերի շարք տարբերակող չորս (հին հնդկերեն, հին հայերեն, հին հունարեն, ավեստա) լեզուների դիմաց իտալյան, գերմանական, սլավոնական, բալթյան, իսթա-լուվական, թոխարական, իրանական, փոյուգական, թրակյան, իլլիրական, վենետական, ալբանական ճյուղերի մի քանի տասնյակի հասնող լեզուներն են, որոնք ունեն հպականների միայն երկու շարք: Հետևաբար, *որքան էլ տեսականորեն չբացատրվի քառաշարք համակարգի քայքայման վարկածը (այսինքն՝ էլակետային հնդեվրոպականին մոտ համարվի հնդկականը), այնուամենայնիվ գործնականում ավելի տրամաբանական է (դրա օգտին են վկայում նաև տիպաբանական գուգահեռները), որ էլակետային է եղել երկշարք համակարգը, իսկ ձայնեղների և խուլերի շնչեղ կարգերը զարգացել են կամ կոկորդային հնչյունների, մասնավորապես՝ հ-ի ներգործությամբ<sup>1</sup>, կամ էլ դրանք հնչույթային այլ համակարգեր ունեցող ոչ հնդեվրոպական լեզուների հետ խորքային փոխազդեցությունների (= փոխներթափանցումների) արդյունք են և զարգացել են հ.-ե. լեզվական ընդհանրությունից անջատվելուց հետո՝ այդ լեզուների ինքնուրույն պատմության ընթացքում<sup>2</sup>: Կարծում ենք՝ առավել իրատեսական կլինի հ.-ե. նախալեզվի համար կանխադրել երկու շարքի հպական հնչույթներ՝ յուրաքանչյուրը հնչյունների երկուական կարգերով: Պայմանականորեն դրանք կարելի է արտահայտել (I) B<sup>h</sup>, G<sup>h</sup>, D<sup>h</sup> և (II) P<sup>h</sup>, K<sup>h</sup>, T<sup>h</sup> շարքերի տեսքով: Շարքերից առաջինը կխորհրդանշի bh/b, gh/g, dh/d ձայնեղների, երկրորդը՝ ph/p, th/t, kh/k խուլերի հնչունական դասերը, որոնցում համապատասխան շնչեղ և պարզ հնչյունները միևնույն հնչույթի համակցային (комбинаторный) տարբերակներն են: Հպականների այս դրությունը կանխադրելի է ընդհանուր հնդեվրոպական փուլի համար<sup>3</sup>:*

<sup>1</sup> Վ. Իվանովը շնչեղ խուլերի առաջացումը բացատրել է հին հայերենում հ-ի գոյությամբ (տե՛ս **Иванов Вяч. Вс.**, Об исследовании древнеармянской фонологической системы в ее отношении к индоевропейской, ВЯ, 1962, N 1, с. 40):

<sup>2</sup> Հին հնդկերենում շնչեղ ձայնեղների առկայությունը ոմանք բացատրել են դրավիդյան լեզուների ազդեցությամբ (դրավիդյան լեզուների հնչունական համակարգի մասին տե՛ս **Андронов М. С.**, Дравидийские языки, Языки Азии и Африки, т. II, М., 1978, с. 326-343):

<sup>3</sup> Օ. Ս. Շիրոկովը ևս, քննության հիմք ընդունելով հայերենի և հունարենի հպականների եռաշարք համակարգերը, «ընդհանուր հնդեվրոպական դարաշրջանի համար» հպականների երկու շարք է վերականգնում, սակայն՝ 1) չնայած «կատկայինների տեսությունից» սահմանազատվելու ձգտումին (հմտ. «Աստ երևույթին, ոչ ձայնեղ երրորդ շարքի՝ հատկապես կատկայնացմամբ-ծեքականությամբ նշույթավորվածության (այսպես կոչված «կատկայինների տեսություն») գոյությունը պնդելու անհրաժեշտություն չկա. այժմ ավելի հավանական է թվում պարզապես նրա հատուկ լարվածությունը, հպման ինտենսիվությունը»: Տե՛ս **Широков О. С.**,



Ըստ այդմ՝ հպականների *ընդհանուր հնդեվրոպական լեզու>հայերեն* անցումային համակարգն ունեցել է զարգացման հետևյալ ընթացքը.

Չայնեդների/(շնչեղ ձայնեդների) կարգ Խուլերի/(շնչեղ խուլերի) կարգ

*B <sup>h</sup> >բ(b)	*P <sup>h</sup> >պ(p), փ(p')
*G <sup>h</sup> >գ(g)	*K <sup>h</sup> >կ(k), ք(k')
*D <sup>h</sup> >դ(d)	*T <sup>h</sup> >տ(t), թ(տ')

Հ.-ե. նախալեզվում հպականների երկշարք համակարգ կանխադրող սխեմայի համաձայն ոչ թե տեղի է ունեցել մի հնչույթային շարքից անցում մյուսին, այսինքն՝ «տեղաշարժ», այլ I շարքի դեպքում՝ *շնչեղության հնչունական հատկանիշի չեզոքացում և հնչույթի պարզեցում ձայնեղության տեսքով*, իսկ II շարքի դեպքում՝ *խուլերի ձեռքում շնչեղություն/ոչ շնչեղություն հատկանիշով և երկու ինքնուրույն հնչույթային կարգերի առաջացում*: Այդպիսով, ինչպես «բերել», «եղբայր» նշանակությամբ բառերի հ.-ե. նախաձևերում ավանդական հնդեվրոպաբանության կողմից վերականգնվող \*b<sup>h</sup> հնչույթի համար (հմմտ. \*bher-, \*bhrā́ter), այնպես էլ «ուժ», «խումու է» նշանակությամբ բառերի նախաձևերում վերականգնվող \*b-ի համար (հմմտ. \*belo-, \*pibeti) հավասարապես կառաջարկվի հնչույթային \*B<sup>h</sup>- կաղապարը (հմմտ. \*B<sup>h</sup>er-, \*B<sup>h</sup>rā́ter, \*B<sup>h</sup>elo-, \*piB<sup>h</sup>eti): Նշվածներից, օրինակ, \*B<sup>h</sup>er-ը հայերենում տվել է *բեր-*(ել), իսկ սանսկրիտում՝ *bhar-* «բեր-(ել)». հմմտ. նան՝ ավեստա barāmi, հուն. φέρω, լատ. ferō, գոթ. baira, հն. իռլ. biur, հն. պլավ. берѣ «բերում եմ»: Այդպես նաև՝ \*P<sup>h</sup>ed-/\*P<sup>h</sup>od-> հետ-ք, ոտք. հմմտ. նան՝ սնսկ. pad-, լատ. pēs, ped-is, հուն. πῦς, ποδ-ός, գոթ. fōtus, հն. իսլ. fet-, \*K<sup>h</sup>er-(ավլադ. \*ker-)> քեր-(եմ), քեր-ծ-եմ, \*K<sup>h</sup>uku->կկու (հմմտ. սնսկ. kṓka-, հուն. κόκκυξ, -υγος, լատ. cucūlus, ռու. кукышка) և այլն: Կարծում ենք՝ հոգուտ ասվածի են վկայում նաև *p/ph, t/th* տիպի հնչույթային (սկզբնապես՝ հնչունական) հերթագայությունները (հմմտ. պոտոյտ /potoyt/ «շրջան, դառնալը» - *վաթաթեմ* /phathathem/ «ոլորելը», - տարրա /tarra/ «մանուկ, երեխա»-թոռն /torn/, տիգ /tig/ «ձեռք, արմունկ»-թեկն /thekn/ *թիկան*-ի սեռ. իլ. «ուս, ձեռք» և այլն): Իհարկե, նշված օրինակները վերաբերում են ակնառու դեպքերին: Որոշակի դժվարություն կներկայացնի այնպիսի դեպքերի բացատրությունը, երբ առկա է, օրինակ, \*K<sup>h</sup>>հյ.ս (s) տիպի անցում (հմմտ. \*K<sup>h</sup>erd-/\*K<sup>h</sup>rd->սիրտ): Պիտի նկատի ունենալ, որ հնչունական (ավելի ճիշտ՝ հնչույթային) համապատասխանությունների ամբողջությունը, որը հաստատել են հնդեվրոպական ավանդական

---

Общеиндоевропейский и армянский консонантизм, Միջազգային հայերենագիտական գիտաժողով, Երևան, էջ 130)՝ նրա հայեցակարգի մոտիվացիան շոշափելիորեն մոտ է այդ տեսությանը, 2) նրա սխեմայում չհնչույթավորվածների շարքը ներկայացված է երկու կարգով, որոնք եղել են միևնույն հնչույթի «գիրքային տարբերակներ» և միասնաբար հակադրվել են նշույթավորված պակասավոր շարքին (п, т, к', к), բայց ըստ ներկայացված սխեմայի՝ այդ տարբերակներն ավելի շուտ միևնույն շարքի կրկնության, քան թե համակցային տարբերակների տպավորություն են գործում (հմմտ. նույն տեղում):

կամ ոչ ավանդական (օրինակ՝ «կատկայինների») տեսությունները, անցել է տասնամյակների, մի քանիսը՝ ավելի քան հարյուրամյա փորձաշրջան՝ հաստատվելով կամ մերժվելով այդ ընթացքում: Ու չնայած դրան՝ շատ հարցեր այսօր էլ մնում են վիճելի: Հ.-ե. հպականների՝ մեր կողմից առաջարկվող վարկածով, կարծում ենք, ավելի պարզ լուծում է ստանում, այսպես կոչված, պակասավոր (дефектный) շարքի հարցը. *այդ հարցադրումը պարզապես հանվում է ընդհանուր հնդեվրոպական փուլի համար*, որովհետև հպականների ինչպես երկշարք, այնպես էլ եռաշարք և քառաշարք համակարգերը ծագել են *ընդհանուր հնդեվրոպականի՝ շնչեղության հնչյունաբանական* հատկանիշով բնութագրվող երկշարք համակարգից: Այն նշանակություն կարող է ստանալ միայն հնդեվրոպական առաջին բարբառների ձևավորման, այսինքն՝ *հետընդհանուր հնդեվրոպական* փուլի համար, երբ բարբառներից յուրաքանչյուրի հնչյութային համակարգն սկսում էր փոփոխվել նոր իրավիճակին համապատասխան: Այդ առումով առանձնահատուկ կարևորություն պիտի տալ Գրասմանի և Բարթոլոմեի օրենքներին, որոնք բացատրում են հնդիրանական լեզուներում (առաջինը՝ նաև հունարենում) արմատի կազմում շնչեղ և պարզ հպականների բաշխվածության պատճառները:

Շնչեղության հնչյունաբանական հատկանիշը, լինելով ընդհանուր հնդեվրոպականի հպականների բնութագրական գծերից, միաժամանակ կարող է լինել հ.-ե. նախահայրենիքի տեղադրության հարցի որոշման կովաններից մեկը հոգուտ ասիական տարածաշրջանի, որովհետև միայն այդ շրջանի լեզուներում է շնչեղությունը պահպանվել իբրև հնչյութաբանական հատկանիշ: Այս փաստարկի նշանակությունն ավելի կկարևորվի, եթե նկատի ունենանք հ.-ե. լեզուները *կենտում* և *սատըմ* խմբերի բաժանելու, ըստ էության, քննություն չբռնած դրույթի խիստ պայմանականությունը: Զուգադրական ուսումնասիրությունները պարզել են, որ *կենտում* լեզու համարվող հին հունարենը ինչպես հնչյութաբանական, այնպես էլ քերականական հատկանիշներով ավելի շատ ծագումնաբանական ընդհանրություններ է ի հայտ բերում *սատըմ* լեզուներ հայերենի և հին հնդկերենի, քան *կենտում* խմբի մեջ դասվող լեզուների հետ<sup>1</sup>: Հետևաբար հ.-ե. լեզվատարածքի բարբառային տրոհման դեպքում հունարենը կներառվի Հնդկաստանից մինչև հարավային Եվրոպա ընկած տարածություն:

<sup>1</sup> Ст' у Джаукян Г. Б., Сравнительная грамматика..., с. 201-205: Այս առնչությամբ Վ. Գեորգիևը մասնավորապես գրում է. «Լեզուները centum և satəm խմբերի բաժանելու մասին տեսությունը խանգարել է հնդեվրոպական լեզուների միջև ցեղակցային հարաբերությունների, հատկապես գերմանական լեզուների հետ բալթո-սլավոնական խմբի, *ինչպես նաև հայերենի (թրակերենի) և հնդիրանականի հետ հունարենի* (ընդգծումն իմն է՝ Վ. Պ.) անտարակուսելի մերձավորության ճիշտ պարզաբանմանը» (Георгиев В. И., Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, с. 54, 55-57):

**V. Z. Petrosyan – *The Indo-European and Armenian Systems of Plosive Consonants***

By the middle of the 20<sup>th</sup> century in the Indo-European comparative linguistics the four-column system of the plosive consonants proposed by young grammarians, which was mostly restored according to Indo-European-Greek-Latin language material, had dominated. The detection of new languages (Tocharian, Hittite-Luvian and so on) on the one hand, and the use of typological and structural methods in comparative studies on the other, gave rise to doubts among the scientists on the reliability of four-column system. Of the numerous proposals of conceptual innovation and integrity the version of “the theory of velars” suggested by T. Gamkrelidze and V. Ivanov was notable. We think, however, that this version was not free from the one-sidedness of its predecessors.

According to the view proposed in this article: 1) when restoring the initial forms, the facts of all languages should be considered equally; 2) the system that is being restored should be as simple as possible and allow them to explain the transition from it to the systems having phonological characteristics of aspiration the same way as the systems without this feature; 3) the presence of features not peculiar to Indo-European language systems in Indo-European languages should rather be considered features obtained in the independent history of those languages and not features acquired in general Indo-European phase, even if these features are characteristic to not one but several languages. Accordingly, the following system of transition of plosives from general Indo-European > Armenian is proposed:

Category of voiced/aspirated voiced	Category of voiceless/aspirated voiceless
*B <sup>h</sup> >ɸ(b)	*P <sup>h</sup> >ɸ(p), ɸ(p')
*G <sup>h</sup> >q(g)	*K <sup>h</sup> >ɸ(k), ɸ(k')
*D <sup>h</sup> >ɸ(d)	*T <sup>h</sup> >ɸ(t), ɸ(t')

This system, although less specified of the plosives compared with the ones that have been suggested so far, has a higher degree of probability>

**К ВОПРОСУ О НАЧАЛЕ ФОРМИРОВАНИЯ ШКОЛ  
В КУЛЬТУРЕ ХАЧКАРОВ.  
ХАЧКАРЫ АРИНДЖА КОНЦА XII – НАЧАЛА XIII ВЕКОВ**

*Ключевые слова* – археология, хачкар, композиция, культура хачкаров, формирование школы, средневековье, Ариндж, Котайк, Армения

Затронутая в статье тема формирования хачкарных школ на рубеже XII – XIII вв. касается такого малоизученного аспекта в культуре хачкаров, как определение и выделение характерных признаков нового регионального стиля Котайка, который частично определяет художественный стиль хачкарной школы Арагацотна и Котайка. Известно, что структура и орнамент рельефных композиций на плите зависят от времени возведения хачкаров<sup>1</sup>. Однако, помимо общих закономерностей построения хачкарных композиций, определенных Г. Петросяном, начиная со второй половины XII в. в структуре и орнаменте хачкаров проявляются и отличия регионального порядка<sup>2</sup>. Процесс формирования хачкарных композиций с характерными особенностями регионального порядка в культуре хачкаров связан с общими изменениями в развитии культуры и искусства Армении развитого средневековья, которые определяются изменениями социального и политического характера.

С точки зрения изучения процессов формирования регионального художественного стиля хачкаров Котайка, аринджское кладбище является интересным объектом исследования. В Ариндже на сравнительно небольшом участке, среди хачкаров различных времен, сохранилась группа хачкаров конца XII – начала XIII вв., которые являются характерными, а иногда и лучшими образцами этого региона. Целью нашей статьи является путем анализа этих хачкаров представить наиболее характерный для Котайка тип хачкарной композиции этого периода, определив типичные структуры и орнаментальные мотивы.

Историческая часть кладбища села Ариндж является интересным и уникальным памятником средневековой Армении в пределах современного города Еревана, где на небольшой территории, вокруг развалин церкви XIII в. сохранилось около 180 хачкаров разных веков. Церковь на холме представляет собой разрушенное до основания сооружение, от которого вниз к северному входу со стороны бывшего села Ариндж простирается историческая часть кладбища. С 1950 по 1981 гг. на кладбище проводились восстановительные работы, в результате которых часть хачкаров была восстановлена на своем первоначальном месте, а другая укреплена на существующих свободных постаментах. Некоторые хач-

<sup>1</sup> Պետրոսյան Հ., Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2008, էջ 99-222:

<sup>2</sup> Там же, с. 132.

кары датированы и, судя по датам на хачкарах, аринджское кладбище функционировало с конца XII по XVII века без существенных перерывов во времени<sup>1</sup>. Именно по этой причине в композициях на хачкарах Аринджа особо хорошо заметны процессы развития структуры и орнаментики. По месту нахождения этих хачкаров с характерной и хорошо узнаваемой композицией, мы условно назвали этот тип композиции «аринджским». Однако кроме хачкаров установленных на аринджском кладбище, к хачкарам «аринджского» типа относятся и некоторые хачкары в Аване, Дзагаванке, Камарисе, а также единичные хачкары этого же периода в Егварде и Ошакане. Композиция «аринджского» типа, выделенная на примере аринджских хачкаров, является одной из нескольких характерных композиций хачкаров Котайка, а процесс ее формирования с конца XII в. протекал параллельно с аналогичным процессом на хачкарах Арагацотна<sup>2</sup>.

Формирование композиции «аринджского» типа хорошо представлено на хачкарах конца XII – начала XIII вв., установленных в восточной части кладбища, у северного входа. Анализируя и систематизируя хачкары с композицией «аринджского» типа, мы выделили несколько подтипов, которые характеризуют и определяют направления в развитии этого композиционного типа.

Характерным элементом композиций *первого подтипа* (1) является конструкция креста с пальметтой, опирающаяся на сдвоенные взаимопересекающиеся арки (фото 1-4). Хачкары этого подтипа имеют, как правило, плиту из красного туфа<sup>3</sup> с достаточно глубоким хораном (около 4 см.). В композиции этих хачкаров в центре хорана виден пропорциональный крест со слегка расширяющимися к концам крыльями, которые заканчиваются парами тройных петель. Внизу, по обе стороны от креста до перекрестья, прямыми линиями поднимаются остроконечные листья пальметты. Крест с пальметтой опирается на орнамент из сдвоенных перекрещивающихся арок, выполненных полуваляком. Плетеный орнаментальный пояс в композиции (ширина 18 см.), опоясывая хачкарную плиту с трех сторон, не выделяя карниза, немного выступая над поверхностью хачкарной плиты.

По углам хорана, в этом подтипе изображены ветви с плодами граната, а иногда граната вместе с гроздьями винограда (фото 1, 2, 3, 4). На одном из хачкаров между двумя крестами видна целая гирлянда из четырех гранатов (фото 4). Натуралистическое изображение плодов граната и винограда, которое в целом характерно именно для хачкаров конца XII – начала XIII вв., встречается на многих хачкарах с композицией «аринджского» типа.

Архитектурный комплекс родового захоронения или «семейное кладбище» (фото 1) с четырьмя хачкарами вышеописанного первого подтипа расположен в пяти-шести метрах западнее северного входа на аринджское кладбище. Эти комплексы типичны для Котайка и Арагацотна. Этот комплекс по своему типу схож с «семейным кладбищем» в Егварде (1160 г.), где четыре треугольных в сечении надгробия расположены перед четырьмя хачкарами на едином высоком постаменте.

Хачкары «семейного кладбища» в Ариндже в отличие от егвардских, установлены на двух высоких постаментах с парными хачкарами на каждом. Перед пос-

<sup>1</sup> Здесь нет датированных хачкаров XIV в.

<sup>2</sup> Вартанесова Т., О группе хачкаров из Арагацотна-Котайка, *ՊԲՀ*, 2006, №3, էջ 181-199.

<sup>3</sup> Разметы хачкаров этого типа в среднем: высота около 130 см., ширина - 70-86 см., толщина плиты – 27-23 см.

таменами – по два треугольных в сечении надгробия, и в целом, они образуют тот же непрерывный ряд надгробий перед четырьмя хачкарами, как и в Егварде. Хачкары Аринджа восстановлены на постаменты в наши дни, но судя по типу хачкарных композиций и по структуре монумента, они установлены на своем месте.

Композиции первого подтипа датируются по большому хачкару из красного туфа на постаменте у северного входа на кладбище (**фото 4**). Плита этого хачкара сломана чуть выше основания, и затем восстановлена на прежнем месте. В нижней части хачкарной плиты на свободном поле имеется надпись, датированная 1181 годом<sup>1</sup>.

Это самый ранний датированный хачкар на аринджском кладбище. Своеобразием композиции этого хачкара является то, что основная структура креста здесь повторяется дважды, с небольшим наложением конструкций от двух крестов друг на друга, что и определяет нестандартную ширину этого хачкара<sup>2</sup>. Хачкарная композиция внизу плиты завершается характерными вытянутыми сдвоенными арками, ниже которых, на свободном поле, вырезана указанная надпись. Боковой орнаментальный пояс спускается по краю плиты до окончания надписи, в результате чего композиция чуть смещается к верху хачкара. Такое расположение на плите, даже при отсутствии надписи, встречается и на некоторых других хачкарах<sup>3</sup>, которые мы отнесли ко второму подтипу.

*Второй подтип (2)* хачкарной композиции «аринджского» типа (**фото 5**), повторяет структуру первого, однако в композиции второго подтипа нет конструкции из сдвоенных арок внизу хорана, а это место занимает нижняя часть листьев пальметты, соединенная под крестом, ниже которой на хачкарной плите пустое место. Форма пальметты и растительный мотив у вершины креста в композиции второго подтипа при аналогичной структуре композиции имеет другие, более округлые формы. Похоже, что обе композиции выполнялись на плите по одному и тому же расчету и если сдвоенные арки не изображались, то нижняя часть плиты оставалась пустой.

Боковой орнаментальный пояс хачкаров второго подтипа уже, чем у предыдущих, но орнамент над крестом отличается от орнамента боковой части, выделяя таким образом еще не сформировавшийся карниз. В целом, композиции *первого и второго подтипов* имеют один и тот же орнаментальный ряд в рамках идентичной структуры.

Прежде чем перейти к анализу хачкарных композиций третьего подтипа, хочется остановиться на вопросе о технике выполнения рельефа на хачкарной плите, так как принцип построения изображения на хачкарах конца XII – начала XIII вв. в Ариндже является одним из характерных признаков всей *второй группы*.

В рельефе аринджских хачкаров используется «низкий» орнамент, но глубина его различна. Основной объем изображения на плите получается одновременным глубоким удалением поверхности камня вокруг основных элементов ком-

---

<sup>1</sup> Надпись гласит: «В лето 630 (1181 г.). Это покой священника Григора, молим помяните, Господа ради, писчий Саркаваг» (**Շարախանյան Գ.**, Դիտողություններ 12-րդ դարի երկու հուշարձան-կոթողի մասին, ՊԲՀ, 1975, թիվ 4, էջ 125-128).

<sup>2</sup> Высота хачкара – 1,74 м., ширина – 1,15 м. (обычно около 87 см.), толщина плиты – 0,28 м.

<sup>3</sup> **Պետրոսյան Հ.**, указ. соч., с. 137.

позиции, где глубина фона около 4 см., в то время как орнамент на листьях пальметты, к примеру, выполнен неглубоким одинарным или двойным полуваликом высотой не более 0,5 см., а иногда он просто процарапан<sup>1</sup>. Подобный принцип резьбы характерен для композиций ранних хачкаров (IX-X вв.), где фон убирался вокруг объемов креста и пальметты, а по краю плиты оставлялся узкий бортик камня. Судя по характеру хачкарных композиций в Ариндже новый «аринджский» тип формируется на основе архаичных композиций *конструктивного* стиля, где формы основных элементов просты и не связаны между собой орнаментом, а размещены в рамках одного композиционного поля. Декоративные мотивы котайкских хачкаров архаичны и появляются с конца XII в. в виде неглубокого и несмелого орнамента. На хачкарах Котайка нет следов композиций XI в. К примеру, здесь нет традиции изображения горизонтальной части анийской пальметты, которая так характерна в этот периода для художественного стиля Арагацотна.

Конструктивный стиль аринджских композиций особенно хорошо проявлен в хачкарах *третьего подтипа* (3), особенностью которых является парное изображение птиц на карнизе (фото 6, 7, 8, 9, 10). Хачкары этого подтипа выглядят достаточно архаично и часто их изображения не совсем пропорциональны. Похоже, что местонахождение креста, пальметты, ветвей и плодов на плите определялось на глаз (как и на многих ранних хачкарах), а мастер корректировал композицию по мере ее выполнения. Рельеф выполнен крупными формами без плетеного орнамента. Глубокий фон хорана на хачкарах удален по форме прямоугольника до горизонтальных крыльев креста, а ниже перекрестья он сужается, спускаясь к основанию креста. В пропорциональном соотношении горизонтальные крылья креста в композиции этого подтипа почти в полтора раза короче вертикальных<sup>2</sup>.

Крест в хоране этих хачкаров часто украшен «стразами», которые олицетворяют драгоценные украшения креста<sup>3</sup>. Кроме «страз», некоторые хачкары имеют в хоране изображение «сияющего креста»<sup>4</sup>. Мотив «сияния» на хачкаре выражается мелкими горизонтальными бороздками на кресте (возможно, они передают структуру золота).

Листья пальметты в нижней части плиты изображены линиями неглубокого рельефа, а сверху, по углам хорана, видны сегменты трилистника, с которых к центру креста спускаются гроздья винограда. Они не соединены с вершиной креста. Третий подтип аринджских хачкаров возвращает нас к ранним хачкарам, где растительный мотив – пальмовые ветви или плоды винограда, позже граната также не связан с вершиной креста, а располагаясь в межкрестии, спускается или поднимается к центру креста из углов композиции. В аринджских композициях этого подтипа изображен только виноград. Традиция изображения расти-

---

<sup>1</sup> Следует отметить, что для хачкаров с художественным стилем Арагацотна характерна одинаковая глубина резьбы в рельефе хорана и пальметты.

<sup>2</sup> Պետրոսյան Հ., указ. соч., с. 136.

<sup>3</sup> Там же, с. 33.

<sup>4</sup> Պետրոսյան Հ., Լույսը և ոսկին Գրիգոր Լուսավորչի տեսիլքում // Հին Հայաստանի ոսկին, Երևան, 1997, էջ 26-28; *он же*, Ոսկին Հայ միջնադարյան աշխարհընկալման համալիրում, Հին Հայաստանի ոսկին, Երևան, 2007, էջ 64-65:

тельного мотива по углам композиции восходит к раннехристианской крестной композиции равноконечного креста в медальоне, которая встречается и в орнаментальном поясе аринджских хачкаров XIII в. (фото 7).

Боковой орнаментальный пояс на хачкарах третьего подтипа состоит из четырех квадратов с каждой стороны, где в каждом квадрате изображен равноконечный крест с небольшими шишками на концах крыльев креста (фото 7, 8, 10). Эти изображения равноконечных крестов строятся по принципу глубокого рельефа в хоране.

Парное изображение птиц, которое является характерным для этого подтипа, обычно встречается на карнизе (фото 7, 8, 9), но есть хачкары, где птицы встречаются и в хоране на вертикальной оси креста (фото 6) и на боковом орнаментальном поясе (фото 10). Птицы на карнизе расположены симметрично, по обе стороны логического центра, головами друг к другу, т. е. в геральдической постановке по обе стороны какого-либо мелкого символического изображения.

Карнизы на хачкарах этого подтипа являются некоторым промежуточным вариантом между цельным орнаментальным поясом хачкаров первого и второго подтипов и ярко выраженным выступающим вперед карнизом, который характерен для хачкаров этого периода в Егварде и Аштараке. В Ариндже карнизы, напоминающие егвардские, встречаются на некоторых хачкарах следующего четвертого подтипа (фото 11, 12, 13).

Как обитатели неба птицы олицетворяют души<sup>1</sup> умерших. Фигурки птиц на карнизах, как правило, выполнены схематично, а оперение их процарапано. Форма туловища представляет собой полумесяц, который расширяется от маленькой головы к двум ножкам и опять сужается к хвосту. Птицы, в основном, расположены в горизонтальном виде, голова, туловище и хвост находятся на одной линии. Однако встречаются и исключения.

Один из хачкаров имеет на карнизе нестандартное, натуралистичное изображение птиц, которые расположены вертикально по обе стороны от небольшого креста (фото 9). Карниз имеет форму трапеции и его высота составляет почти  $\frac{1}{4}$  от общей высоты хачкара. Нестандартные размеры и трапециевидная форма карниза обусловлена вертикальным положением птиц (в полный рост). Изображения этих птиц различны. Так, северная птица проработана более тщательно и ее крылья чуть раскрыты, а фигура в южной части более обобщена и здесь только обозначен хвост. Эта композиция единична и больше не встречается среди хачкаров изучаемого региона. Хачкар установлен на кубическом постаменте, а его резная композиция относится ко второму описанному выше подтипу.

Датированных хачкаров с изображением птиц на карнизе в Ариндже нет, но на кладбище в Аване сохранился хачкар 1204 г. (фото 10), с изображением двух птиц на карнизе. Композиция в хоране этого аванского хачкара относится к обозначенному нами третьему подтипу. Внизу хачкарной плиты под рядом шишек на свободном месте, видна надпись с датой 1204 г. На боковом орнаментальном поясе хачкара изображена вторая пара птиц. Фигурки птиц развернуты вертикально так, что упираются ножками в бок рамки. Изображения частично выветрились, но у головы видны бороздки оперения, обозначен клюв и глаза этих птиц.

---

<sup>1</sup> Պետրոսյան Հ., указ. соч., с. 297.



Изображения птиц на карнизе этого хачкара из Авана сделаны тщательнее, чем на других подобных хачкарах в Ариндже. Здесь у птиц выделены крылья и хвост, показано их оперение, обозначены глаза и клюв. Между ними изображено колесо со ступицами, к которому они склонили головы. В клюве у каждой птицы видна виноградинка. По обе стороны от колеса симметричными радиальными лучами расходится волнообразный орнамент (возможно, символизирующий вращение этого колеса).

Обобщая стиль композиций конца XII – начала XIII вв. третьего подтипа, можно сказать, что для этих аринджских хачкаров характерны крупные, цельные формы отдельных элементов орнамента, которые собраны на плите в рамках одной художественной композиции. Здесь почти нет плетеных мотивов, но на карнизе часто встречаются изображения птиц. Растительный мотив над перекрестием с плодами винограда (гранат здесь не встречается) расположен по углам хорана и не имеет связи с вершиной креста.

Композиции *четвертого подтипа* (4) «аринджского» типа формируются на основе совмещения композиций первых двух подтипов. Вся эта группа состоит из семи цельных хачкаров и нескольких фрагментов (**фото 11, 12, 13**). Рельеф композиции на этих хачкарах представляет собой непрерывно бегущую линию, которая по ходу образует петли, создает крест, ветви с плодами, листья пальметты.

Все хачкары этого подтипа расположены в старой части кладбища на расстоянии нескольких метров друг от друга. Похоже, что они принадлежат различным мастерам, т. к. изобразительный ряд этих хачкаров отличается друг от друга. Хачкары не датированы, но их кубические постаменты перед которыми расположены треугольные в сечении надгробия, позволяют датировать эти хачкары концом XII – началом XIII вв. Композиции некоторых хачкаров не закончены (**фото 11, 12**), так к примеру на одном из них не завершена верхняя часть композиции (**фото 11**), в то время как на другом – нижняя (**фото 12**). Интересен тот факт, что наибольшее количество установленных на кладбище хачкаров с не завершенной на плите композицией, относится именно к этому типу. (Возможно, что это было связано со временем их создания, когда какие-то события резко прервали работу мастера или мастеров).

На незавершенных хачкарах этого четвертого подтипа, хорошо виден новый принцип удаления фона, характерный для этих композиций. Фон в композиции первых трех подтипов удалялся глубоко и одновременно между пальметтой и боковым орнаментальным поясом во всем хоране, а здесь полоса глубокого фона выделяет только объем креста, а далее мастер переходит к орнаментальной резьбе мелких плетеных мотивов, которые покрывают лицевую поверхность хачкара (**фото 13**). Из-за изменения принципов построения изображения листья пальметты в хачкарных композициях *четвертого подтипа* получили круглую форму, которая единым поясом охватывает крест и спускается под стилобат. На некоторых хачкарах здесь нижней части хорана встречается поперечная узкая полоса орнамента (**фото 13**), характерная и для композиций *первого подтипа* (**фото 2, 3**).

Карниз на хачкарах *четвертого подтипа* состоит из нескольких орнаментальных поясов один из которых, как правило, имеет мотив с изображением мелких плодов граната в сочетании с перевернутыми сдвоенными арочками

(фото 11, 12). Вторая полоса часто имеет мелкий плетеный орнамент.

Как мы отметили выше, среди хачкаров этого подтипа нет датированных хачкаров, но исходя из структуры их композиций и техники выполнения орнамента, эти хачкары принадлежат к первой половине XIII в.

Все хачкары с композициями вышеописанных четырех подтипов имеют схожие структуры и орнаментальные мотивы, но для каждого подтипа характерно определенное сочетание декора. Так, карниз с парным изображением птиц обычно сочетается с мотивом равноконечных крестов на боковом орнаментальном поясе (фото 7, 8, 10), а композиции первого подтипа имеют прямые заостренные кверху листья пальметты, не соединенные между собой, которые опираются на орнаментальную конструкцию сдвоенных вытянутых арок (фото 2, 3). Примечательно, что многие хачкары «аринджского» типа конца XII – начала XIII вв. имеют в композиции сочетания характерных элементов различных подтипов. Они являются показателем того, что выделенные нами подтипы достаточно условны, и в целом демонстрируют единый процесс развития хачкаров с композицией «аринджского» типа в период ее формирования.

### Список иллюстраций.

1. Родовое захоронение конца XII – начала XIII вв. Ариндж
2. Տաշաճաճաշաշա XII դ. վերջ – XIII դ. սկիզբ, Առինջ  
Graveyard late XII – early XIII century. Arinj
3. Хачкар конца XII – начала XIII вв. Ариндж  
Խաչքար, XII դ. վերջ – XIII դ. սկիզբ, Առինջ  
Khachkar late XII – early XIII century. Arinj
4. Хачкар конца XII – начала XIII вв. Ариндж  
Խաչքար, XII դ. վերջ – XIII դ. սկիզբ, Առինջ
5. Хачкар конца XII – начала XIII вв. Ариндж  
Խաչքար, XII դ. վերջ – XIII դ. սկիզբ, Առինջ  
Khachkar late XII – early XIII century. Arinj
6. Хачкар конца XII – начала XIII вв. Ариндж  
Խաչքար, XII դ. վերջ – XIII դ. սկիզբ, Առինջ  
Khachkar late XII – early XIII century. Arinj
7. Хачкар конца XII – начала XIII вв. Ариндж  
Խաչքար, XII դ. վերջ – XIII դ. սկիզբ, Առինջ  
Khachkar late XII – early XIII century. Arinj
8. Хачкар конца XII – начала XIII вв. Ариндж  
Խաչքար, XII դ. վերջ – XIII դ. սկիզբ, Առինջ  
Khachkar late XII – early XIII century. Arinj
9. Хачкар конца XII – начала XIII вв. Ариндж  
Խաչքար, XII դ. վերջ – XIII դ. սկիզբ, Առինջ  
Khachkar late XII – early XIII century. Arinj
10. Хачкар конца XII – начала XIII вв. Ариндж

Խաչքար, XII դ. – XIII դ. Առինջ

Khachkar late XII – early XIII century. Arinj

11. Хачкар конца XII – начала XIII вв. Ариндж

Խաչքար, XII դ. վերջ – XIII դ. սկիզբ, Առինջ

Khachkar late XII – early XIII century. Arinj

12. Хачкар 1204 г. Аван

Խաչքար, 1204 , Ավան

Khachkar 1204. Avan

13. Хачкар конца XII – начала XIII вв. Ариндж

Խաչքար, XII դ. վերջ – XIII դ. սկիզբ, Առինջ

Khachkar late XII – early XIII century. Arinj

14. Хачкар конца XII – начала XIII вв. Ариндж

Խաչքար, XII դ. վերջ – XIII դ. սկիզբ, Առինջ

Khachkar late XII – early XIII century. Arinj



Фото 1.



Фото 2.



Фото 3.



Фото 4.



Фото 5.



Фото 6.



Фото 7.



Φοτο 8.



Φοτο 9.



Φοτο 10.



Φοτο 11.



Φοτο 12.



Φοτο 13.

**Tatyana Vardanesova – *On Issue of the Beginning of Formation of the Khachkar School. The Khachkars of Arinj of Late XII – Early XIII Century***

The article covers a period of formation of the khachkar school in Kotayq. On a case of a group of khachkars found in the historical cemetery of Arinj and dated late XII - early XIII century the article investigates into issues on khachkar composition patterns known as best specimens of the region. Depending on the style of their composition the studied khachkars were divided into four groups this predetermining the conditional “style of Arinj”. To some extent, the article considers also the technique and decorative peculiarities of the khachkar composition which underlain each of the four noted groups. This allowed identifying the undated khachkars.

ԿԵՐԵՆԸ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ  
Մ.Թ.Ա. I ՀԱԶԱՐԱՍՅԱԿԻ ԵՐԿՐՈՐԴ ՔԱՌՈՐԴՈՒՄ<sup>1</sup>

*Բանայի բառեր – Կերեն, Սյունիք, Բրան, Ուրարտու, խեցեղեն, կեռնու, ծորակ*

Մ.թ.ա. I հազ առաջին կեսը շրջադարձային եղավ ողջ Հայկական լեռնաշխարհի համար՝ պայմանավորված Վանի թագավորության առաջացմամբ, հզորացմամբ և անկմամբ: Վանի թագավորության մշակույթը ներթափանցեց նվաճված տարածաշրջանների կյանքի բոլոր ոլորտները՝ իր կնիքը թողնելով մշակութային նոր իրողությունների ձևավորման վրա:

**Ուրարտական ներթափանցումները Սյունիք**

Սյունիքում ուրարտական ներկայության մասին են վկայում Եղեգնաձորում հայտնաբերված դամբարանի պեղումների նյութերը, այդ թվում՝ զենքի և սպառազինության նմուշները, գոտիները, պերճանքի առարկաները, Մալիշկայից հայտնաբերված բրոնզե գոտին<sup>2</sup>, ինչպես նաև Գետափ-1 բիայնական ամրոցը<sup>3</sup>: Դրա վերաբերյալ որոշ տեղեկություններ կան նաև սեպագիր արձանագրություններում (Օձասար, Արևիս, Թանահատ)<sup>4</sup>:

Օձասարի արձանագրությունում վկայված Վանի թագավորության ուժերի առաջին ներթափանցումն Արաքսի ձախ ափ տեղի է ունեցել դեռևս մ.թ.ա. IX դ. վերջին տասնամյակներում և պետք է կապվի Իշպուինե և Մենուա թագավորների անունների հետ<sup>5</sup>: Մենուայի օրոք ուրարտացիների՝ Արաքսի ձախ կողմ անցնելը չէր բացառում դեռևս Բ. Պիոտրովսկին<sup>6</sup>:

Սակայն հարավային Սյունիքի և Արցախի ուղղությամբ ուրարտական ներթափանցման մասին մեր գիտելիքները խիստ սահմանափակ են:

<sup>1</sup> Այս աշխատանքը կատարված է «Պատմական Սյունիքը բրոնզի և երկաթի դարերում (ըստ նորագույն հնագիտական տվյալների)» 13-6A395 թեմայի շրջանակում:

<sup>2</sup> Տե՛ս **Есаян С. А.**, Урартеский пояс из Малишки, *ԼՀԳ*, 1977, թիվ 4, էջ 96-97; **Есаян С. А., Хникян О. С.**, Находки биайнских изделий в Ехегадзоре, «Բանբեր Երևանի Համալսարանի» (այսուհետև՝ ԲԵՀ) 1990, թիվ 3, էջ 34-38; **Esayan S.**, Gulterberleche der alteren Eizenzeit in Armenien «Beitrage zur Allgemeinen und Vergleichenden Archaologie», 1984, B. 6. Munchen 1985, S. 126-127; **Хникян О.**, Syuniq during Bronze and Iron Ages, Barrington, 2002, pp. 93-95:

<sup>3</sup> Տե՛ս **Melkonyan H., Karapetyan I., Yengibaryan N.**, The Excavations of newly found Urartian fortress in Getap, Aramazd, vol. V, is. 2, Yerevan, 2010, pp. 92-93, 95:

<sup>4</sup> Տե՛ս **Վարազդեղեան Յ.**, Նախիջեղեանի տարածքը ըստ սեպագիր աղբյուրների, «Հուշարձան Դ-Ե.» Երևան, 2008, էջ 55; **Арутюнян Н. В.**, Топономика Урарту, Ереван, 1985, с. 92, 126, 236:

<sup>5</sup> Տե՛ս **Վարազդեղեան Յ.**, նշվ. աշխ., էջ 55:

<sup>6</sup> Տե՛ս **Пиотровский Б. Б.**, Ванское царство, М., 1959, с. 64:

Ըստ Հ. Կարազյոզյանի՝ Մյունիքի և Արցախի բազմաթիվ տեղանուններ (Գորիս, Հոչանց, Բերձոր, Աղահեճք, Ջերմաջուր և այլն) հիշատակվում են ուրարտական տերության տարբեր հատվածներում հայտնաբերված արձանագրություններում<sup>1</sup>:

Ուրարտական մշակութային ավանդույթների՝ դեպի Հարավային Մյունիք ներթափանցման հարցը քննարկելիս հարկ է դիտարկել Մյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի Սգնակ գյուղում գտնված և Գորիսի թանգարանում պահվող առյուծի արձանիկը, որը, լինելով տեղական արտադրության, ունի բազմաթիվ զուգահեռներ զուտ ուրարտական հուշարձաններում (Թոփրակ-կալե, Տուշպա, Էրեբունի, Թեյշեբահինի, Նոր Արեշ)<sup>2</sup>: Ուրարտական ազդեցության կնիք (հատույթում եռանկյունաձև շուրթը) կրում է նաև Կապանի տարածաշրջանի Շահումյանի բնակատեղիից գտնված թասը<sup>3</sup>:

Արցախի տարածքում ուրարտական մշակույթի առաջին վկայություններին է 1994 թ. ԼՂՀ Գարեգին (նախկին Ֆիզուլի) քաղաքից ոչ հեռու Միրզաջանլի գյուղի մոտակայքում՝ անտիկ դամբանադաշտի տարածքում, հայտնաբերված ուրարտական խեցեղենը<sup>4</sup>:

Բնական է, որ նշված տվյալները ամենևին էլ չեն բացահայտում, թե ինչ չափով է ուրարտական մշակույթը ներթափանցել Հարավային Մյունիք և ինչ հետք է թողել: Նշված բացը որոշակիորեն լրացնում են ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Կովսականի ենթաշրջանի Կերեն գյուղում գտնված դամբանադաշտի պեղումները, որն իրականացնում է ՀՀ մշակույթի նախարարության պատմամշակութային ժառանգության գ/հ կենտրոնը:

## Կերենի հնավայրը

Կերենի հնավայրերի համակարգը տեղադրված է ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Կովսականի ենթաշրջանում՝ համանուն գյուղի տարածքում՝ ՀՀ Կապան մարզկենտրոնից 12 կմ հարավ-արևելք: Առ այսօր Կերենի տարածքում հաստատագրված է հինգ դամբանադաշտ: Բացի դրանից, այստեղ պահպանվել են երկու հին բնակատեղիի ավերակներ: Եվս մեկ բնակավայր և դամբանա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Կարազեղեան Յ.**, Սեպագիր տեղանուններ Այրարատում և հարակից նահանգներում, Երևան, 1998, էջ 110, 124, 135, 143, 147, 152, 170, 184, 189, 190, 253, ինչպես նաև **Аругюнян Н. В.**, նշվ. աշխ., էջ 89-92, 126, 236, 252:

<sup>2</sup> Տե՛ս **Есаян С. А., Шагинян А. И.**, Археологические находки в Зангезуре, Советская археология (далее – СА) 1962, N 3, с. 205-206:

<sup>3</sup> Տե՛ս **Аветисян Г. Г.**, Биайнская керамика из памятников Арагатской долины, Ереван, 1992, таб. L, XV (9): Կապանի Շահումյանի բնակատեղին և դամբանադաշտը 2012 թ. ուսումնասիրել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը (Ս. Գնունի, Գ. Խաչատրյան, Ս. Թաղևոսյան, Վ. Օստրյան):

<sup>4</sup> Տե՛ս **Միմոնյան Հ., Գնունի Ա.**, Արցախի ազատագրված տարածքների հնագույն, նախաքրիստոնեական և միջնադարյան բնակավայրերը, «ՀՀ-ում 1993-1995 թթ. հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ» (այսուհետև՝ թեզիսներ), Երևան, 1996, էջ 70-71:

դաշտ հայտնի են Կերենից 2 կմ արևմուտք ընկած ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Գրհամ գյուղի տարածքում:

Պեղումներից պարզ դարձավ, որ դամբանադաշտը գոյատևել է մ.թ.ա. XIII դարից մինչև մ.թ.ա. VII-V դդ., թեպետ առանձին նյութեր կարելի է թվագրել ուշ անտիկ և միջնադարյան ժամանակաշրջաններով<sup>1</sup>: Կերենի դամբանադաշտերի համալիրն իր առավելագույն չափերին հասել է հենց մ.թ.ա. VII-V դդ.: Այս ժամանակաշրջանի նյութեր հայտնաբերված են Կերենի բոլոր դամբանադաշտերում և բնակատեղիներում, ինչպես նաև Կերենին մերձակա Շիկահողի դամբանադաշտում, Միջնավանում (ՔԵԹ ի/հ 110/5), Սուլթանլուում (Ջեբրայիլի շրջ.) (ՔԵԹ ի/հ 118/9, 119/9), Հաղրութում<sup>2</sup>: Այս ամենը վկայում է ուրարտական և հետուրատական ժամանակաշրջաններում Սյունիքի և Արցախի հարավային շրջանների խիտ բնակեցված լինելու մասին:

## Խեցեղենի ձևերը

Կերենի պեղումներից հայտնաբերված ամենազանգվածային նյութը խեցեղենն է, որի վերլուծությունը թույլ է տալիս կատարել մի շարք կարևոր եզրակացություններ:

Նախ և առաջ պետք է նշել, որ Կերենի նյութական մշակույթը, սկսած մ.թ.ա. II հազարամյակից, զարգանում է Հայկական լեռնաշխարհի երկաթեդարյան մշակույթի ընդհանուր համատեքստում (Կարմիր Բլուրի նախաուրարտական շերտ, Դվին, Էլառ, Լոռի Բերդ, Բերդ, Սյունիքի հուշարձաններ և այլն) (նկ. 1)<sup>3</sup>:

Մ.թ.ա. I հազ. խեցեղենում ընդհանուր օրինաչափությունների պահպանման մասին վկայում են խեցեղենի այնպիսի առանձնահատկություններ, ինչպես սափորների լայն հարթ հատակները, գնդաձև իրանները և փողաձև վզերը:

Միևնույն ժամանակ, Հարավային Սյունիքի և Կերենի խեցեղենին բնորոշ են մի շարք հատկանշական գծեր, որոնք թույլ են տալիս հավաստել բիայնական խեցեղենի անժխտելի ազդեցության մասին: Այսպես, ուրարտական բազմաթիվ զուգահեռներ դիտարկվում են Հարժիսի, Շիկահողի, Տանգավերի պեղումներից հայտնաբերված խեցեղենում: Մանավանդ ուշադրության է

---

<sup>1</sup> Տե՛ս **Միսնյան Հ., Սանամյան Հ., Գևունի Ա.**, Արցախի և ազատագրված տարածքների 1990-2005 թթ. հնագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները, ցուցահանդեսի ցանկ, Երևան, 2007, էջ 43, իր 106:

<sup>2</sup> Միջնավանի և Սուլթանլուի նյութերը պահպանվում են ԼՂՀ Բերձոր ք. Քաշաթաղի Երկրագիտական թանգարանում (այսուհետև՝ ՔԵԹ): Այստեղ և ստորև Քաշաթաղի երկրագիտական թանգարանի ցուցանմուշների ինվենտար համարների հղումները տրվում են տեքստում: **Хнкикян О.**, նշվ. աշխ., էջ 83-84, **Минкевич-Мустафаева Н. В.**, Об археологических находках из сел. Доланлар, «Материальная культура Азербайджана» (далее – МКА) т. 1, Баку, 1949, с. 53-57:

<sup>3</sup> Տե՛ս **Мартirosян А. А.**, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, с. 177, рис. 73; **Кушнарева К. Х.**, Древнейшие памятники Двина, Ереван, 1977, с. 19-27; **Деведжян С. Г.**, Лори Берд -1, Ереван, 1981, таб. XXIX; **Есаян С. А.**, Древняя культура племен Северо-Восточной Армении, Ереван, 1976, таб. 143; **Խանգաղյան Է. Վ.**, Էլառ-Դարանի, Երևան, 1973, էջ 83:

արժանի ուրարտական խեցեգործության մեջ բազմաթիվ գուգահեռներ ունեցող երկկանթ անոթը Հարժիսի դամբանադաշտից<sup>1</sup>: Ավելին, Խոտի բնակատեղիում պեղվել են ուրարտական անոթների ուղղակի նմանակներ<sup>2</sup>:

Ուրարտական նյութում (Կարմիր Բլուր) իրենց գուգահեռներն ունեն նաև Կերենի N 1 և 106 դամբարաններից հայտնաբերված կարասները<sup>3</sup>:

Կերենում ուրարտական գուգահեռներ ունեցող խեցեղենի նմուշների թվում հարկ է նշել թիվ 31 դամբարանից հայտնաբերված թաղարը<sup>4</sup>:

Իրենց ձևերով, սակայն ոչ խեցեղենի որակով, ուրարտականներին են մոտիկ Կերենի անկանթ սափորներից մի քանիսը (ՔԵԹ ի/հ 175/21)<sup>5</sup>: Կերենի խեցեղենում երևան են գալիս նաև ուրարտական սափորներին հատուկ ձգված համամասնությունները (նկ. 3, 4):

Չնայած ուրարտական մշակույթն իր հերթին որոշակի ազդեցություն է ունեցել իրանական աշխարհի վրա, ուրարտական պետության անկումը մ.թ.ա. VI դ. չէր կարող չհանգեցնել իրանական ազդեցության ուժեղացմանը<sup>6</sup>: Իրանական գուգահեռներ դիտվում են ինչպես Կերենից հայտնաբերված խեցեղեն անոթների ձևերում, այնպես էլ զարդանախշերում:

Իրանական նյութում գուգահեռները ևս բազմազան են<sup>7</sup>: Դրանք նախ և առաջ գնդաձև իրանով և գլանաձև վզով սափորներ են<sup>8</sup>: Ինչպես իրանական, այնպես էլ ուրարտական նյութում իր գուգահեռներն ունի կորացող իրանով և կարճ վզով անոթը (ՔԵԹ ի/հ 192/21), որի նմանակներից է Կարմիր Բլուրից հայտնաբերված բրոնզե անոթը: Վերջինս իր հերթին նմանություններ ունի Ամու Դարյայի գանձի թիթեղի վրա պատկերված անոթի հետ<sup>9</sup>:

Ուրարտական նյութում իրենց բազմաթիվ գուգահեռներն ունեն Կերենում հաստատագրված տափակ և աղեղնաձև կանթերը (ՔԵԹ ի/հ 166, 170, 180, 195, 200, 201, 207, 210/21)<sup>10</sup> (նկ. 5, 6): Նմանատիպ կանթեր հաստատագրված են նաև իրանական աշխարհում<sup>11</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս **Xnkikyan O.**, նշվ. աշխ., էջ 81, աղ. LXXV (17):

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, աղ. LXXVIII (3,15):

<sup>3</sup> Տե՛ս **Аветисян Г. Г.**, նշվ. աշխ., աղ. II (5, 10):

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, աղ. XL; **Գնունի Ա., Խաչատրյան Գ., Հմայակյան Ս., Միմոնյան Հ.**, Դիտարկումներ Կերենի դամբարանադաշտի վերաբերյալ, «Հին Հայաստանի մշակույթը,» պր. XIII, Երևան, 2005, աղ. 2, նկ. 5:

<sup>5</sup> Տե՛ս **Аветисян Г. Г.**, նշվ. աշխ., աղ. XV:

<sup>6</sup> Տե՛ս **Տիրացյան Գ.**, Ուրարտական քաղաքակրթությունը և Աքեմենյան Իրանը, ՊԲՀ, 1964, թիվ 2, էջ 151:

<sup>7</sup> Տե՛ս **Аветисян Г. Г.**, նշվ. աշխ., էջ 44:

<sup>8</sup> Տե՛ս **Ռեզա Խաթրարի Ս.**, Պեղումներ Քոլորզում, Գիլան, «Շոշի հնագիտական գիտա-ժողովի հուշագիրք», Շոշ, 1996 (պարսկ.), էջ 117, նկ. դ, վ, էջ 118, նկ. մ:

<sup>9</sup> Տե՛ս **Տիրացյան Գ.**, նշվ. աշխ., էջ 158:

<sup>10</sup> Տե՛ս **Գնունի Ա., Խաչատրյան Գ., Հմայակյան Ս., Միմոնյան Հ.**, նշվ. աշխ., աղ. 1, նկ. 2, 4, 13, 22: **Аветисян Г. Г.**, նշվ. աշխ., աղ. LXIII-LXIV:

<sup>11</sup> Տե՛ս **Ռեզա Խաթրարի Ս.**, նշվ. աշխ., էջ 117, նկ. դ, վ:



Կանթերի հաջորդ տիպը վերին հատվածում անոթին չհպվող աղեղնաձև կանթերն են: Կերենի նյութում դրանք հաստատագրված են թիվ 97 դամբարանում և ավարտվում են մի դեպքում հովհարաձև, մյուս դեպքում՝ եռանկյունաձև հատվածով (նկ. 7): Ուրարտական իրականության մեջ նմանատիպ կանթ հաստատագրված է Կարմիր Բլուրում. այն բրոնզե կաթսայի առյուծազարդ կանթ է՝ Արգիշտիի որդի Սարդուրիի արձանագրությամբ: Այս տիպի կանթն իր գուգահեռներն ունի էտրուսկյան նյութում<sup>1</sup>: Իրանի ուրարտական նյութում (Ջենդան, Թյուրենգ թեփե, Հոթա) իր գուգահեռներն ունեն Կերենում հաճախ հանդիպող ուղղահայաց և հորիզոնական ունկաձև կանթերը<sup>2</sup>:

Կերենի խեցեղենում առանձին խումբ են կազմում ծորակավոր անոթները, որոնք իրենց գուգահեռներն ունեն ինչպես հայաստանյան երկաթեդարյան նյութում, այնպես էլ ուրարտական, իրանական և միջերկրածովյան շրջաններից հայտնի խեցեղենում: Ծորակավոր անոթները, հանդես գալով Իրանական սարահարթում և Միջագետքում դեռևս մ.թ.ա. V-IV հազարամյակներում, հատուկենտ օրինակներով հայտնի են նաև Հայկական լեռնաշխարհից<sup>3</sup>: Մ.թ.ա. II-I հազ. սահմանագլխում նմանատիպ անոթները նորից տարածվում են Հայկական լեռնաշխարհում: Մյունիքում այդպիսի անոթներ հայտնաբերվել են Արվականում (ՔԵԹ ի/հ 12/1), Խնածախում, Միսիանի առաջին դամբանադաշտում, Ջորաքարերում, Եղեգնաձորում և այլուր<sup>4</sup>:

Կերենի ծորակավոր անոթները ներկայացված են մի քանի տիպով. ա. դեպի վեր ձգվող ծորակներ (թիվ 90, 97, 101 դամբարաններ) (նկ. 8), բ. կորացող կենդանազարդ ծորակներ (թիվ 96 դամբարան) (նկ. 9), գ. դեպի վեր ձգվող երկու գուգահեռ ծորակներ (պատահական գտածո): Ուրարտական հուշարձաններից դեպի վեր ձգվող ծորակով անոթներ հայտնի են Օշականից, Կարմիր Բլուրից, Էրեբունուց<sup>5</sup>: Իրանական նյութում նմանատիպ ծորակներ հայտնի են Մուզիից, Ամլաշից, Խուրվիինից, Ագրաբ թեփեից և այլ վայրերից<sup>6</sup>: Այդօրինակ

<sup>1</sup> Տե՛ս **Пиотровский Б. Б.**, Искусство Урарту, Л., 1962, с. 65:

<sup>2</sup> Տե՛ս **Kroll S.**, Keramik Urartischer festungen in Iran, Berlin, 1976, S. 112:

<sup>3</sup> Ծորակավոր անոթների վաղագույն օրինակները տե՛ս **Թորոսյան Ռ.**, Թեղուտի վաղ երկրագործական բնակատեղին, Երևան, 1979, տախտ. V, նկ. 6: **Փիլիպոսյան Ա.**, Հայկական լեռնաշխարհը Մերձավոր Արևելքի պամամշակութային փոխառնչությունների ոլորտում (մ.թ.ա. III-I հազ.), պ.գ.դ. ատեն. սեղմագիր, Երևան, 2004, էջ 15:

<sup>4</sup> Տե՛ս **Փիլիպոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 15, **Գևունի Ա.**, **Խաչատրյան Գ.**, Նորահայտ հուշարձաններ Աղավնո գետի վերնահոսանքում, «Հուշարձան Ջ», Երևան, 2010, էջ 57-58; **Хнкикян О.**, նշվ. աշխ., էջ 57, 60, 63, աղ. XXIV, XL (21), XLV (26), LX (12):

<sup>5</sup> Ի դեպ, Արգիշտիիսինիից հայտնաբերվել է նաև ծնկաձև ծորակով անոթ, որն ունի իր գուգահեռները Թել Բարսիպայում: Տե՛ս A Guide to the National Museum of Aleppo. Damascus 2010 (then – A Guide...) p. 73, **Аветисян Г. Г.**, նշվ. աշխ., աղ. XXVIII (1-3), XXIX (1):

<sup>6</sup> Տե՛ս **Vanden Berghе L.**, Archéologie de l'Iran Ancien, Leiden, 1966, p. 86; Iranian Ceramic assemblages represented in the Milwaukee Public Museum <http://www.Mpm.Edu/collections/artifacts/history/Iranian/collection.>, (then - Iranian Ceramic assemblages ) A 54051/19886, A54096/19970, O. W. Maskurella. Excavations at Agrab tepe. Iran <http://www.Metmuseum.org/pubs/journals> p. 56 fig 14 (4,5); **Лукоини В. Г.**, Искусство Древнего Ирана, М., 1977, с. 38:

ծորակով անոթների ավելի ուշ նմուշներ հայտնի են նաև Մինգեչաուրից<sup>1</sup>: Մյունիքյան հնագիտական նյութում նմանատիպ ծորակներ հայտնի են Շիկահողից (ԿԵԹ ի/հ 776), Խնածախից<sup>2</sup>: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Կերենի թիվ 90 դամբարանից հայտնաբերված անոթը, որը զարդարված է թեք զուգահեռ փորագիր շտրիխների ուղղահայաց զարդագոտիով: Այս առանձնահատկությունը որոշակիորեն ֆալիկ տեսք է հաղորդում ծորակին: Ֆալուս-ծորակ կապը հազվադեպ չէ հնագիտական նյութերում (տե՛ս օրինակ՝ ՔԵԹ ի/հ 28/2, 40/2): Այս առումով պետք է նշել Թել Բարսիպայի խեթական թաղումից հայտնաբերված անոթը, որի ծորակը անոթի վրա տեղադրված տղամարդու ֆալիկ արձանի բաղկացուցիչ մաս է<sup>3</sup>:

Մյունիքում կենդանակերպ կորացող ծորակներ հայտնաբերվել են Ախլաթյանում, Դիցմայրիում (ԿԵԹ ի/հ 7558), Կապանից ոչ հեռու գտնվող Թեղուտ հնավայրում (ԿԵԹ ի/հ 1002)<sup>4</sup>: Իրանում կորացող ծորակով անոթներ հայտնի են Քոլորդից<sup>5</sup>: Մերձավորարևելյան զուգահեռներ ունի նաև ծորակի կենդանակերպ ձևավորումը (Զիվիյե, Ամլաշ, Անտիոքի հովիտ, Թել Բարսիպա)<sup>6</sup>:

Երկու զուգահեռ ծորակներով անոթն ընդհանրություններ ունի Ալազանիի ավելի ուշ շրջանի դամբարանների նյութերում<sup>7</sup>:

Հարավային Մյունիքի նյութում հաստատագրված են նաև անոթի հակադիր կողմերում տեղադրված ծորակներ (Դիցմայրի) և կիսախողովակաձև ծորակներ (Շահումյան):

Ծորակավոր անոթների շարքին կարելի է դասել նաև Կերենի թիվ 101 դամբարանից պեղված զամբյուղաձև անոթը, որի ծորակը միակցված է զամբյուղաձև կանթին (նկ. 10): Սույն անոթն իր ուղղակի զուգահեռն ունի Շիրակավանի առաջին դամբանադաշտի հ. 10 դամբարանում: Նմանատիպ անոթներ հայտնի են Մինգեչաուրի IV դամբանաբլուրից, Խնձորեսկից, Նորաշենիկից (ԿԵԹ ի/հ 3811), Դվինից և թվագրվում են մ.թ.ա. IX-VIII դդ<sup>8</sup>: Այս տիպի անոթներին հատուկ ծորակի և վզի հատվածի կցոնման եղանակ արձանա-

<sup>1</sup> Տե՛ս **Казиев С. М.**, Археологические раскопки в Мингечауре, МКА, с. 38; *նույնի* Археологические памятники в Мингечауре, МКА, с. 77:

<sup>2</sup> Նյութերը պահպանվում են Կապանի Երկրագիտական թանգարանում (այսուհետև՝ ԿԵԹ): Այսուհետ ԿԵԹ-ի ցուցանմուշների ինվենտար համարների հղումները տրվում են տեքստում: Տե՛ս **Xnkikyan O.**, նշվ. աշխ., աղ. XXXIX (8):

<sup>3</sup> Տե՛ս A Guide... p. 73:

<sup>4</sup> Տե՛ս **Հասրաթյան Մ.**, Հնագիտական հետազոտություններ Միսիանում; *նույնի*՝ Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985, էջ 169-170, աղ. 4 ա:

<sup>5</sup> Տե՛ս **Ռեզա Խաթթարի Մ.**, նշվ. աշխ., էջ 118, նկ. ք:

<sup>6</sup> Տե՛ս Iranian Ceramic assemblages...N 28699/25965, A Guide... pp. 73-74, **Vanden Berghe L.**, նշվ. աշխ., էջ 113-115, նկ. 143 (b):

<sup>7</sup> Տե՛ս **Ниорадзе Г.**, Раскопки в Алазанской долине, **Ниорадзе Г.**, Труды, т. 1, Тбилиси, 2011, с. 185, рис. 8:

<sup>8</sup> Տե՛ս **Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ.**, Հին Շիրակավան, Երևան, 2002, էջ 113, աղ. LXV (8), **Асланов Г., Ваидов А., Ионз И.**, Древний Мингечаур, Баку, 1959, таб. LXII (2,3):

գրված է նաև Միսիանի առաջին դամբանադաշտի նյութերում<sup>1</sup>: Զամբյուղաձև կանթով ծորակավոր անոթներ ընդհանրապես հայտնի են Իրանի տարածքից դեռևս ուշ բրոնզի դարից (Թել ի Շուղա)<sup>2</sup>: Երկաթեդարյան հուշարձաններում նմանօրինակ կանթեր հանդիպում են Հյուսիսարևմտյան Իրանի մի շարք հուշարձաններից (օր.՝ Հասանլուի դամբանադաշտից և Լուրիստանից), ընդ որում՝ լուրիստանյան անոթի ծորակը ևս կցված է զամբյուղաձև կանթին<sup>3</sup>:

Կերենի խեցեղենի հավաքածուում որոշակի տեղ են գրավում կեռնոս-անոթները: Դրանք Հայկական լեռնաշխարհում լայնորեն տարածվում են մ.թ.ա. I հազ. և ունեն իրենց բազմաթիվ գուգահեռներն Իրանում և Միջերկրականի ավազանում: Կերենի թիվ 64 դամբարանում գտնված կեռնոսը ունի իր մերձավոր գուգահեռները Տանգավերում, Շիկահողում (ԿԵԹ ի/հ 84) և Կապանից ոչ հեռու՝ Թեղուտում (ԿԵԹ ի/հ 85): Կեռնոսների այս խումբը բավականաչափ մոտենում է Պերսեպոլից գտնված անոթին (նկ. 11)<sup>4</sup>:

Սակայն Կերենից հայտնաբերված կեռնոսների մեկ այլ տիպ՝ համեմատաբար փոքր անոթներ՝ գլխավոր փողին հպված երկրորդ փողով, ավելի մոտ է ուրարտական նախատիպերին, մասնավորապես Օշականի թիվ 25 դամբարանից հայտնի անոթին, ինչպես նաև Իրանում՝ Փաշանդից հայտնաբերված անոթին<sup>5</sup> (նկ. 12):

Երկրորդ փողի հայումը գլխավոր փողին նկատելի է դեռևս Բիբլոսից գտնված անոթին, իսկ Անդրկովկասում՝ Ալազանի հովտից գտնվածին<sup>6</sup>:

Տարածաշրջանում հայտնաբերված կեռնոս տիպի ևս մեկ անոթ հայտնի է Միջնավանից (ՔԵԹ ի/հ 109/5): Եռափող այս անոթն իր կառուցվածքով առավել մոտ է Դվինի և Մինգեչաուրի կեռնոսներին<sup>7</sup>:

Կերենի թիվ 64 դամբարանից, ինչպես նաև պատահական գտնված միակցված անոթները (ՔԵԹ 172/21) իրենց գուգահեռներն ունեն ինչպես Անդրկովկասում (Մինգեչաուր), այնպես էլ իրանական, սիրիական և միջերկրածովյան նյութում (Կարքեմիշ, Մարլիկ, Միակ Ե, Ամլաշ)<sup>8</sup> (նկ. 13,14):

Թիվ 64 դամբարանից գտնված կենդանակերպ անոթը ցլակերպ է: Նմանատիպ անոթներ մ.թ.ա. I հազարամյակի երկրորդ քառորդում տարածվում են Հայաստանում և Անդրկովկասում (Մինգեչաուր, Մուսիերի, Խրտանոց,

<sup>1</sup> Տե՛ս **Xnkikyan O.**, նշվ. աշխ., աղ. XL II (19):

<sup>2</sup> Տե՛ս **Vanden Berghe L.**, նշվ. աշխ. էջ 43-44, աղ. 53 (b), **Xnkikyan O.**, նշվ. աշխ., էջ 69, աղ. LVI (16):

<sup>3</sup> Տե՛ս **М. Н. Погребова.** Иран и Закавказье в раннем железном веке, М., 1977, с. 104-105, Iranian Ceramic assemblages...N24340/2718 և N283803/24331, **Vanden Berghe L.**, նշվ. աշխ., pp. 93-95, 116, pl. 123 (a, b), 146 (a):

<sup>4</sup> Տե՛ս **Girshman R.** Iran. L., 1954, p. 184:

<sup>5</sup> Տե՛ս **Есаян С. А., Калантарян А. А.,** Ошакан I, Ереван, 1988, таб. XLVIII, **Vanden Berghe L.**, նշվ. աշխ., էջ 124 աղ. 158:

<sup>6</sup> Տե՛ս **Ниорадзе Г.,** նշվ. աշխ., 235, նկ. 73 (a, b):

<sup>7</sup> Տե՛ս **Кушнарева К. X.,** նշվ. աշխ., էջ 22, **Асланов Г., Ваидов Р., Ионэ Г.,** նշվ. աշխ., աղ. XLI:

<sup>8</sup> Տե՛ս **Միսնյան Հ., Մամախյան Հ., Գևունի Ա.,** նշվ. աշխ., էջ 32, իր 52-53, A Guide... 2010, p 72; Iranian Ceramic assemblages...N15821/21368; **Асланов Г., Ваидов Р., Ионэ Г.,** նշվ. աշխ., աղ. XLI:

Երևան, Ագարակ, Շիկահող, Կապան (ԿԵԹ ի/հ 817, 1005), Բաղաբուրջ, Խնածախ, Գեղանուշ, Տանձավեր) (նկ. 15)<sup>1</sup>:

Նմանատիպ անոթներ հայտնի են դեռևս մ.թ.ա. III հազարամյակից (Էգեյան աշխարհից՝ Մեսաբե, Ֆիլոկոպիա, Անատոլիայից՝ Քյուլ թեփե<sup>2</sup>, Արևմտյան Հայաստանից՝ Էրզրումի տարածաշրջանից (Erzurum\_museum.)<sup>3</sup>: Իրանական նյութում կենդանակերպ անոթներ հայտնի են Խուրվիինից, Միակից, Հասանլուից, Մակուից, Զիվիյեից<sup>4</sup>: Այս տիպի անոթները լայնորեն տարածվում են ողջ մերձավորարևելյան տարածաշրջանում՝ ընդհուպ մինչև Կարթագեն՝ Թիննիթի դամբանադաշտ<sup>5</sup>:

Կերենի խեցեգործական արտադրանքի մեջ առանձնահատուկ պետք է նշել թիվ 64 դամբարանից հայտնաբերված անգորպապտ թրծակավից պատրաստված տղամարդու սնամեջ արձանիկը (նկ. 16)<sup>6</sup>:

Արձանի ձևերին, ճակատին և վզին կետային եղանակով կատարված զարդանախշ կա: Արձանիկի ճակատը նշված է ռելիեֆ եղանակով, դեմքը հարթ է, աչքերը և բերանը նշված են խոր անցքերով և ճեղքով: Կրծքին ունի մանյակ, ուսին՝ լանջագոտի, կոնքի հատվածում՝ գոտի: Թեթևակի կամիթով նշված է ֆայը, քիչ վերև՝ եղեննաձև զարդանախշ: Արձանիկի աջ ձեռքին գավաթ է: Իր ոճական առանձնահատկություններով նկարագրված արձանիկը, ըստ Բ. Առաքելյանի բնորոշման, դասվում է ավանդական-պայմանական ստեղծագործությունների թվին<sup>7</sup>: Այս արձանին առավել մոտ նմուշը հայտնաբերված է Կապան քաղաքից ոչ հեռու՝ Թեղուտ հնավայրում, և պահպանվում է Կապանի երկրագիտական թանգարանում (ԿԵԹ ի/հ 94, 1017): Նմանատիպ արձանիկ կա նաև Էրզրումի թանգարանում, սակայն այն, ի տարբերություն կերենյան օրինակի, պատկերված է ոչ թե մերկ, այլ հագուստով (Erzurum\_museum.): Հարկ է նշել, որ Էրզրումյան արձանիկը թեպետ իր կոմպոզիցիոն առանձնահատկություններով խիստ նմանվում է կերենյան արձանիկին, սակայն կերտվածքով ավելի մոտ է ուրարտական արվեստի նմուշներին, մասնավորապես՝ Կարմիր Բլուրից հայտնի աստվածությունների արձանիկներին<sup>8</sup>: Գավաթով տղամարդկանց

<sup>1</sup> Տե՛ս **Խնկիկյան Օ.**, Չանգեզուրում հայտնաբերված ծիսական իրեր, ՊԲՀ, 1988, թիվ 1, էջ 238, 239, **Хнкикян О.**, նշվ. աշխ., աղ. LXXIII (15), **Асланов Г., Вандов Р., Ионэ Г.**, նշվ. աշխ., աղ. XXXVII (8, 11), **Погребова М. Н.**, նշվ. աշխ., էջ 96; **Мартиросян А. А.**, նշվ. աշխ., աղ. XXVIII; **Аветисян П. С.**, Предварительные результаты раскопок памятника Агарак, «Археология, этнология и фольклористика Кавказа», Св. Эчмиадзин, 2003, с. 36:

<sup>2</sup> Տե՛ս **Сидорова Н. А.**, Искусство Эгейского мира, М., 1972, с. 47, 80, рис. 36, 77; **Маккуин Дж. Г.**, Хетты и их современники в Малой Азии, М., 1983, с. 15, рис. 6:

<sup>3</sup> Տե՛ս [http://www.pbase.com/dosseman/Erzurum\\_museum](http://www.pbase.com/dosseman/Erzurum_museum). Այստեղ և ստորև Էրզրումի թանգարանի նյութերին հղումները՝ տեքստում:

<sup>4</sup> Տե՛ս **Погребова М. Н.**, նշվ. աշխ., էջ 96-99; **Vanden Berghe L.**, նշվ. աշխ., աղ. 150 (b); **Dandamaev M., Lukonin V.**, The Culture and Social Institutions of Iran, Cambridge, 1989, p. 95, pl. 14:

<sup>5</sup> Տե՛ս **Дональд Х.**, Финикийцы-основатели Карфагена, М., 2004, рис. 22:

<sup>6</sup> Տե՛ս **Գնունի Ա.**, Կերենի «քրմական» դամբարանը, ԲԵՀ, 2006, թիվ 3, էջ 215-216, նկ. 1:

<sup>7</sup> Տե՛ս **Аракелян Б. Н.**, Очерки по истории искусства древней Армении, Ереван, 1976, с. 14-16:

<sup>8</sup> Տե՛ս **Есаян С. А.**, Скульптура Древней Армении, Ереван, 1980, с. 56, таб. 50, 51; **Пиотровский Б. Б.**, Кармир Блур II, Ереван, 1952, с. 24-26, таб. 20, 21:

արձաններ հայտնի են նաև Իրանից (Լուրիստան, Մարլիկ-թեփե)<sup>1</sup>: Արձանիկի լանջակապը պատկերված է երկու զուգահեռ փորագիր անփույթ զծերով, որոնց արանքում դրոշմված են սույար նշաններ: Ամենայն հավանականությամբ, քանդակագործը այսպես պատկերել է կաշվե լանջակապը, որի վրա պատկերված են մետաղական վահանակներ: Մ.թ.ա. I հազ. հայաստանյան հուշարձաններում լանջակապը զարդարում է Ջառջառիսից և Կապանից գտնված արձանիկների, ինչպես նաև Թոփրակ Կալայի սֆինքսի իրաններ: Լանջակապ է պատկերված նաև լուրիստանյան արձանիկներից մեկի վրա<sup>2</sup>: Արձանիկի աջ ձեռքի գավաթն ունի կոնաձև, քիչ կորացող իրան և փոված շուրթ, որը այն մոտեցնում է մ.թ.ա. VII-V դդ. նմուշներին<sup>3</sup>:

Կերենի պեղումներից հայտնաբերված են նաև եռոտանի անոթներ (թիվ 74, 96, 97 դամբարաններ), որոնք կարելի է բաժանել 2 խմբի. ա. կարճ գլանաձև ոտքեր (թիվ 96, 97 դամբարաններ) (աղ. 2, նկ. 5), մի դեպքում՝ գայլիկոնված անցքերով (թիվ՝ 97 դամբարան), բ. կենդանակերպ ոտքեր (թիվ 74 դամբարան) (աղ. 2, նկ. 4)<sup>4</sup>: Անոթների վերջին տիպն իր զուգահեռներն ունի Հայաստանում՝ սկսած ուշ բրոնզի դարաշրջանից (Շիրակավան)<sup>5</sup>: Հետագա դարաշրջանում նմանատիպ անոթներ հաստատագրված են Շիկահողի, Գեղամի աղբյուրի, Այդրանի թալայի դամբանադաշտերում<sup>6</sup>: Իրանական նյութում նմանատիպ անոթ հաստատագրված է Ամլաշից<sup>7</sup>:

## Անոթների զարդանախշում

Վանի թագավորության խեցեղենի ազդեցությունը նկատելի է նաև անոթների զարդանախշման սկզբունքներում: Կերենի խեցեղենին (ՔԵԹ ի/հ 195/21) հատուկ է բիայնական խեցեղենին բնորոշ իրանից դեպի վիզը ռելիեֆ անցումը (նկ. 17)<sup>8</sup>:

Ուրարտական ազդեցության մասին են վկայում սափորներից մեկի իրանին թրծումից առաջ կատարված ուղղահայաց խազերը (ՔԵԹ ի/հ 195/21): Ուրարտում նմանատիպ խազերով որոշվում էր տվյալ անոթի տարրողությունը (Էրեբունի, Կարմիր Բլուր)<sup>9</sup>: Հասկանալի է մոխրագույն

<sup>1</sup> Ste u E. Negahban, Notes on some objects from Marlik, Journal of Near Eastern Studies, 1965, N 4 p. 317, fig. 10:

<sup>2</sup> Ste u Есаян С. А., Скульптура, таб. 47, 51 (3); Пиотровский Б. Б., Искусство..., рис. 77-78; Girshman R., նշվ. աշխ., աղ. 6:

<sup>3</sup> Ste u Ի. Գարապետյան, Հայաստանի նյութական մշակույթը մ.թ.ա. VI – IV դդ., Երևան, 2003, աղ. 31, նկ. 1, Girshman R., նշվ. աշխ., աղ. 13 (b):

<sup>4</sup> Ste u Միմոնյան Հ., Սանամյան Հ., Գնունի Ա., նշվ. աշխ., էջ 40, իր 90:

<sup>5</sup> Ste u Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ., նշվ. աշխ., էջ 38, աղ. XXXVI:

<sup>6</sup> Ste u Хнкикян О., նշվ. աշխ., աղ. LXXX, Есаян С. А., Древняя культура племен Северо-Восточной Армении, Ереван, 1976, с 139-140, 144, таб. 129 (11):

<sup>7</sup> Ste u Iranian Ceramic assemblages...A54053/19886:

<sup>8</sup> Ste u Аветисян Г. Г., նշվ. աշխ., էջ 44:

<sup>9</sup> Ste u Գարապետյան Մ., Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Երևան, 1971, էջ 72-73; Пиотровский Б. Б., Кармир Блур III, Ереван, 1955, с. 10:

սափորի իրանի զարդանախշը, որը ներկայացված է պլատոնյան 4 խաչերով, որոնք ավարտվում են շրջանակներով (ՔԵԹ ի/հ 210/21) (նկ. 18):

Թե՛ պլատոնյան խաչը և թե՛ շրջանակները Վանի թագավորության խեցեղեն նյութում հայտնի են որպես հիերոգլիֆիկ նշաններ, սակայն Կերենի վարպետը դրանք օգտագործել է որպես զարդանախշ<sup>1</sup>:

Ուրարտական նյութում իր գուգահեռներն ունի Կերենի թիվ 106, 107, երկրորդ դամբանադաշտի թիվ 1 դամբարաններից գտնված կարասները զարդարող ռելիեֆ ուղղանկյուն զարդագոտին<sup>2</sup>:

Թել Ագրաբում իր գուգահեռներն ունի նաև Կերենում տարածված ցանցատիպ նախշը (թիվ 96 դամբ.):<sup>3</sup>

Կերենի անոթների ամենատարածված զարդանախշերից է կենդանակերպը: Կերենում այն հանդես է գալիս երկու եղանակով. ա. անոթի իրանը օղակող ռելիեֆ զարդանախշ: Դրա օրինակներից է թիվ 31 դամբարանից գտնված սափորի իրանը օղակող օձանման զարդանախշը (նկ. 19)<sup>4</sup>, բ. կենդանակերպ կեղծ կանթեր: Դրանք խոյազուլիս (հ. 24 և 64 դամբարաններ) (նկ. 20, 21), ցլագուլիս (ՔԵԹ ի/հ 178/21) (նկ. 22) և կտցաձև (ՔԵԹ ի/հ 180/21) (նկ. 23) կեղծ կանթեր են<sup>5</sup>: Յլագուլիս անոթներ հայտնի են դեռևս Դվինից<sup>6</sup>: Մեծ քանակությամբ նմանատիպ զարդանախշ հանդիպում է ուրարտական նյութում ինչպես խեցեղենի (Ավտոագրեգատ գործարանի դամբարան, Կարմիր Բլուր, Արգիշտիխինիլի), այնպես էլ մետաղյա սպասքի վրա (Ալթին թեփե)<sup>7</sup>: Բազմաթիվ գուգահեռներ ունեն նաև Կերենում հաստատագրված շերեփի խոյակերպ և հալոցի թռչնակերպ բռնակները (ՔԵԹ ի/հ 162/21) (նկ. 24, 25)<sup>8</sup>:

Շերեփի խոյակերպ բռնակներն Անդրկովկասում և Հայաստանում գուգահեռներ ունեն Մինգեչաուրում, Խանլարում, Խոջալուում, Արմավիրում, Ախլաթյանում, իսկ թռչնակերպ բռնակը՝ Լոռի Բերդում<sup>9</sup>: Կերենում հայտնաբերված խոյազուլիս շերեփն ունի իր նախատիպերը դեռևս մ.թ.ա. II հազ. կեսի Սուզիի նյութերում, ինչպես նաև Հասանլուից և Միակլից, Զիվիլեից: Կենդանակերպ բռնակներն ունեն նաև արևմտյան գուգահեռներ մ.թ.ա. XVIII դ. Միկենքից և XIII դ. Տրոյայի VI հորիզոնից հայտնաբերվածներում<sup>10</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **Пиотровский Б. Б.**, Кармир Блур II, с. 10; **Аветисян Г. Г.**, նշվ. աշխ., էջ 53; **Գնունի Ա., Խաչատրյան Գ., Հմայակյան Ս., Միմոնյան Հ.**, նշվ. աշխ., աղ. 1 (2):

<sup>2</sup> Տե՛ս **Аветисян Г. Г.**, նշվ. աշխ., աղ. II (5, 10):

<sup>3</sup> Տե՛ս **S. Kroll**, նշվ. աշխ., էջ 130:

<sup>4</sup> Տե՛ս **Գնունի Ա., Խաչատրյան Գ., Հմայակյան Ս., Միմոնյան Հ.**, նշվ. աշխ., աղ. 1 (2):

<sup>5</sup> Տե՛ս **Գնունի Ա., Խաչատրյան Գ., Հմայակյան Ս., Միմոնյան Հ.**, նշվ. աշխ., աղ. 1 (11); **Միմոնյան Հ., Սանամյան Հ., Գնունի Ա.**, նշվ. աշխ., էջ 24, իր 12, էջ 34, իր 64:

<sup>6</sup> Տե՛ս **К. Х. Кушнарева**, նշվ. աշխ., էջ 19:

<sup>7</sup> Տե՛ս **Аветисян Г. Г.**, նշվ. աշխ., աղ. XXX (2), XXXI (2), LI; **Мартиросян А. А.**, Аргиштихинили, Ереван, 1974, с. 95; **Пиотровский Б. Б.**, Искусство..., рис. 32:

<sup>8</sup> Տե՛ս **Միմոնյան Հ., Սանամյան Հ., Գնունի Ա.**, նշվ. աշխ., էջ 28, իր 31:

<sup>9</sup> Տե՛ս **Հաիրաթյան Ս.**, նշվ. աշխ., էջ 173, աղ. 15,17; **Погребова М. Н.**, նշվ. աշխ., էջ 89, **Асланов Г., Вайдов А., Ионэ И.**, նշվ. աշխ., աղ. LXII; **Деведжян С. Г.**, նշվ. աշխ., աղ. XXIX (9):

<sup>10</sup> Տե՛ս **Дж. Маккуин**, նշվ. աշխ., էջ 86, նկ. 3; **Сидорова Н. А.**, նշվ. աշխ., էջ 164, նկ. 175:

Կերենի խեցեղեն անոթների վրա առկա է նաև համակենտրոն շրջաններով ներկայացված արևային զարդանախշ (նկ. 24)<sup>1</sup>: Սույն զարդանախշը բավականին հաճախ է հանդիպում ուրարտական զարդարվեստում<sup>2</sup>:

Ուրարտական նախատիպեր (Արգիշտիխինիլի) ունեն նաև Կերենի խեցեղենում հաճախ հանդիպող շրջանակներից բաղկացած եռանկյունի զարդանախշերը (ՔԵԹ ի/հ 174, 190/21) (նկ. 26)<sup>3</sup>:

Կերենի զարդապատկերները հարևան են Մարլիկի մեդալիոնի զարդապատկերներին (նկ. 15, 27)<sup>4</sup>:

Վերջինս, ինչպես և Կերենի անոթները, զարդարված է յոթնաթև աստղերով, որոնց արանքում սույար նշաններ են՝ յոթ կետով օղակված փոքր շրջանակներ: Միևնույն ժամանակ, ի տարբերություն մարլիկյան մեդալիոնի, կերենյան սույար նշաններն ավելի բազմազան են. տատանվում է կենտրոնական շրջանակների թիվը, իսկ օղակող կետերի թիվը 10-12 է, ինչպես Վանաձորի գոտիում է<sup>5</sup>: Նմանատիպ սույար նշաններով է զարդարված նաև Մալիշկայի գոտին, ինչպես նաև Կերենի գոտու կենտրոնական հատվածը<sup>6</sup>: Սակայն Կերենի գոտու վրա պատկերված շրջանակն օղակված է 7 կետով: Այս գոտին, ըստ ձևավորման առանձնահատկությունների, կարելի է թվագրել մ.թ.ա. II-I հազ. սահմանագլխով, հետևաբար այն համաժամանակյա է մարլիկյան մեդալիոնին:

Տարածաշրջանի խեցեղենը և նրա գուգահեռները դիտարկելիս հարկ է նշել Սուլթանլուից գտնված և Բերձորում Քաշաթաղի երկրագիտական թանգարանում պահպանվող գունազարդ սափորը (ՔԵԹ ի/հ 117/9): Իր ձևով այն նմանվում է Կերենում, Շիկահողում և Սյունիքի այլ հուշարձաններում ներկայացված սափորներին, ինչը թույլ է տալիս այն թվագրել մ.թ.ա. VII-V դդ., սակայն, ի տարբերություն դրանց, զարդարված է ոչ թե փորագիր, այլ նկարեն եղանակով կատարված ցանցով: Վերլուծելով Հայաստանում գտնված նմանատիպ անոթները (Ջրառատ, Աթարբեկյան, Կարմիր Վանք և այլն)<sup>7</sup> Գ. Տիրացյանը դրանք համադրում է Վրաստանի տարածքից հայտնի անոթների հետ (Ղուշչի, Դմանիսի, Վանի, Դիդուբե), իսկ զարդամոտիվների առումով նմանություն է տեսնում փոքրասիական փոյուզիական ժամանակաշրջանի խեցեղենի հետ<sup>8</sup>: Այսպիսի ցանցանման զարդանախշ հաստատագրված է նաև Իրանում՝ Դիախա թեփեում<sup>8</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Գնունի Ա., նշվ. աշխ., նկ. 9:

<sup>2</sup> Տե՛ս Пинотровский Б. Б., Искусство..., рис. 57-60:

<sup>3</sup> Տե՛ս Мартиросян А. А., Аргиштихинили, с. 95:

<sup>4</sup> Տե՛ս Negahban E., նշվ. աշխ., էջ 318, նկ. 13:

<sup>5</sup> Տե՛ս Esayan S., նշվ. աշխ., աղ. 20 (59):

<sup>6</sup> Տե՛ս Նույն տեղում, աղ. 27 (86):

<sup>7</sup> Տե՛ս Գարապետյան Ի. Ա., նշվ. աշխ., էջ 47, Тирация Г. А., Культура Древней Армении, Ереван, 1988, с. 41:

<sup>8</sup> Տե՛ս Muscarell O. W., The Iron Age at Diakha Tepe. Iran. <http://208.47.228.196/pubs/journal>, fig 3:

Հարավային Սյունիքի ուրարտական քաղաքական և մշակութային ազդեցության ոլորտում գտնվելու փաստը ապացուցվում է նաև Շիկահողի դամբանադաշտում սպառազինության բազմաթիվ տարրերի գտածոների հանգամանքով<sup>1</sup>: Այս ենթատեքստում հարկ է նշել ԼՂՀ Քաջաթաղի շրջանի Սպիտակաջուր գյուղի մոտ գտնվող ավերված դամբարանից հայտնի ձիասանձերից մեկը: Այն ունի կիսալուսնաձև պսալիաներ, որոնք ավարտվում են երեք օղակներով: Նմանատիպ սանձեր հայտնաբերված են Լոռի Բերդից: Ս. Եսայանը միավորում է դրանք ձիասանձերի 10-րդ տիպի մեջ՝ միաժամանակ դրանք նմանեցնելով Աշուրնասիրապալի բարձրաքանդակի վրա կերտված սանձերին և Վանաձորի սանձի հետ<sup>2</sup>: Հետաքրքիր է, որ նմանատիպ պսալիաներ հայտնաբերված են մ.թ.ա. VI-V դդ. թվագրվող սկյութական տեսք ունեցող հուշարձանների մերձտիսյան (հունգարական) խմբում, թեպետ այստեղ պսալիաները և երախճանները իրար պինդ ամրացված են<sup>3</sup>: Սկյութական տեսք ունեն նաև Սյունիքից (Հարժիս) հայտնաբերված նետասլաքները<sup>4</sup>: Այս ենթատեքստում պետք է դիտարկել Սպիտակաջուրից հայտնի ևս մեկ սանձ՝ ուղղանկյուն ելուստավոր պսալիաներով՝ երեք անցքով: Այսպիսի սանձեր հայտնի են Լոռու մարզի Ագարակ գյուղից, ինչպես նաև Օշականից<sup>5</sup>:

Իրանական աշխարհի հետ զուգահեռները նկատելի են ոչ միայն առանձին նյութերում, այլև դրանց դասավորության կոմպոզիցիայում: Այսպես, Կերենի թիվ 64 դամբարանի կենտրոնական հատվածում *in situ* վիճակում հայտնաբերված գավաթով արձանիկը «գրկում էր» կեռնոս տիպի անոթը, իսկ արձանի աջ թևին հաված էր ցլակերպ անոթ: Կոմպոզիցիայի այս բաղադրատարրերն ունեն իրենց զուգահեռները Սյունիքում և Իրանական աշխարհում: Այսպես, Տանգավերից հայտնաբերված կեռնոս անոթն ունի խոյակերպ կեղծ կանթ: Իրանական նյութը ակներև ցույց է տալիս կեռնոս-կենդանակերպ քանդակ (Խուրվին) և կեռնոս-կենդանակերպ-մարդակերպ քանդակ (Հասանլու) կապը<sup>6</sup>: Բացի դրանից, հիշատակման է արժանի Ամլաշից գտնված արձանիկը, որտեղ սափորի վրա տեղադրված է այն «գրկող» մարդու արձանիկ<sup>7</sup>: Հարկ է նշել, որ այդպիսի հենակ-կեռնոսներ հայտնի են նաև Կապանից՝ Թեղուտից (ԿԵԹ ի/հ 122, 674): Այս կոմպոզիցիայի վերլուծությունից կարելի հանգել մի շարք եզրակացությունների. ա. կեռնոս տիպի անոթը կոմպոզիցիայի տրամաբանական կենտրոնն է, բ. այն ժամանակ, երբ

<sup>1</sup> Տե՛ս **Xnkikyan O.**, նշվ. աշխ., էջ 84:

<sup>2</sup> Տե՛ս **Եսայան Ս.**, Կառավարտիկ գործասեր և հեծելագոր շին Հայաստանում, Երևան, 1994, էջ 76, աղ. 27:(9); **Деведжян С.**, նշվ. աշխ., էջ 61:

<sup>3</sup> Տե՛ս Степи европейской части СССР в скифо-сарматское время. Серия Археология СССР, М., 1989, с. 90, таб. 30 (36):

<sup>4</sup> Տե՛ս **Xnkikyan O.**, նշվ. աշխ., էջ 81:

<sup>5</sup> Տե՛ս **Եսայան Ս.**, նշվ. աշխ., էջ 76, աղ. 227 (9); **Деведжян С.**, նշվ. աշխ., էջ 61:

<sup>6</sup> Տե՛ս **Xnkikyan O.**, նշվ. աշխ., էջ 90, աղ. LXXXVI (28); **Girshman R.**, նշվ. աշխ., աղ. 74;

**Погребова М.**, նշվ. աշխ., էջ 94-95; **Nergahan E.**, նշվ. աշխ., էջ 317:

<sup>7</sup> Տե՛ս Iranian Ceramic assemblages...N23802/24331.



Իրանում, ըստ Մ. Պոգրեբովայի, միջերկրածովյան ազդեցության ներքո ձևավորվում են «միաձուլված» շրջանակաձև կեռնոսներ, Սյունիքում նույն խնդիրը լուծվում էր իրերի պարզ համադրման եղանակով:

Զուգահեռները նկատելի են նաև թաղման ծեսում: Որոշ կերենյան (74, 90, 92, 97, 103) (նկ. 28) և շիկահողյան թաղումներում ննջեցյալը տեղադրված է ոչ թե մայր հողի, այլ հողե միջնաշերտի վրա<sup>1</sup>: Նշված ծեսը հատուկ չէ հայաստանյան հուշարձաններին, սակայն ունի իր արարողակարգային-ծիսական հիմնավորումը Ավեստայում<sup>2</sup>:

Թաղման ծեսում որոշակի գուգահեռներ դիտվում են նաև ուրարտական թաղման ծեսի հետ: Դա մասնավորապես վերաբերում է Կերենի թիվ 1 դամբանաբլուրին (նկ 29, 30):

Դամբանաբլուրը հեռացնելուց հետո այստեղ բացվեց ընդարձակ հարթակ՝ այրված հողով, ոսկորներով և խեցաբեկորներով: Դամբարանի հարավային կողմում գտնվում էր սավահատակված հարթակ, իսկ հյուսիսայինում՝ մոխրով լի կարաս: Դեպի կարաս էր տանում երեք մետր երկարությամբ, արևելք-արևմուտք ուղղվածությամբ քարաշարը, որն էլ օղակում էր կարասը<sup>3</sup>: Նույն կերպ մանր քարերով շրջանակված էին Նոր Արեշի դիակիզարանի թաղումները<sup>4</sup>:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ Կերենում և Հարավային Սյունիքում հայտնաբերված հնագիտական նյութերը դրսևորում են որոշ յուրահատկություններ՝ պայմանավորված ուրարտական տերության և իրանական քաղաքակրթությունների խաչմերուկում գտնվելու հանգամանքով: Կարելի է նաև նկատել, որ այս տիպի նյութերի թափանցումը ավելի նկատելի է հյուսիսարևելյան ուղղությամբ ընդգրկելով Սյունիքի կենտրոնական, արևելյան և հյուսիսարևելյան շրջանները, ինչպես նաև՝ Արցախը և Ուտիքը (Քաշաթաղի շրջ.՝ Նորաբերդ ամրոց, Եզնագոմեր, Հերիկ, Շուշի, Խանաբաղ)՝ հասնելով Կուրի միջին ավազան (Մինգեչաուր, Խանլար և այլն):

Այսպիսով, Հարավային Սյունիքը և Արցախը մ.թ.ա. VII-V դդ., զարգանալով Հայկական լեռնաշխարհի մշակույթի համատեքստում, կրելով ուրարտական և իրանական ազդեցություն, տարածելով իր ազդեցությունը դեպի Կուրի աջակողմյան հատված, պետք է դիտարկվեն որպես մշակութային և ամենայն հավանականությամբ քաղաքական այդ տիրույթի անբաժան մաս:

---

<sup>1</sup> Տե՛ս **Գևուհի Ա., Խաչատրյան Գ., Վարդանյան Գ., Թաղևոսյան Ա.**, Հնագիտական ուսումնասիրություններ ԼՂՀ Քաշաթաղի շրջանում, Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2005-2010 թթ., Ստեփանակերտ, 2011, էջ 54-55, աղ. 22, նկ. 2:


<sup>2</sup> Տե՛ս **Авеста. Видевдат. Фархад. VIII 8, Вестник древней истории, 1994, н. 1 VIII 8:**

<sup>3</sup> Տե՛ս **Գևուհի Ա., Խաչատրյան Գ., Միքայելյան Գ.**, Կերենի հյուսիսային բլրի պեղումները, «Հին Հայաստանի մշակույթը», պր. XIV, Երևան, 2008, էջ 181-185:


<sup>4</sup> Տե՛ս **Мартиросян А. А.**, Армения, 224:




նկ. 1




նկ. 2





նկ. 3



նկ. 4



նկ. 5





նկ. 6




նկ. 7





նկ. 10



նկ. 8




նկ. 9




նկ. 11




նկ. 12



նկ. 13




նկ. 14



նկ. 15




նկ. 16





նկ. 17


նկ. 17




նկ. 18




նկ. 19




նկ. 20




նկ. 21




նկ. 22




նկ. 23



նկ. 24



նկ. 25




նկ. 26




նկ. 27



էկ. 28



էկ. 29



էկ. 30

**Artak Gnuni – Southern Syunik the Cross-Roads of Civilizations in the Second Quarter of the I Mil. BC**

The article is dedicated to the problems of co-penetrating of different cultures in the territory of Historical Syunik since the beginning of the I Mil. B. C. Keren grave-yard, located in the territory of Qashatagh region of NKR is regarding as the example of this co-penetrating. The analysis of the forms and ornamentation of pottery discovers a lot of similarities with Urartian pottery and the pottery from Iranian Highland. Thus Syunik region, located in the area of co-penetrating of Uartian and Iranian cultures must be investigated in the context of cultural, social, and political development of Armenian Highland in the beginning of the I Mil. B.C.

**ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 1890-ԱԿԱՆ ԹԹ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՑ  
ՓՐԿՎԱԾ ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

*Բանալի բառեր – Մկրտիչ Խրիմյան, Ավետիս Օհանջանյան, 1890-ական թթ. արևմտահայերի կոտորածներ, գաղթականություն, Կովկասի Հայոց Բարեգործական ընկերություն (ԿՀԲԸ), Վաղարշապատի մասնաճյուղ*

XIX դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունը շարունակում էր դաժան քաղաքականություն կիրառել իր ենթակայության տակ հեծող ժողովուրդների և հատկապես արևմտահայության նկատմամբ: Հայ ժողովրդի հանդեպ գործադրվող բռնություններն առավել ցայտուն դրսևորվեցին Աբդուլ Համիդ II-ի գահակալության օրոք (1876-1908), որը պայմանավորված էր Հայկական հարցի արծարծմամբ և հայ ազգային-ազատագրական պայքարի վերելքով: Հայկական հարցը, որն ասպարեզ իջավ և միջազգային դիվանագիտության քառուղիները մխրճվեց 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո, ուրվականի նման հետապնդում էր Աբդուլ Համիդին: Ըստ Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածի՝ Բարձր Դուռը պարտավորվում էր հայաբնակ մարզերում իրականացնել բարենորոգումներ, ապահովել արևմտահայության անվտանգությունը և օսմանահպատակ հայերին զերծ պահել քրդերի ու չերքեզների բռնություններից: Սակայն, ըստ ֆրանսիացի ականավոր պատմաբան Ալբեր Վանդալի բնորոշման՝ «կարմիր սուլթանը»<sup>1</sup> Գերմանիայի կայսրին խոստովանել է, որ «նախընտրում էր մեռնել, քան թե ընդունել Արևելյան Անատոլիան ինքնավարության տանող բարենորոգումները»<sup>2</sup>: Բացի դրանից, առաջ քաշելով պանիսլամիզմի գաղափարախոսությունը, նա ցանկանում էր Օսմանյան կայսրության շուրջ համախմբել ամբողջ մուսուլմանական աշխարհը, քանզի համոզված էր, որ «մահմեդական աշխարհում ինքն է ամենաուժեղը, ինքն է, որ կարող է համախմբել իր շուրջ ամբողջ այդ աշխարհը»<sup>3</sup>: Բայց քանի որ այդ ծրագրի իրագործման ճանապարհին ազգային-ազատագրական գաղա-

<sup>1</sup> Տե՛ս **Վանդալ Ա.**, Հայերը և բարենորոգումները Թուրքիայում, Երևան, 2001, էջ 19:

<sup>2</sup> **Սաֆրասոյան Ռ.**, Հայոց ցեղասպանության համիդյան ծրագիրը, Հայոց պատմություն, հատոր երրորդ, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես-1918 թ.), գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես-XIX դարի վերջ), Երևան, 2010, էջ 506:

<sup>3</sup> **Համբարյան Ա.**, Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.), Երևան, 1999, էջ 41:



փարներով տոգորված հայերը լուրջ խոչընդոտ էին, ուստի Հայական հարցի «լուծումը» Աբդուլ Համիդը տեսնում էր ի դեմս հայ ժողովրդի բնաջնջման:

Արևմտահայության զանգվածային կոտորածները պետական քաղաքականության մակարդակով նա իրականացրեց 1894-1896 թթ.: Փաստորեն դա օսմանյան կառավարության կողմից հայ ժողովրդի հանդեպ կիրառված ցեղասպան քաղաքականության առաջին փորձն էր: Այդ ոճրագործության իրականացման համար գործիք դարձան քրդերը, ինչպես նաև մուլեռանդ մուսուլմաններն առհասարակ, որոնց կառավարությունը հանձնարարել էր անխնա կոտորել Արևմտյան Հայաստանում, ինչպես նաև Օսմանյան կայսրության այլ վայրերում բնակվող հայերին: 1892 թ. ի վեր Աբդուլ Համիդի հրամանով կյանքի կոչվեցին մուսուլմանական ոչ կանոնավոր հեծելազորային՝ սուլթանի անունը կրող «համիդիե» զնդերը<sup>1</sup>, որոնք կառավարության անմիջական օժանդակությամբ կազմված էին հիմնականում քուրդ աշիրեթներից: Ըստ «Եղբայրական օգնությունը Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուի տվյալների՝ 1896 թ. փետրվարի դրությամբ ամբողջ Փոքր Ասիայում ավերվել են 39.749 տուն, 7942 խանութ, սպանվել են 37.085 քրիստոնյա, 938 մուսուլման, բռնությամբ կրոնափոխվել՝ 40.950 հայ, միաժամանակ համայն աշխարհով սփռվել 290.300 արևմտահայ<sup>2</sup>:

Ընդհանուր առմամբ, 1890-ական թթ. Աբդուլ Համիդ Բ-ի կազմակերպած արևմտահայության զանգվածային կոտորածների զոհերի թիվը հասավ 300.000-ի: Համիդյան կոտորածներից մազապուրծ արևմտահայերի մի մասը հարկադրաբար դիմեց գաղթի: Սակայն այդ թշվառ փախստականները փորձությունների ենթարկվեցին նաև գաղթի ճանապարհին: Նախ նրանցից շատերը՝ հատկապես կանայք և ծերերը, ճանապարհին իրենց մահկանացուն կնքեցին սովից, ցրտից և տարատեսակ հիվանդություններից, իսկ նրանք, որոնց հաջողվեց հասնել Օսմանյան կայսրության սահմանին, ենթարկվեցին քրդերի նոր հարձակումների և կողոպուտի<sup>3</sup>:

Ապրուստի անզամ տարրական միջոցներից զուրկ հայ փախստականները գտնվում էին սոցիալ-տնտեսական ծանր վիճակում: Անբավարար սննդի և կենցաղային պայմանների բացակայության հետևանքով նրանց շրջանում տարածվում էին տարբեր հիվանդություններ: Այս պայմաններում ծառանում էր արևմտահայերին նյութական և բարոյական օգնություն ցուցաբերելուն միտված՝ շտապ միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտություն:

Ի թիվս այլոց, հայ գաղթականներին օգնության ձեռք մեկնեցին արևելահայ և ռուս առաջադեմ հասարակության ներկայացուցիչները: Նրանց օգնե-

<sup>1</sup> Միմոնյան Հր. Ռ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 64:

<sup>2</sup> Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1897, с. 6.

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս «Երկիր», 1906, թիվ 33.08.11, էջ 3-4:

լու համար հիմնադրվեցին բարեգործական, հասարակական և կրոնական տարբեր կազմակերպություններ ու ընկերություններ: 1897 թ. Մոսկվայում Գրիգոր Ջանշյանի խմբագրությամբ լույս տեսած «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին»<sup>1</sup> գրքի վաճառքից ստացված ամբողջ հասույթը պետք է տրամադրվեր հայ կարոտյալներին:

Միջազգային հանրությունը ևս ջանքեր գործադրեց ամոքելու տառապյալ արևմտահայության վիճակը: Հանգանակություններ կազմակերպվեցին ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Դանիայում, Ռուսաստանում և այլուր: Նշենք, օրինակ, որ 1896 թ. մարտին Մեծ Բրիտանիայում հավաքվել էր 34.000 ֆունտ ստեռլինգ հայ տառապյալներին օգնելու համար<sup>2</sup>:

Օգնությունը գաղթականներին էր հասնում բժիշկ Բ. Նավասարդյանի նախաձեռնությամբ 1881 թ. նոյեմբերի 15-ին Թիֆլիսում հիմնադրված Կովկասի հայոց բարեգործական ընկերության (այսուհետև՝ ԿՀԲԸ) միջոցով, որը ղեկավարում էին խորհուրդը և տեղական վարչությունը: 1899 թ. այն ուներ 21 մասնաճյուղ (Երևանում, Վաղարշապատում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Շուշիում, Վլադիկավկազում և այլուր): ԿՀԲԸ-ն ստանձնել էր հայ գաղթականներին օգնելու մարդասիրական գործի մեծ մասը:

Արևմտահայ գաղթականներին ապաստանեց նաև Էջմիածնի գավառը: Այստեղ իր գործունեությունն էր ծավալել ԿՀԲԸ-ի՝ 1889 թ. հիմնադրված Վաղարշապատի մասնաճյուղը, որի առաջին ընդհանուր ժողովը գումարվել է 1889 թ. սեպտեմբերի 28-ին Գրիգոր քահանա Տեր-Գրիգորյանի նախագահությամբ: Նրա անդամների թիվը տատանվում էր 40-ից 65-ի միջև, իսկ տարեկան բյուջեն կազմում էր 400-ից 800 ռուբլի:

Ստորև առաջին անգամ հրապարակվում են արևմտահայ գաղթականներին պատասպարելու համար 1896 թ. ԿՀԲԸ Վաղարշապատի մասնաճյուղի ձեռնարկած քայլերը լուսաբանող փաստաթղթեր, որոնք պահվում են ՀՀ ազգային արխիվի (այսուհետև՝ ՀԱԱ), թիվ 28 (Կովկասի հայոց բարեգործական ընկերություն) ֆոնդում:

Պահպանել ենք փաստաթղթերի լեզվական և ոճական առանձնահատկությունները: Բոլոր ընդգծումները բնագրային են, իսկ մեր միջամտություններն արված են ուղղագիծ փակագծերում: Փաստաթղթերին կցել ենք վերնագրեր և ծանոթագրություններ:

*ԼԻԼԻԹ ՔՈՍՅԱՆ*

<sup>1</sup> Ст. и Братская помощь пострадавшим в Турции армянам.

<sup>2</sup> «Տարազ», 1896, թիվ 12, էջ 195:

**ԿՀԲԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ  
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ՝ ԳԱՎԱՌՈՒՄ ԱՊԱՍՏՆԱԾ  
ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՅՈՒՑԱԲԵՐՎՈՂ  
ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

26 [հոկտեմբերի 1896 թ.]  
[Վաղարշապատ]

Երբ նոր էր սկսուել տաճկահայաստանցիների գաղթականութեան հոսանքը դէպի մեր կողմերը, վարչութիւնս, տեղեկանալով դոցա թշուառ դրութեան մասին և լսելով, որ Վաղարշապատում տարածուած են զանազան վարակիչ (տիֆ ու տիֆրիքիտ)<sup>1</sup> հիւանդութիւններ, որոնց կարող էին ենթակայ լինել մեծ մասամբ չքաւորները և տառապեալները, իւր օգոստոսի 3-ի վարչական ժողովում (№ 24 արձանգ[րութիւն]) որոշեց՝ չքաւոր հիւանդներին և տառապեալներին անմիջական օգնութիւն հասցնելու հարցը յանձնել վարչութեանս պ. նախագահին<sup>2</sup> և վարչութեանս անդամ պ. Պ. Սուքիասեանին, որպէս զի սոքա միջոցներ ձեռք առնեն վարակիչ հիւանդութիւնների տարածման առաջն առնելու թէ գաղթականների և թէ առհասարակ չքաւորների վերաբերմամբ, գործադրելով տառապեալներին յատկացրած գումարի մի մասը, որի մասին տեղեկութիւն է տրուած և Խորհրդին: Բայց որպէս զի հասարակութիւնը տեղիակ լինի այս որոշման և գաղթականների ու տառապեալների կարօտութեան ժամանակ անմիջապէս դիմի վարչութիւնս՝ Վարչութիւնս դեռ օգոստոսի սկզբներում պաշտոնապէս իւր գրութեամբ դիմեց տեղիս, որ Գաւառապետին (№ 57)<sup>3</sup> և արժանապատիւ գործակալին (№ 59), խնդրելով գիւղական քահանաների և գիւղական տանուտէրերի միջոցով յայտարարել վարչութեանս որոշումը հասարակութեանը: Նոյն բովանդակութեամբ երկու գրութիւններ ևս (№№ 60 և 61) ուղարկուած են գաւառական և վանական պ. պ. բժիշկներին, որպէս զի նոցա դիմող չքաւոր հիւանդների դրութեան մասին յայտնեն վարչութեանս և վարչութիւնս ժամանակին կարողանայ հոգալ տառապեալ և գաղթական հիւանդների դեղերի և սննդի մասին: Որովհետև վանական բժիշկ պ. Տէր-Խաչատրեանը մի չքաւոր հիւանդի մէկ անգամ այցելելուց յետոյ չկամեցաւ ոչ մի յարաբերութիւն ունենալ վարչութեանս հետ, ուստի վարչութեանս պ. նախագահը և անդամ պ. Պ. Սուքիասեանը գաւառական բժիշկ պ. Սաժումեանի աջակցութեամբ օգոստոսի

<sup>1</sup> Սուր վարակիչ, գլխավորապէս մանկական հիվանդություն, որի ժամանակ ախտահարվում են կոկորդը և քթի լորձաթաղանթը:

<sup>2</sup> Նկատի ունի Ավետիս Օհանջանյանին:

<sup>3</sup> Գրության հերթական թիվն է:

սկզբից սկսած մինչև այժմ ամենայն օր այցելել են գաղթական հիւանդներին գիւղի մէջ, իսկ մինչև հոկտեմբերի 1-ը վանքի գոմանոցում գտնուած գաղթական հիւանդներին օգնութիւն հասցնելով 140 գաղթականների, որոնց ցուցակը կցում է<sup>1</sup> սորան: Հոկտեմբերի 1-ին Վարչութիւնս, լսելով, որ վանական բժիշկ պ. Տէր Խաչատրեանը սկսել է այցելել վանքի գոմանոցի հիւանդներին՝ իւր ուշադրութիւնը դարձրեց միայն գիւղի մէջ բնակուող գաղթականների վրայ, մի կողմից բժշկական օգնութիւն հասցնելով հիւանդներին, իսկ միւս կողմից աշխատութեան միջոցներ փնտրելով առողջ գաղթականների համար՝ տղամարդկանց այգիներում բանելու, իսկ կանանց ու աղջկերանց բամբակ չանաքելու<sup>2</sup>:

Երբ գաղթականութեան հոսանքը աւելի ևս սկսեց սաստկանալ, Վարչութիւնս ի նկատի ունենալով թէ իւր սուղ միջոցները և թէ գաղթականների թշուառ վիճակը իւր 10ն հոկ[տեմբերի] սոյն ամսի № 68 գրութեամբ դիմեց ընկերութեան Երևանի ճիւղի վարչութեանը, [որը] սոյն նոյեմբերի 2-ի № 36 գրութեամբ մերժեց վարչութեանս առաջարկութիւնը, յայտնելով, իր ինքն ևս նիւթական օգնութեան կարոտութիւն ունի, իսկ խորհուրդը 19-ն հոկտեմբերի սոյն ամի իւր № 225 գրութեամբ ուղարկելով վարչութեանս 100 ր[ուբլի] օժանդակութիւն, առաջարկում է մանրամասն տեղեկութիւն ժողովել գաղթականների դրութեան մասին և առաջարկել<sup>3</sup> Խորհրդին: Վարչութիւնս ժողովելով մանրամասն տեղեկութիւն և կազմելով տեղումս եղած գաղթականների ցուցակը, նոցա կարիքների հետ միասին հոկտեմբերի 29-ին № 30 արձանագրութեամբ կազմել է հետևեալ նախահաշիւը Վաղարշապատում բնակեցրած 26 տուն գաղթականներին մինչև ապրիլ ամիսը օգնելու համար.

1. Հիւանդներին բժիշկի, դեղորայքի և սննդի	50 ր[ուբլի]
2. Յորեն 285 փութ	152 ր[ուբլի]
3. Միս շաբաթը մէկ անգամ	65 ր[ուբլի]
4. Վառելիք, 3000 [հատ] աթար	50 ր[ուբլի]
5. Բնակարանի վարձ	48 ր[ուբլի]
6. Ջրօրհնէքի և բարեկենդանի տոներին	52 ր[ուբլի]

Գումար 417 ր[ուբլի]

Սոյն նախահաշիւը վարչութեանս 30 հոկ[տեմբերի] № 74 գրութեամբ գաղթականների մանրամասն ցուցակի հետ միասին ուղարկելով Խորհրդին, անմիջապէս աշխատել է գնել գաղթականների համար 37 ր[ուբլի] 35 կոպէկի աթար, որոնցից 1500 հատը արդէն բաժանուած է գաղթականներին, իսկ 900

<sup>1</sup> Ցուցակը հայտնաբերել մեզ չհաջողվեց:

<sup>2</sup> Չանաքել - բամբակը քաղել՝ հավաքել:

<sup>3</sup> Դիմել:

հ[ատր] պահուած է հարկաւոր ժամանակ օգնութեան հասնելու: Վառելիքից յետոյ վարչութիւնս աշխատեց հոգ տանել ցորենի մասին և վանական կառավարութեան համաձայնութեամբ որոշուեցաւ 8 խավար<sup>1</sup> ցորեն գնել՝ խավարը 15 ռ[ուբլի], որ կանէ 120 ռ[ուբլի], սակայն մինչև մեշոկներ պատրաստելը և փողի մասին որոշում կայացնելը, գումանոցի մի քանի գաղթականներ դիմեցին Վարչութեանս խնդրելով օգնութեան հասցնիլ այնտեղ պատկած հիւանդներին և բնակարան գտնիլ: Վարչութիւնս քննելով նոցա դրութիւնը, իր[ո]ք տեսաւ, որ մի կողմից գումանոցում բնակվում են 22 տուն գաղթականներ՝ բաղկացած 125 անձերից, որոնցից 27 հոգի հիւանդ պատկած են նոյն գումանոցի աղտոտութեան մէջ միանգամայն անխնամ, միւս կողմից այն հանգամանքը, որ գաղթական կանայք շարունակ ենթակայ են լինում ծառայողների կողմից անպատուաբեր խօսքերի և վարմունքների, իսկ երրորդ կողմից վանական շինութիւնը, որ Նորին Վեհափառութիւնը<sup>2</sup> յատկացրել էր գաղթականներին, սակայն անուշադիր թողնուած, միայն մէկ հիւանդ էր պատկած հիւանդանոցում (վանեցի քահանայ Դաւիթ), 5<sup>ս</sup> սոյն նոյեմբերի իւր № 78 գրութեամբ դիմեց պաշտօնապէս Նորին Վեհափառութեանը, խնդրելով տալ վարչութեանս գաղթականների համար յատկացրած հիւանդանոցը, որպէս զի վարչութիւնս գումանոցի և գիւղի բոլոր հիւանդներին տեղաւորի հիւանդանոցի 3 սենիակներում, իսկ մնացած սենիակները յատկացնի գումանոցի գաղթականներին, որպէս ապաստարան, խնդրելով միննոյն ժամանակ բարեհաճել, եթէ կարելի է տալ գիւղի և ապաստանարանի գաղթականներին հաց և կիրակուր: Նորին Վեհափառութիւնը ուշադրութեան առնելով վարչութեանս գրութիւնը և պահանջելով Վարչութեանս Նախագահին յայտնել էր, որ համաձայն է կատարել վարչութեան խնդիրը, սակայն կերակուր չկարողանալով տալ, կարող է միայն կերակրի համար նիւթեր տալ, որպէս զի վարչութիւնս պատրաստել տայ, կամ բաժանէ գաղթականներին առանձին առանձին իրիանց բնակարաններում պատրաստելու:

Վարչութիւնս իւր 32-երորդ նիստում կազմելով 1897 թուի նախահաշիւը և յատկացնելով ապաստարան հիւանդանոցին 200 ռ[ուբլի], որոշում է անձամբ գնալ և քննել հիւանդանոցը, իմանալու, թէ ինչ է կարևոր նորա պահպանութեան համար, որպէս զի կարճ ժամանակում կարելի լինի ամեն ինչ պատրաստել և գումանոցի հիւանդներին տեղափոխել հիւանդանոց. որոշելով միննոյն ժամանակ հիւանդանոցը ենթարկել կանոնաւոր ախտահանութեան: Սակայն ախտահանութիւնից յետոյ, իբր վարչութեանս անդամները քննում էին հիւանդանոցը, այնտեղ գալիս է վանական [բժիշկ] պ. Տէր

<sup>1</sup> Խավար - ծանրության չափ, որ հավասար է 30 փոթի: Մէկ փութը հավասար է 16 կիլոգրամի:

<sup>2</sup> Մկրտիչ Խրիմյան, Խրիմյան Հայրիկ, Մկրտիչ Ա Վանեցի (1820-1907), Ամենայն հայոց կաթողիկոս (1892-1907):

Խաչատրեանը և յայտնում է, որ այդ շինութիւնը վարակուած է սիպնոյ տիֆ<sup>1</sup> հիւանդութեամբ, որ այդ մասին յայտնուած է Վեհափառին և իշխանութեանը և որ կրկին հիւանդանոց դարձնելու համար հարկաւոր է պատերը և առաստաղը նորից կրով սրել<sup>2</sup> իսկ հատակը ներկել: Վարչութիւնս միջոց չունենալով 2-300 ր[ուբլի] ծախսել վերանորոգութեան վրայ, որոշեց միայն 50 րուբլով թեթև վերանորոգութիւն և խիստ ախտահանութիւն կատարել՝ որոշեց նոյնպէս վարչութեանս անդամ տ. տ. Քարամեանցին ու Աւետիքեանցին ներկայանալ Նորին Վիհափառութեան և խնդրել վերանորոգութեան համար 50 ր[ուբլի]: Տիկիները ներկայանալով Նորին Վեհափառութեանը և առաջարկելով վարչութեանս բանաւոր խնդիրը, Նորին Վեհափառութիւնը օրհնել էր վարչութեան անդամներին համաձայնելով տալ վերանորոգութեան համար 50 ր[ուբլի]: Վարչութիւնս լիայոյս սրտով մինչդեռ պատրաստութիւն էր տեսնում վերանորոգութեան, յանկարծ ամսոյս 25-ին ստանում է Նորին Վեհափառութեան դիւանատնից № 1583 գրութիւնը, որով առանց պատճառների բաց է ի բաց մերժում է թէ՛ հիւանդանոցը և թէ՛ գաղթականներին հաց ու կերակուր տալը: Եւ այսպէս մօտաւորապէս մէկ ամիս յոյսով սպասելուց յետոյ վարչութիւնս ստիպուած եղաւ նոյն իսկ Նորին Վեհափառութեան մերժման օրը իւր № 33 վարչական ժողովում փոփոխութեան ենթարկել 1897 թ. համար կազմած նախահաշիւը, ձեռնարկելով ցորեն ու այլ հարկաւոր նիւթեր գտնելու գաղթականների կեանքը գոնէ մինչև ապրիլ ամիսը ապահովելու:

Ուրախալի է միանգամայն, որ յարգելի Խորհուրդը համաձայն վարչութեանս 4<sup>ւ</sup> սոյն նոյեմբերի № 78 գրութեան ուղարկել է սոյն նոյեմբերի 9-ի № 255 և 19-ի № 276 գրութեամբ գաղթականների համար 200 արշ[ին]<sup>3</sup> հասարակ քաթան, 600 արշ[ին] միթկալ<sup>4</sup>, 100 թուփ ամիրիկայ<sup>5</sup> (319<sup>1/4</sup> արշ[ին] երկու տակ ծալած) և 482 կտոր պատրաստի շորեր, յայտնելով միևնոյն գրութեամբ, որ շուտով վարչութիւնս կը ստանայ Բագուից կրկին գաղթականների համար թէ՛ փող և թէ՛ զանազան շորեր: Այս հիման վերայ վարչութիւնս որոշեց յանձնել վարչութեանս Նախագահին և անդամ պ. Պ. Սուքիասեանին շրջել իւր շրջանի բոլոր գիւղերը և հաստատ տեղեկութիւն ժողվեր թէ գաղթականների թուի և թէ նոցա դրութեան մասին: Վարչութեան յարգելի 2 անդամները շրջելով գիւղիւրը, ներկայացրել են հետևեալ զեկուցումը [ի նկատի ունեն այս զեկուցագիրը]:

Նախագահ վարչութեան՝ Աւետիս Օհանջանեան  
Անդամ՝ Տ. Ս. Քարամեան

<sup>1</sup> Բժավոր տիֆ, որի ժամանակ հիվանդի մաշկը պատվում է ռսպաձև կարմիր բծերով:

<sup>2</sup> Օեփել, կոկել:

<sup>3</sup> Երկարության ռուսական չափի միավոր, որը հավասար է 71 սանտիմետրի:

<sup>4</sup> Պարսկերեն՝ քաթանից կոշտ գործվածք:

<sup>5</sup> Բամբակյա գործվածք Ամերիկայից:

Հ. Աւետիքեան  
Պ. Սուքիասեան

Անդամ քարտուղար Բ. Մատթէոսեան  
[Մակագրություն]

Կարդացուեցաւ ամսոյս 26-ի ընդհանուր ժողովում սոյն զեկուցումը և վարչութեան երկու անդամների վարչութեանը ներկայացրած զեկուցումը: Նախագահ ընդ[հանուր] ժողովի՝ Աղէքսանդր Չուբարեան Քարտուղար՝ Ղուկաս Սարկաւազ Ճիշտ է իսկականի հետ: Քարտուղար վարչութեան՝ Դ. Թատեւոսեան

*ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 357, թթ. 108-110 (պատճեն, ձեռագիր):*

2

**ԿՀԲԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐՆ  
ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆԻՆ՝  
ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Նորին Վեհափառութեան Տ. Տ.  
Մկրտչի Ա. Կաթողիկոսի Ամենայն Հայոց

№ 79

5<sup>ն</sup> նոյեմբերի  
1896 թ. Վաղարշապատ

Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան Վաղարշապատի ճիւղի վարչութիւնը ի նկատի ունենալով մի կողմից իւր սուղ միջոցները, իսկ միւս կողմից Տաճկահայ գաղթականների թշուառ և ցաւալի վիճակը սորանով պատիւ ունի դիմել Ձերդ Վեհափառութեանը օգնութեան հասնելու վարչութեանս, որպէս զի նա միջոց և կարողութիւն ունենայ օգնութեան հասնել և այն գիւղերում բնակեցրած գաղթականներին, որոնք գտնվում են վարչութեան շրջանի մէջ:

Ձերդ Վեհափառութեան տնօրինութեամբ նորեկ գաղթականների համար առժամանակեայ բնակութեան տեղ նշանակուած էր վանքի գոմանոցը, իսկ հիւանդների համար՝ գիւղի մէջ գտնուած վանական շինութիւնը, ուր, որպէս տեղեկացանք, երեք, չորս հիւանդ կար պառկած: Սակայն գաղթականները բնակուելով վանքի գոմանոցում և ստանալով վանքից հաց և կերակուր ենթակա են լինում թէ՛ անպատուութեան ծառաների կողմից և թէ՛ զանազան հիւանդութիւնների շնորհիւ այն անյարմարութեան և հակառողջական պայմանների, որոնց մէջ թշուառները ստիպուած են իւրիանց դառն օրերը անց-

կացնելու, մինչդեռ գոմանոցի հիւանդներին տեղափոխելով նոցա համար նշանակուած հիւանդանոցը, իսկ առողջներին բնակեցնելով գիւղի մէջ կարելի կը լինի մի կողմից հիւանդութեան տարածման առաջն առնել, ազատելով գոնէ միւսներին վարակելուց, իսկ միւս կողմից վարչութիւնս հոգ տանելով առողջների կարիքներին միևնոյն ժամանակ աշխատութեան գործ կը գտնէ նոցա համար, որոնք ընդունակ կը լինեն աշխատելու: Ուստի վարչութիւնս պատիւ ունի խնդրել Ձերդ Վեհափառութեանը՝ յանձնել վարչութեանս հսկողութեան և խնամատարութեան ներքոյ հիւանդների համար յատկացրած վանական շինութիւնը և թոյլ տալ գոմանոցի գաղթականների տեղափոխել գիւղի մէջ գտնվող գաղթականների հացը և կերակուրը ամենայն օր տալ վանքից իսկ դոցա մնացած կարիքները բժիշկ, դեղորայք, բնակարան, վառելիք, հագուստ, անկողին, ևս կը հոգայ վարչութիւնս: Սորա հետ վարչութիւնս պատիւ ունի նիրկայացնիլ Ձերդ վիհափառութիւնը Վաղարշապատի գիւղի մէջ և վանքի մէջ բնակուող այն գաղթականների ցուցակը, որոնց համար վարչութիւնս խնդրում է հաց և կիրակուր մատակարարել վանքի սեղանատնից:

Նախագահ վարչութեան՝ Ա. Օհանջանեան  
ի տեղի քարտուղարի՝ Պ. Սուքիասեան  
Ճիշտ է իսկականի հետ՝ Քարտուղար  
վարչութեան՝ Դ. Թատեւեան

*ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 357, թ. 110 շրջ.-111 շրջ. (պատճեն, ձեռագիր):*

3

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԻՎԱՆԱՊԵՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԿՀԲԸ  
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԽՆԴՐԱՆՔԻՆ՝ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ  
ՄՆՆԴԻ ԵՎ ՕԹԵՎԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

№1583

25 նոյեմբերի  
1896 ամի  
Էջմիածին

Տեղական վարչութեան Վաղարշապատայ Կ.Հ.Բ.Ը.

Դիւանս՝ ըստ բարձու հրամանի Վեհափառ Հայրապետի Ազգիս, պատիւ ինքիան վարկեանի յայտնել յարգելի վարչութեանդ՝ եթէ զխնդիր ձեր ի 5<sup>ս</sup> նոյեմբերի 1896 ամի № 79, որով խնդրէք զվանքապատկան բնակարանս,



զից և զկերակուր վասն գաղթականաց, որք ի Վաղարշապատի, բացասեալ է ի Նորին Սուրբ Օծութիւնէն:

Դիւանապետ՝ Նահապետ Վարդապետ  
Ճիշտ է իսկականի հետ. Քարտուղար  
վարչութեան՝ Դ. Թատեւեան

*ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 357, թ. 111 շրջ. (պատճեն, ձեռագիր):*

4

**ԿՀԲԸ-Ն ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ՝ ԿՀԲԸ-Ի  
ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ ԳԱՎԱՌՈՒՄ ԱՊԱՍՏԱՆԱԾ ԱՐԵՎՍՏԱՀԱՅ  
ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ**

25 նոյեմբերի 1896  
Վաղարշապատ

Զեկուցումն

Կ.Հ.Բ. Ընկ[երության] Վաղարշապատի վարչութեան պ. նախագահի և անդամ պ. Պ. Սուքիասեանի թէ ի՞նչ դրութեան մէջ են գտնվում շրջակայ գիւղերի գաղթականները, թէ որքա՞ն է դոցա թիւը և թէ ի՞նչ կարիքներ ունեն հոգալու:

Համաձայն վարչական 32 երորդ արձանագրութեան որոշման, չորս օր շրջելով Էջմիածնոց գաւառի շրջակայ գիւղերի մի մասը, ընդամենը 24 գիւղ, Տաճկահայաստանից եկած գաղթականների դրութիւնը, կարիքները և թիւը քննելու նպատակով և ներկայացնելով յարգելի վարչութեանդ շրջակայ 24 գիւղիբում ցրուած բոլոր գաղթականների մանրամասն ցուցակը նոցա քանակութեան, կարիքների մասին, պատիւ ունենք աւելացնելու հետևեալը.

ա 16 գիւղերում միայն կային գաղթականներ մեր շրջած 24 գիւղերից հետևեալ քանակութեամբ՝

Վերին Խաթունարխ <sup>1</sup>	որն ունի 72 տուն բնակիչ	պահում է 3 տուն գաղթական	բաղկացած 13 հոգուց
Ներքին Խաթունարխ <sup>2</sup>	150	2	11
Չիբուխչի <sup>3</sup>	160	1	4
Ղուրդուղուլի <sup>4</sup>	200	2	17
Շահրիար <sup>5</sup>	250	1	6
Ջաֆարապատ <sup>6</sup>	70	3	16
Քյալագիարի <sup>7</sup>	100	2	14
Մոլլա Բայազետ <sup>8</sup>	200	5	16
Գեչրու <sup>9</sup>	250	36	203
Ջեյվա <sup>10</sup>	200	5	23
Այլանլու ներքին <sup>11</sup>	85	2	7
Ալիբեքու <sup>12</sup>	95	2	7
Քյորվալու <sup>13</sup>	200	1	7
Հայթաղ <sup>14</sup>	150	7	34
Սամաղար <sup>15</sup>	200	7	38
Այլանլու վերին <sup>16</sup>	50	2	11
16 գիւղ	2432	81	428 հոգոյ <sup>17</sup>

<sup>1</sup> Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Ակնաշեն:

<sup>2</sup> Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Գայ:

<sup>3</sup> Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Վարդանաշեն:

<sup>4</sup> Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Արմավիր:

<sup>5</sup> Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Նալբանդյան:

<sup>6</sup> Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Գետաշեն:

<sup>7</sup> Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Շենավան:

<sup>8</sup> Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Բամբակաշատ:

<sup>9</sup> Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Մրգաշատ:

<sup>10</sup> Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Տարոնիկ:

<sup>11</sup> Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Լենուղի:

<sup>12</sup> Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Աթարբեկյան:

<sup>13</sup> Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Արշալույս:

<sup>14</sup> Գյուղ էջմիածնի գավառում:

<sup>15</sup> Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Գեղակերտ:

<sup>16</sup> Գյուղ էջմիածնի գավառում, այժմ Ծաղկունք:

<sup>17</sup> Աղյուսակ ա-ն տպագրվել է «Մշակ» թերթում (1896, թիվ 152, 28.XII, էջ 3):

բ) բոլորովին գաղթականներ չկային հետևյալ գիւղերում

1) Թագագիւղ <sup>1</sup>	բաղկացած է 12 տուն բնակիչներից
2) Մարգարա <sup>2</sup>	200
3) Էվջիլար <sup>3</sup>	80
4) Ուզունորա <sup>4</sup>	100
5) Արմդու <sup>5</sup>	80
6) Ղուզիգիդան <sup>6</sup>	90
7) Սարդարպատ <sup>7</sup>	280
8) Հաջիլար <sup>8</sup>	80
8 գիւղեր	922

որոնց մէջ 30 տուն քրդեր են, որոնք բնակվում են Սարդարապատում:

գ) Մեր շրջած գիւղերում ցրուած գաղթականների վիճակը, շնորհիւ հայ գիւղացիների առատաձեռն օգնութեան միանգամայն ապահոված կարելի է համարել բնակարանի, հացի և վառելիքի կողմից, սակայն անկողնի և հագուստի կողմից միանգամայն զուրկ էին գաղթականները, առաւել ևս կանայք և մանր երեխաները ու պատանիները, որոնց վրայ հրաւիրում ենք յարգելի վարչութեանս առանձին ուշադրութիւնը:

դ) բոլոր գաղթականների մէջ միայն մէկ հոգի կար, որ գիտեր արհեստ, այն ևս հիւանդ պառկած էր անկողնում. մնացած բոլոր գաղթականները երկրագործներ են և ձմրան պատճառու գիւղերում ոչ մի գործով չեն պարապում, բացի մի քանի անձինքներից, որոնք կարողացել էին հարուստ գիւղացիներից մի քանիսի մոտ ծառայ մտնել այն ևս «հացափոր»- առանց դրամական վարձատրութեան:

ե) Վարչութեանդ ուշադրութիւնն ենք հրաւիրում և գիւղում ցրուած հիւանդ գաղթականների վրայ, որոնց թիւը հասնում էր 52 հոգու և գտնվում ին հետևեալ գիւղիւրում.

<sup>1</sup> Գյուղ Էջմիածնի գավառում, այժմ Լքյալ:

<sup>2</sup> Գյուղ Էջմիածնի գավառում:

<sup>3</sup> Գյուղ Էջմիածնի գավառում, այժմ Արագափ:

<sup>4</sup> Գյուղ Էջմիածնի գավառում, այժմ Արգավանդ:

<sup>5</sup> Գյուղ Էջմիածնի գավառում, այժմ Տանձուտ:

<sup>6</sup> Գյուղ Էջմիածնի գավառում, այժմ Այգեշատ:

<sup>7</sup> Գյուղ Էջմիածնի գավառում, այժմ Հոկտեմբեր:

<sup>8</sup> Գյուղ Էջմիածնի գավառում այժմ Սրգաստան:

1) Վերին Խաթունարխում	3 հիւանդ
2) Ներքին Խաթունարխում	2
3) Ջաֆարապատում	7 (մէկ ընտանիքում 5 հոգի)
4) Մոլլա Բայազետում	4
5) Գէչրլում	15 հիւանդ
6) Ալիբէքում	3
7) Հայթաղում	4
8) Սամաղարում	7
9) Այլանլու վերին[ում]	3
10) Քյորվալումում	1
11) Ջեյվայում	3
Գումարն է	52 հիւանդ

Բժշկի բացակայութեան պատճառով, ճկարողանալով բոլոր հիւանդներին օգնութեան հասնել, որոնց մէջ երևում էին տիֆով հիւանդներ, միայն հասարակ ջերմ ունեցողներին տալիս էինք խինին<sup>1</sup> և ֆինացիտին<sup>2</sup>, այն ևս բժշկի օգնական պ. Պ. Սուքիասեանի խորհրդով: Սակայն հիւանդութիան առաջն առնելու համար պետք է խիստ միջոցներ ձեռք առնել, որպէսզի հիւանդութիւնը չտարածուի և գիւղացիների մէջ:

զ) Պարտք ենք համարում յայտնել նաև որ մենք մեզ յանձնուած պարտականութիւնը չկարողացանք լրիւ կատարել, և այցելելով մեր շրջանի միայն 24 գիւղերը, մնացածները – Աշտարակ, Օշական, Մոլլաղուրսուն, Մուղնի, Եղվարդ և այլն – թողեցինք առանց այցելելու և նոցա մէջ բնակուող գաղթականների դրութիւնը ու կեանքը քննելու, որովհետև չարամիտ անձնաւորութիւններ իբրև նպատակ ունենալով վտանգի ենթակել թէ մեզ և թէ ընկերութեան տեղիս ճիւղին, յայտնել էին պ. Գաւառապետին, որ իբր թէ մենք շրջելով գիւղերը զանազան կեղծ միջոցներով, խաբել ենք գիւղացիներին և փողեր ենք ժողովել զանազան նպատակների համար: Այս պատճառով պ. Գավառապետը հրաւիրելով մեզ քննութեան մենք բացէ ի բաց մերժեցինք այդ զրպարտութիւնը և, յայտնելով մեր ճանապարհորդութեան բուն նպատակը, խնդրեցինք խիստ քննութիւն նշանակել և հաստատ տեղեկութիւններ ժողովել մեր գործունէութեան մասին գիւղերում: Սակայն պ. Գաւառապետը, երբ տեղեկացաւ, որ մեր նպատակն ու գործն է եղել ճիշտ տեղեկութիւն ժողովել գիւղերում ցրուած բոլոր գաղթականների դրութեան մասին, գովեց վարչութեանս եռանդը և իւր ուրախութիւնը յայտնելով վարչութեան տպաւորութեան մասին, խնդրեց ժողոված տեղեկութիւնները գաղթականների մասին հաղորդել իրեն պաշտոնապէս:

<sup>1</sup> Դառը դեղափոշի կամ դեղահաբ, որը ստացվում է խինի ծառից և օգտագործվում է իբրև տենդի դեղամիջոց:

<sup>2</sup> Ցավագրկոդ, ջերմաթողող և հակաբորբոքային դեղամիջոց:

Նախագահ վարչութեան՝ Ալեոիս Օհանջանեան  
Անդամ վարչութեան՝ Պետրոս Սուքիասեան  
Ճիշտ է իսկականի հետ՝ Քարտուղար  
վարչութեան՝ Դ. Թատեւոսեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 357, թթ. 112-113 (պատճեն, ձեռագիր):

**Lilit Kosyan – *Documents about the Western Armenian Migrants  
Who Survived the Massacres in 1890s***

In 1890s 300.000 Western Armenians became victims of the massacres organized by Abdul Hamid II. The Armenians who managed to escape with their lives from the slaughtering policy began to migrate spreading all over the world. They were also persecuted on their way. Their naked and starving condition that made them fall victim on the one hand, and the Kurdish assaults on the other aggravated the condition of the miserable refugees. In order to lend them a helping hand, different charitable, social and religious organizations and companies were founded. The Armenian charitable fund of the Caucasus established in 1881 was among such companies, which had undertaken the greater part of humanitarian assistance to refugees. Part of the refugees settled in Vagharshapat. There are some documents given in the article which describe the condition of the refugees settled in Vagharshapat and the assistance shown to them. In these documents the Armenian charitable fund of the Caucasus describes the condition and the number of the refugees.

---

---

## LE CHEMIN DE CROIX PARCOURU PAR UN RELIGIEUX ARMÉNIEN

*Mots-clefs* – *Baghdiguan, Bzommar, Mont Liban, Angora, communauté, couvent, Ministère des cultes, police, abbé, directeur, catholique*

Ce document, que je présente aux lecteurs de notre revue, a été rédigé en 1919 par un religieux arménien, le Père Khoren Clemens, habitant à Angora. Il s'agit d'une lettre qu'il a adressée à l'un des militaires français, le capitaine de Courson, sur sa demande, et où il a décrit les péripéties du martyr de l'abbé Nersès Baghdiguan, homme d'Église arménien, lors de la Première Guerre mondiale.

À cette époque, les persécutions dirigées contre le peuple arménien battaient toujours leur plein dans l'Empire ottoman et la lettre en question en est la meilleure preuve. L'abbé Baghdiguan, qui avait déployé son activité religieuse depuis 1892 dans différentes villes de l'Empire ottoman, surtout dans celles de l'Arménie occidentale, se trouvait, au début de la guerre, à Bzommar, au Liban. Ayant été nommé, en 1916, vicaire patriarcal et curé de la communauté arménienne catholique d'Angora, il avait été contraint de quitter le Liban et de diriger vers le nouveau lieu de sa nomination.

L'auteur de cette lettre a présenté, d'après sa propre terminologie, le « chemin de Croix », que l'abbé Baghdiguan a été obligé de parcourir lors de ce voyage, en subissant presque à chaque instant des brutalités, voire des atrocités, et des humiliations de la part des représentants des autorités ottomanes qui l'accompagnaient. À travers ce récit fiable du Père Khoren Clemens, on peut recueillir des impressions authentiques sur les différents aspects du processus génocidaire dirigé contre les Arméniens, surtout celui de la conversion forcée à l'islam, ainsi que de la position négative du gouvernement ottoman à l'égard de la religion des Arméniens rescapés du génocide et de l'accomplissement de leurs rites religieux. Il met bien en évidence et de manière convaincante les obstacles que les autorités ottomanes locales mettaient régulièrement sur la voie des religieux arméniens lors de l'accomplissement de leur mission dans l'Empire ottoman. L'attitude défavorable des représentants des autorités ottomanes envers l'abbé Baghdiguan et leur hostilité à l'égard de son activité à Angora prouvent de manière irréfutable l'existence des conditions pénibles, dans lesquelles se trouvaient toujours les Arméniens de l'Empire ottoman, même après la chute du pouvoir des Jeunes-Turcs.

Je n'ai pas pu, à mon grand regret, me procurer des informations ni sur l'abbé Baghdiguan, ni sur le Père Khoren Clemens. Or la lettre de ce dernier, adressée au capitaine de Courson, est d'un intérêt indéniable. Précisons que ce document est plein de fautes orthographiques et stylistiques que nous avons corrigées dans la mesure du possible en respectant la terminologie parfois étrange de l'auteur ; il est probable que l'auteur n'avait pas une parfaite maîtrise du français.

Ce document, rédigé à la main, se trouve dans les Archives du Musée-Institut du Génocide des Arméniens de l'Académie nationale des sciences de la République d'Arménie (département 8, dossier 284, n° 182).

VAROUJEAN POGHOSYAN

Angora, le 16 mai 1919.

Monsieur,  
M[onsieu]r le Capitaine de Courson du 51<sup>e</sup> Régiment d'artillerie

à Constantinople  
Secteur 510 C.

Մենք այս հրապարակումին գոյութեան միայն վերահասու եղանք աւելի ուշ, երբ Ա. Չարեանին ծանօթացանք Երեւան մեր այցելութեան՝ Նոկտեմբեր 1992ին<sup>5</sup>: Խնդրած էինք անոր աշխատակցութիւնը Նիւ Եորքի երբեմնի “Ararat” անգլերէն հանդէսի՝ Կ. Չարեանի յատուկ յաւելուածին, որ մեր խմբագրութեամբ լոյս պիտի տեսնէր: Առ այդ, ան մեզի յանձնեց թէ՛ յիշեալ հրապարակումին մեքենագիր բնագիրն ու տպագիր օրինակը եւ թէ՛ նախօրօք նոյն «Գեղարուեստ»ին մէջ հրատարակուած յօդուածը՝ Լեփսիուսի ու Չարեանի 1915ի հանդիպումին մասին՝ իրենց մեքենագիր օրինակներով

---

<sup>1</sup> **Չարեան Ա.**, Ֆրեդերիկ Մակլէրի նամակները Կոստան Չարեանին, Գեղարուեստ, 1991, Ապրիլ, էջ 4:

<sup>2</sup> Histoire universelle, 1<sup>re</sup> partie, par Étienne Acogh'ig de Daron, traduite de l'arménien et annotée par Edouard Dulaurier, Paris, 1883.

<sup>3</sup> Histoire universelle par Étienne Asolik de Tarôn, traduite de l'arménien et annotée par Frédéric Macler, deuxième partie, livre III (888[?] – 1004[?]), Paris, 1917, pp. II-III.

<sup>4</sup> Նոյն տեղը, էջ V:

<sup>5</sup> Տե՛ս **Մատթէոսեան Վ.**, Անվերջ վերադարձ. Հայաստանի ճանապարհները (1989-2004), Երեւան, 2005, էջ 41-48:

հանդերձ<sup>1</sup>: Քանի որ Մաքլերի նամակներուն շօշափած մասնագիտական հարցը դժուար թէ շահեկան ըլլար անգլիալեզու ընթերցողին, յարմար դատեցինք անգլերէն թարգմանութեամբ հրատարակել Ա. Չարեանի ինքնագիր յօդուածը<sup>2</sup>:

Մաքլերի թղթակցութիւնը կատարեալ անակնկալ մըն էր մեզի համար, քանի որ Չարեանի վենետիկեան առաջին շրջանին՝ 1911-1912ի վերաբերեալ փաստական տեղեկութիւնները շատ քիչ են: Անոր ընթերցումը ո՛չ միայն կը լուսաբանէ արծարծուած գիտական հարցը, այսինքն՝ Նորայր Բիւզանդացիի սրբագրութիւններուն խնդիրը, այլև Չարեանի առաջին ամուսնութեան հետ կապուած որոշ մանրամասնութիւններ: Ընթերցումէն կը պարզուի նաև, որ Մաքլեր նախօրօք գտնուած էր Վենետիկ, ուր ծանօթացած է Չարեանին, որուն հետ միասնաբար որոնումներ կատարած էր «Ակադեմիա» պատկերասրահին մէջ:

Աւելի ուշ կարդալով Ա. Չարեանի մեքենագիր բնագիրը, իրազեկ դարձանք, որ իրօք Մաքլեր թէ՛ ստացած էր իր հետապնդած հարցին պատասխանը՝ Ն. Բիւզանդացիէն խնդրած նիւթերը, եւ թէ՛ տեղեկացած՝ Չարեանի ամուսնութեան, որուն պէտք էր վերագրել վերջինիս պատասխանին ձգձգումը: Բաղդատելով այդ բնագիրը տպագիր օրինակին հետ, նշմարեցինք, որ Ա. Չարեանի աշխատանքը զոհ գացած էր խմբագրական անփութութեան: Լեզուական որոշ խմբագրումի ենթարկելէ զատ թէ՛ կարճ նախաբանը եւ թէ՛ թարգմանութիւնը, թերթը անխնամօրէն կրճատած էր բուն հրապարակումը: Արդարեւ, Մաքլերի չհրատարակուած երկու բացիկները հիմնական մասն էին խեղուած հրապարակումին, քանի որ անոր թղթակցութեան հանգուցալուծումը կը պարունակէն: Պահպանուած էր, սակայն, Ա. Չարեանի՝ նամակներուն բնագրին յաջորդող եզրափակիչ նախադասութիւնը. «Այս է այն նպաստը, որ Կ. Չարեանը բերել է Ֆ. Մակլերին, որպէսզի շնորհալի ֆրանսիացի հայագետը կարողանար վերջացնել Աստղիկի վերաբերեալ աշխատութիւնը»<sup>3</sup>: Սակայն, խմբագրական անխորհուրդ կրճատումը (հաւանաբար՝ տեղի անձկութեան պատճառով) իմաստէ զրկած էր այդ նախադասութիւնը, որովհետեւ ուշադիր ընթերցողին անյայտ կը մնար, թէ Կ. Չարեան իսկապէս ի՞նչ նպաստ բերած էր Մաքլերին: Այդ կրճատումին հետքը կռահելի էր թէ՛ յիշեալ եզրափակիչ նախադասութեան եւ թէ՛ բուն հրապարակումին ընդմէջէն: Արդարեւ, «մկրատում»ը ամբողջական եղած չէր. տպուած էր Մաքլերի առաջին բացիկին «Փարիզ, Կիրակի երեկոյ, 8 Դեկտեմբեր 1912» թուագրումը<sup>4</sup>:

<sup>1</sup> **Չարեան Ա.**, Լեփսիուսի այցելութիւնը Կոստան Չարեանին, Գեղարուեստ, 1990, Նոյեմբեր, էջ 2-3:

<sup>2</sup> **Zarian A.**, Lepsius Meets with Zarian, Ararat Quarterly, Spring 1994, pp. 41-42.

<sup>3</sup> **Չարեան Ա.**, Ֆրեդերիկ Մակլերի նամակները, էջ 5:

<sup>4</sup> Նոյն տեղը:

Մեր երեք տեսակցություններուն ընթացքին, Արմէն Չարեան չէր ակնարկած այդ յապաւումին, որուն միայն անդրադարձանք տարիներ ետք, երբ արդէն ան իր մահկանացուն կնքած էր: Ահա թէ ինչու որոշեցինք, թէ եւ երկու տասնամեակներու յապաղումով, որպէս նշում վաստակաւոր ճարտարապետի ծննդեան 100ամեակին, ամբողջութեամբ վերահրատարակել անոր կողմէ թարգմանուած հինգ նամակները (ներառեալ անտիպ մնացած երկու բացիկները), որոնց ֆրանսերէն բնագրերը կը մնան Կոստան Չարեանի անձնական արխիւին մէջ, ներկայիս՝ անհասանելի: Նոյնութեամբ պահելով Ա. Չարեանի արեւելահայերէն ծանօթագրութիւնները, մեր լրացուցիչ ծանօթագրութիւնները աւելցուցած ենք, բնականաբար արեւմտահայերէն (Մաքլէրի անունին երկձեւ տառադարձութիւնը՝ Մաքլէր-Մակլէր, բացորոշ կերպով կը բխի լեզուական այդ տարբերութենէն): Համեմատած ու լռելեայն սրբագրած ենք թէ՛ բնագրին եւ թէ՛ տպագրին մէջ սպորոյց ինչ-ինչ թերութիւններ (հմմտ. «Գեղարուեստ»ի առաջին հրապարակումը): Վերջապէս, նամակներուն ու Ա. Չարեանի ծանօթագրութիւններուն ուղղագրութիւնն ալ վերածած ենք դասականի:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Ալէիդա Դոլուխանեանի վերջերս լոյս տեսած ու Մաքլէրին նուիրուած մենագրութիւնը չէ անդրադարձած բեղուն հայագէտին Աստղիկի թարգմանութեան առնչութեամբ կատարած աշխատանքին<sup>1</sup>: Ըստ ամենայնի, Ա. Չարեանի հրապարակումը վրիպած է հետազօտողին ուշադրութենէն:

Մաքլէրի արխիւին մէջ (Ֆրանսա), թերեւս գտնուին Չարեանի պատասխանները, ինչպէս եւ ֆրանսացի գիտնականին ու հայ բանասիրութեան ամենէն արտակէդրոն անուններէն մէկուն՝ Նորայր Բիւզանդացիի թղթակցութեան հետքերը<sup>2</sup>, որոնք կրնան յաւելեալ լոյս սփռել այս նամակներուն վրայ:

*ՎԱՐՄԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ*

Ա.

Փարիզ, 5 նոյեմբերի 1912

Իմ սիրելի բարեկամ,

Ո՞ր աստիճանին են հասել Ձեր ձախողութիւնները, եւ վերջապէս կարողացա՞ք արդեօք Կոստանդնուպոլիս գնալու համար մի քանի օրով Վենետիկից անհետանալ<sup>3</sup>: Եւ կամ, արդե՞օք Բալկաններում պատերազմը<sup>1</sup>

<sup>1</sup> Տե՛ս **Դոլուխանեան Ա.**, Ֆրեդերիկ Մակլէրը հայագէտ, Երեւան, 2011:

<sup>2</sup> Նորայր Բիւզանդացիի մասին տե՛ս **Մինասեան Ս.**, Նորայր Ն. Բիւզանդացու կեանքը, հրատարակութիւնների եւ դիւանի ցանկը, Բազմավէպ, 1983, թիւ 1-4, էջ 39-97, **Ա. Բախչի-նեան**, Հայաստան-Սկանդինաւիա, Երեւան, 2003, էջ 157-168:

<sup>3</sup> Մեր ենթադրութեամբ, կ'ակնարկէ Չարեանի եւ իր ապագայ կնոջ ծրագրին՝ Պոլիս մեկնելու եւ հոն ամուսնանալու:

այնքան է ընդարձակուել, որ Ձեզ հնարաւոր չեղաւ օգտագործել ցամաքային ճանապարհը: Այնուամենայնիւ, ուրախ կը լինէի ձեզանից լաւ լուրեր ստանալ: Եւ, երբ իմանամ Վենետիկի Ձեր նոր հասցէն, հաճոյքով Ձեզ պիտի ուղարկեմ մի քանի չնչին հրապարակուած նիւթեր, որոնց մասին խօսել եմ Ձեզ հետ:

Ինձ յաջողուեց ձեռք բերել Նորայրի<sup>2</sup> կատարած ուղղումների գրքոյկը<sup>3</sup>, որը վերաբերում է Մալխասեանցի ձեռնարկած Աստղիկի հրատարակութեանը<sup>4</sup>:

Ձեզ յայտնի է, որ Նորայրը գանգատուում է թէ ինչու են տպագրել սոյն աշխատութիւնը, առանց որ նախօրօք իր քննութեանը ենթարկէին բնագիրը. այս հարցում նա ճշմարիտ է: Նա ինձ առաջարկեց իմ օրինակի վրայ անցկացնել (միայն թէ ինձ յաջողուի մի օրինակ ձեռք բերել) այն սրբագրութիւնները, որ ինքը կատարել է իր ունեցած օրինակում: Պիտի ցանկանայի, եթէ նեղութիւն չի լինելու, Ձեզ առաքել իմ գրքոյկը, իսկ Դուք գնայիք Նորայրի մօտ, խնդրելով իմ օրինակի վրայ անցկացնել իր կատարած բոլոր ուղղումները: Եւ Դուք անձամբ ինձ յղեցէք հատորը: Համաձա՞յն էք:

Ընդունեցէք, սիրելի բարեկամ, իմ լաւագոյն զգացմունքների հաւաստիքը:

**Ֆ. Մակլեր**

**Բ.**

Փարիզ, 27 նոյեմբերի 1912

Իմ սիրելի բարեկամ,

Երէկ Ձեզ եմ ուղարկել իմ գրքերից մի քանիսը<sup>1</sup>: Պիտի տեսնէք, որ մեծ քան չեն: Եթէ նպատակայարմար գտնէք ծանօթագրել ու համառօտակի խօսել դրանց մասին<sup>2</sup>, ապա երեւի հետեւեալ կերպ.

---

<sup>1</sup> Խօսքը վերաբերում է Առաջին Բալկանեան պատերազմին (1912ի Հոկտեմբերի 9ից մինչեւ 1913ի Մայիսի 30ը), որը տեղի ունեցաւ Բալկանեան Դաշինքի պետութիւնների եւ Թուրքիայի միջեւ:

<sup>2</sup> **Նորայր Բիզանդացի**, իսկական անունով՝ Ստեփան Գուզեզեան-Ճիզմեճեան (1844-1915), հայագէտ, լեզուաբան: Անդրադարձել է նաեւ Ազաթանգեղոսի, Մովսէս Խորենացու, Փաւստոս Բուզանդի, Աստղիկի աշխատութիւններին:

<sup>3</sup> Կ'ակնարկէ հետեւեալ հրատարակութեան. **Բիզանդացի Ն.**, Տեղեկութիւն ի գիրս պատմութեան Ստեփանոս Տարօնեցոյ Աստղիկի կոչեցելոյ, Մոսկուա, 1889:

<sup>4</sup> Մակլերի ակնարկը վերաբերում է 1885ին Պետերբուրգում Ստեփանոս Մալխասեանցի լոյս ընծայած Աստղիկի՝ Ստեփանոս Տարօնացու «Պատմութիւն Տիեզերական»ին, Մալխասեանցի գիտական բնագրով, ծանօթագրութիւններով եւ Կարապետ Եզեանցի յառաջաբանով. Ստեփանոսի Տարօնեցոյ Աստղական Պատմութիւն Տիեզերական, երկրորդ տպագրութիւն, Ս. Պետերբուրգ, 1885: Այդ աշխատութիւնը Ֆ. Մակլերը թարգմանել է ծանօթագրել է ֆրանսերէն լեզուով, հրատարակուել է Փարիզում, 1917ին: (Մաքլեր միայն թարգմանած է երկրորդ մասը – Վ. Մ.):



1. Գրական տեսանկյունից, որպես այդ բնագաւառում սկիզբ առած եւ առաջ տարուող գործի:
2. Գիտական, բանասիրական եւ պատմական առումով: Մարչիանայում<sup>3</sup> կամ այլ գրադարաններում Դուք կը գտնէք Սեբեոսի թարգմանութիւնը<sup>4</sup>, մեր Ազգային Գրադարանի հայկական ձեռագրերի իմ ցուցակը<sup>5</sup> եւ այլն<sup>6</sup>: Եթէ այս գրքերը չունենան, երեւի Ձեզ յաջողուի այդ հաստատութիւններին համոզել, որ գնեն:

Ծրարում կը գտնէք Նորայրի գրքոյկը՝ տեղեկութիւն<sup>7</sup>: Շատ թանկարժէք է: Խնդրեցէք Նորայրին, որպէսզի իմ օրինակի վրայ անցկացնի իր կատարած բոլոր ուղղումները: Ես պիտի չկարենամ օգտուել ու հանգամանօրէն մէջբերումներ անել, եթէ ինձ չուղարկէք սրբագրուած գրքոյկը: Ձեզ խնդրում եմ, որպէս բարեկամի, շատ մօտիկից հսկել այս աշխատանքը, որը պէտք է շուտափոյթ աւարտին հասցնել: Նորայրը բազմիցս մեզ կրկնել է, որ իր մի ոտքը արդէն գերեզմանում է. չլինի որ երկրորդն էլ դնի նախքան այս փոքր գործի աւարտը: Ամենից իմաստունը կը լինէր, եթէ Դուք Ձեզ մօտ պահէք գրքոյկը ու խնդրէք Նորայրին երկու կամ երեք նիստ, որպէսզի իր թելադրութեամբ Դուք իմ օրինակի վրայ անցկացնէք տպագրական եւ իր թելադրած բոլոր ուղղումները: Եւ երբ այս աշխատանքը վերջանայ, ինձ ուղարկէք այդ փոքր գիրքը յանձնարարուած ծրարով, քանզի այն շատ թանկարժէք է: Նախօրօք շնորհակալութիւն: Ինձ տեղեակ պահէք:

Ո՛ր են հասել Ձեր ամուսնական գործերը: Քահանան արդե՞՞ք համաձայնուեց գալ Միլան եւ Ձեզ ամուսնացնել, եւ գուցէ կատարեալ սիրոյ ոլորտում ընթացող ամուսինն է՞ր էք արդէն՝ գոնդոլների այդ քաղաքում, այնքան

<sup>1</sup> Չարեանի հետ թղթակցութեան կանխող շրջանին Մաքլէր կատարած էր հետեւեալ հրատարակութիւնները. **Macler F.**, Contes et légendes de l'Arménie, Paris, 1911; *idem*: Rapport sur une mission scientifique en Arménie russe et en Arménie turque (juillet-octobre 1909), Paris, 1911; *idem*: La Chaire d'arménien à l'École spéciale des langues orientales vivantes. Leçon d'ouverture du cours d'arménien (14 novembre 1911), Paris, 1912:

<sup>2</sup> Յայտնի չէ, որ Չարեան գրախօսած ըլլայ Մաքլէրի գիրքերէն որեւէ մէկը:

<sup>3</sup> Մարչիանա (Marciana) Վենետիկի ազգային գրադարան: Հիմնադրուել է 1468ին կարդինալ Բասարիոնէի նախաձեռնութեամբ ու կոչուել Մարչիանա, Վենետիկի պաշտպան սրբի՝ Մարկոսի անունով: Գրադարանը կազմաւորուել է հիմք ընդունելով գրքերի այն ֆոնդը, որը 13րդ դարում Վենետիկի Հանրապետութեանն էր նուիրել Ֆրանչեսկօ Պետրարկան: Մարչիանայում են պահպանուում Վենետիկի Հանրապետութեան՝ Սերենիսիմայի, եւ Կիլիկիոյ հայ արքաների միջու փոխանակուած նամակները, արտօնութիւնները, պայմանագրերը, քարտէսագրական գծագրերը:

<sup>4</sup> **Macler F.**, éd., Histoire d'Héraclius par l'évêque Sebeos, Paris, 1904.

<sup>5</sup> **Macler F.**, Catalogue des manuscrits arméniens et géorgiennes de la Bibliothèque Nationale, Paris, 1908.

<sup>6</sup> Ֆ. Մակլէրը ֆրանսերէն է թարգմանել ու կազմել Սեբեոսին վերագրուած պատմութիւնը, այդպէս եւ «Հայկական հեքեաթներ եւ առասպելներ» (1911), «Հայկական ժողովրդական հեքեաթներ, լեգենդներ եւ դիցազնավէպեր» (1928 եւ 1933):

<sup>7</sup> Նամակում՝ հայերէն տառերով:

սիրելի սիրահարներին... եւ նոյնիսկ գիտնականներին: Յուսով եմ, որ վերջացել են բոլոր Ձեր անախորժութիւնները ու նուազ մտահոգութեամբ էք հետեւում թուրք-բուլղարական պատերազմին<sup>1</sup>: Ձեզ ընդառաջ են եկել, բախտաւոր մահկանացու. նոյնիսկ հարկադրուած չէք եղել նեղութիւն քաշել, այդպէս էր պատահում մեզ մօտ գալիացիների եւ դրուիդների ժամանակաշրջանում:

Ներկայացրէք յարգալից իմ մեծարանքը Տիկին Կոստանդին Զարեանին<sup>2</sup>, ներկայ կամ ապագայ, իսկ Ձեզ, սիրելի իմ բարեկամ, անձնուէր հաւաստիքս:

**Ֆ. Մակլէր**

Գ.

Փարիզ, 8 դեկտեմբերի, 1912

Իմ սիրելի բարեկամ,

Սկսում եմ Ձեր նկատմամբ շատ մտահոգ լինել. անսպասելիօրէն ոչ մի տեղեկութիւն ձեզանից: Արդեօք չէք ստացել շատ օրեր առաջ իմ ուղարկած գրքերը: Ծրարում կար Նորայրի գրքոյկը. չէի ցանկանայ, որ այս առիթով կորչէր: Բացիկի վրայ ինձ գրեցէք երկտող, ասելու համար, որ ամէն ինչ ստացել էք:

Թերեւս յիշո՞ւմ էք Ակադեմիայում<sup>3</sup>, մի նկարի համար կատարած մեր որոնումները (եթէ յիշողութիւնս չի դաւաճանում, առաջին սրահ թիւ 26): Բարեկամը, ում համար մենք կատարել էինք այդ որոնումները, ասում է, որ նկարի լուսանկարները՝ 6 պատկեր, գտնուում են լուսանկարիչ Ֆիլիպպոյի մօտ, Մուրբ Մարկոսի հրապարակ, ու յանձնարարում է Ձեզ, եթէ այդ լուսանկարները վերցնելու մեծագոյն պատրաստականութիւնը ունենաք, շուտափոյթ ուղարկէիք ինձ, որպէսզի ես էլ իր հերթին իրեն յանձնեմ: Ինքնին հասկանալի է, որ Ձեզ պիտի հատուցեմ յետադարձ փոստով:

Ամուսնացե՞լ էք, վերջացե՞լ են Ձեր դժուարութիւնները:

Ընդունեցէք, սիրելի բարեկամ, լաւագոյն զգացմունքներիս հաւաստիքը:

**Ֆ. Մակլէր**

---

<sup>1</sup> Նոյեմբեր 17ին պուլկարական զօրքերը յարձակած էին Չաթալճայի թրքական պաշտպանական գիծերուն վրայ, Պոլիսէն 30-40 քիլոմէթր դէպի արեւմուտք: Այնուհետեւ թուրքերը յաջողեցան ետ մղել յարձակումը եւ կանխել օսմանեան մայրաքաղաքին գրաւումը:

<sup>2</sup> Ռաշէլ (Թագուհի) Շահնազարեան-Զարեան (1885-1962), դաշնակահարուհի, Կոստան Զարեանի առաջին կինը եւ Վահէ, Արմէն ու Նուարդ Զարեաններու մայրը:

<sup>3</sup> Վենետիկեան նշանաւոր պատկերասրահ (Galeria dell'Accademia), որ կը պարունակէ ԺԹ. դարը կանխող շրջանի գործեր:

Դ.

Փարիզ, Կիրակի երեկոյ,  
8 դեկտեմբերի, 1912

Սիրելի բարեկամ,

Այս պահին ստացայ Ձեր նամակը եւ մասնակցութեան տոմար<sup>1</sup>: Այս անգամ յաջողուեց եւ հանգստացած էք, լաւագոյն բարեմաղթութիւններս Տիկին Զարեանին եւ Ձեզ<sup>2</sup>: Հոգատար եղէք, որպէսզի Նորայրը իմ օրինակի վրայ անցկացնի բոլոր ուղղումները: Եթէ սխալներ բաց թողնի, աւելի վատ իրեն համար:

Ձերդ՝

Ֆ. Սակլէր

Ե.

Փարիզ, 24 դեկտեմբերի, 1912

Իմ սիրելի բարեկամ,

Ստացայ գրքոյկը Նորայրի ուղղումներով: Նրան իմ կողմից շնորհակալութիւն յայտնէք: Այս անգամ հնարաւոր է մէջբերումներ անել առանց երկիւղի, որ կարող են վրիպումներ լինել: Ֆիլիպպոյի մօտ տեսաք արդեօք Ակադեմիայի թիւ 26ի լուսանկարները<sup>3</sup>: Շնորհաւորանքներս Տիկնոջ:

Ձերդ՝

Ֆ. Սակլէր

**Vartan Matiossian – Frédéric Macler's Letters to Kostan Zarian**

Frédéric Macler (1869-1938) is a well-known name in Armenian Studies history as head of the Armenian chair at the Ecole Nationale des Langues Vivantes (now Institut National des Langues et Civilisations Orientales, INALCO) in Paris from 1911-1937, as well as a prolific researcher, author, and translator in many issues of both ancient and modern Armenian history and philology. He completed the translation of 10<sup>th</sup> century historian Asoghik's *Universal History* into French, initiated by his teacher, Eduard Dulaurier, which he published in 1917. He was helped, among others, by well-known Armenologist Norayr de Byzance (1844-1915). In 1991 architect Armen Zarian (1914-1994) translated into Armenian and published Macler's French letters to his father, the famous writer Kostan Zarian (1885-1969), who lived in Venice in 1912 and was the intermediary between Macler and Norayr de Byzance. The publication, however, was marred by editorial issues, and two of Macler's letters were not printed (the unpublished French originals of the five letters remain in Kostan Zarian's private archive). This new publication restores Armen Zarian's original Armenian text, with editorial revisions, additional footnotes, and an introduction, on the basis of a copy of the typescript, including the two letters left out of the 1991 publication.

<sup>1</sup> Այսինքն՝ հարսանեկան հրաւիրագիրը:

<sup>2</sup> Կ. Զարեանի եւ Ռաշէլ Շահնազարեանի ամուսնութիւնը տեղի է ունեցել Սիլանում, 4 Դեկտեմբերի 1912ին: Օրհասակատարութիւնը կատարել է Փարիզից եկած հայ երիցապետը:

<sup>3</sup> Լուսանկարները ուղարկուել են Ֆիլիպպոյից ստանալուց յետոյ:

*Բարկեն Հարությունյան, Հայաստանի պատմության ատլաս, Ա մաս, Երևան, «Մակմիլան Արմենիա» հրատարակչություն, 2004, 104 էջ: Բ մաս, Երևան, «Մակմիլան Արմենիա» հրատարակչություն, 2008, 104 էջ: Գ մաս, Երևան, «Մանմար» հրատարակչություն, Երևան, 2012, 104 էջ:*

Հնագույն ավանդույթներ ունեցող հայոց մշակութային ժառանգության մեջ իր ուրույն տեղն ունեն աշխարհագրական բնույթի երկասիրությունները: Դա պատահական չէ, քանի որ Հայաստանը, լինելով քաղաքակիրթ հին աշխարհի անքակտելի մասը, մշտապես գտնվել է ինչպես հայ, այնպես և օտար հեղինակների ուշադրության կենտրոնում: Հիշենք թեկուզ անտիկ աշխարհի երևելի մտածողներ Ստրաբոնի, Պլինիոս Ավագի կամ Պտղոմեոսի աշխատությունները, որոնք մեծաքանակ և ինքնատիպ տեղեկություններ են պարունակում Հայաստանի մասին:

Անուրանալի են նաև հայ աշխարհագրական մտքի եզակի հուշարձան «Աշխարհացոյց»-ի դերն ու պատմական նշանակությունը վերջինիս հետագա զարգացման գործում, որի ցայտուն օրինակը XIII դարում ստեղծված նույնանուն մեկ այլ՝ Վարդան Արևելցու գրչին պատկանող երկն է:

Ցավոք, հայկական պետականության երկարատև կորուստը զգալիորեն կասեցրեց հայ աշխարհագրական մտքի բնականոն զարգացման ընթացքը, որը վերածնվեց միայն XVIII դարում՝ շնորհիվ Մխիթարյան հայրերի հայրենանվեր գործունեության: Ի հետևանս դրա, արդեն XIX դարում որպես հայագիտության կարևոր և ուրույն ճյուղ ձևավորվեց Հայաստանի պատմական աշխարհագրությունը, որի հիմնադիրները դարձան նշանավոր հայագետներ Ղ. Ինճիճյանն ու Ղ. Ալիշանը:

Խորհրդային ժամանակաշրջանում պատմական աշխարհագրությունը և դրան սերտորեն առնչվող պատմական քարտեզագրությունը, հիրավի, մեծ առաջընթաց ունեցան, որը հիմնականում պայմանավորված է ակադեմիկոս Սուրեն Երեմյանի գիտական գործունեությամբ: Նրա ջանքերի շնորհիվ ստեղծվեցին պատմական Հայաստանի նորագույն քարտեզները, փորձ արվեց կազմելու նաև դպրոցական ատլաս:

Ս. Երեմյանի սաներից էր մեծանուն պատմաբան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բարկեն Հարությունյանը (1941-2013), որը, շարունակելով իր ուսուցչի գործը, հայրենական պատմական քարտեզագրությունը հասցրեց նոր բարձունքների: Դեռևս աշակերտական տարիներից ցուցաբերելով անթաքույց հետաքրքրություն

պատմական աշխարհագրության և քարտեզագրության նկատմամբ՝ Բ. Հարությունյանն իր գիտական ամբողջ գործունեության ընթացքում մշտապես զբաղվել է հայոց պատմության քարտեզագրմամբ, ինչը պատմագիտական բազմաթիվ հիմնահարցերի խոր ուսումնասիրության արգասիքն էր: Պատմաբանի բազմամյա գործունեության յուրօրինակ հանրագումարը դարձավ նրա հեղինակած՝ երեք մասից բաղկացած «Հայաստանի պատմության ատլաս»-ը, որը նրա հզոր մտքի և նախանձելի աշխատասիրության զուգորդման հիանալի դրսևորում է:

Գրախոսվող հրատարակությունը հայոց բազմադարյան պատմության համընդգրկուն առաջին ատլասն է, որն ընթերցողին՝ խստապահանջ գիտնականին, սկսնակ ուսումնասիրողին, ուսանողին թե ուղղակի շարքային հայ քաղաքացուն, հնարավորություն կընձեռի ստանալու իրեն հետաքրքրող տարատեսակ և բազմաբնույթ հարցերի սպառիչ պատասխանները: Նման կոթողային աշխատանք կարող էր ստեղծել հիրավի հանրագիտարանային գիտելիքներ ունեցող այնպիսի ուսումնասիրող, ինչպիսին էր Բ. Հարությունյանը: Ատլասում զետեղված քարտեզների գիտական բարձր մակարդակին մեծապես նպաստել են ինչպես հեղինակի՝ հայոց պատմության հայկական և օտար սկզբնաղբյուրների գերազանց իմացությունը, այնպես և լայնածավալ գիտելիքները համաշխարհային պատմության ասպարեզում:

«Հայաստանի պատմության ատլաս»-ի Ա մասն ընդգրկում է վաղնջական ժամանակներից մինչև XVII դարի առաջին կեսն ընկած իրադարձությունները լուսաբանող 51 քարտեզ, որոնք ներկայացնում են հայոց հնագույն և միջին դարերի պատմության կարևորագույն դրվագները: Հեղինակի առանձնահատուկ ուշադրությանն են արժանացել հնագույն հայկական պետական կազմավորումները, Վանի (Ուրարտու), Երվանդունիների, Արտաշեսյանների և Արշակունիների թագավորությունները, դրանց առնչվող դարակազմիկ իրադարձությունները, ինչպես նաև Հայաստանում քրիստոնեության ընդունումն ու մաշտոցյան հանճարով ստեղծված հայոց այբուբենը, V-IX դարերում օտար տիրապետությունների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարը, Բագրատունյաց և Կիլիկիայի հայկական թագավորությունները: Առանձին քարտեզներով ներկայացված է նաև հին և միջնադարյան հայ մշակույթը: Հարկ է նշել, որ լինելով հայոց պատմության հնագույն և վաղ միջնադարի պատմության խորագիտակ մասնագետներից և լավագույն ուսումնասիրողներից, Բ. Հարությունյանն Ա մասի քարտեզները, որպես կանոն, ներկայացրել է նորովի մեկնաբանություններով՝ անշուշտ հաշվի առնելով նաև այլ հեղինակավոր գիտնականների ուսումնասիրությունները:

Ատլասի Բ մասը ներառում է XVII դարի երկրորդ կեսից մինչև 1918 թ. Մայիսյան հերոսամարտերը հասնող ժամանակահատվածին վերաբերող 63 քարտեզ: Ի թիվս դրանց՝ առանձնանում են XVII-XVIII դդ. հայկական

ազատագրական շարժմանը, հատկապես 1722-1730 թթ. Սյունիքի և Արցախի հերոսամարտերին, ինչպես նաև մեծ հայրենասերներ Իսրայել Օրու և Հովսեփ Էմինի գործունեությանը նվիրված ուշագրավ քարտեզները: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև հայոց պատմության XIX դարի իրադարձությունները լուսաբանող քարտեզները, որոնց շնորհիվ ընթերցողը կարող է հստակ պատկերացումներ կազմել տվյալ ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունների մասին՝ ըստ այն աշխարհագրական միջավայրի, որտեղ դրանք տեղի են ունեցել: Հատուկ ուշադրության են արժանացել մասնավորապես XIX դարի ընթացքում Հայաստանի տարածքում Ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև մղված պատերազմները և դրանց աշխարհաքաղաքական հետևանքները:

Խիստ կարևոր է XIX դարի երկրորդ կեսից նոր վերելք ապրած հայկական ազգային-ազատագրական պայքարը և XX դարի առաջին քսանամյակի՝ հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցած իրադարձություններն արտացոլող քարտեզների շարքը (վերջինս զբաղեցնում է ատլասի Բ մասի կեսը): Մանրակրկիտ կերպով ներկայացված են հատկապես Առաջին աշխարհամարտը և Հայոց ցեղասպանությունը: Բ. Հարությունյանն անդրադարձել է նաև 1915 թ. արևմտահայերի կարևորագույն՝ Վանում, Մուսա լեռան վրա կազմակերպված ինքնապաշտպանական մարտերին: Մինչև 1918 թ. ամառը ծավալված իրադարձությունները լուսաբանող քարտեզների թվում առանձնանում են Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերը ներկայացնող մանրագին սխեմաները: Հրատարակության Բ մասը եզրափակում են հայոց գաղթավայրերին (XVIII դարի երկրորդ կես – XX դարի սկիզբ) և հայկական տպագրությանը նվիրված քարտեզները:

Ատլասի Գ մասն ընդգրկում է 1918 թվականից մինչև մեր օրերի պատմությունը լուսաբանող 66 քարտեզ: Հեղինակը մանրամասնորեն անդրադարձել է Հայաստանի Առաջին Հանրապետության երկամյա պատմության հիմնահարցերին: Համապարփակ լուսաբանված է նաև ՀԽՍՀ պատմությունը, որին նվիրված քարտեզները կազմելիս նա օգտագործել է մեծ թվով անտիպ և արխիվային փաստաթղթեր: Այս տեսանկյունից ուշագրավ են հատկապես 1920-1930-ական թվականներին ՀԽՍՀ տարածքային կորուստներն արտացոլող մի շարք քարտեզներ, ինչը մեր օրերում խիստ արդիական է՝ Ադրբեջանի Հանրապետության անհիմն նկրտումները պարզաբանելու և դրանց հակահարված տալու տեսանկյունից: Իրենց ուրույն տեղն ունեն նաև ՀԽՍՀ տնտեսական և մշակութային ձեռքբերումները, Երկրորդ աշխարհամարտին և Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի ունեցած մասնակցությունը լուսաբանող քարտեզները: Բնականաբար, Գ մասը ներառում է նաև 1988 թ. Արցախյան շարժումը, որի շնորհիվ վերականգնվեց հայոց պետականությունը՝ ի դեմս հայկական երկու հանրապետությունների: Առան-

ձին քարտեզներով ներկայացված են Արցախյան ազատագրական պատերազմը և հայ զենքի հաղթանակը: Քարտեզագրական եղանակով ցույց են տրվել ՀՀ և ԼՂՀ խորհրդարանական ու նախագահական ընտրությունները:

Բ. Հարությունյանի ուշադրությունից չեն վրիպել նաև Սփյուռքին և եկեղեցուն նվիրված մի շարք հիմնահարցեր:

Հարկ է նշել, որ նման հսկայածավալ աշխատանքը Բ. Հարությունյանն իրականացրել է առանձին մասնագետների համագործակցությամբ և աջակցությամբ: Ուստի նա չի զլացել ատլասի Բ և Գ մասերում բարեխղճորեն նշել նրանց անունները (Համլետ Մարգարյան, Յուրա Հովսեփյան, Էդիկ Մինասյան, Գեղամ Բադալյան և այլք): Վերջապես, հատուկ դրվատանքի է արժանի ԵՊՀ Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիայի բազմամյա աշխատակից (ներկայիս վարիչ) Վարդան Մխիթարյանը, որը՝ իբրև արհեստավարժ քարտեզագիր, բարձր մակարդակով իրականացրել է քարտեզների կազմողական և ձևավորման աշխատանքները: Շնորհիվ նրա ջանքերի՝ ընթերցող հանրության սեփականությունն են դարձել ատլասի երեք մասերում գետեղված համապատասխան լուսանկարներ, որոշակի ժամանակաշրջաններին վերաբերող հետաքրքիր և գրավիչ պատմական, այդ թվում՝ հնատիպ քարտեզներ:

Ատլասից դուրս են մնացել հայոց պատմության որոշ դրվագներ, իսկ առանձին քարտեզներ ունեն ընդհանրացնող բնույթ: Դա բացատրվում է նրանով, որ սույն հրատարակությունը հասցեագրված է նախ և առաջ հանրակրթական դպրոցի աշակերտությանը և բուհերի ուսանողությանը, հետևաբար՝ այն պետք է համապատասխաներ հայոց պատմության ուսումնական ծրագրերին: Բացի դրանից, հարկ է հաշվի առնել, որ հեղինակի առջև ծառայել են ատլասի որոշակի ծավալը չխախտելու, տպագրության հետ կապված որոշ դժվարությունները հաղթահարելու բարդություններ: Չպետք է սակայն մոռանալ, որ այդպիսի քարտեզների մի մասը տեղ է գտել 2008 թ. հրատարակված «Հայաստանի ազգային ատլաս»-ի երկրորդ արժեքավոր հատորում, որի գիտական խորհրդի նախագահն ու պատասխանատու խմբագիրը ևս Բ. Հարությունյանն է:

Անուրանալի են «Հայաստանի պատմական ատլաս»-ի՝ որպես գիտական մեծարժեք կոթողի նշանակությունն ու կարևորությունը: Կասկածից վեր է, որ այն իր արժանի տեղը կգրավի հայ պատմագիտական և աշխարհագրական մտքի խոշոր նվաճումների շարքում: Նշենք նաև, որ «Հայաստանի ազգային ատլաս»-ը հանգուցյալ Բաբկեն Հարությունյանի հիշատակը հավերժացնող ինքնատիպ հուշարձան է, նրա հայրենանվեր գործունեության փայլուն առհավատյան:

*ԳԵՂԱՄ ԲԱԴԱԼՅԱՆ*

---

---

*Արման Եղիազարյան, Հայ Բագրատունիների տերությունը (885-908). պատմաաշխարհագրական ուսումնասիրություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011, 394 էջ:*

Հայոց պատմության մեջ Բագրատունիների թագավորության պատմաշրջանը կարևոր և առանձնահատուկ տեղ է զբաղեցնում: Անկախության երկարատև կորստից հետո հայոց պետականության վերականգնումը և միասնական ու կենտրոնացված թագավորության ստեղծման փորձը ցույց են տալիս այն լուրջ քաղաքական նպատակները, որոնք իրենց առջև դրել էին Բագրատունի արքաները: Ցավոք, պատմագրության մեջ բավարար ուշադրության չեն արժանացել Բագրատունյաց պետության սահմանների, տարածքային ընդգրկման և ներքին վարչական կառուցվածքի հիմնահարցերը, այլ կերպ ասած՝ հայոց տերության պատմաաշխարհագրական խնդիրները: Սակայն պատմական փաստերը որոշակիորեն վկայում են, որ IX դարի վերջին և X դարի սկզբին վերականգնված հայոց թագավորությունը լուրջ հայտ էր ներկայացրել վերածվելու տարածաշրջանային գերտերության՝ իր մեջ ընդգրկելով ոչ միայն բուն Հայաստանի, այլև մինչև Կովկասյան լեռներն ու Սև ծովն ընկած բազմաթիվ երկրների ու երկրամասերի տարածքները:

Այս տեսանկյունից ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Արման Եղիազարյանի գրախոսվող պատմաաշխարհագրական ուսումնասիրությունը նոր խոսք է: Հեղինակի ամենակարևոր արժանիքներից է հայկական և բազմալեզու սկզբնաղբյուրներ ընդգրկող աղբյուրագիտական հարուստ հենքի օգտագործումը՝ թե՛ հայ մատենագիրների և թե՛ արաբ, բյուզանդացի ու վրաց պատմիչների երկասիրությունները: Նշենք, որ արաբական սկզբնաղբյուրներից Ա. Եղիազարյանն օգտվել է բնագրով և դրանց տեղեկությունների մի մասը գիտական շրջանառության մեջ դրել առաջին անգամ: Ընդ որում, նա դրսևորել է պատմաաշխարհագրական քննություն իրականացնելու անառարկելի ունակություններ՝ չշրջանցելով նաև իր նախորդների ուսումնասիրությունները:

Հայոց պետականության պատմության ուսումնասիրության շահեկանությունից ելնելով՝ Ա. Եղիազարյանը մի կողմից հիմնավորել է IX դարում և X դարի սկզբին Հայաստանում և Այսրկովկասում տիրող իրավիճակը միևնույն համատեքստում դիտարկելու մոտեցումները, իսկ մյուս կողմից պատմաաշխարհագրական քննական վերլուծության է ենթարկել Բագրատունիների տերության կազմում ընդգրկված երկրները, երկրամասները և իշխանություններն առանձին-առանձին:



Հեղինակն անդրադարձել է IX դարի վերջին ձևավորված Բագրատունիների տերության սահմաններին և տարածքին, համառոտ անդրադարձներ կատարել մինչ այդ Հայաստանում և Այսրկովկասում արաբական վարչական բաժանմանը: Նա առանձնահատուկ ուշադրություն է դարձրել այն քաղաքական պայմանների վերհանմանը, որոնք նպաստել են Բագրատունյաց իշխանների դերի բարձրացմանը և, ի վերջո, Հայաստանում ու Այսրկովկասում նրանց գերագահ դիրքերի ապահովմանը:

Ըստ էության, փաստարկված նորույթ է Ա. Եղիազարյանի բարձրացրած՝ Հայ Բագրատունիների պետության՝ իբրև «տերության» հիմնահարցը: Հաշվի առնելով նախորդների կարծիքները՝ նա հիմնավորում է իր տեսակետը, ցույց տալիս այն կարգավիճակը, որը տարածաշրջանում ուներ հայոց թագավորությունը: Նա առաջիններից է Մմբատ Ա-ի թագավորության պատմության ուսումնասիրության շրջանակում հավուր պատշաճի օգտագործել «Մշո Սուրբ Աղբերիկ վանքի կոնդակ»-ը՝ որպես պատմական հավաստի սկզբնաղբյուր: Թեև այլք նախկինում անդրադարձել են այդ սկզբնաղբյուրին, բայց այն հավաստի չեն համարել, քանի որ դրանում առկա են ընդմիջարկություններ և սխալներ: Մինչդեռ հեղինակն արժևորել է այդ փաստաթղթի պատմական արժեքը և դրանից քաղված արժանահավատ տեղեկությունների ուսումնասիրության հիման վրա հանգել կարևոր եզրահանգումների:

Ընդարձակ շարադրանքի հենքի վրա Ա. Եղիազարյանն անդրադարձել է Աղվանից և Կղարջքի (Վրաց) թագավորությունների ստեղծմանը և իրավացիորեն փաստել, որ Աղվանից և Կղարջքի իշխաններին թագադրել է Մմբատ Ա-ն՝ հաջորդաբար 894 և 899 թվականներին:

Բագրատունիների տոհմական և արքունի տիրույթներին նվիրված բաժնում Ա. Եղիազարյանն ուսումնասիրել է արքայատոհմին ենթակա գավառները, դրանց տարածքային ընդգրկումը, սահմանները, ձևավորման պատմությունը, ցույց տվել IX դարի սկզբից՝ մեկ հարյուրամյակի ընթացքում Բագրատունիների տիրույթների աստիճանական աճը, որը տնտեսական, մարդկային և քաղաքական ռեսուրսների առումներով հանգեցրել է Այսրկովկասում նրանց առաջնակարգ դիրքերի հաստատմանը:

Ա. Եղիազարյանի հիմնավոր տեսակետներից կարևորում ենք և ցանկանում առանձնացնել հատկապես Տայքին վերաբերող մոտեցումը: Նա ապացուցում է, որ վրաց անվանված Բագրատունիների տիրույթներն ի սկզբանե չեն ընդգրկել Տայքը, որը վրաց պատմաբաններն անվերապահորեն համարում են «վրացական» տարածք և իբր վրացաբնակ: Համադրելով հավաստի սկզբնաղբյուրների (այդ թվում՝ վրացական) տեղեկությունները հեղինակը հանգել է այն համոզիչ եզրակացության, որ Տայքը Հայ Բագրատունիների տոհմական տիրույթի մասն էր կազմում նախքան Աշոտ Մսակերի իշխանության ժամանակաշրջանը (802-826), իսկ Հայ Բագրատունիների տերության

օրոք քաղաքական առումով ոչ մի առնչություն չուներ Կղարջքի կուրապաղատության հետ:

Հեղինակն անդրադարձել է նաև Մեծ Հայքի տարբեր՝ Բագրատունիների տիրույթներին կցված գավառներին, հիմնավորապես ապացուցել, որ Գուգարքի մեծ մասն ընդգրկված էր Հայ Բագրատունիների արքունի տիրույթներում: Այս հիմնախնդիրը ևս նա ուսումնասիրել է ըստ վրացական սկզբնաղբյուրների համադրման, ինչը խիստ կարևոր է:

Ա. Եղիազարյանը ներկայացրել է IX դարի վերջին Բագրատունի արքաներին անմիջականորեն ենթարկվող և միաժամանակ որոշակի ինքնուրույնություն պահպանող հայկական իշխանությունները, որոնց թվում էին Վասպուրականի, Անձևացյաց, Սյունյաց, Հայոց Արևելից կողմերի, ինչպես նաև Համամաշենի (Համշենի) իշխանությունները: Որոշակի նորույթ է հատկապես վերջինիս ուսումնասիրությունը: Հեղինակը, մասնավորապես, օտար սկզբնաղբյուրների վերլուծության հիման վրա փաստորեն ապացուցել է Համամաշենի հայկական իշխանության ներառումը Բագրատունյաց տերության կազմում: Ավելին, արաբ հեղինակների երկերում պահպանվել են որոշակի վկայություններ, որոնք հիմք են տալիս հնարավոր համարելու Տրապիզոնի և նրա շրջակայքի՝ Հայ Բագրատունիներին ժամանակավորապես ենթարկվելու հավանականությունը: Կարևոր է նաև հեղինակի՝ Համշեն և Արտաշեն բերդաքաղաքների տեղադրության հարցի ճշգրտումը:

Ա. Եղիազարյանն անդրադարձել է Հայ Բագրատունիների տերությանը ենթակա այսրկովկասյան երկրներին, որոնց թագավորները և իշխաններն ընդունում էին հայ արքաների գերագահությունը: Փաստորեն, պատմագրության մեջ նա առաջինն է միասնական աշխատության մեջ ի մի բերում նման կարգավիճակ ունեցած այսրկովկասյան բոլոր երկրներն ու երկրամասերը՝ մանրագին քննության ենթարկելով նաև վերջիններիս պատմաաշխարհագրական առանձնահատկությունները:

Անհրաժեշտ ենք համարում արժևորել Կղարջքի կուրապաղատության վերաբերյալ հեղինակի կատարած՝ պատմաաշխարհագրական առումով բազմաթիվ նորություններ պարունակող քննությունը, որոնց թվում հարկ է առանձնացնել, մասնավորապես, դրա սահմանների ճշգրտումը, որը նա կատարել է նաև վրացական սկզբնաղբյուրների տեղեկությունների վերլուծության հիման վրա: Նշենք, որ նրա արծարծած մի շարք պատմաաշխարհագրական հիմնահարցեր առ այսօր վրիպել էին ուսումնասիրողների ուշադրությունից:

Անդրադառնալով Հայ Բագրատունիներին ենթակա արաբական ամիրայությունների կարգավիճակին՝ Ա. Եղիազարյանը ցույց է տվել, որ նրանց տիրապետության ժամանակաշրջանում հատկապես Սմբատ Ա-ին հաջողվել է խիստ կրճատել ամիրայությունների տարածքները՝ դրանց զգալի մասը կցելով արքունի տիրույթներին:

Պատմաաշխարհագրական տեսանկյունից մեծ հետաքրքրություն է ներկայացնում մենագրության՝ Բագրատունիների տերության մեջ ընդգրկված քաղաքներին, քաղաքացուղերին, բերդերին, վանքերին և եկեղեցիներին նվիրված բաժինը, որտեղ հեղինակն արժևորել է խնդրո առարկա ժամանակաշրջանում սկզբնաղբյուրներում հիշատակված նշանավոր բնակավայրերի նշանակությունն ու դերը, որը կարևոր ներդրում է Հայաստանի պատմական աշխարհագրության ուսումնասիրության ասպարեզում: Հարկ է մոռացության չմատնել նաև, որ նման փորձ նա կատարել է առաջին անգամ, ինչն ինքնին ողջունելի է:

Ա. Եղիազարյանն ընտրողաբար անդրադարձել է տերության համար, անկախ դրանց կառուցման ժամանակաշրջանից, կարևորություն ունեցած քաղաքային բնակավայրերին, բերդերին, վանքերին ու եկեղեցիներին, ցույց տվել, որ քաղաքային բնակավայրերի զարգացման առումով Հայ Բագրատունիների տիրապետության ժամանակաշրջանին բնորոշ է հիմնականում քաղաքացուղերի առկայությունը, բերդերի նշանակության առումով՝ սահմանային ամրությունների համակարգերի ձևավորումը, իսկ նոր կառուցվող կամ վերակառուցվող վանքերի ու եկեղեցիների աշխարհագրական ընդգրկման տեսանկյունից՝ աշխարհագրական որոշակի սահմանափակվածությունը: Նա երբեմն անուշադրության չի մատնել նաև այնպիսի վանքեր և եկեղեցիներ, որոնք չնայած Բագրատունիների օրոք չեն հիշատակվում, սակայն իրենց շինարարական հորինվածքով օրինակ են ծառայել այդ ժամանակաշրջանում Հայաստանում և Այսրկովկասում կառուցված, կարևոր նշանակություն ունեցող բազմաթիվ եկեղեցիների համար:

Հեղինակը քննական վերլուծության է ենթարկել նաև IX դարի վերջին և X դարի սկզբին Հայաստանի և այսրկովկասյան երկրների համար միջազգային նշանակություն ունեցած կարևորագույն առևտրական ճանապարհները: Սկզբնաղբյուրների տեղեկությունները համադրելով աշխարհագրական-քարտեզագրական նյութի հետ՝ նա առանձին ենթազույգներում անդրադարձել է Բագրատունիների տերության տարածքում ձգված մեկ տասնյակից ավելի առևտրական մայրուղիներին, դրանց հարած նշանավոր բնակավայրերին, քննարկել է և ճշգրտել վերջիններիս միջև ընկած տարածությունները: Ա. Եղիազարյանը մանրամասնորեն հետազոտել է առևտրական ճանապարհների երթուղիները, տեղորոշել բազմաթիվ կայարաններ: Անհրաժեշտ է նշել, որ թեև այդ հարցերը եղել են շատ միջնադարագետների ուշադրության կենտրոնում, այդուհանդերձ հեղինակը լրացրել է բազմաթիվ բացեր: Ընդհանրապես՝ քննական մոտեցում ցուցաբերելով իր նախորդների գրչին պատկանող ուսումնասիրությունների հանդեպ՝ նա նկատել է տարբեր բացթողումներ և զգալիորեն լրացնել դրանք, հարստացրել մեր պատմության ուսումնասիրության անդաստանը:

Հաճելիորեն նկատենք, որ Ա. Եղիազարյանի պատրաստած և սույն աշխատությանը կցված վեց քարտեզները նորույթ են, որոնցում նա փորձել է de facto արձանագրել իր ուսումնասիրության արդյունքները՝ կատարելով համապատասխան պատմաաշխարհագրական ճշգրտումներ և ուղղումներ:

Ա. Եղիազարյանի աշխատությունը խիստ արդիական է, քանի որ նման մոտեցումներով Հայ Բագրատունիների թագավորության պատմությունը նախկինում առանձին ուսումնասիրության առարկա չէր դարձել, որի հետևանքով բազմաթիվ պատմաաշխարհագրական հիմնահարցեր, որոնք այսօր նաև որոշակի քաղաքական ենթատեքստով անընդհատ քննարկվում են, մնացել են չուծված: Այդ ամենը հարևան երկրների որոշ պատմաբանների հնարավորություն է ընձեռել նենգափոխել կամ խեղաթյուրել պատմական անցյալը: Սույն հետազոտությունը գալիս է լրացնելու այդ բացը և պատասխանելու պատմահեղուկներին:

Ինչպես յուրաքանչյուր ուսումնասիրություն, Ա. Եղիազարյանի մենագրությունը ևս զերծ չէ որոշ թերություններից, որոնք, ճիշտ է, ստվեր չեն նետում նրա կատարած արդյունավետ աշխատանքի վրա, սակայն կարիք ունեն հիշատակության՝ հետագայում դրանցից զերծ մնալու մղումից դրդված: Հարկ է նախ և առաջ նշել, որ նրա իրականացրած պատմաաշխարհագրական ճշգրտումներն ու տեղորոշումներն ամբողջությամբ արտացոլված չեն մենագրությանը կցված քարտեզներում: Ցանկալի կլինեք նաև առանձին քարտեզի տեսքով ներկայացնել Բագրատունիների տոհմական և արքունի տիրույթները, որոնք թեև արտացոլված են գլխավոր քարտեզում, սակայն առանձնաբար ներկայացվելու պարագայում ընթերցողին կհաղորդեին կարևոր մանրամասներ: Ի վերջո, աշխատության վերջում տեղադրված հատուկ անունների ցանկը ներկայացված է որպես անվանացանկ, մինչդեռ պատմաաշխարհագրական ուսումնասիրություններում ընդունված է այն բաժանել առանձին՝ աշխարհագրական անունների կամ տեղանունների և անձնանունների բաժինների:

Եզրափակելուց առաջ ցանկանում ենք վստահորեն նշել, որ Արման Եղիազարյանը գիտական և ընթերցող լայն շրջանակների ուշադրությանն է ներկայացրել կարևոր մի աշխատություն, որն առավել ևս արժևորվում է՝ ներկայումս հայոց պատմության միջնադարյան շրջանի նկատմամբ գիտական հետաքրքրության նվազման պայմաններում:

*ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

---

---

*Հրաչիկ Բայրամյան, Էջեր հայ-վրացական գրական կապերի պատմությունից, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2010, 256 էջ:*

Հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը սկիզբ է առնում անհիշելի ժամանակներից, որը, անցնելով բազում փորձությունների միջով, հասել է մինչև մեր օրերը: Հայերի ու վրացիների հոգևոր-մշակութային առնչությունների մասին ձեռագիր մատյաններում, հիշատակարաններում, արխիվային վավերագրերում, հայկական և վրացական մամուլում կան չուսումնասիրված բազում նյութեր:

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հայ-վրացական հարաբերությունների բաժնի վարիչ, բնասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Հրաչիկ Բայրամյանի հոդվածների գրախոսվող ժողովածուն մասամբ լրացնում է այդ բացը: Այն նվիրված է հայ-վրացական գրական կապերի պատմության առավել հետաքրքրական և ուշագրավ դրվագներին:

Շուրջ չորս տասնամյակ Հր. Բայրամյանը զբաղվում է հայ-վրացական գրական-մշակութային առնչությունների ուսումնասիրությամբ<sup>1</sup>: Մեծ պատասխանատվությամբ ու ինքնքրով նա հրատարակել է վրացական դասական և ժամանակակից պոեզիայի ու արձակի երկու ստվարածավալ անթոլոգիաներ, որոնք լույս են ընծայվել «Ուսանողի գրադարան» և «Համաշխարհային գրականություն մանուկների համար» մատենաշարերով<sup>2</sup>: Մեր իրականության մեջ նա առաջինն է ստեղծել վրաց լեզվի ու վրաց գրականության դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ<sup>3</sup>, ինչպես նաև հայերեն-վրացերեն և ռուսերեն-վրացերեն բառարան-գրուցարաններ<sup>4</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս Հայ գրողները վրաց գրականության մասին. Նյութերի ժողովածու, կազմեց՝ Հ. Ս. Բայրամյան, Երևան, 1986, *նույնի*՝ Ուղեցույց աստղը. Վրաց մտավորականները Հովհաննես Թումանյանի մասին. Նյութերի ժողովածու, կազմեց, վրացերենից թարգմանեց և ծանոթագրեց՝ Հ. Ս. Բայրամյան, Երևան, 1999, *նույնի*՝ Հայ-վրաց գրական-պատմամշակութային հարցերը վրաց մամուլում. Նյութերի ժողովածու, կազմեց, վրացերենից թարգմանեց և ծանոթագրեց՝ Հ. Ս. Բայրամյան, Երևան, 2001:

<sup>2</sup> Տե՛ս Վրացական պոեզիա, Երևան, 1983, Վրաց երկինք, Երևան, 1990:

<sup>3</sup> Տե՛ս Ակնարկներ վրաց նոր գրականության պատմության (1800-1890 թթ.), ուսումնական ձեռնարկ, Երևան, 1983, *նույնի*՝ Վրաց գրականությունը V-XIX դարերում, գիրք Ա, ձեռնարկ բուհերի հումանիտար ֆակուլտետների ուսանողների համար, Երևան, 2007, *նույնի*՝ Վրաց լեզու. Հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, դասագիրք բուհերի հումանիտար ֆակուլտետների ուսանողների համար, Երևան, 2010:

<sup>4</sup> Տե՛ս Հր. Բայրամյան, Հայերեն-վրացերեն գրուցարան, Երևան, 2005, II հրատ., 2009, *նույնի*՝ Русско-грузинский разговорник, Ереван, 2005:

Գիտամանկավարժական գործունեությանը զուգընթաց՝ Հր. Բայրամյանը պարբերաբար վրացերենից հայերեն է թարգմանել նաև վրաց նշանավոր գրողների, ինչպիսիք են Լադո Մրելաշվիլին, Ռևազ Ինանիշվիլին, Նոդար Դումբաձեն (երկու հատորով), Գուրամ Փանջիկիձեն, Ռևազ Միշվելաձեն և այլք, գեղարվեստական երկերը: Նրա սցենարներով են նկարահանվել ու ցուցադրվել Իրակլի Աբաշիձեին (1984), Նոդար Դումբաձեին (1985), Սայաթ-Նովային (1987), Գալակտիոն Տաբիձեին (1987), Գաբրիել Սունդուկյանին (1988) և Շոթա Ռուսթավելուն (1990) նվիրված գիտահանրամատչելի և ուսումնական ֆիլմերը:

Հր. Բայրամյանի սույն ժողովածուն ընդգրկում է հայ-վրացական գրական-մշակութային կապերին նվիրված նրա կարևորագույն ուսումնասիրությունները: Առաջին բաժինը, որը կրում է «Հայ գրողները վրաց գրական մտքի գնահատմամբ» խորագիրը, նվիրված է Սայաթ-Նովայի և «մեծ թիֆլիսեցի» Գաբրիել Սունդուկյանի՝ վրաց գրականության հետ ունեցած առնչություններին: Նրանցից առաջինը վրաց գրական մտքի գնահատմամբ՝ «վրաց պոեզիային հաղորդել է թարմ շունչ»: Իսկ վրաց մշակույթի անվանի գործիչ Գեորգի Նատրոշվիլին այսպես է բնութագրել հայ մեծ գուսանին. «Սայաթ-Նովան Նիկո Փիրոսմանիի նման սիրում է աշխարհը, տեսնում է նրա կենդանի գույները, զգում է նրա ապշեցուցիչ բույրը: Այո՛, նա նման է Փիրոսմանիին, նման է աշխարհատեսությամբ: Նրա բանաստեղծություններում Թիֆլիսի լուսնկա գիշերվա մեղմությունն ու դալկությունն զգում ենք ճիշտ այնպես, ինչպես դա զգում ենք Փիրոսմանիի կտավներում: Նա ինքնատիպ տաղանդ է» (էջ 11-12): Հր. Բայրամյանը հավելում է, որ իսկապես անասելի հարուստ է Սայաթ-Նովայի վրացերենը. նրա խոսքը նուրբ է ու ձկուն. նա կարողացել է գտնել այն թալիսմանը, առանց որի չկա ու չի կարող լինել բարձրարվեստ պոեզիա (էջ 12):

Սայաթ-Նովայի անգուգական քնարերգության առնչությամբ հեղինակը, վկայակոչելով վրաց գրական գործիչների գնահատականները, ևս մեկ անգամ հավաստում է, որ նրանք հայ բանաստեղծին գնահատել են իբրև վրաց աշուղական երգարվեստն սկզբնավորողի ու չգերազանցված վարպետի (էջ 15):

Գ. Սունդուկյանը, ինչպես նշել է Անտոն Փուրցելաձեն, ծնվել է բազմազգ ու բազմալեզու Թիֆլիսում և ստեղծագործել է այն ժամանակ, երբ «հայերն ու վրացիները ապրում էին իբրև նույն ընտանիքի զավակներ, համակված էին նույն հետաքրքրություններով ու նույն գաղափարներով, և չէիր գատում՝ որտեղ է սկսվում հայը, որտեղ է վերջանում վրացին» (էջ 16): Ահա այսպիսի միջավայրում է գործել մեծատաղանդ դրամատուրգը, որի պիեսները բազմիցս ներկայացվել են վրացական բեմերում ու բարձր գնահատվել նշանավոր թատերագետների կողմից: Նրանցից մեկը՝ հրապարակախոս, գրական-հասարակական գործիչ Ս. Մեսխին, «Պեպոյի» վրացերեն բեմադրության 30-

ամյակի առիթով գրել է. «Սկզբից նեթ պետք է ասենք, որ այսպիսի խորամիտ, բեմի բոլոր պահանջները բավարարող և խորհել տվող պիես մեր բեմը դեռ չէր տեսել» (էջ 18): Ահա այսպես, Հր. Բայրամյանը վրաց մամուլի էջերից քաղել է Գ. Մունդուկյանին՝ Վալերիան Գունիայի, Ակակի Ծերեթելիի, Կոտե Ղիփիանիի և շատ ուրիշների տված գնահատանքի խոսքերը, որոնք ոչ միայն դրվատել են հայ դրամատուրգի արվեստն ու տաղանդը, այլև միաժամանակ անվարան նշել, որ վրաց թատերախումբն իր առաջին ներկայացումներից սկսած սնվել է Մունդուկյանի պիեսներով, փաստել, որ նրա ստեղծագործությունները նպաստել են վրաց թատրոնի վերածննդին, ուստի «Մունդուկյանը իր արժանի տեղը պետք է զբաղեցնի նաև վրաց դրամատուրգի պատմության մեջ» (էջ 19): Գ. Մունդուկյանն իր ժամանակին, ըստ վրաց հեղինակների, դրամատուրգիայում հավասարը չունեի և չի ունեցել: Այստեղ հարկ է հիշատակել Ա. Փուրցելաձեի՝ Մունդուկյանին՝ իբրև դրամատուրգի ու քաղաքացու տված գնահատականը. «Ո՞վ է Մունդուկյանը, հա՞յ է, վրացի՞, ռուս: Նա մարդ է, քաղաքացի՞ իր թուլություններով, հասարակական իր կոչումով, մարդ, որ ցանկանում է բարեփոխել կյանքը, հին, մաշված սովորությունները և սերմանել լավագույնը: Այստեղ նա և՛ հայ է, և՛ վրացի, և՛ ռուս, և՛ այլազգի» (էջ 20):

Ժամանակի հայ գրական միտքը նույնպես բարձր է գնահատել վրաց դասական գրողների ստեղծագործությունները: Ժողովածուի երկրորդ բաժինը նվիրված է այդ հարցերի քննությանը: Այստեղ ներկայացված են վրաց երեք բանաստեղծներ՝ Շոթա Ռուսթավելին, Իլիա Ճավճավաձեն և Վաժա Փշավելան: Ուսումնասիրելով հայ և վրաց մամուլի օրգանները՝ հեղինակը շրջանառության մեջ է դրել գնահատանքի բազմաթիվ խոսքեր, մասնավորապես Ռուսթավելու անգուգական «Ընձենավորը» պոեմի մասին, որը մեզ է հասել նաև շնորհիվ հայ գրիչների ու ծաղկողների: Հայերեն առաջին թարգմանությունը Ստ. Բաստամյանցը կատարել է «Ընձու մորթի հագած մարդը» խորագրով և 1860-1862 թթ. տպագրել «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրում: Հր. Բայրամյանը հետևողականորեն ներկայացրել է այդ պոեմի «կյանքը» հայ իրականության մեջ, որն ունեցել է թարգմանության մի քանի փորձեր (Վ. Տերյան, Գ. Ասատուր, Հովհ. Կարայան և ուրիշներ): Այն շատ բարձր են գնահատել հայ գրական ու մշակութային գործիչները: Ավ. Իսահակյանը մասնավորապես գրել է. «Շոթա Ռուսթավելին համաշխարհային այն եզակի հանճարներից է, որոնց մեջ ամփոփվում ու բյուրեղանում են մարդկության լավագույն իդեալները, մաքառումները, երազները, իդեալները, որոնց մեջ մարդկությունը հասնում է իր արշալույսին, կատարելությանը» (էջ 29):

Հեղինակը նույն ձևով ամփոփել է նաև Ի. Ճավճավաձեի և Վ. Փշավելայի ստեղծագործությունների շուրջ հայ մտավորականների մտքերը: Նա ի մի է բերել Տ. Փիրումյանի, Դ. Տեր-Դավթյանի, Հ. Միրիմանյանի, Ալ. Քալանթարի,

Հովհ. Թումանյանի և այլոց՝ վրաց հեղինակների ստեղծագործություններին տված գնահատականները: Նշենք, որ Հր. Բայրամյանը վերհանել է նաև վիպասաններ Ա. Ղազբեգիի, «վիրական քնարի փայլուն աղամանդներ» Ալ. Ճավճավաձեի, Գր. Օրբելիանիի, Ն. Բարաթաշվիլիի, Ռ. Էրիսթավիի, Ա. Օերեթելիի, ինչպես նաև գրական-հասարակական գործիչներ Ն. Նիկոլաձեի, Լ. Ղիփիանիի, Ի. Իոսելիանիի, Ն. Լոմոնոսիի և շատերի մասին հայ հեղինակների խոսքերը:

Ժողովածուի հաջորդ՝ «Հոգևոր միասնություն» բաժինը նվիրված է հայ և վրացի մի շարք գրողների անձնական բարեկամությանն ու մտերմությանը, որոնցից են Գ. Սունդուկյանը և Ա. Օերեթելին, Հովհ. Թումանյանը, Գր. Ռոբաքիձեն և Տ. Տաբիձեն, Ե. Չարենցը, Ն. Միծիշվիլին ու Պ. Իաշվիլին և ուրիշներ: Անցյալ դարակազմին ու դրանից հետո Թիֆլիսում հայ գրողների ու մշակութային գործիչների հետ մտերմական և ստեղծագործական սերտ կապեր են ունեցել նաև Միխեիլ Ջավախիշվիլին ու Կոստանտինե Գամսախուրդիան, Իոսեֆ Գրիշաշվիլին ու Գալակտիոն Տաբիձեն, Գեորգի Լեոնիձեն ու Միմոն Զիքովանին, Լևան Ղիփիանին ու Ալեքսանդրե Աբաշելին, Իոսեֆ Նունեշվիլին ու Ալեքսանդրե Միգուան և այլք: Հեղինակն ըստ բազմաթիվ վավերագրերի ու փաստերի տվել է նրանց անաչառ մոտեցումների գնահատականը:

Ժողովածուի «Դիմանկարային ուրվագծեր» բաժնում զետեղված են ակնարկներ՝ նվիրված Ջանսուղ Չարկվիանիի, Բենիկ Սեյրանյանի, Գուրամ Փանջիկիձեի, Նոդար Դումբաձեի, Սոս Միմավորյանի ու Գիվի Շահնազարի գրական-մշակութային գործունեությանը:

«Հողվածներ» բաժինն ընդգրկում է գիտատեսական տարաբնույթ խնդիրներին առնչվող ուսումնասիրություններ, որոնցից ուշագրավ են «Հայագիտությունը Թբիլիսիի պետական համալսարանում» և «Ակադեմիկոս Գուրգեն Մևակի վրացագիտական գործունեությունը» ծավալուն հողվածները: Այստեղ զետեղված է նաև «Լրագրական բարքերին անհարիր» վերտառությամբ հողվածը, որն ընթերցողին ծանոթացնում է մամուլում ոչ հազվադեպ հանդիպող արտառոց մի փաստի: Մեր լրագրողներից մեկը վրացի նշանավոր գրողի ու հասարակական գործչի հետ ունեցած ու հայկական թերթերում տպագրած հարցազրույցը շաբաթներ անց նույնությամբ, սակայն իբրև միևնույն անձնավորության հետ այլ առիթներով վարած հարցազրույցներ պարբերաբար տպագրել է տարբեր թերթերում ու հանդեսներում: Հեղինակն անհրաժեշտ է համարել վկայակոչել թերթերի ամսաթվերն ու համարները՝ արտահայտելով իր մտահոգությունը:

Հարուստ է նաև ժողովածուի «Գրախոսություններ» բաժինը, ուր տեղ են գտել Թբիլիսիում և Երևանում վերջին տարիներին լույս տեսած վրացերեն և հայերեն գրքերի մասին հեղինակի գրախոսականները: Անշուշտ, դրանք ևս



առնչվում են հայ-վրացական մերօրյա կապերին և գրքերի աշխարհում տեղի ունեցած ակնառու մշակութային իրադարձություններին:

Հեղինակն առանձին բաժնում ընդգրկել է նաև տարբեր ժամանակներում լրագրողների հետ հատկապես իր այն հարցազրույցները, որոնցում շոշափվում են հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամության ու առնչությունների, ինչպես նաև դրանք մեր օրերում ավելի ընդլայնելու և ամրապնդելու խնդիրները: Հր. Բայրամյանն իր պատասխաններում ավստասանք է հայտնում, որ առանձին անխոհեմ գործիչների ու գրողների կողմից փորձեր են կատարվում խաթարելու դարերի ընթացքում թրծված կապերը: Գուցե և հենց այս նպատակով է նա ժողովածուն եզրափակում «Ուսանելի դասեր» վերտառությամբ «Հավելվածով», որտեղ զետեղված են տարբեր խորհրդածություններ: Դրանցում հեղինակը, վկայակոչելով հայ և վրաց ժողովուրդների բազմադարյա բարեկամության շատ անմոռաց դրվագներ, մերժում է նմանօրինակ քայլերը: Նա իր գիրքը եզրափակում է երկու ժողովուրդների մեծ բարեկամ Ն. Մառի իմաստալից խոսքերով. «Հանձինս հայերի և վրացիների, մենք տեսնում ենք հետնորդների երկու եղբայրական ազգերի, որոնք հետո բաժանվեցին այլևայլ ազգագրական, լեզվաբանական և մասամբ՝ մշակութային ու քաղաքական ներգործությունների պատճառով» (էջ 252): Մակայն հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը դարերի ընթացքում ամրապնդվել է և նորանոր ձևեր ընդունել: Այդ մասին են վկայում մեր ժողովուրդների գրույցներն ու լեզենդները, որոնցում անխաթար արտացոլված է նրանց եղբայրությունը:

En conclusion, l'œuvre historique de Claude Mutafian est d'une grande qualité. Son dernier ouvrage, *L'Arménie du Levant*, renouvelle l'histoire des Arméniens aux XI<sup>e</sup>-XIV<sup>e</sup> siècles et apparaît comme un événement historiographique dans l'étude de la période des Croisades. À considérer l'ensemble des travaux féconds de Claude Mutafian, mathématicien de grand talent qu'un voyage dans les terres historiques arméniennes, effectué en 1977, a amené à se convertir à l'histoire, on ne peut s'empêcher de songer aux grands Mekhitaristes des siècles passés, même si le sens donné, en général, à l'histoire des Arméniens par Claude Mutafian est plutôt positiviste.

Le père de l'auteur, Zareh Mutafian, peintre de renom, rescapé du génocide de 1915, avait pu étudier auprès des Mekhitaristes. L'île San Lazzaro degli Armeni a-t-elle, à son insu, captivé le fils ?

GÉRARD DÉDÉYAN



---

*Т. Р. Варданян, Азербайджанцы: История одного незавершенного этнопроекта. Историко-этнологический очерк, Москва, Русская панорама, 2012, 88 с.*

*Թ. Ռ. Վարդանյան, Ադրբեջանցիներ. մի անավարտ էթնիկ նախագծի պատմություն: Պատմաազգարանական ակնարկ, Մոսկվա, Ռուսկայա պանորամա, 2012, 88 էջ:*

ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Թամարա Վարդանյանի աշխատությունը նվիրված է Ադրբեջանի Հանրապետությունում բնակվող տիտղոսակիր «ազգի»՝ ադրբեջանցիների կազմավորման փուլերին և «ազգակերտման» գործընթացի քառուղիներում շրջանառվող գաղափարական հիմնավորումների խնդիրներին:

Կովկասի թյուրքալեզու բնակչությանը միայն XX դարի սկզբին սկսեցին անվանել «կովկասյան թաթարներ»՝ Ղրիմի և Կազանի թաթարներից նրան տարբերակելու համար, թեպետ Կովկասի մուսուլմանների շրջանում առավել գործածական էին «թյուրք», «կովկասցի» կամ «մուսուլման» ինքնանվանումները: Հետագայում «կովկասյան թաթարներ» անվանմանը փոխարինող «ադրբեջանցի» անվանումը կապված էր 1918 թ. մայիսին Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության ստեղծման հետ: Սկսած խորհրդային ժամանակաշրջանից՝ ադրբեջանցիների՝ «հնագույն ժողովուրդ» լինելն ապացուցելու նպատակով շրջանառության մեջ դրվեցին ադրբեջանցիների ծագմանը վերաբերող մի քանի տեսություններ, որոնց նպատակն էր հիմնավորել այդ տարածաշրջանում նրանց ներկայության պատմական ատաղձը, ինչպես նաև ապացուցել հարևան պետությունների, մասնավորապես Հայաստանի հանդեպ նրանց տարածքային հավակնությունների «իրավացիությունը»: Պետական մակարդակով պատմական անցյալի նենգափոխումն Ադրբեջանի Հանրապետությունում շարունակվում է առ այսօր, որի կառավարող շրջանակները հսկայական գումարներ են ծախսում տարածաշրջանում ադրբեջանցիների «բնիկության» և հայերի «եկվորության» սին թեզերի ապացուցման համար:

Սկզբնաղբյուրների և փաստական հարուստ նյութի հիման վրա գրված Թ. Վարդանյանի աշխատությունը նվիրված է գլխավորապես ադրբեջանցիների ծագումնաբանական խնդիրների լուսաբանմանը: Հեղինակը ներկայացնում է ազգերի և ազգային հիմնահարցերի ըմբռնման նախասկզբնական և կառուցվածքային տեսությունները, անդրադարձեր կատարում XVIII-XIX

դարերի կովկասյան մուսուլմանների ինքնանվանական և հարևանների կողմից նրանց տրված անվանումների խնդրներին: Նա իրավացիորեն անդրադառնում է «ադրբեջանցի» եզրույթի՝ որպես էթնանվան կիրառման արհեստականությանը և պարզաբանում, որ «դեռևս 1926 թվականի խորհրդային վիճակագրությունում կիրառվել է «թյուրք» անվանումը, իսկ 1939 թ. վիճակագրությունում արդեն պաշտոնապես ամրագրվել է «ադրբեջանցի» անվանումը» (էջ 43): «Ադրբեջանցի» անվանվող էթնոսի կազմավորման սկզբնավորումը նա պայմանավորում է Ստալինի անմիջական միջամտությամբ (էջ 43):

Թ. Վարդանյանը հստակ և համակարգված ներկայացնում է «ադրբեջանական էթնիկ ինքնագիտակցության» մեջ ներդրված իրանական, թյուրքական և ադրբեջանական տարրերի հաջորդականությունը պատմական զարգացումների և փոփոխությունների հոլովությունում, ինչպես նաև ադրբեջանցիների էթնիկ ինքնագիտակցության մշակութային հիմքերը և արդի փուլում ադրբեջանական հասարակության մեջ ընթացող ինքնության փնտրտուքը, մասնավորապես թյուրքիզմի և ադրբեջանականության միջև:

Անդրադառնալով նաև ադրբեջանական հետխորհրդային պատմագրությանը՝ հեղինակն իրավացիորեն արձանագրում է, որ վերջինս խորհրդային պատմագրությունից որդեգրել է որոշ հայեցակարգային մոտեցումներ: «Քանի որ խորհրդային պատմագրությունն Անդրկովկասում փաստացի ճանաչել է երեք տիտղոսակիր ազգերի՝ հայերի, վրացիների և ադրբեջանցիների, ըստ այդմ միայն երեք վարչատարածքային միավորներ են ստացել խորհրդային հանրապետության կարգավիճակ»,– նշում է նա: «Հավասարեցման» խորհրդային սկզբունքը ենթադրում է բոլոր միջոցներով, և որքան հնարավոր է արագ, այդ երեք տիտղոսակիր ազգերի միջև գոյություն ունեցող տարբերությունների վերացում: Պատմագրության մեջ այդ խնդիրը գտել է նաև հետևյալ արտացոլումը՝ եթե հայերի և վրացիների պատմությունը վաղեմի է, ապա պետք է «վաղեմի դարձնել» նաև նորահռչակ ադրբեջանցիներին: Այդ նպատակով տարածաշրջանի բոլոր մուսուլմանները նույնացվում էին ադրբեջանցիների հետ: Քանի որ վերոնշյալ տիտղոսակիր ազգերից միայն ադրբեջանցիներն էին մուսուլման, հետևաբար նրանց է վերագրվել Անդրկովկասի բազմացեղ և բազմալեզու մուսուլմանների պատմությունը» (էջ 59):

Հիրավի, Ադրբեջանում ազգի կազմավորման և ազգային գաղափարախոսական խնդիրների լուծման նպատակով մեր ժամանակակից ադրբեջանցի հեղինակները փորձում են նորահռչակ ադրբեջանցիների շրջանում սերմանել տարածաշրջանում նրանց բնիկ լինելու տեսությունը, որը հիմք կձառայի նրանց զբաղեցրած տարածքի՝ Կովկասյան Աղվանքի, ինչպես նաև աղվանական մշակութային ժառանգության յուրացման համար: Ավելին, պատմությունը խեղաթյուրելով և բացահայտ կեղծելով՝ նրանք փորձում են հիմնավորել նաև հարևան երկրներին, մասնավորապես Հայաստանին և Իրա-

նին ներկայացվող՝ ադրբեջանցիների տարածքային պահանջները: Դրան են միտված «երկու՝ Հյուսիսային և Հարավային Ադրբեջանների» գոյության տեսությունը, ինչպես նաև հայերի «եկվորության» վերաբերյալ հիմնագուրկ պնդումները:

Նշենք, որ Թ. Վարդանյանն առանձնակի ուշադրություն է դարձնում և անաչառորեն ընդգծում «ադրբեջանական էթնոս», «էթնիկ ադրբեջանցի», «ադրբեջանցիների էթնիկական տարածք» եզրույթների կիրառման աննպատակահարմարությունը հատկապես XX դարին նախորդած պատմական իրողությունների վերլուծության պարագայում:

Մեր կարծիքով, աշխատությունը կշահեր, եթե հեղինակն անդրադառնար ադրբեջանցիների ծագումնաբանության աղվանական տեսությանը ևս, որը որոշակիորեն նպատակաուղղված է Արցախի՝ «ադրբեջանական պատկանելիության ապացուցմանը»: Առավել ևս եթե նկատի ունենանք, որ «Ադրբեջանի հանրագիտարանը,– ինչպես իրավամբ նշում է ամերիկացի պատմաբան Ս. Աստուրյանը,– ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի պատմական աշխարհագրության փոքր-ինչ այլ պատկեր՝ պնդելով, որ Լեռնային Ղարաբաղը եղել է Կովկասյան Ալբանիայի պատմական Արցախ նահանգի մի մասը Բ.Ա. I դարում»<sup>1</sup>:

Հետազոտական աշխատանքների շարունակման ընթացքում, կարծում ենք, հետաքրքիր կլինի դաշտային աշխատանքի իրականացումը, այն է՝ հարցազրույցների անցկացումը թեկուզ և արտերկրում բնակվող ադրբեջանցիների հետ, ինչն ավելի մեծ հստակություն կսահմանի ինքնության հարցին առնչվող խնդիրների լուսաբանման ասպարեզում:

Ամփոփելուց առաջ ավելորդ չենք համարում տեղեկացնել, որ գրքի խմբագիրն ու առաջաբանի հեղինակը քաղաքական գիտությունների դոկտոր Արմեն Այվազյանն է, իսկ այն հրատարակության են երաշխավորել Ռասա Չեպայտենեն (Լիտվա) և Արթուր Ցուցիկը (Ռուսաստանի Դաշնություն):

Թ. Վարդանյանի ուսումնասիրությունն անթերի է գիտական անաչառության տեսանկյունից, հատկապես եթե հաշվի առնենք օգտագործված սկզբնաղբյուրների, ինչպես նաև ադրբեջանցի հեղինակների աշխատությունների բազմազանությունը: Հստակ և տրամաբանական շարադրանքը, մասնագիտական եզրույթներին տրվող մեկնաբանությունները սույն աշխատությունը դարձնում են հասանելի ոչ միայն ակադեմիական շրջանակների, այլև ընթերցող հանրության լայն շերտերի համար:


*SUԹԵՎԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ*

---

<sup>1</sup> Astourian S.H., In Search of Their Forefathers: National Identity and the Historiography and Politics of Armenian and Azerbaijani Ethnogeneses, Nationalism and History. The Politics of Nation building in Post-Soviet Armenia, Azerbaijan and Georgia, Centre for Russian and East European Studies, University of Toronto, 1994, p. 59.

ԼԵՓՍԻՈՒՄԻ ՏՈՒՆԸ՝ ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԿԵՆՏՐՈՆ

Կյանքի մայրամուտին հայանվեր աննկուն գործիչ Յոհաննես Լեփսիուսը մտահղացել էր գերմանա-հայկական ակադեմիա կամ այլ կերպ ասած՝ գիտամշակութային և կրթական կենտրոն ստեղծելու գաղափարը, որն իր ավանդը կներդնէր XX դարի առաջին ցեղասպանության բազմակողմանի լուսաբանման, ինչպես նաև հայագիտության զարգացման գործում և միաժամանակ նորովի կկամրջեր երկու ժողովուրդներին: Այդ մտադրությունը, որը նա չհասցրեց իրականացնել, կենսագործվեց XXI դարում, երբ հայ ժողովրդի գերմանացի մի խումբ բարեկամների միջնորդությամբ Պոտսդամում գտնվող Լեփսիուսի առանձնատունը գերմանական կառավարության միջոցներով նորոգվեց և հատկացվեց վերոնշյալ նպատակին:



*Բրանդենբուրգի երկրամասի վարչապետ  
Մաթիաս Պլաթցեկը և Ռոլֆ Հոսֆելդը Լեփսիուսի տանը*

Հատկապես 2011 թ. ի վեր, երբ «Լեփսիուսի տուն» անվամբ հայտնի այս հաստատության տնօրեն ընտրվեց «Նեմեսիսի օպերացիան» գրքի հեղինակ դոկտոր Ռոլֆ Հոսֆելդը<sup>1</sup>, այն ծավալեց ակտիվ և արգասաբեր գործունեություն, ավելին, դարձավ Հայոց ցեղասպանության քննական լուսաբանման և, ըստ այդմ, նաև ընդհանուր առմամբ՝ ցեղասպանագիտության մի ուրույն կենտրոն, որը հավակնում է այդ ասպարեգում ունենալ ծանրակշիռ դերակատարում: Որպես այդպիսին, այն, բնականաբար, ոչ միայն Գերմանիայում, այլև ամբողջ Եվրոպայում իր տեսակի մեջ եզակի հաստատություն է, քանի որ, զբաղվելով ցեղասպանությանը վերաբերող խնդիրներով, դա իր գործունեության առանցքը դարձրել է Հայոց ցեղասպանությունը՝ այն համարելով որպես «Լեփսիուսի տանը և նրա հետ համագործակցությամբ իրականացվող ցեղասպանագիտական և ազգային փոքրամասնությունների հանդեպ տարվող քաղաքականության համեմատական հետազոտությունների ելակետ»<sup>2</sup>:

Խորապես գնահատելի է նաև այն հանգամանքը, որ հաստատությունը, չսահմանափակվելով սոսկ Հայոց ցեղասպանությանը վերաբերող հիմնախնդիրների քննական ուսումնասիրությամբ, իր գիտահետազոտական գործունեության առաջնահերթությունների շարքում է դասում նաև հայոց պատմությանը և մշակույթին վերաբերող հարցերի լուսաբանումը և, ըստ այդմ, դարձել է նաև հայագիտական ինքնատիպ կենտրոն:

Ռ. Հոսֆելդի հմուտ ղեկավարությամբ Լեփսիուսի տունն իր գործունեության ընթացքում առկա նյութական արգելքները հաղթահարելու, ինչպես նաև աշխատանքներին առավելագույն հրապարակայնություն հաղորդելու համար, որպես կանոն, դրանք իրականացնում է Գերմանիայում հայտնի գիտական և մշակութային կենտրոնների հետ սերտ համագործակցությամբ: Դրա արգասիքն էին 2012 թ. հոկտեմբերին՝ «Յոհաննես Լեփսիուս. միակ գերմանացի բացառությունը» և 2013 թ. մարտին՝ «Ցեղասպանություն և գրականություն. Ֆրանց Վերֆելը հայկական-հրեական-թուրքական-գերմանական հեռապատկերում» խորագրերի ներքո տեղի ունեցած միջազգային գիտաժողովները, որոնցից առաջինը կազմակերպվեց Պոտսդամի համալսարանի, իսկ երկրորդը Պոտսդամի՝ Մովսես Մենդելսոնի անվան կենտրոնի հետ համագործակցությամբ: Երկու գիտաժողովներն աչքի էին ընկնում զեկուցումների թեմատիկ բազմազանությամբ և ունեին ներկայացուցչական պատկառելի կազմ, որում ընդգրկված էին հայտնի մասնագետներ ոչ միայն Գերմանիայից, այլև Հայաստանից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից, Շվեյցարիայից, Ավստրիայից և այլ երկրներից:

---

<sup>1</sup> Տե՛ս **Hosfeld R.**, Operation Nemesis. Die Türkei, Deutschland und der Völkermord an den Armeniern, Köln, 2005.

<sup>2</sup> Տե՛ս հաստատության խնդիրներին և նպատակներին վերաբերող ինտերնետային հայտարարագիրը, <http://lepsiushaus.wordpress.com/uber-uns/ziele/>:

Պարբերական դարձած միջազգային գիտաժողովների գումարումից զատ՝ Լեփսիուսի տանը կազմակերպվում են նաև դասախոսություններ, սեմինարներ, քննարկումներ, որոնք վերաբերում են Հայոց ցեղասպանությանը և դրան հարակից խնդիրներին: Եթե նկատի առնենք, որ Ռ. Հոսֆելդը և Լեփսիուսի տան վարչությունը մշտապես հոգ են տանում, որ նշված միջոցառումները լայնորեն լուսաբանվեն գերմանական զանգվածային լրատվամիջոցներում, ապա ակնհայտ կդառնա, թե այս հաստատությունը որքան կարևոր հանձնառություն է ստանձնել ոչ միայն հայագիտության և ցեղասպանագիտության զարգացման ասպարեզում, այլև Հայոց ցեղասպանության պատմությունը եվրոպական հասարակական գիտակցության մեջ ամրակայելու գործում:



*Լեփսիուսի տունը*

Լեփսիուսի տան կողմից հետևողականորեն իրականացվող միջոցառումների մասին է վկայում անցյալ տարվա հազեցած օրակարգը: Ի թիվս այլ միջոցառումների, այստեղ կազմակերպվել են ընթերցումներ Արմին Վեգների՝ նոր լույս ընծայված պատմվածքներից, դասախոսություններ և քննարկումներ «Քրիստոնեությունը և մարդու իրավունքները», «Հիտլերը և Հայոց ցեղասպանությունը» թեմաներով: «Նորագույն դատարանի դատավորը» խորագրի

ներքո տեղի են ունեցել ընթերցումներ Դոգհան Աքհանլիի համանուն վեպից, իսկ հուլիսի 2-ին վերստին Լեփսիուսի տան նախաձեռնությամբ Պոտսդամի համալսարանում կազմակերպվել են հրապարակային քննարկումներ «Սեփական անցյալի հերոսական ինքնանկարը՝ որպես իրական պատմության լուսաբանման խոչընդոտ» թեմայով, որոնք վերաբերում էին Թուրքիային և նրա կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանն արգելակող հիմնախնդիրներին:

Գնահատելի է և դրվատելի նաև Լեփսիուսի տանը 2013 թ. երկրորդ կեսին կայացած միջոցառումների օրակարգը: Օգոստոսի 2-ին և 3-ին այնտեղ կազմակերպվեց երկօրյա միջազգային գիտական սեմինար Հայոց ցեղասպանության թեմայով, որի աշխատանքներին մասնակցեցին ճանաչված մասնագետներ Գերմանիայից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից, Անգլիայից, Իսպանիայից, Դանիայից և Սերբիայից: Սեպտեմբերի 6-ին հանդիսավորությամբ տեղի ունեցավ արդեն հիշատակված՝ «Յոհաննես Լեփսիուս. միակ գերմա-

նացի բացառությունը» գիտաժողովում ընթերցված զեկուցումներն ընդգրկող ժողովածուի շնորհանդեսը<sup>1</sup>: Հաջորդ օրը կազմակերպվեց հանդիպում «Միրաք Վայսբախ» հիմնադրամի ներկայացուցչության հետ, որը հետապնդում էր իր տեսակի մեջ եզակի և հայերի համար առանձնահատուկ կարևորություն ունեցող այդ հիմնադրամը հասարակական լայն շրջանակներին ներկայացնելու և նրա գործունեությանը հրապարակային հնչեղություն հաղորդելու նպատակ: Նշենք, ի դեպ, որ այս հիմնադրամը ստեղծվել է Հայաստանում և արտերկրում բնակվող հայ, ինչպես նաև հայկական արմատներ ունեցող երեխաների, պատանիների և չափահասների կրթությանն ու վերապատրաստմանը սատարելու համար: Սեպտեմբերի 10-ին Լեփսիուսի տան նախաձեռնությամբ Պոտսդամի Խաղաղության եկեղեցում տողերիս հեղինակը հանդես եկավ «Հայոց Ցեղասպանությունը և Յոհաննես Լեփսիուսը» թեմայով դասախոսությամբ, իսկ սեպտեմբերի 25-ին Յենայի խորհրդարանում՝ «Յոհաննես Լեփսիուս. հայերի անձնվեր բարեկամը» թեմայով հանդես եկավ Լեփսիուսի թոռնորդին՝ պրոֆեսոր Մանֆրեդ Աշկեն:



*Գիտաժողով Լեփսիուսի տանը*

<sup>1</sup> Տե՛ս **Hosfeld R.**, (Hg.), Johannes Lepsius – Eine deutsche Ausnahme. Der Völkermord an den Armeniern, Humanitarismus und Menschenrechte, Göttingen, Wallstein Verlag 2013. Տե՛ս Վ. Հուլբերի գրախոսականը. Հայագիտության հարցեր, 2014, թիվ 1, էջ 188-192:

Հաստատության միջոցառումների օրակարգում երևան են գալիս Հաստատանը մտահոգող բազում հիմնախնդիրներ: Մեկտեմբերի 27-ին Բեյրութի Արևելյան ինստիտուտի աշխատակից դոկտոր Թոմաս Շեֆլերը հանդես եկավ «Ներկրոնական երկխոսությունը Մերձավոր Արևելքում» թեմայով դասախոսությամբ, որին հետևեցին քննարկումներ: Հոկտեմբերի 25-ին տեղի ունեցավ հայազգի հայտնի աստվածաբան, Էրլանգենի համալսարանի պրոֆեսոր Հացիկ Գազերի «Հայերը և Թուրքիան. գույքի ցուցակագրում» թեմայով դասախոսությունը, իսկ նոյեմբերի 18-ին՝ Ռումինիայի տնտեսության նախարար, Ռումինիայում հայերի միության նախագահ և այդ երկրի գրողների միության փոխնախագահ Վարուժան Ոսկանյանի՝ ռումիներենից գերմաներեն թարգմանված «Շշուկների մատյան» վեպի հանդիսավոր շնորհանդեսը:

Ազգությամբ թուրք, ամերիկյան հայտնի սոցիոլոգ, Կլարկի համալսարանի պրոֆեսոր Թաներ Աքչամը Լեփսիուսի տանը նոյեմբերի 27-ին հանդես եկավ «Հայոց ցեղասպանությունը օսմանյան փաստաթղթերում», իսկ հաջորդ օրը՝ «Ցեղասպանության ժխտումը որպես անվտանգության հայեցակարգ» թեմաներին նվիրված դասախոսություններով: Հաստատության՝ 2013 թ. միջոցառումների օրակարգը եզրափակեցին նոյեմբերի 29-ին տեղի ունեցած՝ «Հայոց ողբերգությունը հիշողության և մոռացումի միջև» թեմայով սեմինարը և քննարկումները, որոնց, մասնագետներից և այլ չափահաս այցելուներից զատ, մասնակցեցին նաև Բեռլինի և Բրանդենբուրգի երկրամասի դպրոցականները:

Լեփսիուսի տան կողմից կազմակերպված վերոնշյալ միջոցառումների սոսկ թվարկումը բավական է փաստելու համար, որ Ռ. Հոսֆելդի ղեկավարմամբ այն արդեն դարձել է հայագիտության կենսատու զարկերակ, որը փորձում է իր շուրջ համախմբել հայագիտական մեծ ներուժ և զբաղվում է ոչ միայն զուտ գիտական, այլև հայ ժողովրդի համար արդիական հնչեղություն և պատմաքաղաքական կարևոր նշանակություն ունեցող հիմնախնդիրներով. հանգամանք, որը լիովին բնորոշ էր նաև մեծ մարդասեր, հայ ժողովրդի անմնացորդ նվիրյալ և անմոռաց երախտավոր Յոհաննես Լեփսիուսի գործունեությանը:

*ԱՇՈՏ ՀՍՅՐՈՒՆԻ*



---

---

## ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՄԻՆԻԱՅՈՒՄ

Ռումինիայի հայկական համայնքը հարյուրավոր տարիների հարուստ պատմություն ունի: Դարեր շարունակ մշակութային ասպարեզում հայերի այստեղ ծավալած ակնառու գործունեությունն անհետևանք չի անցել: Այդ մասին են վկայում թե գրավոր սկզբնաղբյուրները և թե Ռումինիայի ամբողջ տարածքով մեկ սփռված հայկական եկեղեցիներն ու վանքերը, կերպարվեստի ու կիրառական արվեստի նմուշները:

Հեռանալով պատմական հայրենիքից՝ հայերն իրենց հետ Ռումինիա են տարել հայ արվեստի բազմաթիվ նմուշներ՝ նկարագարդ ձեռագրեր, արծաթե իրեր, սրբապատկերներ, գորգեր, եկեղեցական հանդերձանքի նմուշներ: Հաստատվելով օտար հողի վրա՝ նրանք այնտեղ հիմնել են արվեստանոցներ՝ պահպանելով դարերից եկող ավանդույթները, ինչպես նաև փոխառել նոր միջավայրի մշակութային առանձնահատկությունները:

1927 թ. մի խումբ հայ մտավորականների նախաձեռնությամբ Բուխարեստում հայկական եկեղեցուն կից ստեղծվել է գրադարան, որի նպատակն էր ոչնչացումից փրկել և պահպանել հայկական համայնքին պատկանող ձեռագիր ու տպագիր գրքերը, հայոց պատմությանը, գրականությանը և արվեստին վերաբերող հայերեն և օտարալեզու հրատարակություններն ու արխիվային նյութերը, կաթողիկոսական կոնդակները, ինչպես նաև հնագույն արվեստի գործերը և հայկական արվեստին ու ազգագրությանը վերաբերող տարբեր նյութեր: Գրադարանին կից գործելու էր նաև թանգարան, որ ձևավորվել էր առաջին հերթին հայ հավաքորդների (Գրիգոր և Հրանտ Ավագյաններ, Գրիգորե Պուլուկլիու և այլք) նվիրատվությունների շնորհիվ:

Թանգարանը հարստացել է և ծաղկում ապրել հատկապես այն ժամանակ, երբ նշանավոր արևելագետ և հայագետ Հակոբ Սիրունին այն վերցրել է իր հոգածության ներքո: Մեծ գիտնականը կարողացել է Ռուման, Բակըու, Մուչավա, Բոտոշան, Յաշ, Ֆոքշան, Սիլիստրա և Կոնստանցա քաղաքներում գործող հայկական եկեղեցիներից հավաքել և Բուխարեստ բերել հին ձեռագրեր, գրքեր ու եկեղեցական արվեստի բազմաթիվ նմուշներ:

Աստիճանաբար հարստացող թանգարանն ու գրադարանն ունեին ինքնուրույն շենքի կարիք, ուստի 1942 թ. Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցու բակում Հովսեփ և Վիկտորիա Տուտյանների նվիրատվությամբ կառուցվել է Հայոց մշակութային տունը, որտեղ պետք է գործեին հայկական գրադարանն ու թանգարանը: 1940-ական թթ. երկրում առկա քաղաքական անբա-

րենպաստ իրավիճակի պատճառով թանգարանը դադարել է գործելուց, իսկ 1963 թ.՝ վերջնականապես փակվել է և վերաբացվել միայն 1987 թ.:

Բուխարեստի հայոց Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցուն կից գործող Տուսյան մշակույթի տունը Ռուսինիայում հայոց դարավոր ներկայության և մշակութային խոշոր ժառանգության խորհրդանիշն է, որտեղ ի մի են բերված ռուսինական հողի վրա հայկական հետքերի տարբեր վկայություններ:

Ներկայումս հայկական մշակութային ժառանգության պահպանումը ռուսինահայ համայնքի համար չափազանց կարևոր և կենսական հարցերից է: Գիտակցելով այս հիմնախնդրի էությունը՝ Տաթև եպիսկոպոս Հակոբյանը, ստանձնելով Ռուսինահայոց թեմի առաջնորդությունը, ձեռնամուխ եղավ տարածաշրջանում հայկական դարավոր ժառանգության պահպանման գործին: Իր հոգաձության տակ առնելով Ռուսինիայի զանազան հայկական եկեղեցիներում պահվող արվեստի գործերը՝ նա համագործակցելով ԵՊՀ հայ արվեստի պատմության և տեսության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի վարիչ, արվեստագիտության դոկտոր Լևոն Չուգասյանի հետ, ձեռնամուխ եղավ Բուխարեստի հայկական թանգարանում պահվող, ինչպես նաև երկրի տարբեր վայրերում գտնվող հայկական մշակութային վկայությունների ուսումնասիրության և պահպանման գործին:

Համագործակցությանը սկիզբ դրվեց 2012 թ. աշնանը, երբ ԵՊՀ հայ արվեստի պատմության և տեսության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի երիտասարդ դասախոսներ Նելլի Սմբատյանը և Մարիամ Վարդանյանը մեկնեցին Բուխարեստ՝ տեղի հայկական Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցու Տուսյան թանգարանում աշխատելու: Նելլի Սմբատյանը զբաղվում է հայկական եկեղեցական գործվածքի, իսկ Մարիամ Վարդանյանը՝ հայկական արծաթագործության ուսումնասիրությամբ: Այս հայրենանվեր գործին սիրով և մեծ պատրաստակամությամբ օժանդակեցին և մասնագետների առաջին այցի ճանապարհածախսը հոգացին ՀՀ մշակույթի ու սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունները:

Թանգարանում պահվում են եկեղեցական-ծիսական աշխարհիկ իրեր, որոնք հիմնականում պատկանել են Ռուսինիայի նշանավոր հայ ընտանիքներին: Դրանք երբևէ չեն ուսումնասիրվել և գիտական շրջանառության մեջ չեն դրվել, ուստի առաջին հերթին հարկ էր ձեռնամուխ լինել թանգարանային նմուշների գիտական մանրակրկիտ նկարագրությանը:

Այս այցելության ընթացքում կատարվեց շուրջ 100 արծաթե իրերի նկարագրություն՝ դրանց ստեղծման թվականի և տեղի հնարավորինս ճշգրտմամբ, մասնավորապես ուսումնասիրվեց 12 սկիհ, 12 մադգմա, 12 ձեռաց խաչ, 12 խորանի խաչ, հինգ գավաթ, 14 գդալ, մեկ կանացի պայուսակ, երկու գոտի, 11 ճարմանդ, չորս խնկաման, երկու լանջախաչ, վեց քշոց, մեկ մյուռոնաթափ աղավնի, չորս մասանց խաչ – պահարան, երկու մատանի:

Մինչև այժմ նկարագրված իրերի թվում ամենավաղ նմուշները վերաբերում են XVIII դարին՝ հինգ սկիհ, մեկ սեղանի խաչ, մեկ մասանց խաչ-պահարան: Դատելով գեղարվեստական և ոճական առանձնահատկություններից՝ այս իրերը պատրաստվել են Կ. Պոլսում. նմուշների թվագրության հնարավոր ժամանակաշրջանը հուշում են դրանց վրա առկա նվիրատական արձանագրությունները, որոնց շնորհիվ հավաքածուն ձեռք է բերում ոչ միայն գեղարվեստական, այլև կարևոր պատմական արժեք:

Նմուշների տեղագրման աշխարհագրությունը բավականին ընդարձակ է. հավաքածուն ներառում է ոչ միայն հայկական, այլև եվրոպական և ռուսական տարբեր դպրոցների նմուշներ (Վան, Մեքաստիա, Կ. Պոլիս, Մոսկվա, Թիֆլիս, Լվով, Վիեննա), կան նաև տեղական գործեր: Արժաթե իրերի թվում գերակշռում են Կ. Պոլսի և Վիեննայի արծաթագործական արվեստանոցներում պատրաստված գործերը:

Կ. Պոլսից է բերվել նաև եկեղեցական հագուստի և գործվածքի նմուշների մեծ մասը, կան իհարկե նաև տեղում՝ Ռումինիայում, ստեղծված նմուշներ: Թանգարանում պահվող նմուշներից առաջին անգամ մասնագիտական քննության ենթարկվեցին 16 վակաս, չորս խույր, 20 թագ, 13 փորուրար, հինգ արտախուրակ, վեց բազպան:

Ի տարբերություն արծաթե իրերի՝ գործվածքի դեպքում խիստ սակավ են նվիրատվական արձանագրությունները, և ստեղծման թվականն ու վայրը ճշգրտելու միակ հնարավոր միջոցը ոճական, գեղարվեստական առանձնահատկությունների քննությունն է, ինչպես նաև համեմատությունը տարբեր հավաքածուներում պահվող նույն ժամանակի այլ նմուշների հետ:

Հիշատակման են արժանի հատկապես հավաքածուի՝ բացառիկ նրբությամբ մշակված, շքեղ արծաթե մանրամասներով դրվագված, ինչպես նաև կիսաթանկարժեք քարերով ընդելուզված վակասներն ու թագերը, ասեղնագործական տարբեր տեխնիկաներով արված մետաքսաթել, ոսկեթել ու արծաթաթել գործվածքների նմուշները: Հավաքածուի մեջ առանձնանում են հանրահայտ Մլոցկի մետաքսե գոտիներից պահպանված կտորները:

Աշխատանքները շարունակվեցին 2013 թ. ամռանը: Այս անգամ Բուխարեստ մեկնեցին արդեն երեք մասնագետ, որոնց ճանապարհածախսն ամբողջովին հոգաց ՀՀ մշակույթի նախարար տիկին Հասմիկ Պողոսյանը: Երկրորդ այցելության ժամանակ աշխատանքային խմբում ընդգրկվեց նաև ԵՊՀ հայ արվեստի պատմության և տեսության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի դոցենտ, արվեստագիտության թեկնածու Սեյրանուշ Մանուկյանը, որը սկսեց թանգարանի սրբանկարների հավաքածուի ուսումնասիրության գործը: Այս ընթացքում նկարագրվեցին և ուսումնասիրվեցին թվով 24՝ XVII-XX դդ. սրբապատկեր-սրբանկարներ:

Մասնագիտական հիմնավոր համեմատությունների և վերլուծությունների համար ծագեց թանգարաններ և ռումինական տարբեր հուշարձաններ

այցելելու, մասնագիտական գրականությանը ծանոթանալու միջոցով ռումինական սրբապատկերի պատմությունն ու գեղարվեստական դպրոցների գործունեությունը ուսումնասիրելու անհրաժեշտությունը, որոնք հիմնականում երեքն են՝ Վալախիայի, Մոլդավիայի, Տրանսիլվանիայի: Այդ ուսումնասիրության հիման վրա հնարավոր եղավ տեղայնացնել և թվագրել թանգարանի սրբապատկերները: Դրանց մեծ մասը պատկանում է Մոլդավիայի ու Վալախիայի դպրոցներին, իսկ մեկը կրում է Տրանսիլվանիայի դպրոցի առանձնահատկությունները: Դրանցից շատերը կատարվել են ռումինահայ վարպետների կողմից, որոնք աշխատել են տեղական գեղարվեստական միջավայրում, ուստի հավատարիմ են մնացել վերջինիս ոճին և տեխնիկային: Հիշատակված սրբապատկերների թվում հարկ է առանձնացնել հատկապես սբ. Մինասի պատկերը: Դատելով ոճական առանձնահատկություններից՝ այն ստեղծվել է XVII դարում, իսկ XIX դարում դրա վրա ամրացվել է արծաթե շապիկ: Սակայն թվագրումը դեռևս վերջնական չէ, քանի որ ուսումնասիրությունը և պատկերի վերականգնումը շարունակվում են. չի բացառվում նաև, որ պատկերը նկարվել է արծաթե կազմի պատրաստման ժամանակաշրջանում: Սրբանկարներից չորսը նմանվում են Էջմիածնում պահվող օրինակներին:

Թանգարանի հավաքածուի մեջ կան մի քանի սրբանկարներ, որոնք կատարվել են կտավի վրա՝ եվրոպացի նկարիչների կողմից: Դրանցից ուշագրավ է հատկապես XVIII դարի գերմանացի անհայտ նկարչի վրձնին պատկանող՝ Հիսուսի գլուխը պատկերող էքսպրեսիվ աշխատանքը: Վերջինս մի քանի տարի առաջ վերանորոգվել է, որի հետևանքով նկարի մուգ խորքը կորցրել է իր բազմերանգությունը և դարձել սև, ինչը գեղանկարին պարզունակություն է հաղորդել:

XIX դարի վերջի և XX դարի սկզբի մի շարք սրբապատկերներ ունեն արծաթե ոսկեզօծ բարձրակարգ շապիկներ, որոնք կատարված են ավստրիացի և գերմանացի վարպետների կողմից թանկարժեք մետաղի մշակման տարբեր տեխնիկաներով:

Ընդհանուր առմամբ գերակշռում են հայկական թեմաներով սրբապատկերները՝ հայ սրբեր, Գրիգոր Լուսավորչի վարքը, Տրդատի դարձը ու թագավորական ընտանիքի մկրտությունը և այլն: Թանգարանի պահոցում պահվում են 100-ից ավելի սրբապատկերներ, որոնց ուսումնասիրությունը հնարավոր կլինի միայն բուժումից հետո, քանի որ դրանք «հիվանդ» են սնկերով և այլ մանրէներով ու կարիք ունեն լուրջ բուժման և վերականգնման:

Երկրորդ այցելության ժամանակ շարունակվեցին աշխատանքները թանգարանի գեղարվեստական մետաղի և գործվածքի արժեքավոր հավաքածուների ուսումնասիրության ուղղությամբ:

Առավել հետաքրքրական և ուշագրավ էր թանգարանում պահվող վեց մեծադիր վարագույրների ուսումնասիրությունը: Դրանք պատրաստվել են

Կ. Պոլսում և Թոքատում (Եվդոկիա) հայ վարպետների կողմից ու նվիրաբերվել Ռումինիայի տարբեր հայկական եկեղեցիների: Վարագույրները պատրաստված են դաջագարդման, և միայն մեկը՝ մումուկի<sup>1</sup> տեխնիկայով, և թվագրվում են XVIII-XIX դդ.: Գեղարվեստական հորինվածքով և կատարողական վարպետությամբ հատկապես առանձնանում է Գրիգոր Լուսավորչի կողմից թագավորական ընտանիքի մկրտության տեսարանը ներկայացնող՝ Կ. Պոլսում ստեղծված մեծադիր վարագույրը:

Վարագույրներից բացի՝ նկարագրվեցին և ուսումնասիրվեցին թանգարանում պահվող սկիհի և խորանի մեծ թվով ծածկոցները, շուրջառները, եկեղեցական հագուստի և գործվածքի այլ նմուշները:

Արծաթե իրերից հետազոտության ենթարկվեցին խորանի խաչերը, սափորները, սկուտեղները, հարսանեկան թագերը, որոնցից առավել հետաքրքիր էին XVIII դարում Պարսկաստանում և Լեհաստանում ստեղծված երկու սափորները, Կ. Պոլսում պատրաստված ասեղնագործ, մարգարտաշար ճարմանդը, ինչպես նաև հունական ծագում ունեցող փայտե փորագրագարդ ներդիրով խորանի խաչերը:

Այս անգամ գործողման մեկնած մասնագետներն աշխատեցին ոչ միայն Բուխարեստի հայկական թանգարանում, այլև երբեմնի հայաշատ Ֆոքշան, Տրոգու Օկնա, Սուչավա, Բոթոշան և Յաշ քաղաքների հայկական եկեղեցիներում, որտեղ պահվում են գեղանկարչական և կիրառական արվեստի բազմաթիվ նմուշներ:

Գիտնականների համատեղ նախաձեռնությունը նպատակ ունի ի վերջո հավաքելու, հաշվառելու, ուսումնասիրելու և գիտական շրջանառության մեջ դնելու Ռումինիայի ամբողջ տարածքով մեկ սփռված հայկական դարավոր գեղարվեստական ժառանգությունը: Կարևորվում են անհրաժեշտության դեպքում արվեստի նմուշների վերականգնումն ու պահպանման ավելի լավ պայմանների ապահովումը: Պետք է նշել, որ վերանորոգման կարիք ունեցող աշխատանքները քիչ չեն: Դրանք պահանջում են մեծ ծախսեր և բարձրակարգ մասնագետների միջամտություն:

Ռումինայում հայ արվեստի նմուշների ուսումնասիրության ուղղությամբ սկսված աշխատանքը մի նոր, յուրահատուկ ուղղվածություն ստացավ 2013 թ. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի տրամադրած դրամաշնորհի միջոցով:

Նույն թվականի նոյեմբերին Լ. Չուգասցյանը վերոնշյալ դրամաշնորհի շրջանակներում գիտական այցով մեկնեց Ռումինիա՝ նպատակ ունենալով խորացնելու հայ-ռումինական պատմամշակութային հարաբերություններին

---

<sup>1</sup> Նախապես գործվածքի վրա կլոր զարդանախշերով մում էին հալում-կաթեցնում, ապա ծածկում ներկը չներծծող որևէ նյութով: Այնուհետև գործվածքը ընկղմում էին կապույտ ներկի մեջ: Ներկելուց հետո կտորը լվանում էին և մումը մաքրում, որից հետո կապույտ դաշտի վրա փայլում էին փոքրիկ, կլոր, ձերմակ նախշերից ստացված պատկերները:

վերաբերող գիտական համագործակցությունը և ուսումնասիրելու Ռուսիանիայի երբեմնի հայաբնակ շրջաններում պահպանված արվեստի ստեղծագործությունները: Այդ օրերին նա առիթ ունեցավ Բուխարեստի մի շարք կրթական և մշակութային հաստատություններում հանդես գալու հայ արվեստին վերաբերող դասախոսություններով:

Իր այցելության ընթացքում Լ. Չուգասզյանը եղավ նաև Ռուսիանիայի երբեմնի հայաշատ շրջաններից մեկում՝ Տրանսիլվանիայում, ծանոթացավ Գեռլա և Կլուժ-Նապոկա քաղաքներում պահվող հայ արվեստի քիչ հայտնի և չուսումնասիրված նմուշներին: Գործուղման ընթացքում նա կարողացավ ձեռք բերել կարևոր պայմանավորվածություններ, որոնց շնորհիվ ուսումնասիրող խմբի աշխատանքները մոտ ապագայում կշարունակվեն նաև Տրանսիլվանիայում:

Աշխատանքներն ավարտելուց հետո նախատեսվում է հրատարակել կատալոգ, որտեղ կներկայացվեն Ռուսիանիայում պահպանված հայ արվեստի գանձերը, ինչը կնպաստի այս երկրում հայկական դարավոր մշակույթի համընդհանուր ճանաչմանը:

Փաստորեն, 2012-2013 թթ. ընթացքում բավականին մեծ աշխատանք է իրականացվել ռուսինահայերի գեղարվեստական պատմության քննության ուղղությամբ, սակայն անելիքներ դեռ շատ կան, քանի որ նյութի համակողմանի ու մասնագիտական ուսումնասիրությունը ժամանակ, միջոցներ և մեծ ջանքեր է պահանջում:

*ՆԵԼԼԻ ՄՄԲԱՏՅԱՆ,  
ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

<b>Ավագյան Արծրուն</b>	ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<b>Ավետիսյան Հայկ</b>	ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, ԵՊՀ ՀՀԻ հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (hykavetisyan@yahoo.com)
<b>Ավետիսյան Յուրի</b>	ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (spyurq2009@yahoo.com )
<b>Բաղդայան Գեղամ</b>	ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի ասիստենտ (gegham.badalyan@gmail.com)
<b>Գևունի Արտակ</b>	ԵՊՀ ՀՀԻ հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու (telepinus@rambler.ru)
<b>Դեդեյան Ժիրայր</b>	Մոնպելյեի Պոլ Վալերի համալսարանի վաստակավոր պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (gerard.dedeyan@wanadoo.fr)
<b>Եղիազարյան Արման</b>	ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր (armyegh@yahoo.com)
<b>Կոստանդյան Էմմա</b>	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր
<b>Հայրապետյան Տաթևիկ</b>	ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտ (haytatev@gmeil.com)
<b>Հայրունի Աշոտ</b>	ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, ԵՊՀ ՀՀԻ առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր (ahayruni@yahoo.de)

- Հովհաննիսյան Պետրոս** ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր  
(petros.hovhannisyan@rambler.ru)
- Մաղայան Վլադիմիր** ԵՊՀ ՀՀԻ հայ-վրացական հարաբերությունների բաժնի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու
- Վարդան Սատթեոսեան** ԱՄՆ, Ազգային ուսումնական խորհրդի գործադիր տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու
- Պետրոսյան Վարդան** ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ  
(vpetrosyan@yahoo.com)
- Պողոսյան Վարուժան** ԵՊՀ ՀՀԻ ցեղասպանագիտության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր  
(varuzhan.poghosyan@mail.ru)
- Մարգարյան Սուրեն** ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ  
(sargsyansuren@yandex.ru)
- Սմբատյան Նելլի** ԵՊՀ Հայ արվեստի պատմության և տեսության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի դասախոս  
(nelli.smbatyan@yahoo.com)
- Վարդանեսովա Տատյանա** ԵՊՀ ՀՀԻ հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու  
(vartanesova@yahoo.com)
- Վարդանյան Մարիամ** ԵՊՀ Հայ արվեստի պատմության և տեսության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի դասախոս  
(vardmeri@yahoo.com)
- Քոսյան Լիլիթ** ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ավագ լաբորանտ  
(l.qosyan@gmail.com)



## INFORMATION ABOUT THE AUTHORS

- Avagyan Artsrun** Doctor of Philology, Professor, Dean of the Faculty of Armenian Philology, YSU
- Avetisyan Hayk** Doctor of History, Professor, Head of the Chair of Archeology and Ethnography, Head of the Laboratory of Archeological Researches of the Institute for Armenian Studies, YSU (hykavetisyan@yahoo.com)
- Avetisyan Yuri** Doctor of Philology, Professor, Head of the Chair of Armenian Language, YSU (spyurq2009@yahoo.com)
- Badalyan Gegham** Assistant of the Chair of Armenian History, YSU (gegham.badalyan@gmail.com)
- Dedeyan Gerard** Honoured Professor of Paul-Valéry Montpellier University, Foreign Member of NAS RA (gerard.dedeyan@wanadoo.fr)
- Gnuni Artak** PhD in History, Senior Research Worker of the Laboratory of Archeological Researches of the Institute for Armenian Studies, YSU (telepinus@rambler.ru)
- Hayrapetyan Tatevik** PhD Student of the Institute of Oriental Studies of NAS RA (haytatev@gmail.com)
- Hayruni Ashot** Doctor of History, Professor, Senior Researcher of the Institute for Armenian Studies, YSU, Professor of the Chair of Armenian History, YSU (ahayruni@yahoo.de)
- Hovhannisyan Petros** Professor, PhD in History, Acting Head of the Chair of Armenian History, YSU (petros.hovhannisyan@rambler.ru)
- Kostandyan Emma** Doctor of History, Leading Research Worker of the Institute of History of NAS RA
- Kosyan Lilit** Senior Laboratory Assistant at the Institute of History of NAS RA (l.qosyan@gmail.com)
- Maghalyan Vladimir** PhD in Philology, Senior Research Worker of the Department of Armenian-Georgian Relations of the Institute for Armenian Studies, YSU
- Matiossian Vartan** Ph. D, USA, Armenian National Education Committee Executive Director

- Petrosyan Vardan** PhD in Philology, Associate Professor, Head of the Chair of General Linguistics, YSU (vpetrosyan@yahoo.com)
- Poghosyan Varoujean** Doctor of History, Head of the Department of Genocide Studies of the Institute for Armenian Studies, YSU (varuzhan.poghosyan@mail.ru)
- Sargsyan Suren** PhD in History, Associate Professor, Leading Research Worker of the Institute of History of NAS RA (sargsyansuren@yandex.ru)
- Smbatyan Nelly** Lecturer of the UNESCO Chair of Armenian Art History and Theory, YSU (nelli.smbatyan@yahoo.com)
- Vardanesova Tatyana** PhD in History, Senior Research Worker of the Laboratory of Archeological Researches of the Institute for Armenian Studies, YSU (vartanesova@yahoo.com)
- Vardanyan Mariam** Lecturer of the UNESCO Chair of Armenian Art History and Theory, YSU (vardmeri@yahoo.com)
- Yeghiazaryan Arman** Doctor of History, Head of the Chair of Diaspora Studies, YSU (armyegh@yahoo.com)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՀՈԴՎԱԾՆԵՐ

<b>Արժրուն Ավագյան</b>	
Խաչատուր Աբովյան. կյանքի երեք շրջան, երեք միջավայր.....	3
<b>Յուրի Ավետիսյան</b>	
Արևմտահայերեն. խնդիրներ և հեռանկարներ .....	23
<b>Արման Եղիազարյան</b>	
Հայ սփյուռքի պատմության պարբերացումը.....	33
<b>Էմմա Կոստանդյան</b>	
Մաղաքիա Օրմանյանի բանախոսությունները.....	52
<b>Սուրեն Սարգսյան</b>	
Հայկական հարցը և Հայ Մահմանադրական ռամկավարները .....	79
<b>Աշոտ Հայրունի</b>	
Յոհաննես Լեփսիուսը և հայերը (գերմաներեն) .....	101
<b>Պետրոս Հովհաննիսյան</b>	
Երկու ուղղություն X դարի հայ պատմագրության մեջ .....	108
<b>Վարդան Պետրոսյան</b>	
Հպական բաղաձայնների հնդեվրոպական և հայկական համակարգերը.....	121
<b>Տատյանա Վարդանեսովա</b>	
Խաչքարային մշակույթում դպրոցների կազմավորման հարցի շուրջ (ռուսերեն).....	140
<b>Արտակ Գնունի</b>	
Կերենը քաղաքակրթությունների խաչմերուկում մ.թ.ա. I հազարամյակի երկրորդ քառորդում.....	149

### ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

<b>Լիլիթ Քոսյան</b>	
Փաստաթղթեր 1890-ական թթ. կտորածներից փրկված արևմտահայ գաղթականների մասին .....	168
<b>Վարուժան Պողոսյան</b>	
Հայ հոգևորականի տառապանքի ուղին (ֆրանսերեն) .....	182
<b>Վարդան Մատթեոսեան</b>	
Ֆրետերիք Մաքլերի նամակները Կոստան Զարեանին.....	196

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<b>Գեղամ Բաղայան</b>	
Բարկեն Հարությունյան, Հայաստանի պատմության ատլաս.....	204
<b>Պետրոս Հովհաննիսյան</b>	
Արման Եղիազարյան, Հայ Բագրատունիների տերությունը (885-908) .....	208
<b>Վլադիմիր Սաղայան</b>	
Հրաչիկ Բայրամյան, Էջեր հայ-վրացական գրական կապերի պատմությունից.....	213
<b>Վարուժան Պողոսյան</b>	
Ցեղասպանագիտական հարցեր, 2013, թիվ 1 (ֆրանսերեն).....	218
<b>Հայկ Ավետիսյան, Արտակ Գնունի</b>	
Հնագիտությունը Հայաստանում II .....	225
<b>Ժիրայր Դեղեյան</b>	
Կլոդ Մուրաֆյան, Լևանտի Հայաստանը (ֆրանսերեն).....	229
<b>Տաթևիկ Հայրապետյան</b>	
Թ. Ռ. Վարդանյան, Աղբբեջանցիներ.....	233

## ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

<b>Աշոտ Հայրունի</b>	
Լեփսիուսի տունը՝ ցեղասպանագիտության և հայագիտության կարևոր կենտրոն .....	236
<b>Նելլի Սմբատյան, Մարիամ Վարդանյան</b>	
Հայ արվեստի ստեղծագործությունների ուսումնասիրությունը Ռումինիայում.....	241
<b>Տեղեկություններ հեղինակների մասին.....</b>	<b>247</b>

## CONTENTS

### ARTICLES

<b>Artsrun Avagyan,</b> Khachatur Abovyan. Three Periods of Life, Three Environments .....	3
<b>Yuri Avetisyan</b> Western Armenian: Problems and Perspectives .....	23
<b>Arman Yeghiazaryan</b> Periodization of the Armenian Diaspora (Spyurk) History.....	33
<b>Emma Kostandyan</b> The Speeches of Maghakia Ormanyan .....	52
<b>Suren Sargsyan</b> The Armenian Question and Armenian Constitutional Ramkavars.....	79
<b>Ashot Hayruni</b> Johannes Lepsius and the Armenians (in German).....	101
<b>Petros Hovhannisyan</b> Two Directions in the Historiography of X Century .....	108
<b>Vardan Petrosyan</b> The Indo-European and Armenian Systems of Plosive Consonants.....	121
<b>Tatyana Vardanesova</b> On the Issue of the Formation of Schools in Khachkar Culture (in Russian).....	140
<b>Artak Gnuni</b> Keren in the Crossroads of Civilizations in the Second Quarter of the First Millennium BC.....	149

### PUBLICATIONS

<b>Lilit Kosyan</b> Documents about the Western Armenian Migrants Who Survived the Massacres in 1890s .....	168
<b>Varoujean Poghosyan</b> The Thorny Path of the Armenian Clergyman (in French).....	182
<b>Vardan Matiossian</b> Frédéric Macler's Letters to Kostan Zarian .....	196

## BOOK REVIEWS

<b>Gegham Badalyan</b>	
Babken Harutiunyan, The Atlas of History of Armenia .....	204
<b>Petros Hovhannisyan</b>	
Arman Yeghiazaryan, The Power of Armenian Bagratunies (885-908).....	208
<b>Vladimir Maghalyan</b>	
Hrachik Bayramyan, Pages from the History of Armenian-Georgian Literary Relations .....	213
<b>Varoujean Poghosyan</b>	
Journal of Genocide Studies, 2013, N 1 (in French).....	218
<b>Hayk Avetisyan, Artak Gnuni</b>	
Archeology in Armenia II.....	225
<b>Gerard Dedeyan</b>	
Claude Mutafian, Armenia of Levant (in French) .....	229
<b>Tatevik Hayrapetyan</b>	
T. R. Vardanyan, Azerbaijanians .....	233

## SCIENTIFIC LIFE

<b>Ashot Hayruni</b>	
Lepesius's House as an Important Centre of Genocidal Studies and Armenology.....	236
<b>Nelly Smbatyan, Mariam Vardanyan</b>	
The Study of Armenian Works of Art in Romania.....	241
<b>Information about the authors</b> .....	249

# ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ

2

Սրբագրիչ՝ Վ. Դերձյան  
Համ. ձևավորումը՝ Ա. Աղուզումցյանի  
Կազմի ձևավորումը՝ Ա. Ստեփանյանի



Ստորագրված է տպագրության՝ 29.08.2014 թ.:

Չափսը՝ 70x100 1/16:

Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ:

Տպագր. 16 մամուլ: Տպաքանակը՝ 300:

Տպագրված է «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի տպարանում:

Ք. Երևան, Պուշկինի 40, տարածք 76

հեռ. 58 22 99, 53 58 65

E-mail: [info@limush.am](mailto:info@limush.am)

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային կրիչով (տեքստը՝ Word, նկարները՝ TIFF կամ բարձրորակ JPG): Հիմնական լեզուն հայերենն է, ընդունվում են նաև ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն հոդվածներ, որոնք պետք է ունենան ամփոփում (հայերեն տեքստի դեպքում՝ անգլերեն, այլ լեզուների դեպքում՝ հայերեն, շուրջ 300 բառ):

Չափանիշներն են՝

1. Տառատեսակը հայերեն՝ Sylfaen, այլ լեզուներինը՝ Times New Roman:

2. Տառաչափը՝ 12, միջտողային բացատը՝ 1.5:

3. Հոդվածի սկզբում դրվում է հեղինակի անուն, ազգանունը (գլխատառերով), վերնագիրը (գլխատառերով), հոդվածի վերջում նշվում է հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը (հեռախոսահամարը և էլփոստի անվանումը տպագրվում են հեղինակի համաձայնությամբ):

4. Հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը, վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը:

5. Տալ բանալի բառեր հայերեն, ռուսերեն և անգլերեն:

Հոդվածները ներկայացնել՝

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ 2-րդ մասնաշենք, 5-րդ հարկ, 511 սենյակ, «Հայագիտության հարցեր» հանդեսի խմբագրություն (*hands@armin.am*)

### NOTICE FOR THE AUTHORS

The articles should be represented in USB flash drive (text should be in Microsoft Word Document, pictures – TIFF or JPG). The main language of the article is Armenian (with summary in English, about 300 words), if the articles are in Russian, English, French, German there should be a summary in Armenian (about 300 word).

The criteria are the following:

1. Theme font – Sylfaen (in Armenian), Times New Roman (in other languages)

2. Font Size – 12, Line Space – 1.5

3. At the beginning of the article there should be the name and surname of the author (uppercase), the title (uppercase), at the end of the article there should be the academic degree of the author, workplace, position, telephone number and E-mail (telephone number and e-mail are published according the author's agreement)

4. The references should be footnoted; font size- 10, the author, the title, volume, place and date of publication (also the number, if the article was published in magazine) and the page should be mentioned.

5. To write key words in Armenian, Russian and English.

The articles are accepted in the Institute for Armenian studies of YSU, Alex Manoogian 1, YSU 2<sup>nd</sup> annex, 5<sup>th</sup> floor, room N 511, the editorial office of the bulletin “Armenological Issues” (*hands@armin.am*)

### К СВЕДЕНИЮ АВТОРОВ

Статьи необходимо представлять на электронном флеш-накопителе (текст – Word, фотографии – TIFF или JPG в высоком качестве). Основной язык – армянский, принимаются также статьи на русском, английском, французском и немецком языке, которые должны иметь резюме (в случае армянского текста – на английском языке, в случае других языков – на армянском, около 300 слов).

Параметры

1. Шрифт армянского языка – Sylfaen, других языков – Times New Roman.

2. Размер шрифта – 12, межстрочный пробел – 1.5.

3. В начале статьи дается имя и фамилия автора (заглавными буквами), заголовок (заглавными буквами), в конце статьи отмечается ученая степень автора, работы, должность, номер телефона и адрес электронной почты (номер телефона и адрес электронной почты печатается с согласия автора).

4. Ссылки даются под строкой в порядке возрастания, размер шрифта – 10, дается автор источника, заголовок, том, место и год издательства (в случае прессы также и номер) и страница.

5. Дать ключевые слова на армянском, русском и английском языках.

Статьи принимаются в

Институте арменоведческих исследований ЕГУ,

Алека Манукяна 1, 2 корпус ЕГУ, 5-й этаж, комната 511, редакция журнала «Вопросы арменоведения» (*hands@armin.am*).